

ՀՀ ԳԱԱ Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ИНСТИТУТ ЯЗЫКА ИМ. Р. АЧАРЯНА НАН РА
INSTITUTE OF LINGUISTICS OF NAS OF RA

ՋԱՎԱՅԱՆԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Հանրապետական գիտական նստաշրջանի զեկուցումներ
(Երևան, 2012 թ., հունիսի 7-11)

ДЖАУКЯНОВСКИЕ ЧТЕНИЯ

Доклады республиканской научной сессии
(Ереван, 2012 г., 7–11 июня)

DJAHUKIAN READINGS

Republican scientific session reports
(Yerevan, 2012, June 7-11)



ՋԱՎԱԿ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ – ЕРЕВАН – YERAVAN
2012

ՀՏԴ 891.981.0:06
ԳՄԴ 83.3Հ
Ջ 229

Տպագրվում է
ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհուրդ՝

- Վ. Համբարձումյան (նախագահ), *բ.գ.դ., պրոֆ.*
- Գ. Խաչատրյան, *բ.գ.դ., պրոֆ.*
- Լ. Հովհաննիսյան, *բ.գ.դ., պրոֆ.*
- Լ. Հովսեփյան, *բ.գ.դ., պրոֆ.*
- Ա. Սարգսյան, *բ.գ.դ., պրոֆ.*
- Ա. Գալստյան, *բ.գ.թ.*
- Ն. Հովհաննիսյան, *բ.գ.թ.*
- Ժ. Միքայելյան, *բ.գ.թ.*
- Ն. Սարգսյան, *բ.գ.թ.*

Ջ 229 ԶԱՀՈՒԿՅԱՆԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ: Հանրապետական գիտական
նստաշրջանի զեկուցումներ (Երևան, 2012 թ., հունիսի 7–11).— Եր.,
Զանգակ, 2012. 288 էջ:

ՀՏԴ 891.981.0:06
ԳՄԴ 83.3Հ

ISBN 978–9939–68–095–8

© ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, 2012
© «Զանգակ–97» ՍՊԸ, 2012

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ավետիսյան Լիլիթ , Գրաբարի բայական դարձվածային միավորների տարբերակները	5
Բառնասյան Զեմմա , Անձնական և անդրադարձ դերանունները հայերենի բարբառներում	14
Բարսեղյան Ամալյա , Բայի քերականական ձևերի ոչ ճիշտ կիրառություններ ՉԼՄ-ների լեզվում	27
Գալստյան Անահիտ , Տարբերակայնությունը լեզվաբանական տերմինահամակարգում.....	34
Գալստյան Աշոտ , Լեռ Կամսարի օրագրությունների լեզվական հիմքերը	47
Գրիգորյան Սուսաննա , Նորաբանությունները Գ.Տաթևացու «Գիրք հարցմանց»-ում	58
Գևորգյան Լուսինե , Բաղաձայնների հնչյունափոխությունը Շիրակի տարածքի խոսվածքներում	67
Դոխոյան Ռուզաննա , Արդի հայերենի փոխաբերական ասացականների դասը	76
Խաչատրյան Հասմիկ , <i>Որմ</i> և <i>անկյուն</i> հասկացություններն արտահայտող բառերի բարբառային քննություն	88
Խաչատրյան Օֆելյա , Սուրադյան Անահիտ , Հեթում պատմիչի «Պատմութիւն թաթարաց» աշխատության բառապաշարի նորաբանությունները.....	101
Կատվայան Վիկտոր , Բայագետի և Դիադինի բարբառների փոխհարաբերությունները.....	115
Համբարձումյան Վազգեն , Նոր դիտարկումներ Ե.Մեղրեցու «Բառգիրք հայոց»- ի մի քանի բառի վերաբերյալ	130
Հանեյան Անահիտ , <i>Զամի</i> հասկացության բառիմաստային դրսևորումները հայերենի բարբառներում	141
Հովսեփյան Լիանա , Գրաբարի հոլովատիպերի կառուցվածքային դասակարգում.....	148
Մանուկյան Անժելա , Ժամանակակից հայերենի բայի բառակազմական կաղապարները	163

Մեսրոպյան Հայկանուշ , Աստվածամոր պատվանունները հայերենի բարբառներում	172
Միքայելյան ժաննա , Բայի երկրորդական բաղադրյալ ժամանակները Ջուղայի և Ագուլիսի բարբառներում	184
Մխիթարյան Գայանե , Հնագույն նվագարանների անվանումները Աստվածաշնչում	199
Մկրտումյան Արմինե , Դարձվածային հոմանիշները և նրանց կառուցվածքային տեսակները ժամանակակից հայերենում	211
Ներսիսյան Վարսիկ , Գրական արևելահայերենի <i>կարող եմ</i> հարադրության ձևաբանական արժեքի հարցը	225
Պապիկյան Սիլվա , Ակնարկ կինոտերմինների մասին	235
Պետրոսյան Հասմիկ , Հայերեն մեքենագիտական և մեքենաշինական տերմինների արտացոլումը նորագույն շրջանի հայ բառարանագրության մեջ	243
Պողոսյան Նորայր , 17-րդ դարի բառարանագրության հուշարձաններ	252
Տեր-Գրիգորյան Լիլիթ , Դիմախաղը որպես դարձվածային իմաստի ձևավորման հիմք	265
Ուռուտյան Ռոբերտ , Խառատյան Մելանյա , Սահակյան Նինա , Հայերեն բարբառային նյութերը գրանցելու հնչագրեր (մշակման և կիրառության հարցեր)	273

Գրաբարի բայական դարձվածային միավորների տարբերակները

Դարձվածային միավորները (հետայսու՝ ԴՄ) կայուն, պատրաստի վերարտադրելի և մասամբ կամ ամբողջությամբ վերաիմաստավորված կապակցություններ են:

ԴՄ-ներին բնորոշ առանձնահատկություններից մեկն էլ դարձվածային տարբերակներով հանդես գալն է:

Դարձվածային տարբերակները, ի տարբերություն դարձվածային հոմանիշների¹, ունեն ձևային միևնույն անխախտելի հիմքը:

Դարձվածային տարբերակներ են համարվում այն դարձվածային միավորները, որոնք միմյանցից տարբերվում են այս կամ այն բառով, ձևաբանական կառուցվածքով կամ շարադասությամբ, բայց չեն տարբերվում դարձվածքի ընդհանուր իմաստով²:

Դարձվածային տարբերակների յուրաքանչյուր զույգում կամ շարքում կարևորվում է նրանց իմաստային նույնականության պահպանումը: Ըստ որում տարբերակներով հանդես եկող ԴՄ-ն մտնում է լեզվի մեջ որպես իր տարբերակների միագումարություն³:

Մասնագիտական գրականության մեջ նշվում է, որ «պատմականորեն տարբերակայնությունը, զուգաձևությունները առաջանում են որպես լեզվական հեղաշրջման հետևանք, որպես լեզու-

¹ Հմմտ. հետևյալ դարձվածային հոմանիշները. *չու առնել(եմ), յուղի անկանել (իմ)* - ճանապարհվել, տեղափոխվել:

² Տե՛ս Ա.Ճ.Раўнастве́н, Немецкие устойчивые фразы, Ленинград, 1971, էջ 8: Դարձվածային տարբերակների մասին տե՛ս Խ.Բաղիկյան, Դարձվածաբանական ոճաբանություն, Ե., 2000, էջ 81-86, Պ.Բեդիրյան, Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն, Ե., 1973, էջ 213-215, Ալ. Մարգարյան, Ժամանակակից հայոց լեզու, Ե., 1990, էջ 335-337, Լ. Խաչատրյան, Գ. Գյուրջինյան, Դիտարկումներ «Աստված» բաղադրիչով կայուն բառակապակցությունների շուրջ, «Էջմիածին», 1995, հ. 1, էջ 42-46:

³ Տե՛ս А.Кунин, Англо-русский фразеологический словарь, М., 1967, т. 2, էջ 1253:

ների մյուս գոյաձևերի ազդեցության արդյունք, որպես ներլեզվային իրողությունների բազմաբնույթ փոխհարաբերությունների հետևանք»¹:

Լեզվաբանական գրականության մեջ առանձնացվում է դարձվածային տարբերակների հիմնականում երեք տիպ՝ բառային, քերականական և քանակային²:

Գրաբարի բայական ՂՄ-ները հատկանշվում են կառուցվածքային յուրահատկություններով. նախադրություններով ՂՄ-ներ, բայական ՂՄ-ների նախդրավոր և աննախդիր դրսևորումներ, որոնց շրջանակներում էլ ի հայտ են գալիս մի շարք բառային, քերականական և քանակային տարբերակներ:

Ներկա հոդվածում քննության են առնվում իրենց կառուցվածքային պլանում նախդիր-նախադրություններ չունեցող բայական ՂՄ-ների տարբերակները գրաբարի մակարդակում, համաժամանակյա կտրվածքով³: Առանձին դեպքերում դարձվածային տարբերակների մի եզրում տրվում են նախդրավոր կառույցներ՝ ՂՄ-ների քերականական - ձևաբանական տարբերակայնությունը ցույց տալու համար:

Ա.Բառային տարբերակներ: ՂՄ-ների շրջանակներում առանձնացվում է այս կարգի տարբերակների երկու տիպ՝ 1. դարձվածային տարբերակներ, որոնք առաջանում են տվյալ դարձվածքի այս կամ այն բաղադրիչը որևէ հոմանիշով փոխարինելով՝ առանց տվյալ իմաստի շրջանակներից դարձվածքը դուրս բերելու, 2. դարձվածային տարբերակներ, որոնք ի հայտ են գալիս ՂՄ-ների բաղադրիչները փոխարինելով այնպիսի բառերով, որոնց հետ նրանք ունեն իմաստային ինչ-ինչ ընդհանրություններ, բայց

¹ Չ. Աղաջանյան, Ձևաբանական նորմ և խոսքի մշակույթի հարցեր, Ե., 2007, էջ 114:

² А.Кунин, Английская фразеология, М., 1970, էջ 62, 118:

³ Ընդհանրապես տարբերակայնությունը՝ որպես լեզվական իրողություն, ենթադրում է փաստական նյութի՝ ամեն մի առանձին լեզվի պատմական զարգացմամբ և քերականական կառուցվածքի յուրահատկություններով պայմանավորված քննություն:

ազատ կիրառություններում չունեն հոմանշային հարաբերություններ¹:

1. ԴՄ-ների բառային տարբերակներն առաջանում են կապակցությունների գերադաս անդամների փոփոխությունների հետեվանքով:

Գերադաս բայ բաղադրիչի այսօրինակ փոփոխակները մեծ մասամբ արտահայտում են իմաստային միևնույն պլանի (դաշտի) հասկացություններ²:

Քննվող դարձվածքների տարբերակների մեջ գերակշիռ մեծամասնություն են կազմում հենց այդ կարգի փոփոխակները (զուգաձևությունները)³:

Չմտ. անձին *առնել // հրամայել* (անձնասպան լինել), աշխատ *ունել (իմ) // առնել* (նեղություն պատճառել, չարչարել), կիցս *ընկենուլ // հանել* (քացի տալ), հովանի *լինել (իմ) // առնել* (1. ստվեր անել, 2. պաշտպանել), գուն *դնել // գործել* (ջանք անել, շտապել), փոյթ *ունել (իմ) // առնել* (հոգ տանել, հոգալ, ջանալ):

Չմտ. նաև դարձվածային հետևյալ բազմաձևությունները. ուշ *առնուլ // ունել (իմ) // դնել // կալ* (խելք տալ, ուշադիր լինել, հետամուտ լինել, ջանալ, զգուշանալ, լավ նայել), ձայն *ածել // բառնալ // առնել // արկանել // արձակել, շրջել* (ձայն հանել, խոսել):

Չմտ. բայական ԴՄ-ների բառային տարբերակները խոսքային միջավայրում. Բարեկամաց եւ հոմանեաց իւրոց պարգեւելով զամենայն իշխանութիւն եւ զգանձս՝ ոչ ինչ վասն որդւոց իւրոց *փոյթ*

¹ Այդպիսին կարող են լինել այն բառերը, որոնք կա՛մ արտահայտում են իմաստային միևնույն պլանի հասկացություններ, կա՛մ միևնույն հատկության կրողներ են:

² Տե՛ս Ա.Ճ.Игнатьева, Структурные и семантические свойства фразеологических единиц с фразеобразующим компонентом “как” в современном русском языке, Ленинград, 1976, էջ 8, О. М. Неведомская, Компаративные фразеологизмы немецкого языка в сопоставлении с русскими, Л., 1973, էջ 8:

³ Չմտ. զուգաձևությունները (այլև՝ բազմաձևությունները) նախդրավոր հետևյալ կառույցներում. *տանել (իմ) // վարել // վտարել // յափշտակել յաւարի* (ավար առնել, հափշտակել), *առնուլ // վարել ի գերութիւն* (գերեվարել), *արկանել // մատնել ի սուր* (սրի մատնել, սրի քաշել) և այլն:

յանձին *ուներ*¹ (Խոր., 1, ԺԷ): Եւ իբրեւ պատմեցաւ Լոցա յարքայէ վասն գտելոյն ի Դանիէլէ, յօժարեցին զարքայ՝ *փոյթ առնել* վասն պիտոյիցն այնոցիկ (Կոր., 44): Այժմ զի եկեալ է առ քեզ թագաւորն Յայոց Արշակ, զհա՞րոյ խօսի ընդ քեզ, կամ զհ՞նչ *ձայն ածէ*, կամ զհա՞րոյ ունի զանձն (Բուզ., 4, ԾԴ): Իսկ իբրեւ յայն տեղի հասաներ, եւ զհայ հողն կոխեր, մեծամեծս ըմբոստացեալ հպարտացեալ՝ այլ *ձայն շրջեր* (Ս. տ.):

2. Բայական ԴՄ-ներում բառային տարբերակներ կարող են ձեւավորվել կապակցությունների ստորադաս կամ կախյալ բաղադրիչների փոփոխության հետևանքով²: Ըստ որում այս դեպքում ևս այդօրինակ անդամներն ազատ կիրառություններում հիմնականում չունեն հոմանշային հարաբերություններ, սակայն արտահայտում են իմաստային միևնույն դաշտի հասկացություններ: Յմտ. դատել *հրով // սրով* (այրել, ջարդել), անցանել *բանի // գր-րով* (խոսել, պատմել, շարադրել), *զան // ապտակ* ըմպել (ծեծվել), *ճակատ // թշնամութիւն* յուզել (կռիվ՝ պատերազմ բորբոքել):

Յմտ. Ապա թէ ի վերայ հայ հողոյն խիստ ինչ բարբառեցի, զփտասջի՛ր՝ զի որ օր հասանէ յերկիրն Յայոց, զնոյն ձայն ածէ ընդ քեզ, եւ զնոյն պատերազմ Լորոզէ ընդ քեզ, զնոյն *ճակատս* եւ զնոյն *թշնամութիւն յուզէ* (Բուզ., 4, ԾԴ):

Յմտ. Լան հոմանշային հետևյալ տարբերակները. *ահ // սարտուռ* առնուլ (վախենալ), թափել *կապուտ // աւար* (ավար վերցնել)³:

¹ *Փոյթ ունել* (*// ունել յանձին*) *// փոյթ յանձին ունել* փոփոխակներում դրսևորվում է քանակային տարբերակայնություն:

² Ուշագրավ բառային-բառակազմական տարբերակայնություն է հայտ բերում հետևյալ ԴՄ-ը՝ հանդես գալով ստորադաս բաղադրիչի պարզ և բաղադրյալ կազմություններով. *առնուլ զվրեժ // զվրեժխնդրութիւն*:

Յմտ. Չի այժմ ընդ հուպ դարձցի գաւազան թագաւորութեան միւսանգամ ի տուն թորգոմայ *առնուլ զվրեժ* յազգէն Իսմայելի (Դեւ., 41): Յայնմ հետէ զարթոյց տեր զհոգի արանցն չարաց, զի *արցէ զվրեժխնդրութիւն* յազգէն քրիստոնէից (Ս. տ., 4):

³ Յմտ. Լմանօրինակ տարբերակայնությունը հետևյալ նախդրավոր կառույցներում. *անցանել ըստ բանս // ըստ միտս* (մտքից՝ խելքից վեր՝ դուրս լինել), *զայ ըստ բանի // կարծեաց // կամաց ուրուք* (զիջել, համաձայնել, ուրիշի կարծիքին միանալ), *մատնել ի մահ // ի կորուստ* (կորստյան մատնել):

Բ. Քերականական տարբերակներ: Բայական ԴՄ-ների քերականական տարբերակներում առանձնացվում են թե՛ ձևաբանական, թե՛ շարահյուսական փոփոխակներ:

Գրաբարի բայական ԴՄ-ներում հազվադեպ են այդօրինակ զուգաձևությունները (բազմաձևությունները):

Ձևաբանական այդպիսի փոփոխակումը գրաբարում կապված է հիմնականում հոլովի (աննախդիր և նախդրավոր հոլովաձևեր) ու թվի զուգաձևության հետ¹:

1. Հոլովական տարաձևությամբ են հանդես գալիս հետևյալ դարձվածային տարբերակները. *վեգ // ի վեգ* գալ (վիճել), *թաքքստեան // ի թաքքստեան* լինել (թաքնվել, ծածուկ ապրել):

Առանձին դեպքերում բայական ԴՄ-ների հոլովական տարբերակներ են ստեղծվում գոյականական բաղադրիչների տարբեր հոլովաձևերով. դատել *սրով // ի սուր* (ջարդել):

Բառային և հոլովական ուշագրավ տարբերակայնություն են դրսևորում հետևյալ ԴՄ-ները. *չու առնել // ի չու անկանել (իմ)* (ճանապարհվել, գնալ), *սպաս ունել (իմ) // ~ տանել (իմ) // ի սպասու կալ* (ծառայել, պաշտել, սպասել), *ողն առնուլ // յողն անկանել (իմ) // ~ երթալ // ~ կալ* (1. մեջքի վրա ընկնել, 2. պառկել, 3. խրոխտանալ):

2. Գրաբարի բայական ԴՄ-ների ձևաբանական տարբերակներում ստորադաս անդամները կարող են հանդես գալ եզակի - հոգնակի ձևերով². *առն // արանց* լինել (իմ) - ամուսնանալ, *վրեժ // վրեժս* խնդրել - վրեժ լուծել, *անտի // անտիս* առնել - կյանքից զրկել:

Առանձին դեպքերում ԴՄ-ների ձևաբանական փոփոխակներում կարող են հանդես գալ տարբեր լծորդություններով գերա-

¹ Հետևյալ զուգաձևությունները դրսևորվել են բայի հարադրական (վերլուծական) և համադրական կազմությամբ. *առակ արկանել // առակել* (1. օրինակ բերել, 2. նշանակել, 3. խայտառակել, 4. կեղծել, ձևացնել), *ճռաքաղ առնել // ճռաքաղել* (1. այգու մնացած հատ ու կենտ ողկույզներն ու պտուղները հավաքել, 2. ամբողջապես կտորրել, ոչնչացնել):

² Այդօրինակ տարբերակներում թվի քերականական կարգի նշանակությունը չի պահպանվում. եզակի-հոգնակի ձևերն իմաստային և քերականական առումներով չեզոք են:

դաս բայական բաղադրիչներ. *ուշ առնել (իմ) // առնուլ // առնել* (խելք տալ, ուշադիր լինել, հետամուտ լինել, ջանալ):

3. Բայական ՂՄ-ների շարահյուսական տարբերակներն առաջանում են կա՛մ բաղադրիչների շարադասական փոփոխություններով (*խնդրել վրեժ // վրեժ խնդրել* - վրեժխնդիր լինել)¹, կա՛մ ողջ կառույցի ձևափոխությամբ (*բառնալ թողուլ // բարձիթողի առնել*-երեսից գցել, ուշադրություն չդարձնել):

Յմտ. բայական ՂՄ-ների քերականական (շարադասական) տարբերակների հետևյալ գործածությունները. Եւ ոչ պակասեսցե անունդ քո ի մարդկանե՛ առ ի յիշելոյ գքեզ առաջի Աստուծոյ մինչեւ յաւիտեան, զի ոչ ինայեցեր դու անձն քո վասն տառապանաց ազգի մերոյ, այլ *խնդրեցեր զվրեժ* կործանման հարուածոցս մեր՝ գնացեալ քո ուղիղ զճանապարհս առաջի Տեառն մերոյ (Յուդիթ, ԺԳ): Իմ այդ տեղի, ուր դուդ ես բազմեալ. յոտն կաց այդի, թող ես բազմեցայց, զի տեղի ազգի մերոյ այդ լեալ Է. ապա եթե յաշխարհըն իմ հասից, մեծամեծ *վրեժս խնդրեցից* ի քեւ (Բուգ., 4, ԾԴ):

ՂՄ-ների շարահյուսական (շարադասական) տարբերակները, սակայն, այս կամ այն բաղադրիչն ընդգծելու, շեշտելու հետ կապված չեն:

4. Քանակային տարբերակներ: Ընդհանրապես ՂՄ-ների քանակային տարբերակներն առաջանում են նրանց համառոտ և ծավալուն կազմերի դեպքում. դարձվածքը, դուրս չգալով իր կառուցվածքի շրջանակներից, փոխվում է քանակային կազմով. *թափել կապուտ // ~ կապուտ սաստիկ* (շատ ավար վերցնել), *դիտթաւալ խաղալ // թաւալ անկեալ գլոր խաղալ* (թպրտալ)²:

¹ Յմտ. Նախդրավոր կառույցների շարադասական հետևյալ տարբերակները և նրանց գործածությունները. *ի պաշտօն առնուլ // առնուլ ի պաշտօն* (երկրպագել), *առնուլ ի միտ // ի միտ առնուլ* (ըմբռնել). *Ի պաշտօն առեալ* երկիր պագանիցե իբր Աստուծոյ (Եզն., 39): *Առնուցուն* գոտսա *ի պաշտօն* (Ա. տ., 105): Ծանուցեալ *առնուցու ի միտ* թե իմն Է զօրութիւն (Ա. տ., 233): *Ի միտ առցե* գառակս եւ զբանս խորինս, զճառս իմաստնոց եւ գառակս լոցա (Առակ, Ա.):

² Յմտ. դարձվածային տարբերակները Նախդրավոր կառույցներում. *դնել ի բանտի //~ ի կալանս բանտի* (բանտարկել), *արկանել ի սուր // ~ ի սուր տուսերի, մատնել ի սուր // ~ ի սուր անողորմ* (սրի քաշել, սրի մատնել) և այլն:

Յմմտ. Սաստկապետ բախեալք ընդ միմեանս, յերկոցունց կողմանց բազում վիրաւորք յերկիր անկեալ *դիաթաւալ խաղային* (Եղ., V յեղանակ): Այլ դու յայնժամ եղեալն ա՛ծ գմտաւ, զկրօնաւորացն դաս եւ զքահանայիցն՝ որ անդ հանդիպեցան, կամ գերիտասարդացն զբազմութիւնս, թէ որպէս յանկարծակի ի սրոյ թըշնամեացն իբրեւ ի կարկտոյ հարեալք՝ յերկիր *թաւալ անկեալ գլոր խաղային* (Ա. Լաստ., ԺԶ):

Դ. Դարձվածաբանական գրականության մեջ որպէս դարձվածային տարբերակներ նշվում են նաև հնչյունական գանազան փոփոխությունների հետևանքով առաջացած տարատեսակները. *երկիւղուկս // երկեղուկս արկանել* (վախ գցել)¹, *ակնկառոյց // ակնակառոյց լինել* (աչքը վրան մնալ), *լակիշ // դակիշ ածել* (բանակ դնել), *աւաչ // աւաջ ասել* (երգել):

Բայական ԴՄ-ների տարբերակների թվարկված բոլոր տիպերում, ինչպէս տեսնում ենք, դարձվածքի ձևը ենթարկվել է մասնակի փոփոխությունների, իսկ բովանդակությունը, անկախ ձևափոխություններից, մնացել է նույնը²:

Այսպիսով՝

1. Յին հայերենի բայական ԴՄ-ների տարբերակները նույն դարձվածքների տարատեսակներն են՝ բառերի, բառաձևերի, շարահյուսական կառուցվածքի, բաղադրիչների քանակային և հընչյունական մասնակի փոփոխություններով: Այդ կարգի փոփոխակները դուրս չեն գալիս դարձվածքի տվյալ իմաստի շրջանակներից:

2. Գրաբարի բայական ԴՄ-ներում առկա են հիմնականում իմաստային միևնույն դաշտի հասկացություններ արտահայտող (գերադաս և ստորադաս) բաղադրիչների փոփոխակումներով ձևավորված բառային տարբերակներ:

¹ Յմմտ. հոմանշային հետևյալ տարբերակները. *երկիւղուկս (երկեղուկս) // ահ արկանել* (վախեցնել):

² Դարձվածային տարբերակներ կարող են առաջանալ նաև դարձվածքի՝ հեղինակային տարբեր մեկնաբանությունների հետևանքով: Յմմտ. Յաղագս յաճախ սիրոյն զոր ուներ առ եղբայրն *մատներ գանձն ի մահ* (Դե., 131): *Մատներ գանձըն ի կորուստ յաւիտենական գեհենին* (Ա. տ., 163):

3. Բայական ԴՄ-ներում ի հայտ են գալիս քերականական (ծե-վաբանական և շարահյուսական) զուգաձևություններ (այլև՝ բազմաձևություններ):

4. Բայական ԴՄ-ների քանակային տարբերակներում դարձ-վածքը փոխվում է իր քանակային կազմով՝ պահպանելով իմաս-տային նույնականությունը:

5. Տարբերակային ԴՄ-ն, իր այլաձևություններով հանդերձ, լեզ-վի մակարդակում հանդես է գալիս որպես իր փոփոխակաների միագումարություն:

Սկզբնաղբյուրների համառոտագրություններ

Առակ.- Առակք Սողոմոնի որդւոյ Դաւթի թագաւորի Իսրայելի, Աստուածաշունչ մատեան Զին և Նոր կտակարանաց, Զայաստա-նի Աստուածաշնչային ընկերութիւն, Ե., 1997:

Բուզ.- Փաւստոսի Բուզանդացւոյ Պատմութիւն Զայոց, Ս.Պետեր-բուրգ, 1883:

Եզն.-Եզնկայ Կողբացւոյ Բագրեւանդայ Եպիսկոպոսի Եղծ աղան-դոց, Վենետիկ, 1826:

Եղ. - Եղիշէի Վասն Վարդանայ և Զայոց պատերազմին, Ե., 1957:

Լաստ. - Պատմութիւն Արիստակիսի Լաստիվերտցւոյ, Ե., 1963:

Խոր. - Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Զայոց, Տիֆլիս, 1913:

Կոր. - Կորիւն, Վարք Մաշտոցի, Ե., 1941:

Ղեւ.-Ղեւոնդէայ Վարդապետի Պատմութիւն, Ս.Պետերբուրգ, 1887:

Յուդիթ. - Յուդիթ եւ Զորդփեռնէս, Աստուածաշունչ մատեան Զին և Նոր կտակարանաց, Զայաստանի Աստուածաշնչային ընկերու-թիւն, Ե., 1997:

Аветисян Лилит- Варианты глагольных фразеологических единиц грабара .- Глагольные фразеологические единицы (ФЕ) грабара имеют различные варианты: лексические (ձայն ածել // բառնալ // առնել // արկանել // արձակել // շրջել), грамматические (морфологические)- դատել սրով //ի սուր, առն //արանց լինել, синтаксические - բառնալ թողուլ // բարձիթողի առնել) и количественные (квантитативные) – թափել կապուտ // ~ սաստիկ).

Вариативная ФЕ входит в язык как совокупность своих вариантов.

Avetisyan Lilit- The Variants of Verbal Phraseological Units of Old Armenian .- The verbal phraseological units (PU) of Old Armenian have different variants: lexical (ձայն ածել // բառնալ // առնել // արկանել // արձակել // շրջել), grammatical (morphological - դատել սրով //ի սուր, առն // արանց լինել, syntactical – բառնալ թողուլ // բարձիթողի առնել) and quantitative – թափել կապուտ // ~ սաստիկ).

The variable PU enters into language as a global unit with all its variants.

**Անձնական և անդրադարձ դերանունները
հայերենի բարբառներում**
(իմաստագործառական քննություն)

Իր «Հայ բարբառագիտություն» աշխատության մեջ նշանավոր լեզվաբան Ա. Ղարիբյանը իրավամբ գտնում է, որ հայերենի բարբառներից ոչ մեկը դերանվանական նոր արմատ չի գործածում. բոլորն օգտագործում են համաժողովրդական լեզվի միևնույն արմատական ձևերը՝ տարբեր արտասանությամբ, այսինքն՝ բարբառներից յուրաքանչյուրին հատուկ հնչյունական օրենքներին համապատասխան, և շատ հաճախ դերանուններն են բարբառների հարևան լինելու հանգամանքը պարզելու հայտանիշը¹: Քննության առարկա դարձնելով հայերենի բարբառների անձնական դերանունները՝ նյութեր ենք քաղել բարբառագիտական մենագրություններից, ազգագրական տարբեր գոտիներ ներկայացնող բանահյուսական նմուշներից և խոսվածքային միավորների գրանցումներից: Անձնական դերանունները, ինչպես պարզ երևում է անվանումից, անձ են ցույց տալիս: Սակայն անձ ցույց տվող այլ դերանուններ էլ կան, ինչպես՝ *ոմն*, *ամեն ոք*, *յուրաքանչյուր ոք*, *ով* և այլն, այսինքն՝ անձնական դերանունների համար անձ ցույց տալը սահմանազատող հատկանիշ չէ: Դերանունների այս տեսակի համար առավել բնորոշ է դիմային հարաբերության իմաստը: «Անձնական դերանուններն արտահայտում են անձ՝ դիմային հարաբերությամբ (կամ առկայացումով)՝ միևնույն ձևի մեջ ի հայտ բերելով անձի դեմքի, թվի, հոլովի իմաստները»²:

Մեծանուն լեզվաբան Հ.Աճառյանի «Լիակատար քերականություն հայոց լեզվի» աշխատության երկրորդ հատորն ամբողջու-

¹ Ա. Ղարիբյան, Հայ բարբառագիտություն, Ե., 1953, էջ 144:

² Հ. Պետրոսյան, Հայերենագիտական բառարան, Ե., 1987, էջ 43:

թյամբ նվիրված է *դերանուն* խոսքի մասին: Այստեղ գիտնականը, հարազատ մնալով իր ընդունած սկզբունքին, նախ քննության է առնում տվյալ երևույթն ընդհանուր լեզվաբանական մոտեցմամբ և հնդեվրոպական լեզուների համեմատական քերականության տվյալներով, ապա ներկայացնում է նույն երևույթը հայերենում՝ պատմական զարգացման մեջ: Իր ուսումնասիրած հայ բարբառների մատուցած նյութերի հենքի վրա լեզվաբանը փաստում է, որ հայոց լեզվի բոլոր փուլերում մշտապես գործառած *ես, դու, մենք, դուք* անձնական դերանուններն առկա են հայերենի բոլոր բարբառներում ու խոսվածքներում: Այլ խոսքով՝ անձնական դերանունները բառապաշարի համահայերենյան շերտին են պատկանում:

Հայերենի բարբառներում անձնական դերանունների դրսևորումները ներկայացնելիս առանձնացրել ենք ընդհանրական կամ մասնավոր իրողություններ, օրինաչափ կամ ոչ օրինաչափ հընչյունափոխությամբ առաջացած բառաձևեր, մասնիկների հավելումով կամ կրկնահավելումով ձևեր, դերանվանական և անվանական հոլովումների ներթափանցումով առաջացած ինքնատիպ հոլովաձևեր: Հին գրական հայերենում որոշակիորեն տարբերակված էին առաջին և երկրորդ դեմքի անձնականները՝ *ես, մեք, դու, դուք*, իսկ երրորդ դեմքի համար գործածվում էին ցուցական-անձնականները, ինչպես՝ *նա, նոքա, ինքն-ինքեանք, իր-իրեանք* ձևերը: Որպես ընդհանրական երևույթ՝ կարելի է առանձնացնել 3-րդ դեմքի եզակի թվի համար *այն* (ան, էն) ցուցական դերանվան գործածությունը նաև հայերենի բարբառներում: Հետգրաբարյան հայերենում *մեք*-ը դարձավ *մենք*, իսկ *նոքա*-ին փոխարինեց *նրանք* ձևը՝ բարբառներից յուրաքանչյուրում առկա հնչյունական օրենքներին համապատասխան: Ներկայացնենք հայերենի բարբառներում գործառող անձնական դերանունները՝ մասնավորապես անդրադառնալով բարբառային ինքնատիպ ձևերին:

Ես անձնական դերանունը Հ.Աճառյանի Արմատական բառարանում վկայվում է իբրև հնդեվրոպական նախալեզվի *ego* ձևից

սերող բնիկ հայ բառ, որն օրինաչափ հնչյունափոխությամբ առկա է հայերենի բոլոր բարբառներում, ինչպես՝ *էս* (Ակն, Պոլիս, Խարբերդ), *յէս* (Վան, Մուշ, Ալաշկերտ, Տիգրանակերտ, Ն.Նախիջևան, Սեբաստիա, Կարին, Երևան, Ղարաբաղ), *յէս, յիս* (Համշեն), *յիս* (Թիֆլիս), *հ^օէս* (Զուղա) և այլն: Բառակազմորեն հետաքրքիր են մասնիկների, ածանցների հավելումով և կրկնահավելումով ձևերը, ինչպես, ասենք, Շամախիի բարբառում առկա *յէսիկըս, յէսիկիկըս, յէսիկիկիկըս* փաղաքշականը¹: Ինքնատիպ կարելի է համարել *ես* դերանվան դիմաց Արդվիևի բարբառում առկա *յէ* (առանց ս-ի) բառաձևը: Ի դեպ, խոսքի շղթայում նույնատիպ ձև հանդիպում է նաև Մշո բարբառում, ինչպես՝ *Յէ լէ գիկամ: Յէ լէ գիևամ՝ բան է կըսիս*:

Հայտնի է, որ գրաբարյան *վէք*-ը հետգրաբարյան հայերենում *ւ*-ի հավելումով դարձել է *վենք*: Հ.Աճառյանն այս իրողությունը բացատրում է հարասության օրենքով. ռնգականից հետո կրկնվել է *ւ* ձայնը, ինչպես, ասենք, ունենք կանաչ> կանանչ, կամաց > կամանց և այլն: Իսկ հին ձևն առայսօր առկա է Սասունի բարբառի տարբեր խոսվածքներում՝ *ի* մասնիկով՝ *մըկի (մըկի կացիևկ, մըկի պերիևկ)*, Ագուլիսի բարբառում՝ *միք*, Ղարաբաղի բարբառի Գորիսի խոսվածքում՝ *վէք*: Համշենի բարբառում նույնպես գործառում է *վէք* դերանունը: Խոսելով այդ բարբառում հոգնակի երկրորդ դեմքի համար առկա դերանվանական ինքնատիպ մի ձևի՝ հավելական *ւ*-ով *դուևք* ձևի մասին՝ Հ.Աճառյանը կարծիք է հայտնում, թե դա ուղղակի կարելի է բացատրել եզակի երկրորդ դեմքի *տուև* (դուև) ձևի ազդեցությամբ և ոչ թե հոգնակի առաջին դեմքի, քանի որ Համշենի բարբառում հոգնակի առաջին դեմքի դերանունը *վէք* է, ոչ թե՝ *վենք*: Իսկ Ղարաբաղի բարբառում հոգնակի առաջին դեմքի համար գործառող *մուևք* բառը՝ ոչ օրինաչափ *ե>ու* հնչյունափոխությամբ, Հ.Աճառյանը *տուև* (դուև) դերանվան ազդեցությամբ է բացատրում²:

¹ Հ.Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. Բ., Ե., 1973, էջ 33:

² Հ.Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 2, Ե., 1954, էջ 60:

Արևմտյան խմբակցության մի շարք բարբառներում եզակի երկրորդ դեմքի համար գործառող *դուև* ձևի հավելական *և* հընչյունի առիթով Յ.Աճառյանը գրում է. «*դուև* ձևն իր վերջնաձայնը պարտական է *ան* (այն) բառին», իսկ արևելյան խմբակցության որոշ բարբառներում (Ղարաբաղի, Մեղրիի) ձայնավորով սկսվող բառից առաջ *վ* հնչյունի հավելումը *դու* դերանվանը, ինչպես՝ *տուվ* ձևը (տուվ ու յես), հորանջից խուսափելու համար է¹:

1925թ. Փարիզի Հայ ուսմանց միության կազմակերպած երեկույթի ժամանակ մեծանուն գիտնական և հայագետ ակադ. Նիկողայոս Մառը, փարիզահայ ուսանողության համար կարդալով դասախոսություն հայկական մշակույթի արմատների ու նախապատմական կապերի մասին, անդրադառնում է նաև հայոց լեզվին՝ «այդ արքայական լեզվին»: Նա գտնում է, որ հայերենի զուտ հաբեթական շերտը բնավ էլ «պարզ բաղադրություն, վայրենի տունկ չէր ներկայացնում, այլ ինամքով պատվաստված ազնիվ պտղաբեր մի ծառ», և նրա մեջ ձուլված են ոչ թե երկու, այլ հինգից ավելի հաբեթական լեզուներ, ինչով էլ բացատրվում է բառերի զարմանալի հարստությունն ու ձևերի անսահման ընտրությունը: Իր ասածի անժխտելի ապացույցներից մեկը մեծ հայագետը համարում է հայոց լեզվի հոլովական համակարգը և մասնավորապես՝ դերանունների հոլովումը, ինչպես, ասենք, անձնական դերանունների տրական հոլովածները՝ *իևձ*, *քեզ*, *մեզ*, *ձեզ*: «Այդ *զ* հնչյունի մեջ մնացել է տրականի հաբեթական վերջավորության վերապրում՝ *մե-զ*, *քե-զ*, *ձե-զ*»: Իր դիտարկումներում Ն.Մառը *իև-ձ* բառածը համարում է *իև-զ* ձևի զարգացումը, որն էլ «*հաբեթական* հնչյունաբանության առավել բարձր աստիճանն է ներկայացնում»²:

Հետաքրքիր իրողություններ են ի հայտ գալիս նաև անձնական դերանունների հոլովական համակարգը քննելիս: Ինչպես հայտնի է, անձնական *ես*, *դու*, *նա*, *ինքը*, *մենք*, *դուք* և ցուցական *սա*, *դա* դերանուններն իրենց հոլովական առանձնահատկություն-

¹ Նույն տեղում:

² Ն.Մառ, Հայկական մշակույթը, Ե., 1989, էջ 27:

ներով տարբերվում են հայերենի հոլովվող մյուս բառախմբերից: Ի տարբերություն անվանական հոլովման, որին հատուկ է մասնիկավորումը, ներքին թեքումը, դերանվանական հոլովմանը բնորոշ է տարարմատությունը. սեռականն ու տրականը կազմվում են ոչ թե ուղղականից, այլ բոլորովին այլ արմատներով կամ հիմքերով, որոնք անկախ և անտարրալուծելի բառեր են, ինչպես՝ *ես-իմ-ինձ, դու-քո-քեզ*: Չուտ դերանվանական, տարահիմք հոլովում ունի միայն գրաբարը: Ժամանակակից գրական հայերենին բնորոշ է դերանվանական-անվանական խառը տիպը, քանի որ հարացույցի անդամների մի մասը (ուղղական, սեռական, տրական) տարահիմք է, իսկ բացառական, գործիական և ներգոյական հոլովների վերջավորություններն անպայմանորեն դրվում են տրականի ձևի վրա: Հայերենի բարբառների անձնական դերանունները նույնպես դերանվանական-անվանական խառը տիպի հոլովման են ենթարկվում, սակայն, ինչպես ցույց են տալիս փաստերը, խախտվում են դերանվանական և անվանական հոլովումների սահմանները՝ հոգուտ անվանական հոլովման տիպի ընդլայնման, որը կարելի է բացատրել հոլովման համակարգի միասնականացման և պարզեցման միտումով: Օրինակ՝ Երզնկայի բարբառում բացառականի *իսէ, իզէ, իմննէ* և *քէսէ, քեզէ, քոււննէ* ձևերի առաջացման մասին բարբառի ուսումնասիրությանը նվիրված մեկագրության մեջ տրվում է հետաքրքիր մեկնաբանություն. «*իսէ* և *քէսէ* ձևերը գրաբարյան *յիսէս* և *ի քէս* ձևերի անմիջական շարունակությունն են. նախ՝ դուրս է մղվել առաջին դեմքի վերջին *ւ*-ն՝ դիտվելով իբրև հոդ, որով դերանվանը տրվել է գոյականի բացառական հոլովի կերպարանք՝ *յիսէս > յիսէ*: Սրա նմանողությամբ և դարձյալ անվանական հոլովմանը նմանվելու ձգտումով *ի քէս* ձևին *է* է ավելացել՝ *ի քէսէ*, որից հետո ընկել են *յ, ի* նախդիրները՝ *յիսէ > իսէ, ի քէսէ > քէսէ*: Կարելի է համարել, որ անձնական դերանուններից առաջին քայլը դերանվանականից դեպի անվանական հոլովում կատարել է 3-րդ դեմքի դերանունը, որին հետևել են մյուս դեմքի դերանունները»¹:

¹ Դ. Կոստանյան, Երզնկայի բարբառը, Ե., 1979, էջ 74:

Դերանվանը սվիրված իր ծավալուն մենագրության մեջ Յ. Աճառյանը, ի մի բերելով անձնական դերանունների հոլովման համակարգի իրողությունները, նշում է դերանվանական հոլովածների մի շարք ինքնատիպ դրսևորումներ հայերենի բարբառներում: Դետաքրքիր է այն երևույթը, որ հայցական հոլովածներ որոշ դեպքերում նման է ուղղականին՝ *զ* նախդիրով: Այսպես՝ *զէս* (Սվեդիա, Քեսաբ), *զըս* (Չեյթուն), *զիս* (Մուշ, Սուչավա, Յաճըն), *իզիս* (Յամշեն), *ընծիս* (Խարբերդ-Երզնկա), *ծը* (Ոզմ) և այլն:

Գրաբարյան հայցական հոլովի ցուցիչ *զ* նախդիրը հետաքրքիր գործառույթ է դրսևորում Արարատյան բարբառի Կոտայքի գյուղերի խոսվածքներում: Բարբառի քննությանը սվիրված մենագրության մեջ բերվում է հետաքրքիր մի դարձվածք՝ *Չիկըզ գարկէց, զիկըն էլ խաղաց* (իկըն իր խելքից տուժեց), որի մեջ *զիկըն* ձևը ուղղական հոլովի արժեք ունի, ոչ թե հայցականի¹:

Վանի բարբառի քննությանը սվիրված մենագրության մեջ Յ. Աճառյանը ներկայացնում է անձնական դերանունների մասին հետաքրքիր դիտողություններ: Եզակի առաջին դեմքի *յես* դերանվան տրական և հայցական հոլովածներում բարբառն ունի՝ *ծի, ծիկ*, որոնք Աճառյանը համարում է նախավանկի անկումով *իկնծի, ընծի* և *իկնծիկ* ձևերից առաջացած և հենց դրանով է բացատրում այն իրողությունը, որ *ծ*-ն օրինաչափորեն *ծ*-ի չի փոխվել, ինչպես, ասենք, բացառական հոլովում՝ *իկնծից>ծիկից* (բաղաձայնից առաջ): Օրինակ՝ *Ի՞նչ կուզես ծիկից*: Այս առիթով Յ. Աճառյանը ներկայացնում է բացառականի *ծիկից, ծիկմէ* (իկնծից), գործիականի *ծիկնոս* ձևերը՝ նկատելով, թե դրանք շատ քիչ են տարբերվում երկրորդ դեմքի հոգնակի *տուիք* ձևի համապատասխան հոլովածներից (*ծեկից, ծեկնոս*): Բարբառին անծանոթ մարդու համար դժվար կլինի տարբերել՝ *ծիկից* (իկնծից) և *ծեկից* (ծեզանից): Յ. Աճառյանը Վանի ժողովրդական ասացվածքում պահպանված մի յուրօրինակ բառաձև է ներկայացնում՝ *մէնես* (իկնծից), ինչպես՝ *Էլէ մէնես, կուտա վերես (իկնծից է դուրս եկել,*

¹ Ռ. Մարկոսյան, Արարատյան բարբառ, Ե., 1989, էջ 128:

ինձ բան է սովորեցնում): Այդ առիթով Աճառյանը նշում է. «Այստեղ *մէն, մէնէ* բացառականի մասնիկն է. վերջահար ս-ն առաջին դեմքի ստացական հոդն է, իսկ արմատը չկա. երևի պիտի լինի *իմ* կամ *ին(ձ)*, որ շնչվել է»¹:

Շատախի խոսվածքում (բարբառագետ Մ.Մուրադյանը դիտարկել է որպես առանձին բարբառ) *յէս* դերանվան սեռականն է՝ *յէմ* (*Յէմ յար տունն չէր, նըստա, լացի*), տրականը՝ *ձի* (*Աստորվորի մալ ձի, քյի չը մը՛նա*), *դու* դերանունը օրինաչափորեն *տուի* է հնչում, սեռական հոլովում՝ *քյը*, տրական հոլովածն է՝ *քյի*, հայցականը՝ *ըզքյի*, ինչպես՝ *Քյը մեր կիրիր յէղէղէն, ըզքյի պիրիր խըրէղէն*²:

Ազուլիսի բարբառում միավանկ և երկվանկ բառերի շեշտակիր *ի-ն* վերածվում է *յի* ձայնավորի (*ձիրան>ձյրուս, սիրուն> սյրուն*), առաջին դեմքի անձնական դերանվան սեռական, տրական հոլովածներն են համապատասխանաբար՝ *իմ>յիմ, ինձ>յինձ*, ինչպես՝ *Իս ամպես ըմ գըրում, օր յիմ գըրէծըս ուիման չի գյիրամ կարդի, ալ յինձ ըն կանչամ յիմ գըրէծըս կարդիմ* (Ես այնպես եմ գրում, որ իմ գրածը ոչ ոք չի կարողանում կարդալ, էլի ինձ են կանչում, որ գրածս կարդամ)³:

Դերանվանական հետաքրքիր ձևեր փնտրելիս Ղարաբաղի բարբառի Գորիսի խոսվածքին նվիրված մենագրության մեջ (ըստ հեղինակի՝ Գորիսի բարբառ) գտել և առանձնացրել ենք *յէս* դերանվան տրական ու հայցական *ինձ* ձևի կողքին գործառող *իզ* ձևը՝ որպես *ն-ի* անկումով առաջացած՝ *ինձ > իձ >իզ*. օրինակ՝ *Էտ լյիվ պյինը իզ սո: Իզ տուի տեսալ չէս*⁴:

Հայ բարբառների բազմահատկանիշ վիճակագրական դասակարգման նպատակով ընտրված քերականական հատկանիշների շարքում ակադ. Գ.Զահուկյանն ընդգրկել է նաև դերանունների թեք հոլովածներում *ի-ի* առկայության հատկանիշը(*65), ինչ-

¹ Զ.Աճառյան, Զննություն Վանի բարբառի, Ե., 1952, էջ 150:

² Մ.Մուրադյան, Շատախի բարբառը, Ե., 1962, էջ 164:

³ Մ. Չաքարյան, Ազուլիսի բարբառը, Ե., 2008, էջ 344:

⁴ Ալ. Մարգարյան, Գորիսի բարբառը, Ե., 1975, էջ 159:

պես՝ *ինձ (ինձի)*, *քեզ (քեզի)*, *մեզի*, *ձեզի*, *եսի*, *էնի* և այլն: Նույն տեղում տեղ են գտել նաև *իկ*, *իզ*, *կ*, *զ*-ով (*66) դերանվանական ձևերը (Էսիկ, Էդիկ, Էնիկ) և այլն¹: Այս հատկանիշն ունեն շատ բարբառներ, ասենք՝ Արդվին, Խարբերդ-Երզնկա, Կարին, Թիֆլիս, Աստրախան՝ *ինձի*, Մուշ, Տիգրանակերտ, Ուրմիա, Պոլիս, Ն. Նախիջևան՝ *ընձի*: Վանի բարբառում *ընձի*-ն դառնում է *ձի-ձիկ*, Ոզմի խոսվածքում՝ *ձէյ*, *ընձէյ*, իսկ Համշենի բարբառում՝ *ինձիզի*, *մեզիզի*:

19-րդ դարավերջին բանահավաք Ս.Հայկունու գրառած նյութերում, որոնցից օգտվել է Հ.Աճառյանը Համշենի բարբառի քննությանը նվիրված ուսումնասիրության մեջ, գտել ենք դերանվանական նմանատիպ ձևերի գործածության օրինակներ, ինչպես՝ *Յօխրէյս մեզիզի շաղ սիրէր գու*, *ամմա հողօլիզինս էմէն դարբա մեզիզի քեթթէր գու* (Հորեղբայրս մեզ շատ էր սիրում, սակայն հորեղբորս կինը ամեն անգամ ծեծում էր մեզ)²:

Տիգրանակերտի բարբառում անձնական *թուն* դերանվան սեռականը փոխանվանաբար հոլովվելիս ունենում է *քումէ* (քոնը) ձևը, որ կապվում է գրաբարի ստացական *քո* դերանվան տրական *քում* ձևին, ինչպես՝ *Էրթէ քումէ չէր*, *Էրթւմմւն լէ քումէ չէր* (Հարողը քոնը չէր, հարդամմւն էլ քոնը չէր): Բարբառին նվիրված մենագրության մեջ Ա.Հանեյանը նշում է. «Անեծքներում հանդիպում է այս հոլովածնի յուրօրինակ ու հետաքրքիր գործածություն. *քումէ*-ն դրվում է հետադաս՝ նախադասության վերջում, ստորոգյալից հետո և արտահայտում է *քո* հոլովածնի իմաստ, օր.՝ *Դունթի ււվրի քումէ*, *վիզիթ գօրրի քումէ* (Զո տունն ավերվի, վիզդ կոտրվի)³: Մենագրության հեղինակն այս իրողության առիթով հավանական է համարում պատմականորեն դերանվան սեռական և տրական հոլովի իմաստների միասնացման, միածուլման միտումը: Այս կերպ կարելի է ներկայացնել նաև Մշո բար-

¹ Գ. Ջահուկյան, Հայ բարբառագիտության ներածություն, Ե., 1972, էջ 83:

² Հ. Աճառյան, Զննություն Համշենի բարբառի, Ե., 1947, էջ 194:

³ Ա. Հանեյան, Տիգրանակերտի բարբառը, Ե., 1978, էջ 159:

բառում առկա *խմուն*, *քումուն* ձևերը: օրինակ՝ *հաճ խմուն է, գորուտեն յես գհնամ*¹:

«Քննություն Առտիալի բարբառի» աշխատության մեջ՝ դերանունների քննությանը նվիրված բաժնում, Յ.Աճառյանն առաջին և երկրորդ դեմքերի համար առկա ձևերը (հունգարահայ գաղթօջախի և Սուլջավայի բարբառում՝ *յես-մինք, դհուն-դհունք* և լեհահայ բարբառում՝ *յես-մինք, դհուն-դհունք*) ներկայացնելուց բացի հետաքրքիր դիտողություն է անում 3-րդ դեմքի առիթով. «Հատկանշական է 3-րդ դեմքի *ինքը* դերանվան հոլովածների փոխարկումը 1-ին և 2-րդ դեմքի *ս* և *դ* հոդերի միջոցով, ինչպես՝ *իրմես = ինձանից, իրմովըս = ինձանով, իրմընցովըս = մեզանով*, ինչպես նաև՝ *իրմեղ = քեզանից, իրմովըդ = քեզանով, իրմընցովըդ = ձեզանով*»²:

Անդրադարձ դերանուններն իրենց բնույթով ձևաբանական ու շարահյուսական ոճական խնդիրներ են լուծում խոսքում՝ արտահայտելով նույնություն գործողության սուբյեկտի հետ: Անդրադարձ դերանունները գործածվում են նաև գրական արևելահայերենում և արևմտահայերենում, ինչպես՝ *ինքնիրեն, ինքնըստինքյան* (գրաբարաբանություն է): Ըստ էության անդրադարձ նշանակություն ունեն սաստկություն արտահայտող կապակցությունները, ինչպես արդի գրական արևելահայերենում՝ *ես ինքս, դու ինքդ, նա ինքը* կամ, ասենք, գրական արևմտահայերենում՝ *ես ինձի, դուն քեզի, ինքզինքը* և այլն³:

Հայերենի թե՛ արևելյան, թե՛ արևմտյան խմբակցության բարբառներում անդրադարձ դերանունները խոսքի արտահայտչական հնարներ իրականացնելու միջոց են ծառայում՝ հանդես գալով բառակազմական հետևյալ կադապարներով.

1. Դերանվան ուղղական հոլովածնը կրկնվում է *ու* շաղկապով միացած, ինչպես՝ *Ղարաբաղի բարբառով՝ յես ու յես* (ես ինքնին),

¹ Ս.Բաղդասարյան-Թափալցյան, Մշո բարբառը, Ե., 1958, էջ 220:

² Յ. Աճառյան, Քննություն Առտիալի բարբառի Ե., 1953, էջ 153:

³ Յ. Պետրոսյան, Հայերենագիտական բառարան, էջ 32:

տոյն ու տոյն (դու ինքնին), *Մուկք ու մուկք* (մենք ինքներս) և այլն:

2. Դերանվան ուղղական հոլովածնը կրկնվում է առանց շաղկապի, ինչպես՝ *իս իս, դ՛օն դ՛ օն* (Չեյթունի բարբառ): Օր.՝ *իս իս գօ գայրօւ* (ինքս ինձ), *դ՛օն դ՛օն գօ խուսաս* (քեզուքեզ խոսում ես)¹:

3. Անձնական դերանվան տրական հոլովը կրկնվում է առանց *ու* շաղկապի, ինչպես Վանի բարբառում՝ *ձիյձիյ* (ինձուինձ), *քլեքլե* (քեզուքեզ): Օրինակ՝ *Ձիյձիյ ըսկընսն կասի: Զլեքլե իՆչ խսնքսն կուտաս*: Անդրադարձ դերանվան արժեք ունի նաև *զինքյուր* (ինքըն իրեն) բառանվանումը, ինչպես՝ *Չինքյուր սպանեց*²:

Բերենք նաև արևելյան խմբակցության բարբառներում գործառող անդրադարձ դերանունների օրինակներ. *նիրան-նիրան* (Ղարաբաղի բարբառ), *ինձի-ինձի, միզի-միզի, ծիզի-ծիզի, ուրունց-ուրունց* (Մարաղայի բարբառ), իսկ Ջուղայի բարբառով՝ *յուրնուրն* (ինքնիրեն), *յուրեկցուրեկց* (իրենք մենակ)՝ բոլորն էլ անդրադարձ դերանվան վերոհիշյալ նրբիմաստներով:

4. Անձնական դերանունների միևնույն դեմքի ուղիղ ձևը կրկնվում է թեք հոլովածների հետ հետևյալ կաղապարներով.

ա) ուղղականը կրկնվում է իր տրականի հետ, օրինակ՝ Պոլսի բարբառով՝ *մենք մեզի գըխօսեհնք գօր*:

բ) *ուղղականը՝ իր հայցականի կամ տրականի հետ* կաղապարով, ինչպես, ասենք, Պոլսո բարբառում՝ *դուն քեզի, մենք մեզի*, սովորական է *ինքզինքըրը*, որին համարժեք է, բայց նվազ գործածական՝ *դուն քեզի*, ինչպես՝ *Դուն քեզի գը հատծունես գօր* (ինքը քեզ մաշում ես): Համարժեք ձևեր են՝ *ինքըզինքը մտցուցեր էս = դուն քեզի մտցուցեր էս*:

Բերենք օրինակներ նաև Տիգրանակերտի բարբառով. *Յես ընձի ֆըքրա, էգա: Թուն քըզի իՆչ գէնիս: Ինքընքի վսն թսնքլիր* է³:

¹ Բ.Աճառյան, Լիակատար քերականություն, հ.2, էջ137:

² Բ.Աճառյան, Զննություն Վանի բարբառի, էջ 151:

³ Ա.Հանեյան, Տիգրանակերտի բարբառը, էջ159:

Նմանատիպ մեկ օրինակ էլ ներկայացնենք արևելյան խմբակցության բարբառներից քաղված բանահյուսական նմուշներից: Ըստ Գ.Ջահուկյանի բազմահատկանիշ վիճակագրական դասակարգման՝ Ագուլիս-Մեղրիի բարբառախմբի Մեղրու բարբառի Կաքավաբերդի խոսվածքում (բարբառագետ Յ.Մուրադյանի կողմից դիտարկվել է որպես առանձին բարբառ) նույնպես գործառում են նմանօրինակ կաղապարով առաջացած անդրադարձ դերանուններ, ինչպես՝ *ինքի ուրան վընդավը=ինքն իր ոտքով*: Օրինակ՝ *Բիժիժկ ջան, իս չիմ նեցալ սանատորյա, յէ՛, սանատորյան ա ինքի ուրան վընդավը յէկալ մըր տօն, ինձ էստի լըղըրցըրալ*¹:

գ) *ուղղականը*՝ կրկնվում է իր *բացառականի* հետ. այս կաղապարով անդրադարձ դերանուն են կազմում թե՛ արևելյան և թե՛ արևմտյան խմբակցության բարբառներում, ինչպես՝ *դ՛ու քըզնէ* (Մշո բարբառ), *մէք մըզանա* (Ղարաբաղի բարբառ) և այլն:

5. Հայերենի տարբեր բարբառներում առկա անդրադարձ դերանուններից ներկայացնենք իրենց ինքնատիպությամբ առանձնացող հետաքրքիր ձևերից մի քանիսը.

ա) Բայագետի բարբառում *հիրանը* ձևը անդրադարձի արժեք ունի՝ *ինքնիրեն* նշանակությամբ, ինչպես՝ *Մէշուր դինջըցավ, հիրանը հավաքեց, նօր խասկըցավ գըլխին էկածը*²:

բ) Գործառական նմանատիպ արժեքով են հանդես գալիս Գորիսի խոսվածքում առկա *զինքըտ* (ինքդ քեզ), *զինքը*, *իզինքը* (ինքնիրեն) ձևերը: Օրինակ՝ *Չինքըտ հըվաքի: Չինքը օտում ա, իզինքը տըփերավըն ա կյւմ*³:

գ) Նոր-Նախիջևանի բարբառով ասվում է՝ *ինքերը իրենց* (իրենք իրենց): Կա նաև *ինքիր գուլխուն* բառակապակցությունը՝ թուրքերենից կաղապարված, որի բառիմաստն է՝ *ինքնագուլխ*: Երբեմն *ինք* բառին կից կարելի է դնել *իր* անդրադարձը՝ *ինքիրզինքըս*:

¹ Յ.Մուրադյան, Կաքավաբերդի բարբառը, Ե., 1967, էջ 217:

² Վ.Կատվայան, Զննվան՝ա խննան՝ք- չննան՝ք, Ե., 2009, էջ 67:

³ Ալ.Մարգարյան, Գորիսի բարբառը, էջ 159:

դ) Պոլսի բարբառին նվիրված ուսումնասիրության մեջ Յ. Աճառյանի գրառած բարբառային նմուշներից օրինակ բերելը *ինքնիրենը* ձևը՝ *ինքնուրույն, մենակ, ինքդ քեզնով* նշանակությամբ. «*Մեզ փան ինքնիրենը չես գորնար ընել, աշխարք ալ գուլխուլթ թօփ ընել գընայիս* (մի բան մենակ չես կարողանում անել, աշխարհը գլխիդ հավաքել ես ուզում)»¹:

Հետաքրքիր են նաև Քեսաբի բարբառում գործառող անդրադարձ դերանունները, որոնք յուրահատուկ կառուցվածք ունեն, ինչպես՝ *միքքըմի, դեօնըդի, դեօնըդի* (ուղղ. հոլ+ընդ+տր. հոլ.), իսկ 1-ին դեմքի եզակիի և 3-րդ դեմքի եզակի և հոգնակի ձևերի համար՝ *իսըդես, էնըդէք, իրինըդիրինք* (վերջին ձևում *ընդ* նախորդից միայն *դ*-ն է մնացել)²:

Ակնհայտ է, որ անդրադարձ դերանունները ոճական առավել արտահայտչականության հասնելու միտումով են գործառնել հայ բարբառներում:

Барнасян Джемма- Личные и возвратные местоимения в диалектах армянского языка (функционально- семантический анализ).- В качестве материала для исследования личных местоимений в диалектах армянского языка нами были использованы монографии по диалектологии, образцы устного народного творчества разных этнографических поясов, а также записи различных говоров. Сопоставление исследуемого материала однозначно указывает на то, что ни один из диалектов армянского языка не использует новых местоименных корней, все диалекты используют одни и те же корневые формы единого народного языка, но только с различным произношением. При этом - каждый диалект в соответствии с присущими ему фонетическими законами.

Второй том “Полной грамматики армянского языка” выдающегося лингвиста Р. Ачаряна полностью посвящен *местоимению*, как части речи. На основе исследуемого им материала, широко представленного в диалектах армянского языка, ученый приходит к выводу, что личные местоимения относятся к общеармянскому пласту лексики. Интересные

¹ Յ. Աճառյան, Զննություն Պոլսո բարբառի, Ե., 1953, էջ 183:

² Յ. Չոլաքեան, Քեսապի բարբառը, Հալէպ, 1986, էջ 83:

реалии выявляются также при анализе парадигм склонения местоимений.

В восточноармянских и западноармянских диалектных группах *возвратные* местоимения употреблялись для большей стилистической выразительности.

Jemma Barnasyan- The Personal and Reflexive Pronouns in Armenian Dialects (a semantic-functional study).- The study of personal pronouns in Armenian dialects is based on the material taken from the monographs on dialectology, pieces of folklore from ethnographic zones as well as records of different dialects. The comparative study of the material shows that none of the Armenian dialects makes use of new pronominal root forms. All of them use the same root forms of the national language with different pronunciations in accordance with the phonetic rules typical of each dialect.

The second volume of the eminent linguist H. Acharyan entitled “Complete Grammar of the Armenian Language” is entirely devoted to the study of *pronoun* as a part of speech. The study of the material enables the linguist to state that the personal pronouns belong to the common Armenian layer of the vocabulary. The analysis of the case system of the personal pronouns is of paramount interest as well.

The reflexive pronouns were used in the dialects of both Eastern and Western groupings to achieve more expressiveness from the stylistic perspective.

Բայի քերականական ձևերի ոչ կանոնական կիրառություններ ՉԼՄ-ների լեզվում

Չանգվածային լրատվության միջոցների լեզվում շատ են բայի քերականական ձևերի ոչ ճիշտ գործածության դեպքերը: Այդ առումով հատկապես աչքի է ընկնում ռադիոյի և հեռուստատեսության լեզուն: Հոդվածում համառոտակի անդրադարձել ենք այդպիսի առավել տարածված իրողությունների, որոնք պայմանավորված են օտար լեզուների ազդեցությամբ, լեզվական և ոճական տարաբնույթ սորմերի ոչ լիարժեք իմացությամբ: Տրվում են նաև բայի քերականական ձևերի սխալ կիրառությունների ճիշտ ձևերը:

Ստորոգյալի արտահայտության տարբեր ձևերով են պայմանավորված ներգործական և կրավորական կառուցվածքի նախադասությունները: Հայտնի է՝ ներգործական կառուցվածքի նախադասության դեպքում գործողություն կատարողը դրսևորվում է ենթակայի միջոցով, ստորոգյալը լինում է ներգործական սեռի բայ, գործողություն կրողը արտահայտված է ուղիղ խնդրի միջոցով:

Կրավորական կառուցվածքի նախադասության ստորոգյալը լինում է կրավորական սեռի բայ, գործողությունը կրող խնդիրը հանդես է գալիս որպես նախադասության ենթակա, իսկ գործողություն կատարողը դրսևորվում է ներգործող խնդրի միջոցով¹:

Մինչդեռ ՉԼՄ-ների լեզվում (այդ թվում նաև արդի մամուլի) ոչ ճիշտ են այս երկու կառույցները ճիշտ կիրառվում:

1. Ներգործական սեռի բայերը ոչ ներգործական կառուցվածքի նախադասություններում գործածելու դեպքեր: Բերենք օրինակներ ՉԼՄ-ներից. «Երգը սոր երգ է, որը *կներանի* (փխ.՝ կներառվի)

¹ Ն. Պառնասյան, Շարահյուսական համանիշները ժամանակակից հայերենում, Ե., 1970, էջ 119:

նոր հոլովակում» (երգչի խոսքից): «Որքանով այն *կհաջողի* (փխ.՝ կհաջողվի) Յայաստանում» (հաղորդավարի խոսքից): «Այդ հիվանդությունները *հաղթահարած են* (փխ.՝ հաղթահարված են) Յայաստանում» (բժշկի խոսքից): «Յայ լայն ինտերնետային կապը *փորձած է* (փխ.՝ փորձված է), փորձի՛ր, զգա՛ տարբերությունը, *փորձած է*» (փխ.՝ փորձված է.գովազդային տեքստից): «Պըդպեղը համը ավելի համեղ *կստացնի*» (փխ.՝ կըղարձնի.«Յեռուստախոհանց») կամ՝ Պըպեղով ավելի համեղ կստացվի: «Նայեցի, տեսա՛ մեքենան *շահած ա*» (փխ.՝ շահած մեքենա.գովազդային տեքստից):

2. Կրավորական սեռի բայերը ոչ կրավորական կառուցվածքի նախադասություններում գործածելու դեպքեր: Այսպես՝ «Ես նրա նկատմամբ *տածված եմ* մեծ սիրով» («Դիպված») (փխ.՝ Ես նրա նկատմամբ մեծ սեր եմ տածում): «Եղնիկն ինչպես անսպասելի հայտնվեց, այնպես էլ *մեկնվեց*» (փխ.՝ մեկնեց): Այստեղ նկատի ենք ունեցել «մեկնել» բայի կրավորականի սխալ կազմությունը: «Բայց հիմա էլ նրանք չպետք է *գիջվեն* (փխ.՝ գիջեն) որևէ երկրի» (պատգամավորի խոսքից): «Խոսա՛ (խոսի՛ր), Անի՛, ու *չփորձվես* (փխ.՝ չփորձես) ինձ խաբել» (Ֆիլմ):

3. Յարակատար դերբայով որոշիչները առանց վի և վ-ով մերժելի են հետևյալ դեպքերում: «Մեր *կատարված* (փխ.՝ կատարած) աշխատանքները գտան իրենց արդյունքները» (լուրեր): «Ձեր *սիրված* (փխ.՝ սիրած) թիվը, գույնը, ծաղիկը» («Յեռուստախոհանց»): «Օգտագործելու ենք *քաշված* (փխ.՝ քաշած) օղի» («Յեռուստախոհանց»):

Յարակատար դերբայով ստորոգյալը՝ *աշխատված*, սխալ է որովհետև *աշխատել*-ը տվյալ կառույցներում չէզոք սեռի բայ է: Օրինակ՝ «Փաստաթուղթը բավական *աշխատված է*» (փխ.՝ մշակված է): Կամ՝ «Պիտի *աշխատվի* (փխ.՝ պիտի աշխատել) լավ երգելու համար» (ժյուրիի խոսքից):

4. Յայտնի է՝ *վերաբերել/վերաբերվել* բայերի զուգահեռ ձևերը գործածվում են առանց վի, եթե ենթական իրի անուն է, իսկ ածանցավոր ձևը՝ անձ ցույց տվող ենթակայի դեպքում: Ծիշտ

հակառակն է *սպասել//սպասվել, սկսել//սկսվել* բայերի զուգահեռ ձևերի գործածության դեպքում: Օրինակներ՝ «Դա քեզ չի *վերաբերվում*» (փխ.՝ վերաբերում. ֆիլմ): «Հասարակությունը ինչպես պետք է *վերաբերի* (փխ.՝ վերաբերվի) անցյալին» («Հայացքներսից»): «Ապագա արկածներ պետք է *սպասեն*» (փխ.՝ սպասվեն. ֆիլմ): «Ամեն ինչ *սկսեց* (փխ.՝ սկսվեց), երբ շատ փոքր էի» («Հայացքներսից»):

5. Օժանդակ բայի գործածության ոչ ճիշտ ձևեր: Գրական չէ անվանաբայական և բայական բաղադրյալ ստորոգյալների ժըխտական ձևերի կազմության ժամանակ օժանդակ բայի եզակի թվի երրորդ դեմքի *չէ-ն չի-*ով փոխարինելը: Օրինակներ՝ «Նա մենակ *չի*» (փխ.՝ չէ. կրկ. ֆիլմ): «Փորձն ինձ հուշում *ա* (է), որ հեռու գնալ պետք *չի*» (չէ. ֆիլմ):

Գրական չէ նաև օժանդակ բայի եզակի երրորդ դեմքի *է-ի* փոխարեն *ա* գործածելը: Օրինակ՝ «Տուրիզմի մասին կարելի *ա* (է) *խոսալ*» (խոսել. ռադիոուսկևնդրի ձայն): «Աստված մեծ *ա* (է), Աստված *ք* (քեզ) հետ լինի» (ֆիլմ): «Դա ավանդաբար եկող բան *ա* (է)» (հաղորդավարի խոսքից): «Իմ կարծիքն *ա* (է), որ լավ արտադրանք *ա* (է)» (ցուցահանդեսի այցելու):

Կանոնական չեն կարող համարվել նաև հետևյալ դեպքերը.

ա) Սուկածանցավոր բայերի պատճառականը կազմվում է *ացն, եցն, ցն* ածանցներով կամ անորոշ դերբայի և *տալ* բայի հարադրությամբ: Մինչդեռ ՉԼՄ-ների լեզվում հանդիպում են պատճառական բայերի կազմության, ինչպես նաև սուկածանցավոր բայերի անցյալի հիմքից կազմված ձևերի ոչ ճիշտ կիրառություններ: Օրինակներ՝ «Նման համարձակությունները արհեստական են լինում և շատ արագ *վիժացվում են*» (փխ.՝ վիժեցվում. «Բանաձև»): «Ես իմ խոսքը կատարել եմ և *աճացնում եմ* (փխ.՝ աճեցնում) կարտոֆիլ» (ռադիոուսկևնդրի ձայն): «Նա ինձ *երգացրեց*» (փխ.՝ երգել տվեց. երգչուհու խոսքից): «Բոլոր այրվող կետերը պետք է *հանգեցնենք*» (փխ.՝ հանգցնենք. հրշեջի խոսքից): «Առավոտյան թեյը ավելի է *թարմեցնում* (փխ.՝ թարմացնում), քան սուրճը» (հաղորդավարի խոսքից): «Էկզոտիկ մրգերով *թար-*

Մեցնող (փխ.՝ թարմացնող) հյուօեր» (գովագղային տեքստից): «Տիկին Բեդի, կարողացա Ձեր նմաններին *հիմարեցնել*» (փխ.՝ հիմարացնել. կրկ. ֆիլմ): «Սոխից (պատրաստված) ծաղկից հոտ չպետք է քաշել, որովհետև *կլացվի*» (փխ.՝ կլացացնի. հաղորդավարի խոսքից): «Յողը *պարարտեցնել* (փխ.՝ պարարտացնել) է պետք» (լուրեր): Յաճախ լծորդիչի սիալ կիրառություն նկատվում է ոչ միայն պատճառական կազմելու դեպքում. օրինակ՝ «Մոսկվա» կինոթատրոնի ամառային դահլիճը չի պահանջում *սառացում*» (փխ.՝ սառեցում. լուրեր):

բ) Պատճառական բայերի հոգնակի անցյալ կատարյալի կրկնակի հիմքով կազմությունները: Ինչպես՝ «Ինձ *հարցրեցին* (փխ.՝ հարցրին)՝ երբ կավարտվեն բեռնափոխադրումները» (լուրեր): «Փաստորեն մենք Ձեր նկատմամբ վստահությունը *կորցրեցինք*» (փխ.՝ կորցրինք. ֆիլմ):

գ) Մոսկածանցավոր բայերի անորոշ դերբայի *ւ, չ* ածանցները դուրս են ընկնում անցյալի կատարյալի ձևերում, և բայարմատը դառնում է կատարյալի հիմք՝ *ա, ար, ավ, անք, արք, ան* վերջավորություններով, սակայն ՉԼՄ-ների լեզվում ոչ միշտ է այդպես: Օրինակ՝ «Ես *դիպչեցի* (փխ.՝ դիպա) քո հոգու լարերին» («Կարգին սերիալ»): «Է՛յ, ո՞ր *կորեցիր*» (փխ.՝ կորար. ֆիլմ): «Իմ մեկ ամսվա աշխատանքը *կորեց*» (փխ.՝ կորավ. կրկ. ֆիլմ):

Անցյալի հիմքով են կազմվում նաև սահմանական եղանակի վաղակատար և հարակատար ժամանակները: Ինչպես՝ «Նրանք հաճախ ինքնաթիռով *փախչել են* (փխ.՝ փախել են) Թավրիզից» (լուրեր): «Չգիտես ինչու, մեծ ու փոքր առյուծներին *հեծնած էին*» (փխ.՝ հեծած էին. լուրեր):

Անկատարի հիմքից են կազմվում *ե* խոնարհման *ւ, չ* սոսկածանցավոր *թռչել, կորչել, տեսնել* և այլն բայերի սահմանական եղանակի ներկա, ըղձական ապառնի ժամանակները և ենթակայական դերբայը: Այսպես՝ «Ինչ-որ բան *կորում ա* (փխ.՝ կորչում է) *էր* (այդ) ճանապարհին» (երգչի խոսքից): «Կանաչին պետք է ավելացնել վերջում, որպեսզի վիտամինները *չկորեն*» (փխ.՝ չկորչեն. «Յեռուստախոհանց»): Մոսկածանցավոր բայերը ճիշտ

չի կիրառում անգամ հեռուստահաղորդավարը: Բերենք օրինակներ մի սպորտային հաղորդումից: Այսպես՝ «Կենդանին դուրս եկավ ջրից և *թռչեց*» (փխ. թռավ): «Արևիկը *թռնում է* (փխ.՝ թռչում է) հարթակից: Ոչ մի հարված չի *կայնում* (փխ.՝ չի կայում) նրան»: Հաղորդավարը թույլ տվեց նաև հարկադրական եղանակի բայաձևի փոխարեն անորոշ դերբայի սխալ գործածություն: Այսպես՝ «Արևիկը պետք է ոտքի կանգնի և *վազել*» (փխ.՝ վազի): «Ես ուզում եմ լսողների և *տեսողների* (փխ.՝ տեսնողների) ուշադրությունը հրավիրել հետևյալ հարցի վրա» («Կենդանի մատյան»):

դ) Հաճախ *ա* խոնարհման բայերի անցյալ վաղակատար ձևերի նմանությամբ գործածում են *ե* խոնարհման *խոսել* բայի *խոսացել* սխալ ձևը: Այսպես՝ «Լիանի հետ *խոսացել եմ*» (փխ.՝ խոսել եմ. ֆիլմ): «Ես կմոռանամ՝ ինչ եմ *խոսացել*» (փխ.՝ խոսել. ֆիլմ): «Երեկ ընկերուհիս է *խոսացել* (փխ.՝ խոսել) իմ փոխարեն» (երգչուհու խոսքից):

Սխալ է գործածվում *դառնալ* անկանոն բայը, որը որոշ դեպքերում շեղվում է հարացուցային կանոնավոր ձևից: Այսպես՝ «Ամեն ինչ պարզ *դառավ* (փխ.՝ դարձավ) ինձ համար» (ֆիլմ): Խոնարհման ընդհանուր կանոնից շեղվում է նաև *գալ* անկանոն բայը, որը սխալ է գործածում քաղաքական մեկնաբանը: Օրինակ՝ «Կհետևենք *գալող* (փխ.՝ եկող) շաբաթվա իրադարձություններին»:

Նախընտրելի չէ *հազալ* բայի փոխարեն *հազել* գործածելը: Այսպես՝ «*Հազեմ* (փխ.՝ հազամ), որպեսզի հանգիստ կարդամ» (հաղորդավարի խոսքից):

ե) Եղանակավորող բայերի կողքին անորոշ դերբայի փոխարեն ըղձական եղանակով դիմավոր բայի գործածությունը բարբառային արտահայտություն է: Օրինակ՝ «Հա՛յր, ուզում եմ *խոսամ* (փխ.՝ խոսել) քո (քեզ) հետ» (ֆիլմ): «Ես տուն եմ ուզում *գնամ*» (փխ.՝ գնալ. ֆիլմ): «Ես ուզում եմ մենակ *մնամ*» (փխ.՝ մնալ. ֆիլմ): «Սկզբում որոշում են, որ երգչի հետ *երգվի*» (փխ՝ երգել. երգչուհու խոսքից):

գ) Սկզբնաձևային *վ* ածանց ունեցող *գժտվել*, *հաշտվել*¹ և այլն բայերի նմանությամբ կազմվել են *տուժվել*, *բռնվել* և այլն բայերը, որոնք կրավորակերպ չեզոք չեն: Օրինակ՝ «Մտածեցին, որ շատ քիչ մարդիկ կլինեն, որ *կտուժվեն*» (փխ.՝ կտուժեն. ֆիլմ): «Յետևեք ինձ, պիևդ *բռնվեք* (փխ.՝ բռնեք)», «Դու ինձնից *կբռնվես* (փխ.՝ կբռնես) ու չես ընկնի» (ֆիլմ): «Մենք Արամի և Եվմայան փողոցների շենքի բնակարանների *տուժվածներից ենք*» (փխ.՝ տուժածներից ենք. լուրեր):

Մերժելի են՝ *վիճվել*, *վիճաբանվել*, *կրկնվել* (անձի դեպքում), *զանգվել*, *նամակագրվել* բայաձևերը: Այսպես՝ «Դուք *վիճվել եք* (փխ.՝ վիճել). նա էլ տնից գնացել է» (ֆիլմ): «Ես դավաճանում եմ Սոնչկային, երբ *վիճված* (փխ.՝ վիճած) եմ լինում» (ֆիլմ): «Մենք շատ քիչ ենք *վիճաբանվում*» (փխ.՝ վիճաբանում. երգչուհու խոսքից): «Մարտին ջան, ուզում եմ անընդհատ *կրկնվել* (փխ.՝ կրկնել)՝ քո երգելը ուրիշ է» («Յեռուստառեցատորան»): «Լավ առաջարկություն է՝ *կզանգվենք*» (փխ.՝ կզանգենք. ֆիլմ): «Նրանք *նամակագրվում են*» (փխ.՝ նամակագրական կապ ունեն. ֆիլմ):

ՉԼՄ-ների լեզվին հարիր չեն *թարգել*, *պարապվել*, *կապնվել*, *ցվրվել* և *հեռվանալ* հասարակաբանությունները: Օրինակներ՝ «Ես առաջարկում եմ՝ ծխելը *թարգել*» (փխ.՝ թողնել. հաղորդավարի խոսքից): «*Թարգի* (փխ.՝ թող) ծխելը, - ասում է կինը ամուսնուն» (ֆիլմ): «Պետք է հավատալ և *պարապվել*» (փխ.՝ պարապել. «Երջանկության մեխանիկա»): «Այնուամենայնիվ, ինչքան էլ գիտությունը զարգանա, մենք բնությունից *չհեռվանանք*» (փխ. չհեռանանք. հաղորդավարի խոսքից): «Գնալով նա *հեռվանում է* (փխ. հեռանում է) ինձնից» (ֆիլմ): «Իսկ դուք խմեք, մի քիչ *ցվրվեք*» (փխ.՝ ցրվեք. ֆիլմ): «Մարդիկ սերիալներով (ֆիլմաշարերով) մի քիչ *ցվրվում են*» (փխ.՝ ցրվում են. սպորտի վարպետի խոսքից):

Անշուշտ, քերականական ձևերի ոչ կանոնական գործածությունները ՉԼՄ-ների լեզվում այսքանով չեն սպառվում:

¹ Ս.Աբրահամյան, Ժամանակակից գրական հայերեն, Ե., 1981, էջ 194:

Այսպիսով՝ ՉԼՄ-ների լեզվում տեղ են գտնում հետևյալ ոչ կանոնական իրողությունները:

ա) Ներգործական սեռի բայերը ոչ ներգործական կառուցվածքի նախադասություններում գործածելու դեպքեր:

բ) Կրավորական սեռի բայերը ոչ կրավորական կառուցվածքի նախադասություններում գործածելու դեպքեր:

գ) Պատճառական բայերի կազմության, ինչպես նաև սուկածանցավոր բայերի ներկայի և անցյալի հիմքից կազմված սխալ կիրառություններ:

դ) Պատճառական բայերի անցյալ կատարյալի հոգևակի կրկնակի հիմքով կազմություններ, որոնք գրական լեզվի օրինաչափությունից շեղում են:

ե) Անկանոն բայերի (*դառնալ, գալ*) անցյալի կազմության սըխալ ձևեր:

զ) Հարակատար դերբայով որոշիչների *վ*-ով և առանց *վ*-ի գործածության ոչ ճիշտ ձևեր:

է) Գրական չեն օժանդակ բայի *չէ*-ն *չի*-ով փոխարինելը (մենակ չի, փի.՝ մենակ չէ), օժանդակ բայի եզակի երրորդ դեմքի *է*-ի փոխարեն *ա* գործածելը (*կարծիքն ա*, փի.՝ կարծիքն է):

ը) Մերժելի են *վիճվել, վիճաբանվել, բռնվել, զանգվել, նամակագրվել, կրկնվել* (անձի դեպքում), *պարապվել, թարգել* և այլն բայաձևերը:

Барсегян Амалия- Неправильные употребления грамматических форм глагола в языке СМИ.- В статье анализируются неправильные употребления синтаксических структур, связанные с грамматическими формами глаголов, которые особенно часто встречаются в языке СМИ. Вместо неправильных и нерекондуемых форм предлагаются правильные.

Barseghyan Amalya- The Incorrect Use of the Grammatical Verb Forms in Mass Media.- The present article focuses on the study of the incorrect use of syntactic structures connected with grammatical verb forms often used in mass media. Correct forms are suggested instead of the incorrect and non-recommended ones.

Տարբերակայնությունը լեզվաբանական տերմինահամակարգում

Լեզվաբանական տերմինների քննությունը ցույց է տալիս, որ տարբեր հեղինակների աշխատություններում առկա են ժամանակի միևնույն հատվածում համագոյակցող տերմինատարբերակներ, որոնց համատեղ գործածությունը սովորաբար տևական չի լինում. առավել կենսունակը դուրս է մղում մյուսներին: Կան նաև տերմինային զուգաձևեր, որոնք ստեղծվում և գործածվում են տարբեր ժամանակահատվածներում: Հենց *զուգաձևություն* բառը որպես տերմին ունի իր տարբերակները. *զուգաձևեր*, *երկ-ձևություններ*, *փոփոխակներ*, *տարբերակներ*, *տերմինատարբերակներ* և այլն: Ահա տերմինային զուգաձևերի գործածության մի քանի օրինակ:

Երկրորդական նախադասության կրճատում տերմինը, որ երկար տարիներ գործածվում էր դպրոցական քերականության դասագրքերում, իր դիրքերը զիջեց, կիրառությունից հանվեց, քանի որ տվյալ իրողությունը արտահայտվեց առավել հստակ նկարագրող *բարդ ստորադասական նախադասության վերածում պարզ (դերբայական դարձվածով) նախադասության* տերմինով: Դասագրքերում և շտեմարաններում գործածվում են նաև *բարդ ստորադասական նախադասության պարզեցում* և *բարդ ստորադասական նախադասության փոխակերպում պարզ նախադասության* տերմինները: Չի բացառվում, որ այս երկար և նկարագրական տերմինները հետագայում փոխարինվեն որևէ համառոտ, դիպուկ, բարեհունչ և տերմինի այլ հատկանիշներին համապատասխանող միաբառ կամ բառակապակցական տերմինով:

Յակառակ հիմունքի պարագա տերմինը գործածությունից դուրս եկավ՝ փոխարինվելով *գիջման պարագա* տերմինով: *Եղանակավորող բառեր*-ին փոխարինել է *վերաբերական* տերմինը: Համակատար դերբայը տարբեր ժամանակներում տարբեր հեղինակների կողմից անվանվել է *անկատար երկրորդ*, *ժամանա-*

կային, համընթացական, զուգընթացական, հարակցական և այլ տերմիններով:

Հպաշփականներ, կիսաշփականներ, կիսապայթականներ, պայթաշփականներ տերմինատարբերակները ունեն նույն դեկոտատը: Հնարավոր է, որ հետագայում գործածության մեջ մնան դրանցից առավել կենսունակները:

Դերբայների և բայի խոնարհման համակարգի ուսուցման դպրոցական ծրագրերում տերմինների համակարգային փոփոխություն է կատարվել: Ժամանակաձևերի անվանման, դերբայների անվանումների փոփոխությունների հետևանքով առկա է տարբերակայնություն: Այսպես՝ *անցյալի անկատար, անցյալ անկատար, անկատար անցյալ* և այլն:

Լեզվաբանական տերմինները ստորև ներկայացնում և քննում ենք տարբերակայնությամբ հատկանշվող մի շարք խմբերով:

1.Օտար բաղադրիչ պարունակող լեզվաբանական տերմինների փոխարինում հայերեն համարժեքով կամ տերմինների հայերենացում:

Լեզվական այս կամ այն իրողությունը դիտարկելիս և քննելիս երբեմն փոխառվում է օտար տերմինը, այնուհետև, որպես ընդհանուր օրինաչափություն, փնտրվում և առաջարկվում է դրա հայերեն անվանումը (հաճախ՝ մի քանի տարբերակ): Այստեղ գործում է լեզվաբանության տերմինաբանության հիմնական միտումներից մեկը՝ տերմինների հայերենացման (հայացման) միտումը:

Գ. Ջահուկյանի՝ 1956թ. լույս տեսած աշխատությունը վերնագրված էր «Հայոց լեզվի պատմության պերիոդիզացիայի հարցերը», իսկ 1959թ. աշխատությունը՝ «Հին հայերենի հիլովման սիստեմը և նրա ծագումը»: Հետագայում *պերիոդիզացիա, սիստեմ* օտար տերմինաբաղադրիչները փոխարինվեցին *շրջանաբաժանում, համակարգ* հայերեն համարժեքներով¹: *Սինխրոնիա, դիսխրոնիա, քերականական կատեգորիա* տերմինների փոխա-

¹ Հ. Պետրոսյանի «Հայերենագիտական բառարանում» առկա է նաև *շրջաբաժանում* տերմինատարբերակը, էջ 263-264:

րեն այժմ գործածվում են *համաժամանակություն, տարա-ժամանակություն, քերականական կարգ* տերմինները: Նշենք, որ Է.Աղայանի «Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը» աշխատության մեջ *синхронный* և *диахронный* տերմինների փոխարեն գործածված են *համաժամանակյա* և *տարաժամանակյա* տերմինները: Նշված աշխատության բառացանկում *универсалия* և *универсальный* տերմինների համար առաջարկված են *համույթ* և *համույթային* բառերը, որոնք հետագայում չկիրառվեցին: Վ. Քոսյանի թեկնածուական ատենախոսությունը (Երևան, 1953թ.) վերնագրված է «Ջնդեվրոպական արմատների *լեքսիկական* արժեքները հայերենում»:

Դիտարկել ենք Ահարոն Գրիգորյանի «Ջայոց լեզու» դասագրքի (Երևան, 1953թ.) օտար տերմինները: Դասագրքում գործածված *լեքսիկոն, կոնտեքստ, սինտկրոիս, բառի լեքսիկական և քերականական իմաստ, քերականական կատեգորիա, բառերի էմոցիոնալ գունավորում, ինտոնացիա* տերմինների փոխարեն այժմ գործածության մեջ են համապատասխան հայերեն տերմինները:

Լեզվաբանական գիտության զարգացման ընթացքում նոր ուղղությունների, դպրոցների, տեսությունների, գիտակարգերի և միջգիտակարգերի առաջացման հետևանքով կիրառության մեջ մտնող նոր հասկացությունները, գաղափարները նշանակելու, արտահայտելու համար լեզվում կամ փոխառվում են օտար տերմիններ, կամ լեզվի բառակազմական միջոցներով ստեղծվում են հայերեն տարբերակներ: *Պսիխոլինգվիստիկա, սոցիոլինգվիստիկա, էթնոպսիխոլինգվիստիկա* տերմինները տվյալ միջգիտակարգերի զարգացմանը զուգընթաց գործածությունից դուրս եկան, և այժմ գործածվում են *հոգելեզվաբանություն, հանրալեզվաբանություն, ազգահոգելեզվաբանություն* հայակազմ տերմինները: *Կոնտեքստ* տերմինը փոխարինվել է *համատեքստ* և *խոսքաշար* տերմիններով, որոնք զուգահեռ գործածվում են:

Առկա է նաև տերմինների մասնակի հայերենացման երևույթը, երբ միաբառ տերմինի մի մասն է միայն փոխարինվում հայերեն բաղադրիչով, իսկ բառակապակցական տերմինի դեպքում՝ բա-

դադրիչներից մեկը կամ մի քանիսը: Մասնակի հայերենացած միաբառ տերմիններից են՝ *համատեքստ, մակրոլեզվաբանություն, միկրոլեզվաբանություն, մետալեզվաբանություն, էթնոլեզվաբանություն, տերմինագիտություն, տերմինակազմություն, տերմինաբանական, տերմինաբանություն* և այլն:

Մասնակի հայերենացած բառակապակցական տերմիններից բերենք մի քանի օրինակ. *ակտիվ բառապաշար, պասիվ բառապաշար, արեալային լեզվաբանություն, գրական նորմ(ա), գրավոր տեքստ, խոսքի տեմպ, խոսքի տակտ, դեֆեկտավոր արտասանություն, դիդակտիկ լեզվաբանություն, արտասանական բազա, արտահայտության պլան, ժեստերի լեզու, մարզական տերմին, բառային ֆոնդ* և այլն:

2.Բառակապակցությամբ արտահայտված տերմինի փոխարինում բառով:

Լեզվական քաղաքականություն-լեզվաքաղաքականություն, լեզվական միավոր-լեզվամիավոր, լեզվական նյութ-լեզվանյութ, բայի սեռ-բայասեռ, լեզվի փոխտոփայություն-լեզվափոխտոփայություն, բառային պատճենում-բառապատճենում, բառային ձև-բառաձև, ածանցային տարբերակներ-ածանցատարբերակներ միավորներում առկա է նշված իրողությունը:

Է. Աղայանը, խոսելով բազմանդամ տերմինների կրճատման, համառոտ ներկայացնելու մասին, նշում է կրճատման 3 տեսակ՝ փոխանունական կրճատում, բաղադրական ամփոփում և խոսքային սղում. դրանք ընդհանրական են և բնորոշ են ոչ միայն լեզվաբանության, այլև առհասարակ բոլոր գիտությունների տերմինահամակարգերին¹: Հոդվածում համառոտ անդրադառնում ենք բաղադրական ամփոփմանը՝ կրճատման մյուս տեսակների քննությունը թողնելով հետագա աշխատանքներին: Բաղադրիչների որոշիչ-որոշյալ և հատկացուցիչ-հատկացյալ հարաբերությունն դրսևորող այս բարդությունները (*բայահիմք, լեզվաընտանիք, լեզվափիճակ, հնչյունաշղթա, հնչաշղթա, բառատարբերակներ, լեզվահամակարգ, հնչույթատարբերակներ, հնչույթադիրք* և

¹ Էդ. Աղայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Ե., 1984, էջ 343-346:

այլն), որոնք բառակազմական գործուն կաղապար են ներկայացնում, բաղադրական ամփոփման օրինակներ են: Հանդիպում են նաև բաղադրիչների շարահյուսական այլ հարաբերություն ներկայացնող օրինակներ, ինչպես՝ *լեզվակիր, շեշտակիր վանկ, բարբառախոս, բարբառակիր, հողակիր բառ, ձայնավորահաջորդ, ձայնավորանախորդ, ձայնավորահանգ, բաղաձայնահանգ, շեշտահաջորդ վանկ, շեշտանախորդ վանկ, թվականակազմ, դերանվանակազմ, մակբայակազմ, անվանակազմ* բայեր և այլն:

3. Հոդակապային տարբերակներ: Դրանք ներկայացնենք երեք ենթախմբով:

Ա. Լեզվաբանական տերմինահամակարգում հանդիպում են նույն տերմինի հոդակապավոր և անհոդակապ գործածությամբ տարբերակներ¹: Այսպես՝ *տարժամանակյա-տարաժամանակյա, երկխոսություն-երկախոսություն, բոլորգիր-բոլորագիր, բառագիրք - բառգիրք, բառագրքույկ-բառգրքույկ, առադրություն - առդրություն, երկակետ-երկկետ, բառամասնիկ-բառ-մասնիկ*: Նըշված տերմինազույգերի շարքում առկա են և՛ կանոնական զուգածնություններ, և՛ օրինակներ, որոնցից մեկի գործածությունը հանձնարարելի չէ:

Բ. Լեզվաբանական աշխատություններում, հոդվածներում շըրջանառվում են *խոսքիմասային* և *խոսքամասային* տերմինները: Ե. Աղայանը և Ս. Գալստյանը գործածում են *խոսքամասային* ձևը, այլ հեղինակներ նախընտրում են *խոսքիմասային* զուգածնի գործածությունը:

Գ. Տարբեր հոդակապերով տարբերակներ: *Ուզրո-ֆիննական - ուզրաֆիննական, իբերո-կովկասյան- իբերակովկասյան* և այլն:

4. Հնչյունափոխական տերմինատարբերակներ: Լեզվաբանական տերմինները ենթարկվում են ժամանակակից հայերենի բառակազմության ժամանակ ի հայտ եկող հնչյունափոխության ընդհանուր կանոններին: Մեր քննած լեզվանյութում հնչյունափոխված և անհնչյունափոխ զուգածների գործածությունը առանձնապես շատ չէ: Նկատել ենք ի>ը, ի>ժ, ույ>ու հնչյունափոխու-

¹ Հ. Չ. Պետրոսյան, Հայերենագիտական բառարան, էջ 118:

թյան այսպիսի օրինակներ, *հոմանիշային-հոմանշային, հականիշույթյուն-հականշույթյուն, բացահայտիչի-բացահայտչի, հարացույցային-հարացուցային, որոշիչային-որոշչային, հատկացուցիչային-հատկացուցչային, որոշիչի-որոշչի, հատկացուցիչի-հատկացուցչի* և այլն: Բերենք հնչյունափոխված և անհնչյունափոխ տերմինատարբերակների գործածության մի քանի օրինակ «Ժամանակակից հայոց լեզու» գրքից¹: «Բացառականի *որոշչային* գործածությունը.... սահմանափակ է» (Էջ 183): «*Որոշիչային* կիրառությունը բնորոշ է նաև կոտորակային թվականներին....» (Էջ 191): «Որոշյալ դերանվան ժխտական ձևերից *որոշիչի* պաշտոնով կիրառվելը բնորոշ է *ոչ մի* դերանվանը....» (Էջ 187): «Թըվականները *որոշչի* պաշտոնով կիրառվում են առանց գոյականաբար գործածվելու, ուղիղ ձևով և եզակի թվով» (Էջ 188):

«....Շարահյուսական ներքին հարաբերության տեսակետից նըրանց միջև առկա է *հատկացուցիչային* (նաև *որոշիչային*) հարաբերության իմաստը» (Էջ 203): «*Չատկացուցչային* կիրառությամբ հանդես են գալիս նաև թվականները....» (Էջ 205): «*Չատկացուցչի* պաշտոն են ստանում ածականի ոչ միայն դրական, այլև համեմատության աստիճանները» (Էջ 206): «Թվականներով արտահայտված *հատկացուցիչի* և նրա հատկացյալի միջև ավելի սահմանափակ հարաբերություններ են դրսևորվում, քան գոյական *հատկացուցիչի* և նրա լրացյալի միջև» (Էջ 205):

Ահա նաև մեկ-երկու օրինակ Յ. Պետրոսյանի «Չայերենագիտական բառարանից»: «....*Բացահայտչի* և բացահայտյալի միջև եղած արտասանական դադարը (*որոշչի* և որոշյալի, *հատկացուցչի* և հատկացյալի համեմատությամբ) բավականին ակնհայտ է....» (Էջ 142): «....Բացահայտյալը *բացահայտչին* թելադրում է իր հոլովը» (Էջ 142): «Ըստ ոմանց՝ *բացահայտչական* մասնավորումը, կոնկրետացումը կարող է արտահայտվել մեկնական բառով, բառակապակցությամբ» (Էջ 142):

¹ Ս.Գ. Աբրահամյան, Ն.Ա. Պառնասյան, Բ.Ս. Օհանյան, Խ.Գ. Բաղիկյան, Ժամանակակից հայոց լեզու, հ.3, Շարահյուսություն, Ե., 1976:

5. Բաղադրիչների փոխատեղման հետևանքով առաջացող տերմինային տարբերակներ: Է. Աղայանը բառատարբերակների ըստեղծման այս եղանակով առաջացող բառազույգերը անվանում է փոխատեղական բաղադրյալ տարբերակներ¹: Լեզվաբանական տերմինահամակարգում այս կարգի տարբերակները փոքրաթիվ են: Օրինակ՝ *լեզվատամնայիններ/ատամնալեզվայիններ, շրթնատամնային/ատամնաշրթնային բաղաձայններ, ուզրաֆիննական/ֆիննաուզրական լեզվաընտանիք, անվանաբայական/բայանվանական ստորոգյալ, ասուր-բաբելական/բաբել-ասուրական լեզու, հարաբերահարցական/հարցահարաբերական դերանուն* և այլն:

Շնչեղ ձայնեղներ-ձայնեղ շնչեղներ, շնչեղ խուլեր-խուլ շնչեղներ տերմինազույգերում առկա է փոխատեղում բառակապակցության շրջանակում:

6. Ետ-հետ բաղադրիչով տարբերակներ: Տերմինաբանական կոմիտեի 1986թ. սեպտեմբերի նիստում որոշում է ընդունվել ժամանակակից հայերեն *հետ (ետ)* արմատի և նրանով կազմված բառերի գրության և արտասանության մասին, որում նշվում է, որ այսուհետև *հետ (ետ)* արմատը ամենուրեք, անշատ թե բաղադրյալ, պետք է գրել և արտասանել *հետ*: Օրինակների մեջ նշվում են նաև *հետադրության, հետադարձ, հետընթաց, հետնալեզվային* և այլ բառեր: Չնայած այս որոշմանը՝ լեզվաբանական աշխատություններում, հոդվածներում երբեմն գործածվում են *ետ*-ով տարբերակները, որոնք ավանդաբար կիրառվել են հայերենագետների աշխատություններում. փաստորեն տերմինաբանական կոմիտեի նշված որոշումից հետո դրանք հանձնարարելի չեն: Զ. Պետրոսյանի «Հայերենագիտական բառարանի» (լույս է տեսել 1987թ., կազմվել է մինչև նշված որոշումը) բառացանկում առկա են *հետդասական գրաբար, հետդասական հայերեն, հետմետրոպյան հայերեն* տերմինները. (բառարանի 263-264 էջերում կա նաև *ետդասական գրաբար* տերմինը): Ներկայացնենք *ետ* բաղա-

¹ Գ. Ջահուկյան, Է. Աղայան, Վ. Առաքելյան, Վ. Քոսյան, Հայոց լեզու, I մաս, Ա պրակ, Ե., 1980, էջ 317-324:

դրիչով տերմինները և համեմատենք ավելի ուշ տպագրված լեզվաբանական տերմինների բառացանկերին:

Ետադաս անդամ, ետադաս որոշիչ, ետադրություն, ետատամնային բաղաձայններ, ետընթաց առնմանում, ետընթաց լրիվ ներդաշնակություն, ետընթաց կից տարնմանում, ետընթաց մասնակի առնմանում, ետընթաց մասնակի ներդաշնակություն, ետընթաց ներդաշնակություն, ետընթաց ոչ կից տարնմանում, ետընթաց տարնմանում, ետին արծագանքարան, ետին շարքի ձայնավորներ, ետմասնիկավոր հոլովում, ետնալեզվային բաղաձայններ, ետնալեզվային ձայնավորներ, ետնաքմային բաղաձայններ:

Ա.Նազարյանի՝ 1993թ. լույս տեսած «Լեզվաբանական տերմինների ֆրանսերեն-ռուսերեն-հայերեն ուսումնական բառարանում» տրված են *հետ*-ով տերմինները. *հետադաս ածական, հետադաս երկրորդական նախադասություն, հետադաս մասնիկ, հետադաս որոշիչ, հետադասություն, հետադարձ բայ, հետադարձ բառաձանցում, հետադարձություն, հետադրություն, հետընթաց առնմանություն, հետընթաց տարնմանություն, հետին շարքի ձայնավոր, հետնալեզվային բաղաձայն, հետնաքմային բաղաձայն, հետնաքմայնացում:* «Լեզվաբանական բառարանում» (1975թ.) առկա են հետևյալ տերմինատարբերակները. *հետնալեզվային-ետնալեզվային, հետընթաց-ետընթաց, հետնաքմային-ետնաքմային, հետադրություն-ետադրություն:*

Ռ. Թոխմախյանի «Չայերենի հնչաշղթան» դոկտորական ատենախոսության սեղմագրում (Ե., 2011թ.) գործածված են *ետլնդերային, ետքմային, ետնալեզվային*, լեզվի *ետնամաս*, լեզվի *ետին* մաս ավանդական տարբերակները:

7.Տարբադադրիչ տերմինատարբերակներ: Նույն հասկացությունը երբեմն արտահայտվում է տարբեր բաղադրիչներ ունեցող բարդություններով: Այսպես՝ տարբեր թեմատիկ խմբերի անունները գործածվում են 2 ձևով՝ *բուսանուն* և *բուսանվանում*, *ձկնանուն* և *ձկնանվանում*, *գունանուն* և *գունանվանում*, *ծառանուն* և *ծառանվանում* և այլն:

Տարբադադրիչ տերմինատարբերակներ են առկա, օրինակ, հայկական գրատեսակների անվանումներում *Գլխագիրը* կոչվում է նաև *գլխատառ*, *զարդագիրը՝* նաև *դրվագագիր*: Չարդագրի տեսակները կոչվում են *թռչնագիր*, *ձագագիր* կամ *ճնճդագիր*։ *Գագանագիրը* ունի նաև *կենդանագիր* տարբերակը: *Գրչագիր* տերմինի համար «Լեզվաբանական բառարանը» նշում է *աղյուսակգիր*, *ուղղանկյուն երկաթագիր* տարբերակները:

Ստորև բերում ենք մի քանի տերմինազույգեր, որոնցում առկա է բաղադրիչներից մեկի փոխարինում նրա որևէ հոմանիշով. *երկ-իմաստ/կրկնիմաստ բառեր*, *անստույգ / անվավեր բառ*, *բնածայնական/նմանածայնական բառեր*, *արտասանական/արտաբերական բազա*, *առաջնաքմայիններ/նախաքմայիններ*, *նույնարմատ /համարմատ բառեր*, *ազգակից/ցեղակից բառեր*, *երկրորդական/ստորադաս նախադասություն* և այլն:

8.Հավելադրական տերմինատարբերակներ: Դրանք ներկայացնում ենք երկու ենթախմբով:

Ա.*Լեզվածայրայիններ/ծայրայիններ*, *սկզբնատառային/տառային հապավույթ*, *իմաստատարբերակիչ/տարբերակիչ հատկանիշներ*. Նույն իմաստն արտահայտող այս տերմինազույգերի անդամներից մեկում, ինչպես տեսնում ենք, առկա է հավելյալ բաղադրիչ, որը իմաստային տարբերություն չի առաջացնում: *Իմաստաթեմատիկ խումբ*, *առարկայաթեմատիկ խումբ*, *թեմատիկ խումբ*. այս երեք բառակապակցական տերմինները ևս հավելադրական տարբերակայնության դրսևորումներ են, այժմ հեղինակները նախընտրում են գործածել *թեմատիկ խումբ* տերմինը:

Հավելադրական զուգածներից են նաև *նվազափաղաքչական/ևվազական ածանց*, *արտահայտչական/հուզարտահայտչական բառապաշար*, *արտաբերական/հնչարտաբերական բազա* տերմինազույգերը:

Ներկայացնենք հավելադրական տերմինատարբերակներ «Լեզվաբանական բառարանից». *բառիմաստի ընդլայնում-իմաստի ընդլայնում*, *բառիմաստի բևեռացում-իմաստի բևեռացում*, *բառիմաստի նեղացում-իմաստի նեղացում*, *բառիմաստի նորա-*

ցում կամ շրջում-իմաստի նորացում կամ շրջում, հնդեվրոպական լեզվաընտանիք-հնդեվրոպական ընտանիք և այլն:

Բ. Հավելադրական տերմինատարբերակներ, որտեղ հավելյալ է բան բաղադրիչը: Այսպես՝ *ձևահնչույթային* համակարգ - *ձևահընչույթաբանական* համակարգ, *դարձված(ք)ային* նույնանիշ-*դարձվածաբանական* նույնանիշ, *դարձված(ք)ային* միավոր-*դարձվածաբանական* միավոր, *դարձված(ք)ային* կապակցություն - *դարձվածաբանական կապակցություն*, *դարձված(ք)ային* սերտաճում - *դարձվածաբանական* սերտաճում, *դարձված(ք)ային* միասնություն - *դարձվածաբանական* միասնություն:

Բառարանագիրների առաջարկած բառացանկերում երբեմն հանդիպում են նաև անկենսունակ, անհեռանկար և անընդունելի տերմիններ, կազմություններ: Այսպես՝ *поэтический словарь* միավորի համար Ա. Նազարյանի բառարանի հայերեն բառացանկում տրված է՝ *բանաստեղծաբանական բառարան*:

Նշենք նաև, որ լեզվաբանական հետազոտություններում նկատել ենք *հնչույթային* - *հնչույթաբանական*, *շարահյուսական* - *շարահյուսագիտական*, *քերականական-քերականագիտական*, *հընչյունական* - *հնչյունաբանական*, *ոճական* - *ոճաբանական*, *իմաստային* - *իմաստաբանական* տերմինների չտարբերակված կիրառություններ:

9. Ժխտման արտահայտության տարբեր ձևերի հետևանքով առաջացած լեզվաբանական տերմինատարբերակներ: Այս խմբի գույգերը ներկայացնում ենք երկու ենթախմբով:

Ա. Համանիշ տերմինային գույգ, որի երկու եզրն էլ ժխտական կազմություն ունի (*ան-*, *չ-* ձևույթներով կամ *ոչ* բառով). *աննշույթ անդամ-* *չնշույթավորված անդամ*, *անվանկարար հնչյուն* - *ոչ վանկարար հնչյուն*, *ոչ շրթնային ձայնավոր* - *չշրթնայնացած ձայնավոր*, *ոչ ռնգային ձայնավոր* - *չռնգայնացած ձայնավոր*, *անանջատական նախածանցներ* - *չանջատվող նախածանցներ*, *չթեքվող խոսքի մասեր* - *անփոփոխ խոսքի մասեր*, *անհաշվելի գոյական* - *չթվարկվող գոյական*, *ոչ կենսունակ ածանց* - *անկենսունակ ածանց*:

Բ. Տերմինատարբերակներ, որոնցից միայն մեկն է ժխտական նախածանցով կազմված. *անկանոն հոլովում - այլաձև հոլովում, անշեշտ վանկ - շեշտագուրկ վանկ, անշեշտություն - շեշտազրկություն, անդեմ բայ - դերբայ:*

10.Տերմինների բառակապակցական և բառակազմական զուգաձևեր: Այս հատվածում ընդհանուր գծերով կներկայացնենք մի շարք տերմինատարբերակներ՝ դրանց մանրակրկիտ քննությունը թողնելով մեր հետագա աշխատանքներին:

Ա. Բառակապակցական տերմինների շարքում առկա են երկանդամ համանիշ զույգեր, որոնց կառուցվածքը կարելի է ներկայացնել սեռական հոլովով գոյական + ուղղական հոլովով գոյական (ԳԳ) և ածական + գոյական (ԱԳ) բանաձևերով: Օրինակ՝ *կետատադրության նշաններ-կետատադրական նշաններ, հնչյունների սերտաճում - հնչյունական սերտաճում, զուգորդումների դաշտ - զուգորդական դաշտ - զուգորդային դաշտ, լեզվի իրողություն - լեզվական իրողություն, խոսքի խանգարումներ (խաթարումներ) - խոսքային խանգարումներ (խաթարումներ), բաղաձայնների տեղաշարժ - բաղաձայնական տեղաշարժ, մանկան լեզու - մանկական լեզու, մանկան խոսք - մանկական խոսք, լեզվաբանության տերմիններ -լեզվաբանական տերմիններ, լեզվաբանության տերմինահամակարգ - լեզվաբանական տերմինահամակարգ:*

Բ. Նույն արմատով և տարբեր ածանցներով կազմված միաբառ տերմինատարբերակներ:

I. *-ություն և -ում* ածանցներով տարբերակներ.

առնմանություն - առնմանում

տարնմանություն - տարնմանում

արտաբերություն - արտաբերում

հերթագայություն - հերթագայում

II. *-ություն և -ույթ* ածանցներով տարբերակներ.

գործառություն - գործառույթ

շրջասություն - շրջասույթ

առձայնություն - առձայնույթ

բաղաձայնություն - բաղաձայնույթ

III. Նույն արմատով և մեկ կամ մի քանի ածանցներով տարբերակներ. *անլիհաձայնություն - անլիհաձայնականություն*
բաշխական մեթոդ - բաշխումային մեթոդ
բառացած շարույթ - բառայնացած շարույթ
ստորոգական շարույթ - ստորոգումային շարույթ
նշույթավոր անդամ - նշույթավորված անդամ

Լեզվաբանական տերմինապաշարի քննության ընթացքում ի հայտ են գալիս նաև այլ կարգի զուգաձևեր. ուղղագրական տերմինատարբերակներ, տառադարձությամբ պայմանավորված զուգաձևություններ, բառակազմական բանաձևերի տարբեր ներկայացումներ (լատինատառ կամ հայատառ, հոդակապի նշումով կամ առանց հոդակապի, + նշանի առկայությամբ և առանց դրա, փակագծերով կամ առանց փակագծի, սլաքներով և առանց սլաքների), նույն շարահյուսական կախումը ներկայացնող գծապատկերների անմիօրինակություն, պայմանական նշանների անհարկի բազմազանություն (ձայնավորի սղումը, օրինակ, նշում են տարբեր կերպ): Արձանագրել ենք հատկանունների գրության անհարկի բազմաձևություններ (օրինակ՝ բարբառագիտական ուսումնասիրություններում առկա՝ տեղանունների տարբեր գրությունը և դրանց կրճատման տարբեր ձևերը), որոնք մշակման, միօրինակացման կարիք ունեն:

Օգտագործված գրականություն

- 1.Աբրահամյան Ա., Պառնասյան Ն., Օհանյան Հ., Բաղիկյան Խ., Ժամանակակից հայոց լեզու, հ. 3, Շարահյուսություն, Ե., 1976:
- 2.Աղայան Էդ., Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Ե., 1967:
- 3.Աղայան Էդ., Ընդհանուր և հայկական բառագիտություն, Ե., 1984:
- 4.Ղազանջյան Լ., Հայերեն լեզվաբանական տերմինների համակարգային- կառուցվածքային վերլուծություն.- Լեզվի և ոճի հարցեր, IV, Ե., 1977:

- 5.Նազարյան Ա., Լեզվաբանական տերմինների ֆրանսերեն- ռուսերեն-հայերեն ուսումնական բառարան, Ե., 1993:
- 6.Պետրոսյան Յ., Գալստյան Ս., Ղարազյուլյան Թ., Լեզվաբանական բառարան, Ե., 1975:
- 7.Պետրոսյան Յ., Հայերենագիտական բառարան, Ե., 1987:
- 8.Պետրոսյան Յ., Տերմինագիտության հիմունքներ, Ե., 2010:
- 9.Զահուկյան Գ., Աղայան Է., Առաքելյան Վ., Զոսյան Վ., Հայոց լեզու, I մաս, Ա պրակ, Ե., 1980:
- 10.Տերմինաբանության և խոսքի մշակույթի հարցեր, պրակ 3, Ե., 1988:

Галстян Анаит- Вариативность в лингвистической терминосистеме.- В статье исследуются особенности лингвистической терминологии современного восточноармянского языка, в частности закономерности возникновения вариантов терминов, терминирования слов и словосочетаний. На основе богатого фактического материала анализируется ряд параллельного употребления лингвистических терминов: замена армянским эквивалентом терминов, содержащих иноязычный компонент, вопросы терминологического словообразования, выявляются варианты терминов, обусловленные различными факторами: фонетическим изменением, отсутствием или присутствием соединительного гласного, метатезисом и т. д.

Galstyan Anahit- Variability in Linguistic Terminological System.-The present paper focuses on the main characteristics of the linguistic terminological layer of Contemporary Armenian in general, and the usage of term variants as well as term coinages derived from words and word combinations in particular. Drawn upon the rich language data, at least ten types of functional equivalents have been examined: foreign linguistic terms and their Armenian counterparts, linguistic terms expressed by either word-combinations or by compound as well as derivative words, functional equivalents due to the synonymy of one of the components of the word, etc. The appearance of term variants is determined by various factors, such as phonetic changes, the presence or absence of a linking vowel between the two components of compound or derivative words, metathesis and others.

Լեռ Կամսարի օրագրությունների լեզվական հիմքերը

Մեծ Է Լեռ Կամսարի գրական ժառանգությունը: Գուրգեն Մահարին նրան անվանել է «երգիծաբանության շողշողուն եռաստեղության վերջին մոհիկանը, Պարոնյանի և Օտյանի արժանավոր հաջորդը»: Մեծ գրողն ապրեց այնպիսի ժամանակահատվածում, երբ ճշմարտության համար նրան խոշտանգեցին թե՛ մարմնապես, թե՛ հոգեպես, չնայած որ պայքարի համար նա ընտրել էր ամենամեղ և անվնաս գեները՝ ծիծաղը: Նա դատապարտվեց մինչ ի մահ գաղտնի և լռելյայն ստեղծագործելու:

Լեռ Կամսարն իր կյանքում երկու անգամ է տեսել «արևի խավարում»: Առաջինը, երբ թուրքերը գրկեցին նրան հայրենիքից, և երկրորդը, երբ խլեցին նրա ազատությունը: 1915թ. ապրիլ և մայիս ամիսներին Լեռ Կամսարը մասնակցեց հայրենի Վան քաղաքի հերոսական պայքարին՝ իր քաջարի ջոկատի գլուխն անցած պաշտպանելով Վանի ամենավտանգավոր մատույցները, սակայն շատերի նման ստիպված եղավ իր ընտանիքով բռնել գաղթի ճանապարհը: Նա հաստատվում է Երևանում և շարունակում իր ընդհատված աշխատանքը: Դժվարին կյանքի մանրամասները հեղինակը ներկայացրել է իր օրագրերում, որոնք սկսել էր գրառել 1925 թվականից, այն ժամանակվանից, երբ հասկացել էր, որ ժամանակի մամուլի դռները այլևս փակ են ճշմարտության առջև:

Լեռ Կամսարի օրագրությունը տարբեր ժամանակահատվածներում ունեցել է տարբեր խորագրեր: 1925-35թթ. այն կոչվել է «Խորհրդային քաղաքացու օրագիր», 1936թ.՝ «Բանտի օրագիր», այնուհետև այն ընդհատվում է մինչև 1945 թվականը: Թե ինչքան է տևել Լեռ Կամսարի հարկադիր լռությունը, դժվար է հաշվարկել: Ձեռագրերը թաքցված են եղել հողում թաղված կնուճների

մեջ, որոնց մի մասը վնասվել է 1946 թ. Երևանի ջրհեղեղի ժամանակ:

Գրողի օրագրությունը վերսկսվում է 1945-46 թթ.՝ «Չապրած տարիներ» վերնագրով, որ գրվել է Բասարգեչարի (ներկայիս Վարդենիսի) քստրավայրում: Համաներումից հետո օրագիրը վերանվանվում է «Կարմիր ծիծաղ» և «Կարմիր օրեր»: Օրագրերի մի մասը կոչվում է «Սոցիալիզմի Սահարա»: Այստեղ գործող անձը մարդն է, իսկ գործելու ասպարեզը՝ աշխարհը և ողջ տիեզերքը: Օրագրերում ներկայացվում են սոցիալիստական ճամբարի արտաքին և ներքին քաղաքականությունը, որոշ առաջնորդների իրական պատկերը և ժողովրդի հոգեվիճակը, մի խոսքով հեղինակն ընթերցողի առջև «շուռ է տալիս իր հուշերի տոպրակը»: Այստեղ հումորն ու սատիրան հանդես են գալիս կողք կողքի: Լեռ Կամսարի երգիծանքի արվեստի միջոցները գունեղ են և բազմազան:

Նրա օրագրերը հիմնականում մենախոսություններ են: Դրանք հյուսվում են գեղարվեստական վավերագրության այդ տեսակին հատուկ մուտքով. «*Փետրվար. երկուշաբթի 9. - Մենք Վանում թթի ծառեր ունեինք, և մայրս ամեն տարի կարիքների համար մի մատնոց շերամի հունդ էր աճեցնում:*

Երբ գարունը բացվեր, մայրս վերցնում այդ հունդը փաթաթում էր շորի մեջ և դնում թևի տակ, որ մարմնի տաքությամբ ծլեցներ: Կարճ ժամանակում գարթնում էր սաղմը, թրթուր դառնում և քաշվում թթի տերևների վրա:

Ներկայիս սովետական կառավարությունը ճիշտ այդ մեթոդով է բուծում Հարավային Աֆրիկայի սևամորթ ցեղերին:

Այդ ցեղերն ազգի սաղմերն են, բայց տարիների ընթացքում, չնայած Աֆրիկայի տաք կլիմային, չեն հաջողել «ծլել» և «թրթուր» դառնալ:

Ռուսաստանն իրեն դաշնակիցներ ճարելու նպատակով, այս տարի վերցրեց այդ ազգային սաղմերը, դրեց իր թևի տակ և կարճ ժամանակում ծլեցրեց արդեն երկու ազգ և սկսել է առևտրական հարաբերություններ նրանց հետ» [2, 29]:

Այստեղ տեսանելի են երևույթի, վիճակի համեմատության հիմքերը: Ընդհանրապես հեգնական գույները խտացնելու նպատակով հեղինակը հաճախ է գործածում օրագրերի բովանդակությունից բխող համեմատություններ՝ երևույթները ներկայացնելով նոր կողմերով, նոր կապակցությունների մեջ: Համեմատության կազմում առկա են համեմատվող, համեմատելի առարկաներ իրենց այն հատկանիշներով, որոնք դրվում են համեմատության հիմքով:

1. Երևույթը համեմատվում է իրի հետ (վերացական գոյականը՝ թանձրացականի հետ). «*Իսկ առողջ բանականությունը բաղի նման սուզվեց ջրի տակ ու մինչև այսօր չի համարձակվում իր կտուցը դուրս հանել ջրից*» [2, 52]:

2. Անձը համեմատվում է իրի հետ. «Ժողովուրդները, անպաշտպան հավի ճտերի նման կտուցները դեպի մեծ պետությունների մայրաքաղաքները բռնած, նայում են, թե ինչ է ասում այսինչ մեծ պետությունը» [2, 73]:

3. Համեմատության մի եզրը կարող է լինել որևէ պետության անուն, մյուսը՝ գործողություն. «Ի՞նչ պիտի աներ Իսլանդիան. պաղպաղակի նման կհալվեր, կծծվեր արաբական ավազուտում» [2, 40]: «Պորտուգալիան տզի պես կպել է Իսպանիային» [2, 13]:

Համեմատությունները ոչ միայն բազմազան են իրենց դրսևորումներով, այլև կարող են զուգորդվել ոճական այլ միջոցներով: Օրագրերում հաճախակի են հանդիպում համեմատություններ, որոնք կազմվում են կրկնության հետ զուգորդումով. այսպես՝ «*Իսկ դա նշանակում է, որ իմ դավանած սկզբունքը ձյունի մեջ թավալզլոր գնդակի նման մեծանում, մեծանում, անսասանելի է դառնում*» [2, 278]:

Երբեմն Լեռ Կամսարը դիմում է համեմատության մի այլ տեսակի՝ զուգահեռականությանը, որն ըմբռնվում է մտքերի զարգացման միջոցով. «*Փողոցում ում պատահում եմ՝ նախկին կալանավորներ են՝ արքորավայրից վերադարձած: Սրանք լինում են փափուկ, կամակատար, հեզ ու ամեն կողմով խեղճացած, ոնց որ տղամայի կաղամբ*» [2, 276]: Երբեմն համեմատության մի եզրում

Էլ *ես*-ն է կամ *մենք*-ը, որ հաճախ գեղջված է լինում. «Այժմ թուրքա-կի նման անգիր եմ արել արդեն և կրկնում եմ մեքենայաբար, առանց վերապրելու» [2, 8]: «Անգամ ժպիտն ենք մոռացել ու սր-գավորի նման կանգնած՝ խաչածն բազուկներով ողբում ենք մեր անցյալը, որ հավիտյան կորավ մեզ համար» [2, 277]:

Օրագրերում հեղինակն ստեղծել է նաև ինքնատիպ փոխաբե-րություններ: Դրանք տարողունակ պատկերներ են, որոնք հիմն-ված են վառ գուգորդությունների վրա: Առավել շատ են այն փո-խաբերությունները, երբ բնության կամ այլ երևույթների հատկա-նիշները վերագրվում են անձանց. «*Արմատներիցս մեծ մասը մը-նաց Վանում՝ հողի մեջ: Երևանում ես հինգ տարի ապրեցի թռչ-նած, իսկ երբ հանկարծ փչեց հյուսիսային խորշակը՝ բոլշևիզմը, այդ թռչնած տերևներն էլ թափվեցին, և ես մնացի չոփ-չոր*» [2, 10]:

Լեռ Կամսարի օրագրերում հանդիպում ենք ամբողջական նա-խադասություններով տրված թարմ փոխաբերությունների, որոնք գրողի պատկերավոր մտածողության և նուրբ դիտողականու-թյան արդյունք են. «Կոմունիզմը հղկում, հարթում է շվեյցարա-կան անուշաբույր ծաղկավետ լեռները՝ դարձնելով այն փոքրիկ Սահարա» [2, 277]: Կամ՝ «Անցյալ ամսին զամբյուղը ձեռքին Մի-կոյանը Մոսկվայից վեր կացավ, Ամերիկա գնաց՝ խաղաղություն բերելու. դափ-դատարկ զամբյուղը մի ամսից հետո բերեց ու Մոսկվայի պատից կախեց»: Յեղինակային ինքնաբնութագրում-ները նույնպես փոխաբերական հիմք ունեն. «Ես մի հրդեհված տուն եմ» [2, 156]:

Փոխաբերությանը՝ որպես պատկերավորման միջոցի, բնորոշ է անձնավորումը: Առարկաներին, երևույթներին, գործողություն-ներին վերագրվում է մարդկային այս կամ այն հատկանիշը: «Ռուսաստանն էլ ամոթից կարմրած ասում է.-Իմն է, իմը, տվեք»:

Օրագրերում հանդիպում են նաև չափազանցության օրինակ-ներ: Ամեն մի չափազանցություն նշանակում է «հնարավորի և ի-րականի սահմանի անցում» [5, 92]: Երգիծաբանը երևակայու-թյան հզոր ուժով ստեղծում է արտառոց ու ծիծաղաշարժ տեսա-րաններ. «-Տ՛ո, ես քո էլ, քո առաջնորդի էլ..., -ասացի ու այնպիսի

մի բան բաց թողի բերանիցս, որ լսեք, մինչև Բաղդադ կփախ-
չեք...» [2, 15]: «Ես ձեզ հավատացնում եմ. այս ըոպեին եթե վեր
կենամ Սահարա անապատ փախչեմ, էլի պետապի պաշտոնյայի
ձեռքից չեմ պրծնի. պիտի հետևիցս գա ու իմ անձը ապահովա-
գրի» [2, 123]:

Խոսքի բազմազանության կարևոր միջոցներից է շրջասություն-
ը: Պատկերավոր են հեղինակային շրջասությունները, որոնք օ-
րագրության լեզուն դարձնում են բազմաբովանդակ ու կենդանի.
օրինակ՝ **Ռուսաստան-աշխարհի ամենացուրտ պետություն** [2,
29], **Շվեյցարիա-Եվրոպայի պորտ** [2, 11], **գերմանացի-բոլոր ժո-
ղովուրդներից ամենաազգայնամուլը** [2,212], **գիտնական-հոգու
շինարար** [2,119], **Լեռ Կամսար-«չարախիհնդ երգիծաբան»** [2,157],
Խրուչչով-Ռուսաստանի Փանջունի [2, 102], **Կանտ-աշխարհի
ամենամեծ փիլիսոփան** [2, 89], **Յիտլեր-աշխարհի ամենամեծ գա-
զանը** [2, 89], **լորտու-անմեղ սողուն** [2, 129]: Լեռ Կամսարն իր
մտքերը հաճախ արտահայտում է նկարագրական եղանակով. Ե-
րևույթի ուղղակի անվանվան փոխարեն տալիս է հետաքրք-
րական բնութագրումներ: Խոսելով գիտնականի, փիլիսոփայի
և արվեստագետի մասին՝ հետևյալ պատկերավոր բնութագրիչ-
ներն է ներկայացնում. «*Քուսաբանական արտահայտությամբ՝
գիտնականը արմատն է, փիլիսոփան՝ ցողունը, իսկ արվեստա-
գետը՝ ծաղիկը*» [2, 119]:

Օրագրերում հեղինակը կիրառում է նաև ոճական արտահայտ-
չամիջոցներից մեկը՝ հակադրույթը, որն արտահայտվում է հա-
կադիր իմաստներով իրար հետ կապված հականիշ բառերով,
որոնք մեծ դեր են կատարում՝ ամենաբազմազան հակասություն-
ներ արտահայտելու, դրանք շեշտելու և խոսքը ներգործուն
դարձնելու գործում: «Ինչ համեմատությամբ, որ իմ մարմինը ծե-
րանում է, այն համեմատությամբ միտքս երիտասարդանում,
պայծառանում է» [2, 39]: Յանդիպել ենք նաև օքսիմորոնի մեկ օ-
րինակի, որը խոր և շեշտակի է դարձնում ասելիքը. «Մի չտեսնը-
ված *անքամի փոթորիկ*՝ իր բոլոր հետևանքներով» [2, 24]:

Պետք է նկատել նաև, որ հեղինակը հաճախադեպ է գործածում հականշային զույգեր, որոնք խոսքաշարում ստեղծում են արտահայտչական հակադրություններ. «Ինձ մոտ բերում են շիլեր, որոնց մեկ բիբը հյուսիսային բևեռին է նայում, մյուսը՝ հարավայինին, և ես բուժում եմ նրանց» [2, 16], «Միանգամից կարող ես ազատվել կնոջ խեր ու շառից» [2, 24], «Երկիրը արև ու լուսին պիտի ունենա՞ր՝ գիշեր ու ցերեկ իրեն լուսավորելու համար» [2, 29], «Ամբողջ աշխարհը, շունչն իրեն պահած, ձեզ է նայում մեռնելու ու ապրելու համար» [2, 35], «Մարդու աջ ու ձախ ձեռքերը կսկսեն հարվածներ հասցնել...» [2, 95]:

Օրագրերի լեզվական տիրույթն ամբողջանում է աստիճանավորման օրինակներով: Այս դեպքում բառերն իրար հարաբերակցվում են իմաստի աստիճանական փոփոխությամբ. «Երբ քաղվորները սկսում են քաղը, նախ մտնում են մի արտ, մաքրում, քաղում, կիտում, դարսում, նոր անցնում են հաջորդ արտը» [2, 15]: «Նստում, ծխախոտ վառում և աչքը երեսիս՝ սպասում է, որ մի բան պիտի ասեմ, ու նա լսի» [2, 30]:

Հետաքրքրական է օրագրային խոսքի կառուցվածքը: Հաճախ է հեղինակը խոսքը հյուսում ինքնահարցադրումով, որին և հետևում է պատասխանը. «Ես որպեսզի ընկեր չանվանեմ Ստալինին, դիմում չտվեցի ու քսան տարի տառապեցի:

Ինչու՞:

Որովհետև Ստալինի նմանին «ընկեր» ասել, նշանակում է նրա կատարած ոճիրների կեսը վերցնել ինձ վրա» [2, 72]:

Երբեմն հարցադրումն ուղղվում է ընթերցողին, բայց և տրվում է հեղինակի պատասխանը. «Ազատության ժամանակ, ձեզ եմ հարցնում, երբ ամեն քաղաքացի իր սեփական կարծիքն ունի և այն ուզում է հաղորդել իր ընկերոջը, համայնքին, այնտեղ կարո՞ղ է լռություն տիրել: Ո՛չ: Այդ երկիրը պիտի նմանի անուսուցիչ դասարանի՝ իր անլռելի, կենդանի աղմուկով» [2, 136]:

Օրագրերում հաճախ են հանդիպում միակողմանի երկխոսություններ. այստեղ կոչականներ են դառնում ծուռ գրիչն ու կեղտոտ թանաքամանը («Արի՛, արի՛, իմ ծու՛ռ գրիչ և կեղտո՛տ քա-

ռակուսի թանաքաման: Իմ կյանքի ընկերներ՝ իմ կյանքն ու իմ հոգին» [2, 29]), Ամերիկան («Ամերիկա՛, քեզանից մի բան պիտի խնդրեմ» [2, 15]), Մոսկվան («Մոսկվա՛, գնա քեզ համար դարդ արա» [2,51]), թերթը («Ա՛յ սովետական թերթ, հոգի ունես տալու, ի՞նչ կլինի մի օր մի խելացի բան գրեիր քո էջերում, խոմ մե՞ղք չե՞» [2,112]), գիտնականները («Ո՛վ գիտնականներ, ձեր արած գյուտերը ոչինչ բաներ են, նրանք չեն երջանկացնում մարդկությանը» [2, 63]), ժողովուրդը («Ժողովու՛րդ, ծառերը բարձրացեք շուտ, քանի Խրուշչովի՝ Մոսկվայում արտասանած երեկվա ճառը Երևան չի հասել: Դա բառերի մի հեղեղ է, որից հազիվ թե մարդ ազատվի» [2, 217]): Այս կոչականները երանգավորում են խոսքը, բարձրացնում օրագրության լեզվի արտահայտչական լիցքը՝ արտահայտելով հույզ, զարմանք և ցասում:

Լեռ Կամսարի օրագրություններում զգալի կշիռ ունեն դարձվածքները, որոնք կայուն վերաիմաստավորված կապակցություններ են՝ փոխաբերական, այլաբերական իմաստով: Դարձվածքները օրագրային խոսքը դարձնում են դիպուկ, պատկերավոր և ավելի ներգործուն. այսպես՝ *գլխի վրա ընդունել*-հոժարությամբ, սիրով ընդունել («Միկոյանին նրանք գլխի վրա ընդունեցին և ճաշից նախաճաշ էին քարշ տալիս» [2, 32]), *գլուխ դնել*-մեկի հետ գործ՝ հարաբերություն ունենալ («Ամերիկա՛, արի Ռուսաստանի հետ գլուխ մի՛ դնի» [2, 63]), *գլուխը զցել*-մի բան անընդհատ կրկնել(ասել կամ մտածել) («Բոլշևիկը, որ մի բան զցեց գլուխը, անկարելի է, պիտի կատարի» [2, 63]), *մի ձեռքով երկու ձմերուկ բռնել*-նպատակադրվել՝ հաջողեցնելու երկու դժվար, անհամատեղելի բան («Չի կարողանում մի ձեռքով երկու ձմերուկ բռնել [2, 68]), *քամուն տալ*-վատնել («Միլիոններն այդ ճանապարհով միայն կարելի է քամուն տալ» [2, 76]), *ծուռ նստել, շիտակ խոսել*-անկեղծ խոսել՝ ուշադրություն չդարձնելով առկա հարաբերություններին («Ե՛կ, իմ ծու՛ռ գրիչ, ե՛կ ծուռ նստենք, շիտակ խոսենք՝ տեսնենք Աստված ինչ դուռ կբանա վրանիս...» [2,30]), *փորացավ ունենալ*-ակնկալություն, մտադրություն, նպատակ ունենալ («Փորացավ ունի մեր ընկերը» [2,48]), *յոթերորդ երկինք*-երանության,

վայելքների աշխարհ («Իսրայելի աստվածն այս րոպեիս էլ ապրում է «յոթերորդ երկնքում» իր ընտանիքով» [2, 92]), *Աստծո պատիժ*-չարաբարո, անգութ («Այս հույն փիլիսոփան ունենում է մի կին՝ Աստծո պատիժ» [2, 69]) Գործածվել է հետաքրքրական մի դարձվածք՝ *ամեն արևս փախչեմ*-հետը գլուխ չղնել, հեռանալ. «Կինս որ այդ լսեց, ամեն արևս փախչեմ» [2, 92]:

Օրագրերում հաղորդակցական արժեքով հաճախադեպ գործածություն ունի *ասում են* բայածևը. «Ասում են՝ Ռուսաստանն իր անունը գրել է Լուսնի վրա» [2, 239], «Ասում են՝ երազը սուտ է» [2, 111], «Ասում են՝ երկրագունդը քսանչորս ժամը մի անգամ իր առանցքի շուրջն է դառնում»:

Առածների և թևավոր խոսքերի գործածությունը օրագրերում ինքնանապատակ չէ: Դրանք օրագրության լեզվում սուկ ձևեր չեն և ոչ էլ այն զարդարող «հագուստներ»: Այդ երկբևեռ կառույցների մեջբերումը երգիծաբանի վերաբերմունքն ընդգծող և խոսքը ներգործուն դարձնող հևարքներ են. այսպես՝ «Եթե ուրիշի աչքը լույս տար ինձ, իմ աչքը կհանեի, դեն կձգեի» [2, 237], «Ասել -խոսելն արծաթ է, իսկ լռությունը՝ ոսկի» [2, 31], «Մի ծաղկով գարուն չի գա» («Ասացե՛ք ինչդեմ, այդ ինչպե՞ս է, որ մի ծաղկով գարուն չի գա, իսկ մի մարդով սոցիալիզմ կգա» [2, 85]), «Յիշու՞մ եք այն առածը, որ ասում է՝ «կարմիր կովը իր կաշին չի փոխում» [2, 89], «Դու քո սոցիալիզմով ունք շինելու տեղ ժողովրդի աչքը հանեցիր» [2, 89]:

Հանդիպել է նաև թուրքերեն առածի օրինակ. «Ալիմ յաշար՝ ջահիլ բաթար-թոք-իմաստունն ապրում է, հիմարը կորչում [2, 120] :

Նշելի է, որ օրագրերում հաճախ են հանդիպում փոխառնյալ բաների գործածության օրինակներ՝ *նաղդ /արաբ./, նիսիա /թուրք./* [2,73], *դալմադալ/արաբ., թուրք./*[2, 68], *նուբար/ պարս./*[2, 77], *հարաքյաթ/արաբ. թուրք./* [2, 14], *բեյն/թուրք./* [2, 41], *մարշրուտ /Ֆրանս. ռուս. միջ./* [2, 245], *կոպերատիվ/ռուս. միջ./* [2, 44], *կուպե/Ֆրանս., ռուս. միջ./* [2, 59], *նու/ռուս./*[2,67], *ագիտացիա/լատ. ռուս միջ./* [2, 86], *կրիզիս /լատ. ռուս. միջ./*[2, 88], *ասորտի-*

մենտ/ֆրանս. ռուս. միջ./ [2, 91], պլանտացիա/ լատ. ռուս. միջ./ [2, 99], դիսցիպլին /ֆրանս., ռուս. միջ./ [2, 123] և այլն:

Օրագրերը հաճախ են հյուսվում նաև թևավոր խոսքեր հիշեցնող իմաստախոսություններով՝ դրանցով ընդգծելով խոսքի դիպուկությունը, այսպես՝ «Տիեզերական առեղծվածի միակ պատասխանը լռությունն է» [2, 281], «Լռության դուռը լռության բանալիով միայն կբացվի» [2, 281], «Աշխարհում դեր խաղացողը ոչ թե ամբոխն է, այլ միայն ուժեղ անհատը» [2, 279], «Մարդն անմահ է, քանի դեռ չի ծնվել. ծնվելուն պես դառնում է մահկանացու» [2, 57], «Մկան փոքրությունը չիանգարեց, որ նա ազատեր թակարդն ընկած առյուծին» [2, 12], «Սուտն անվերջ կրկնելով երբեք ճշմարտություն չի դառնա» [2, 104], «Ավետարանն ասում է. «Ով երկու շապիկ ունի, մեկը թող ուրիշին տա»» [2, 70], «Չեզոքությունը որպես գաղափար պետք է պահպանել անպատճառ, եթե կուզեք, որ քրիստոնեությունը գոյություն ունենա» [2, 45]:

Լեռ Կամսարի օրագրերում կերտված են տարբեր անձանց դիմանկարներ, որոնց կերպարանագծումներում երևում են փոխաբերության վառ օրինակներ: Պատկերավոր են գրողի՝ հորը նվիրված տողերը. *«Մի անգամ հորս ձեռքից ապտակ եմ կերել, երբ նրա քսակից դրամ գողացա: Էլ ուրիշ հիշողություն չունեմ հորս մասին: Եվ հենց այդ չունենալն է, որ այսօր պատճառ է դարձել ֆետիշի նման սիրելի հորս՝ պաշտամունքի սահմաններին մոտենալով: Ես հորից ծարավ մնացի»* [2, 151-152]:

Օրապատումների մեջ առանձնացված է իր բարեկամին՝ Խորենին ուղղված պատասխան նամակը, որտեղ անդրադարձ է կատարված իր գրական ծածկանվանը. *«Ես, որ գրական ասպարեզ մտնելիս «Լեռ Կամսար» անունն առա վրաս, երբեք մտքովս չանցավ, որ այդ անունը այսօր սաստիկ պետք պիտի գար ինձ, որ այսօրվա իմ կյանքը ես պարտական պիտի լինեմ այդ անվանը:*

Ես անպայման Լեռ պիտի լինեի՝ դիմանալու համար այս ամեն տեսակ գլխիս ոռնացող քամիներին ու փոթորիկներին» [2, 156]:

Օրագրերում հանդիպում ենք նաև ինքնաբերութագրումների. ահա դրանցից մեկը. «Ես այս աշխարհում, որ այսքան դժվա-

րությամբ եմ ապրում, այդ նրանից է, որ ի բնե ազնիվ եմ ծնված: Այո՛, չափազանց ազնիվ»:

Լեռ Կամսարը ստեղծագործել է տարբեր ժամանակներում, տարբեր երկրներում և տարբեր իրականությունների մեջ. բնականաբար օրագրերի ուղղագրությունն էլ տարբեր է եղել: Նա գրել է և՛ դասական արևմտահայերենով, և՛ արևելահայերենով, և՛ ինչ-որ միջանկյալ խառնուրդ լեզվով: Իսկ 50-ականներին արդեն ամբողջաբար անցել է արևելահայերենի:

Լեռ Կամսարը գեղարվեստական վավերագրության այս պատռիկներում հետևորդներին թողեց այնպիսի ճշմարտություններ և ուղերձներ, առանց որոնց այնքան հեշտ կլիներ սայթաքելը. դրանք այսօր էլ հնչում են իբրև պատգամ գալիք սերունդներին:

Օգտագործված գրականություն

1. Բեդիրյան Պ., Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան, Ե., 2011:
2. Լեռ Կամսար, Սոցիալիզմի Սահարա («Կարմիր օրեր.1959թ.»), Ե., 2009:
3. Խլղաթյան Ֆ., Ժամանակակից հայոց լեզու, մաս Ա, Ե., 2009:
4. Պապոյան Ա, Բաղիկյան Խ., Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն, Ե., 2003:
5. Պողոսյան Պ., Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, գիրք 2, Ե., 1991:
6. Զահուկյան Գ., Խլղաթյան Ֆ., Հայոց լեզու, Ե., 1994:

Галстян Ашот- Языковые основы периодических записей Лера Камсара.- В огромном наследии Лера Камсара особое место занимают периодические записи. В дневниках: “Красный смех”, “Тюремный дневник”, “Сахара социализма” и др. – с тонким чувством юмора и при помощи различных цветовых гамм детально описывается трудная жизнь писателя. Образы создаются различными стилистическими

средствами. Слово в дневниках строится на вопросах к самому себе и диалогами. Особый интерес представляют крылатые слова и фразеологизмы.

Galstyan Ashot- The Linguistic Basis of Ler Kamsar's Diaries.- Ler Kamsar's diaries make a distinctive part of his literary heritage. The hardships of the writer's life are presented in his different diaries: "The Red Laugh", "Prison Diary", "The Sahara of Socialism" etc.

With a delicate sense of humor and various colorful means the author weaves his life story. The use of different stylistic devices helps to create capacious images. The diaries are constructed through dialogues and questions addressed to oneself.

The sayings and idioms are of special interest.

**Նորաբանությունները Գրիգոր Տաթևացու
«Գիրք հարցմանց»-ում**

Յետևելով Արսեն Այտընյանի «Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի» աշխատության մեջ վաղ աշխարհաբարի դրսևորումները արձանագրելու, ապա իբրև համակարգ ներկայացնելու շարադրանքին՝ զուգահեռաբար արձանագրում ենք գրաբարի «ճաքեր տալու» և աստիճանական փոփոխության պատմությունը. հասնելով 8-13-րդ դարերի նկարագրությանը՝ մեծանուն հայագետը գրում է. «Ամէն երեւոյթ կը միաբանի հաստատելու, **թէ այս ժամանակներուս (Ը – ԺԳ դարուց) սկիզբները մեր գրաբարն իրենց ալ իրօք գրաբար էր**, այսինքն գրոց եւ գրագիտաց սեպհական մնացած լեզու. - թեպէտեւ հին ժողովրդեան լեզուն նոր ազգին սահմաններէն քաշուելու ատեններն ալ՝ անտարակոյս է որ դեռ ռամիկ մասը իւր գէթ եկեղեցական լեզուն քիչ շատ կը հասկընար. դեռ երեկոյան վերջալոյս մը բաւական որոշ տեսնել կու տար անցած ցորեկուան մնացորդները եւ գրել ուզողներուն աւելի կը դիւրացներ գրաբարի ուսումը»¹. այսինքն՝ ըստ հայագետի իր վերջալոյսում գրաբարը չնայած մնացել էր միայն իբրև «գրոց եւ գրագիտաց սեպհական լեզու», սակայն շարունակում էր հասկանալի լինել ռամիկ ժողովրդին: Չպնդելով ասածը, սակայն միանգամայն օրինաչափ համարելով տեսակետը, ի հաստատումն այդ կարծիքի, հայագետը տողատակում նշում է, որ այդպես եղել է նաև հույների մոտ, և արդեն 4-րդ դարում նմանատիպ վիճակում էր հունարենը, և բերում է ավանդված մի վկայություն, ըստ որի՝ Յովհան Ոսկեբերանի ճառերից մեկն ունկնդիր կինը ընդհատել է՝ ասելով, թէ

¹ Ա. Այտընեան, Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի, Վիեննա, 1866., էջ 133:

«պարզ խոսիր, Հայր, որ հասկանանք», ինչին ըստ վկայության հետևել է հայրաբանի ավելի պարզ ճառը:

Միանգամայն համոզիչ է թվում նշանավոր հայագետի կարծիքը. ունկնդիր չունենալու պարագայում՝ տասներեք և հետագա դարերում չէին գրվի մեկնությունները, քարոզները, շարականները: Հասցեատեր չունենալու դեպքում չէին գրվի նաև պատմագրական, փիլիսոփայական. տոմարագիտական, քերականական այն երկերը, որոնք մենք ունենք այս դարերից. (Ստեփանոս Օրբելյան, Վահրամ Բաբունի, Վանական Վարդապետ, Կիրակոս Գանձակեցի, Գևորգ Սկևռացի, Վարդան Արևելցի, Հովհաննես Երզնկացի (Պլուզ). սա ոչ լրիվ ցանկն է միայն 13-րդ դարի հեղինակների):

Կարծում ենք, որ լսարան չունենալու պարագայում, մեր եկեղեցու վերջին սուրբը՝ Գրիգոր Տաթևացին նույնպես, իր կոթողային աշխատությունները չէր ստեղծի գրաբարով և ավելին՝ չէր զբաղվի լեզվաշինարարությամբ. մասնավորապես, «Գիրք հարցմանց»-ի Համաբարբառի կազմման աշխատանքներն ավարտելուց հետո մեզ պարզ դարձավ, որ Գրիգոր Տաթևացին միայն այդ երկում հեղինակել է շուրջ 500 სոր բառեր:

Համեմատություն է կատարվել Նոր Հայկազեան, Երեմիա Մեղրեցու «Բառգիրք հայոց», Հրաչյա Աճառյանի «Արմատական բառարան», Ստ. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարան», Ռ. Ղազարյանի, Հ. Ավետիսյանի «Միջին հայերենի բառարան», Լ. Հովհաննիսյանի «Գրաբարի բառարան (Նոր հայկազեան բառարանում չվկայված բառեր)» աշխատություններում ընդգրկված բառանյութի հետ: Ինչպես հայտնի է, բառարաններից Երեմիա Մեղրեցու «Բառգիրք հայոց»-ը և Ստ. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարան»-ը հեղինակային վկայություններ չեն կատարում, սակայն, այնուամենայնիվ, վկայված լինելու փաստը մեր կողմից արձանագրվել է: Մյուս կողմից, հատկապես հետաքրքրական են «Միջին հայերենի բառարանի» վկայությունները, որոնք այս բառերը բացատրելիս մեծի մասամբ

հղում են Գրիգոր Տաթևացուն, այսինքն՝ կասկածից վեր է, որ նորաբանությունները իսկապես պատկանում են նրան:

Հայտնի է, որ մեր բառարաններում բառապաշարը Ա-Կ և Յ-Օ տառերի սահմանագծում գրեթե կիսվում է: Հետաքրքրությունից զերծ չէ, հավանաբար, որ Տաթևացու հեղինակած նոր բառերը նույնպես տեղավորվում են այս կաղապարի մեջ, այսինքն՝ նորաբանությունները Կ - Յ տառերի սահմանագծում գրեթե կիսվում են: Ասենք, որ «Գիրք հարցմանց»-ում տեղ գտած և գրաբարյան բառարաններում չվկայված հատուկ անունները գրեթե հազարն են, որոնց քննությունը, սակայն, այս աշխատանքից դուրս է:

Չգալի թիվ են կազմում այն բառերը, որոնք կարող են տարակուսանք առաջացնել գրաբարյան բառագանձը լավագույնս արտացոլող Հայկազեան բառարանում վկայված չլինելու, սակայն շատ սովորական ու գործածական հնչելու պատճառով, ինչպես օրինակ, *անմորուք*, *ատենադպիր*, *բթամիտ* բառերը, այսինքն՝ սա մի փաստ է, որ խոսում է հեղինակի անգամ բառաստեղծման մեջ հայերենի լեզվական օրինաչափություններին հարազատ մնալու հանգամանքի մասին: Երեք դեպքում էլ «Միջին հայերենի բառարանը» վկայում է հենց Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց»-ին:

ԱՆՍՈՐՈՒՔ - Իսկ զի կեսք քարց և *անմորուք* լինին, զի ջլապիտ է մորթ երեսացն որպես զթաթ ձեռաց. վասն որոյ մազ ո՛չ բուսանի: - 245.

ԱՅԵՆԱԳՊԻՐ - Երկրորդ ասեն, դ դասք էին իշխեցօղք ժողովըրդեանն. այսինքն իշխանք ցեղիցն՝ և ծերքն՝ և դատաւորքն՝ և *ատենադպիրքն*: - 609.

ԲԹԱՄԻՏ - Եւ զոր ինչ տեսանէ աչք արծուին՝ ո՛չ կարէ տեսանել աչք մարդոյ. այնպես *բթամիտն* ո՛չ իմանայ, զոր իմանայ նրբահայեացն և ուսեալն յաստուծոյ. զոր եդ աստուած ուսուցիչ այլոց. որպես մարգարեքն, և առաքեալքն, և վարդապետք: - 31. Հերն կակուղ և նօսր, ցուցանէ *զբթամիտն*. և զգռուզն. և զաներկչոտն: - 246. Եղունկն կոր և դար, *բթամիտ* և յափշտակօղ է: - 247:

Բառաբացատրությունների մի զգալի մասը ինքնատիպ և տարբերվող է այնքան, որ վկայություններում ներառված լինելու

դեպքում շատ ավելին կասեր բառի վերաբերյալ: Այսպես օրինակ, Յայկազեան բառարանում «Ազապ» բառը բացատրվում է՝ սեր, սիրելու և կամ՝ հացկերույթ: Բերում ենք Տաթևացու բառաբացատրությունը. «Իսկ վասն **ազապս առնելոյ** որ է՝ ոգեհանգիստ. և վասն քահանայաթաղին որ է՝ **ժղ** աւետարան. զոր արարեալ է սրբոյն Եփրեմի խորին ասորոյ ի նիկոմիդացոց քաղաքին: Եւ դազար թարգման եբեր ի հայս՝ ի **ժգ** ամի թարգմանութեան սրբոյն սահակայ առն աստուծոյ որ էր նախանձախնդիր կարգաց եկեղեցոյ: Որ **ժ** թիւ էր ի սրբոյն գրիգորէ յետ **ճժա** ամի անցանելոյ. յորժամ այս ամենայն հաստատեալ նորոգեցաւ հրամանաւ սրբոյն սահակայ պարթևի ի փառս քրիստոսի. ձեռամբ իմով մովսիսի գրչի սահակայ»¹: Յատվածում ակնհայտ է, որ՝

ա) բառաբացատրության մեջ ունենք երկու հոմանիշ՝ *ոգեհանգիստ* և *քահանայաթաղ*, որը բառարանագրության էական հատկանիշներից է.

բ) ունենք ուղղակի բացատրություն՝ «որ է՝ **ժղ** աւետարան».

գ) ունենք նաև պատմական բացատրություն, որից պարզ է դառնում, որ կարգը սահմանել է Եփրեմ Խորի Ասորին, այն Յայկաստան է բերվել Սահակ Պարթևի թարգմանություններին ձեռնամուխ լինելու տասներեքերորդ տարում, ինչպես հեղինակն է ասում՝ Ղազար թարգմանի միջոցով:

Կասկածից վեր է, որ բառարանագրության առումով Տաթևացու բացատրությունն առավել հազեցած է:

Մեկ այլ՝ *հիմնարկեք* բառը Տաթևացու մեկնաբանությամբ այնքան տեղեկություն է պարունակում, որ չենք գտնում ոչ մի այլ բառարանում. «Իսկ վասն հիմնարկութեան սուրբ տաճարի և ժամահար օրհնելոյ. սկիհ և մաղզմայ. և զգիրք. և զկնունք առնելոյ. և խաչօրհնելոյ. և զքառասնորդաց **գ** ժամուց զքարոզքն և զաղօթսն, **յոհան մանդակունին** է արարեալ. որ **ժղ** թիւ էր ի սրբոյն գրիգորէ: Եւ այս գիտելի է, զի առաջին աղօթք յամենայն կարգադրութիւնս՝ գոհանամք պարտ է դնել. բայց առաւել ի կընքելս՝ և ի թաղել մեռելոյն: Չի դիտեսիոս այր առաքելական ասէ.

¹ Գրիգոր Տաթևացի, Գիրք հարցմանց, Կ.Պոլիս, 1729, էջ 658- 659:

թէ ասէն եպիսկոպոսին թէ ոք եկեալ է կնուք ինդրել, ևա զձեռն ի վեր առեալ գոհանայ զաստուծոյ. ևմանապէս թէ պատմի վասն վախճանի ուրուք: Իսկ աղօթքն զոր յովհաննէս ուսոյց աշակերտաց իւրոց այս էր: **Յայր սուրբ՝ ուսո՛ մեզ զբան քո: Որդի սուրբ՝ ցոյց մեզ զերեսս քո: Հոգի սուրբ՝ սրբութեամբ քո սրբեա՛ զմեզ:**»:

Նորահայտ բառերի ցանկը խիստ ծավալուն լինելու (միայն թվարկումը 40 էջ է) պատճառով բերում ենք հատկապէս այն բառաբացատրությունները, որոնք այս կամ այն առումով հետաքրքրություն են ներկայացնում:

ԱՐՓԻԱԾԻՆ-Գիր քոյոյ վսեմամիտ խոհեմութեանդ ո՛վ արփիածին հարազատ, և վերնոյն սիօնի նազելի զաւակ Գեորգէոս Րաբունեայ պետ: - 773. Բառը վկայում է միայն Լ.Հովհաննիսյանը, տալիս «Արեգակից ծնված» բացատրությունը և շարունակում. «Գրիգոր Տաթևացուն տրվող մակդիր». հեղինակը հղում է *ԺԵ* դարի հիշատակարաններին (*ԺԵ* դարի հիշատակարաններ, Ա, էջ 108), սակայն Տաթևացին արդէն իսկ գործածում է բառը:

ԼՈՒՍՆԿԱԼ - Յաղագս Ջրոյ յատկութեանց ...Ուրևժ՝ լուսնկա՛լ նիւթ է:- 207.Տաթևացին ջրի հատկություններից տասնութերորդը նշում է նրա լուսնկալ լինելը (լույսը կալող, պահող): Միջին հայերենի բառարանը վկայում է «լուսնայկալ» կամ «լուսայկալ» ձևերը, ապա բացատրում. «Լույսը, ճրագը բռնող, ջահընկալ». հղում է «Ժողովածոյք առակաց Վարդանայ» աշխատությանը, և եթէ «կալող, բռնող» իմաստն է, ապա ճիշտ գրչագիրը Տաթևացու «լուսնկալ» ձևն է:

ԾՈՍՍՕՆ- «Միջին հայերենի բառարանը» բացատրում է. «Հույների ս.Գևորգի տոնը, որ հայերի համար տոն չէ». բերում է միայն ԺԴ դարի հիշատակարանների վկայությունը:

Լ. Հովհաննիսյանի «Գրաբարի բառարան»-ում վկայված է Գր. Տաթևացու մեկ այլ աշխատության՝ «Լուծմունք պարապմանց Կիրդի» *Ծռագատիկ* ձևը: Հեղինակը բացատրում է. «Տոմարական հաշիվներով սխալ գատիկ» (էջ 146): Երկու դեպքում էլ հավանաբար գործ ունենք «ծուռ»՝ սխալ իմաստի հետ. ծռատոս, այսինքն՝ սխալ տոն. ծռագատիկ, այսինքն՝ ծուռ, սխալ գատիկ:

ԿԱՊՈՒՏԻՍ - Նոյնպես յորժամ բարկանայ՝ *կապուտի*: - 245. Երեմիա Մեղրեցին վկայում է երկու իմաստով՝ կողոպտել և կապտել: Ինչպես տեսնում ենք, Տաթևացին բերում է կապտել իմաստով:

Չեռաքրքրական են այսպես կոչված մեկ իմաստային դաշտում հայտնված նորաբանությունները. «օրհնեմ» հիմքով հեղինակի նոր բառերի շարքը պարզապես հիացմունք է պատճառում. շրջանառության մեջ ունենալով բազմաթիվ եկեղեցական-ծիսական տերմիններ՝ Տաթևացին ավելացնում է աղօրհնեք, գերեզմանօրհնեք, երեցօրհնեք, մայրօրհնեք, տնօրհնեք, ջրօրհնեք նորակազմությունները. բառաբացատրություններում տրրվում են նաև պատմական տեղեկություններ.

Աղօրհնեք - Իսկ վասն տեսնականին և *աղօրհնեիցն*, սուրբն յոստո՞ս է արարեալ. որ չորրորդ եպիսկոպոս էր յերուսաղեմ յառաքելոյն յակոբայ: Յերկրորդ ամէ՛ սրբոյն սահակայ մինչև ի **ժգ** ամն նորին՝ կատարեցան ի փառս քրիստոսի աստուծոյ մերոյ:

Գերեզմանօրհնեք - Չգերեզմանս յորո՞ւմ աւուր պարտ է օրհնել: Պատասխանի: Ի մեծի ուրբաթին: Չի բշաբաթին մեռելո՛ց է և ո՛չ *գերեզմանօրհնեք*: Եւ այս է խորհուրդն. գի յայնմ աւուր խաչեցաւ քրիստոս, և գերեզմանք բացան և այլն: Եւ ի նոյն օրն ի գերեզման եմուտ և էջ ի դժոխս և քարոզեաց:

Երեցօրհնեք - Իսկ վասն քահանայօրհնեիցն, սուրբն սահա՛կ է արարեալ. յառաջին ամի եպիսկոպոսութեան իւրոյ. ի նաւասարդի ամսեանն որ օր մի էր. և յիշատակ սուրբ կարապետին արար գքահանայօրհնեքն:

Մայրօրհնեք - Իսկ զկարգ *մայրօրհնեից՝* սուրբն կիպրիանոս կարգեդոնացի: Որ և զուստիանէ սրբուհի կոյսն մա՛յր արար կանսց հաւատաւորաց:

Տնօրհնեք - Այսպես և ի *տընօրհնեքն* ընծայք խաչին և աւետարանին որ ի նոցա տունն մտանէ: Նոյնպես և յայլ խորհրդոց կատարմունքն. կնքոյ, պսակի, և այլոցն, լուսացուէ և խնկոց գին: Չի որք ընկալան զշնորհս, պա՛րտին նոքա ընչիւք իւրեանց զեկեղեցւոյն լոյսն վառել զաւուրս ութն: Այլ թէ ասեն՝ հաղորդադրամ,

կամ խոստովանադրամ, խորթ Է. յագահութեանց երիցանց սահմանեալ և ո՛չ ըստ կանոնաց որպէս այլքն: Չի այնպիսիքն դատաստան ընդունելոց են անձանց իւրեանց ի մեծի ատենին քրիստոսի:

Ձրօրհնէք - Իսկ զկանոն *ջրօրհնէից՝* սրբոյն բարսղի Է արարեալ յեօթն ամի հայրապետութեան իւրոյ յերուսաղէմ. զի անդ հանդիպեցաւ: **Իսկ խոսրով թարգմանիչ եբեր ի հայս.** որ գնացեալ էր յերուսաղէմ հրամանաւ սրբոյն սահակայ:

Ողջոյնառաքն և ողջոյնընկալն տորաբանությունները կապվում են Ավետման խորհրդի հետ՝ առաքումը՝ Աստծո, ընկալումը՝ Աստվածածնի.

ՈՂՋՈՅՆԱՌԱՔՆ - Նա՛խ՝ զի աստուած էր *ողջոյնառաքն.* որ խօսեր զկոյսն ի հարսնութիւն կուսութեան, կուսաբեր լինիլ պտղովն: - 464.

ՈՂՋՈՅՆԸՆԿԱԼՆ - Երրորդ՝ զի կոյս էր *ողջոյնընկալն* և գերագանց քան զամենայն կոյս որպէս ցուցաւ: - 464.

Մարդակազմությանն են վերաբերում *լիսեռնածն և պարունակածն* տորաբանությունները.

ԼԻՍԵՌՆԱԶԵՐ - Շլիքն **է** ոսկր *լիսեռնածն:* - 243. Եւ ողնաշարն լիսեռնածն **ծը** ոսկր: - 243.

ՊԱՐՈՒՆԱԿԱԶԵՐ - Եօթներորդ՝ զի *պարունակածն* Է կողն. ի նըշանակել, զի կինն պարունակիչ և հաւաքիչ Է տան առն և ընչից: - 276.

Այն, որ հայագիտությունը լուրջ քայլեր կարող է ձեռնարկել հին հայերենի ամբողջական համաբարբառ ունենալու ուղղությամբ՝ փաստ է, սակայն որ նա չի կարող սահմանափակվել միայն Մխիթարյան հայրերի աշխատասիրած նյութով, նույնպես փաստ է: Հայագիտությունն այստեղ ունի չլուծված հարց. անհրաժեշտ է ավարտին հասցնել գրաբարալեզու բոլոր՝ մեծ թե փոքր, արծակ թե չափածո աշխատությունների համաբարբառներ կազմելու և հրատարակելու աշխատանքները: Բառի պատմությունը ինքնին կարող է բավականաչափ տեղեկություն տալ արտալեզվական այն փոփոխությունների մասին, որոնք պատ-

ճառ են դառնում բառիմաստի տեղաշարժի, փոփոխության կամ նոր իմաստի ձեռքբերման, այսինքն՝ ստեղծելով մերոպյան հայերենի լիարժեք համաբարբառ՝ բոլոր վկայությունների ներառումով, բառի պատմության մեջ մեծապես կարելի է տեսնել այն կրող ժողովրդի պատմությունը:

Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց»-ի համաբարբառը ըստ ամենայնի համալրում է մերոպյան հայերենի բառարաններում վկայված բառագանձը:

Григорян Сусанна- Неологизмы в книге Григора Татеваци “Книга вопрошений”.- После окончания работ по составлению конкорданса Книги вопрошений Григора Татеваци стало ясно, что только в этой книге Григор Татеваци является автором около 500 новых слов.

Было проведено сравнение со словарным материалом, содержащимся в ряде работ, а именно: в Новом словаре древнеармянского языка, в Словаре армянского языка Еремии Мегреци, Этимологическом коренном словаре армянского языка Рачия Ачаряна, Толковом словаре современного армянского языка Степана Малхасянца, Словаре среднеармянского языка Р.Казаряна и Г.Аветисяна, Словаре древнеармянского языка (Слова, не засвидетельствованные в Новом словаре древнеармянского языка) Л.Ованисяна.

Особый интерес представляют свидетельства Словаря среднеармянского языка, которые при толковании слов в основном ссылаются на Григора Татеваци, и это – несомненное доказательство того, что неологизмы действительно принадлежат ему.

И поскольку ни одна из работ Григора Татеваци не включена в свидетельства Нового словаря древнеармянского языка, тем большую ценность приобретают неологизмы в его работах.

Grigoryan Susanna- Neologisms in ” The Book of Questions” by Grigor Tatevatsi.- Upon completion of the concordance of ”The Book of Questions” by Grigor Tatevatsi it’s become evident, that in his book Grigor Tatevatsi is the author of about 500 new words.

A comparison was drawn between the lexicographic materials of the New Dictionary of Ancient Armenian, Dictionary of Armenian by Yeremia Meghretsi, Etymological Dictionary by Hrachya Atcharyan, Explanatory Dictionary of Modern Armenian by Stephan Malkhasyants, Dictionary of

Middle Armenian by R. Khazaryan, H. Avetisyan, Dictionary of Ancient Armenian (the words which are not indicated in the New Dictionary of Ancient Armenian) by L. Hovhannisyan.

Of particular interest are the indications of the Dictionary of Middle Armenian, which upon contemplation refer to Grigor Tatevatsi. This comes to prove that neologisms belong to his pen.

And insofar as none of Grigor Tatevatsi's works is included in the references of the New Dictionary of Ancient Armenian, the more value is attached to the neologisms that are found in his works.

**Բաղաձայնների հնչյունափոխությունը Շիրակի տարածքի
խոսվածքներում**

(տարժամանակյա քննություն)

Շիրակի տարածքի խոսվածքները, ըստ բարբառագիտական ուսումնասիրությունների (Յ. Աճառյան, Ա. Ղարիբյան, Յ. Սկրըռչյան, Գ. Ջահուկյան), պատկանում են *կը* ճյուղին: Գ. Ջահուկյանը Կարևո բարբառը (Կարինի, Լենինականի (Գյումրիի), Բաբերդի և Խնդածորի խոսվածքներ) դասում է բարբառների արևմտյան խմբակցության Փոքր Ասիայի կամ արևմտյան բարբառախմբի մեջ: Հարկ է նշել, որ վերոնշյալ երախտավորներն իրենց ուսումնասիրություններում Արևելյան Շիրակի (Շորագյալ) գյուղական բնակչության լեզուն նույնացրել են Լենինական-Գյումրի քաղաքի ենթախոսվածքին, այնինչ դրանք նկատելիորեն տարբերվում են միմյանցից: Հավելենք, որ Շիրակի տարածքում գործառուում են արևմտյան և արևելյան բարբառախմբերի խոսվածքներ՝ *ում* և *կը* ճյուղերի քերականական հատկանիշներով: Այս հանգամանքը պայմանավորված է պատմական շրջանում բնակչության պարբերական գաղթերով ու տեղահանություններով, որոնց հետևանքով բարբառային տարբեր միավորներ հայտնվել են նույն տարածքում:

Անհրաժեշտ է նշել, որ հնչյունական տեսակետից Շիրակի ողջ տարածքը համասեռ է, և հնչյունների արտաբերության եղանակները, պատմական, փոխազդեցական կամ շեշտից կախված հնչյունափոխական երևույթներն ընդհանուր են տարածքի բոլոր խոսվածքների համար: Ուստիև սույն հոդվածում կներկայացնենք Շիրակի տարածքի բաղաձայն հնչյունների բնութագիրը և պատմական հնչյունափոխության դրսևորումները:

Տարածքի խոսվածքներում ներկայումս գործառուում են 36 բաղաձայն հնչյուններ՝ ձայնեղ պայթականներ՝ *բ, գ, դ*, ձայնեղ կի-

սաշփականներ՝ *ձ, ջ*, ձայնեղ շնչեղ պայթականներ և կիսաշփականներ՝ *ժ, գ, դ, ծ, ջ*, խուլ պայթականներ՝ *կ, պ, տ*, խուլ կիսաշփականներ՝ *ծ, ժ*, խուլ շնչեղ պայթականներ՝ *թ, փ, ք*, խուլ շնչեղ կիսաշփականներ՝ *չ, ց*, ձայնեղ շփականներ՝ *զ, ժ, ղ, վ, ց*, խուլ շփականներ՝ *խ, հ, շ, ս, ֆ*, ձայնորդներ՝ *լ, մ, յ, ն, ռ, ռ*:

Տարածքի բաղաձայն հնչյունները, բացառությամբ ձայնեղ շնչեղների և ձայնեղ *հ*-ի, գրեթե չեն տարբերվում գրաբարի և արդի հայերենի նույն հնչյուններից: Հարկ ենք համարում առանձնացնել *ր* ձայնորդը, որի արտաբերության եղանակը որոշակի յուրահատկություն ունի: Շիրակում արտաբերվող *ր*-ն ավելի շատ ոչ թե առաջնալեզվային, այլ միջնալեզվային հնչյուն է, որին ուղեկցում է թույլ հագագային շունչը, և որը իր արտաբերության տեղով մոտենում է *յ*-ին: Իհարկե, դեռևս ձայնաբանական ուսումնասիրություններ չեն կատարվել այս խնդրի վերաբերյալ: Շիրակի տարածքի խոսվածքների կարևոր հնչյունական հատկանիշներից է ձայնեղ *հ* (*հ*) հնչյունի առկայությունը: Ձայնեղ *հ*-ն գործառու է թե՛ բնիկ հայերեն (աղբիւր- Կախալուր, ակ-Կագ), թե՛ փոխառյալ բառերում՝ հատկապես թուրքական և արաբական փոխառություններում (Երմեհան, Կոդա, Երախի, Երմեխ, Երմանգ և այլն): Ձայնեղ *հ* հնչյունը (ձայնեղ *հ*-ն) ավելանում է բառասկզբում՝ հատկապես ձայնավորներից և *ռ* ձայնորդից առաջ՝ ականջ >Կանգաջ, ընկնել>Երնգընել, իջնել>Իժնել, ուզել>Օուզել, ելնել>Ելնել և այլն: Շիրակի տարածքի բառային հիմնական ֆոնոլոգի մեջ հաշվել ենք 98 բառ, որոնց սկզբում լսվում է *հ* ձայնեղ հագագը: Հ. Մուրադյանը գրում է. «Որոշակի հիմքեր կան պնդելու, որ ձայնեղ *հ*-ն հայերենի բարբառներում պատմական գոյացություն է» [5, էջ 276]:

Ձայնեղ *հ* (*հ*)-ն հանդիպում է նաև հին հայերենի *յ* ձայնորդի դիմաց՝ *Յակոր>Կագոպ, Յովսեփ>Կոտպ // Կուտպ*:

Տարածքի խոսվածքների հնչյունական մյուս կարևոր յուրահատկությունը ձայնեղ շնչեղ բաղաձայնների առկայությունն է:

Հինհայերենյան *ծայնորդները՝ ւ,ր,ռ,յ,մ,ն*, խոսվածքներում քիչ են ենթարկվել փոփոխությունների: Ավելի հաճախ դրանք պահպանել են իրենց արտաբերական յուրահատկությունները.

-ր/լ հերթագայություն՝ գլոր>գըլօլ, խսիր > խըսիլ:

-բառավերջում և *ջ, ժ, ձ, ժ* հնչյուններից առաջ *ր-ն* վերածվում է *ռ-ի՝* ոսկոր>օսկօռ, մանր>մանդռ, սանր >սանդռ, ձագար>ձակառ, արջ>առճ, արածել>առձալ, կրծել>կըռձել և այլն: Հ. Մուրադյանը գրում է. «Այս բանը այս կամ այն չափով առկա է բոլոր այն բարբառներում, որոնց մեջ գոյություն ունի *ր-ի* և *ռ-ի* հակադրությունը» [6, էջ 222]: Հեղինակը գտնում է, որ այդ հերթագայությունը ամենատարբեր պատճառներով կարող է լինել: «Այդ փոփոխության մեջ, այնուամենայնիվ, մի օրինաչափություն որոշակի է. այդ այն է, որ *ր-ի* դիմաց *ռ* արձանագրվում է հիմնականում բաղաձայնից առաջ» [նույն տեղում]:

-վիրավորել բառում նկատվում է *ր>յ* *հնչյունափոխությունը՝* վիրավորել:

-*ր>ն* հերթագայությունն է առկա *բարձր>բանձր* և *երկար >յերգան* (Յերգան ցարեվ Էղնիս) բառերում և դրանցով կազմված բայաձևերում ու բարդություններում՝ *բանձր*նալ, ցամենաբանձր *բանձր*ծընել, *յերգընձը*նել, *յերգընսավը*զիզ և այլն:

-*ր* ձայնորդը սղվում է *դուրս* և *գոլորշի* բառերում՝ *դուս*, *գօլօշի*:

-բառասկզբի *ռ* ձայնորդից առաջ ոչ շատ ուժեղ լսվում է *ս* հընչյունը հատկապես փոխառյալ բառերում. *ճաստ* գալ, *ճադ* Էնել, *ճանդա* և այլն: Մնացյալ բոլոր դիրքերում *ռ-ն* հանդես է գալիս անփոփոխ՝ *առյուձ*, *առնել*, *վըռագ*նալ, *գառ* և այլն:

-*ն>լ* տարևմանությամբ հնչյունափոխություն է կատարվում *նըման* բառում՝ *լըման* (*Չըկար էլ քեզի լըման*: *Գըլմանի (կնմանի) ասեղ կերած շուն*: *Վա՛յ քու լըմանըտ թապի*): Իհարկե, խոսքում, թերևս գրական լեզվի ազդեցությամբ, օգտագործվում է նաև *նըման* բառը:

Շիրակի խոսվածքներում բառասկզբի հինհայերենյան *ծայնեղ պայթականներն ու պայթաշփականները* շնչեղ ձայնեղության հատկանիշ են դրսևորում՝ բ, գ, դ, ձ, ջ ~բ, գ, դ, ձ, ջ՝ բերան > բէ-

րան, **դանակ>դանագ, գարուն>գարուն, դուն>դուն, ձմեռ(ն)>ձըմեռ, ջուր>ջուր** և այլն:

Ընդ հետո, միջձայնավորային և բառավերջի ձայնավորային դիրքում գտնվող ձայնեղ պայթականներն ու պայթաշփականները խլանում են՝ բ, գ, դ, ձ, ջ ~ պ, կ, տ, ծ, ճ՝ որք>վորպ, բուրդ>բուրտ, երգ>յերկ, բարձ>բառձ, արջ>առձ, խաբել>խապել, դարդար>դատար, թագավոր>թակավոր, ոջիլ>օձիլ, օձ>օձ, մեջ>մեճ:

Յ.Մկրտչյանը «Կարևո բարբառը» գրքում ձայնեղ պայթականների հնչյունափոխության վերաբերյալ գրում է. «Ը ձայնորդից հետո *դ*-ն բոլոր դեպքերում արտասանվում է *թ*, ինչպես՝ որդնել>օրթնել, յարդ>երթ, բուրդ>բուրթ, երդումն>երթում, արդար>հարթար, վարդ>վարթ, մարդ>մարթ» [5, էջ 27]: Ընդ որում, միևնույն ձևով մեկնաբանված են բոլոր ձայնեղ պայթականների հնչյունափոխության դեպքերը *դ* ձայնորդից հետո, երբ դրանք վերածվում են համապատասխան շնչեղ խուլ պայթական հնչյունների՝ դ>թ, գ>ք, բ>փ, ձ>ց, ջ>չ: Այնինչ նման հնչյունափոխությունը բնորոշ է միայն Ախալքալաքի բարբառային միավորներին: Իսկ Գյումրիում կամ Շիրակի տարածքի որևէ այլ բնակավայրում բոլոր ձայնեղ պայթական և պայթաշփական հնչյունները, հատկապես *դ* ձայնորդից հետո, վերածվում են խուլ հնչյունների՝ դ>տ, գ>կ, բ>պ, ձ>ծ, ջ>ճ: Օրինակ՝ Յ. Մկրտչյանի կողմից վերը նշված բառերն արտասանվում են այսպես՝ որդնել>օրտընել, բուրդ>բուրտ, երդում>յեռտում, արդար>արտար, վարդ>վարտ, մարդ>մարտ: Իհարկե, ձայնեղ պայթական բաղաձայնները նաև ունեն հենց ձայնեղ արտասանություն՝ բամբակ-բամբագ, ողջություն-վօղջություն, աղաթ-աղատ, անհաջող-անաջող, հաջողություն-աջողություն, աբեղա-հաբեղա, բանջար-բանջար և այլն:

Կարելի է արձանագրել նաև բառասկզբում ձայնեղ հնչյունների խլացման մի քանի մասնավոր դեպքեր, որոնք դիտվում են փոխառյալ բառերում. բասմա>պասմա, բաշաղ>պաշաղ, բոբուրի > պօպուրի:

Ձայնեղ շփական հնչյուններից *զ*-ն, *ժ*-ն որևէ փոփոխության չեն ենթարկվել, իսկ *ղ*, *վ* հնչյունները (հատկապես խուլ բաղա-

ծայնների կողքին՝ առնմանությամբ) խլանում են՝ վերածվելով /ս-ի և ֆ-ի՝ աղբյուր>ախպուր, գավթել>գաֆտել, փլավ>փըլաֆ, բվալ>բըֆալ և այլն:

Շնչեղ ձայնեղ հնչյունների ուսումնասիրությունը հայերենագիտության մեջ սկսվել է դեռևս 19-րդ դարից: Թե՛ հայ, թե՛ օտարագրի շատ հետազոտողներ են անդրադարձել այս հնչյունների առանձնահատկությունների բացահայտմանը՝ Է.Չիվերսը, Յ. Աճառյանը, Ռուսլոն, Մ.Գրամոնը, Ա.Մեյեն, Գ.Ղափանցյանը, Ու. Ալլենը, Վ.Պիզանին, Թ.Գամկրելիձեն, Վյաչ.Իվանովը, Ա. Խաչատրյանը, որոնց կատարած աշխատանքներին և շնչեղ ձայնեղների գործառական, ինչպես նաև արտաբերական-ընկալողական և ձայնաբանական բնութագրերին անդրադարձել է Ա. Յանեյանն իր ուսումնասիրություններում [1, էջ 41-50, 2, էջ166-232, 3, էջ 60-62, 4, էջ 55-61]: Գ. Ջահուկյանը բարբառների բազմահատկանիշ դասակարգման հնչյունական կարևոր հատկանիշների (զուգաբանությունների) շարքն է դասում բառասկզբի ձայնեղ պայթականների և կիսաշփականների շնչեղ-ձայնեղությունը [7, էջ 45]:

Ա.Յանեյանը հայերենի բարբառների բաղաձայնական համակարգում առանձնացնում է ձայնեղ շնչեղների արտաբերական տարածքային երկու տարբերակներ՝ ուժգնային և թույլ: Շիրակում գործառում է առաջին տարբերակը, որը Ա. Յանեյանը բնորոշում է որպես «ստորին-կոկորդային (լարինգալ) մաքուր կամ աղմկավոր ձայնային արտաբերություն, որով էլ հատկանշվում է հնչյունի ինտենսիվ, ուժգնային բնույթը» [1, էջ 44]: Յանեյանն իրավացիորեն նշում է. «Այն (շնչեղ ձայնեղների ուժգնային տարբերակը) գործառում է հայերենի բարբառների կենտրոնական, հարակից արևմտյան և մասամբ արևելյան տարածքի խոսվածքներում (Մուշ, Կարին, Արարատյան դաշտ, Բայազետ, Նոր Ջուղա, Արաբկիր, Շապին Կարահիսար, Սեբաստիա), որոնց բաղաձայնական համակարգերը երկհազագավոր են՝ խուլ **h**-ով և ձայնեղ **c**-ով» [1, էջ 44-45]:

Խնդրո առարկա խոսվածքներում բառասկզբում ձայնեղ շնչեղների առկայությունը կարևոր բարբառային յուրահատկություն-

ների թվին կարելի է դասել: Ձայնեղ պայթական և կիսաշփական հնչյունների գործառուժը բառասկզբում բացառված դիրք է Շիրակի խոսվածքներում, բացառությամբ Ամասիայի տարածքի մի քանի բնակավայրերի (Ալվար, Արդենիս, Բանդիվան, Բերդաշեն, Չարիշատ, Գյուլլիբուլաղ, Գետաշեն), ուր բնակություն են հաստատել Ջավահրքից գաղթածները: Ընդ որում ձայնեղ պայթական և կիսաշփական հնչյունները բառասկզբում շնչեղ ձայնեղության հատկանիշ են դրսևորում թե՛ բնիկ (քըլուր, գեդին, դուռ), թե՛ փոխառյալ բառերում (քաղնիկ, քըլբուլ, դաստա, բայրաղ):

Շիրակի խոսվածքներում ոչ բառասկզբի դիրքում ձայնեղ շընչեղները գործառուժ են հիմնականում բաղադրյալ կազմություններում՝ անդուռ, մեծքերան, անգըրել:

Պարզ խուլ պայթական և կիսաշփական բաղաձայնները բառասկզբում որևէ փոփոխության չեն ենթարկվել՝ **պատ-պաղ, կատու-կադու, տուն-տուն, ծառ-ծառ, ճանճ-ճանջ** և այլն:

Ը-ից հետո, միջձայնավորային և բառավերջի հետձայնավորային դիրքերում գտնվող խուլ պայթականներն ու կիսաշփականները ձայնեղացել են՝ **պ, կ, տ, ծ, ճ-բ, գ, դ, ձ, ջ՝ կարպետ > կարբեդ, գորտ > գօռդ, սիրտ > սիրդ, երկար > Երգար, արծաթ > առձատ, կարճ > կարջ, շապիկ > շաբիգ, ուտել > ուդել, պակաս > պագաս, մածուն > մաձուն, կոճակ > կօջագ, վիշապ > վիշաբ, շատ > շադ, կրակ > կըրագ, լուծ > լուձ, մաճ > մաջ** և այլն: Ընդհանրապես բառամիջում խուլ հընչյունների ձայնեղացումը թերևս Շիրակի տարածքի խոսվածքների ամենաբնորոշ և տարածված հատկանիշն է, որով անսխալ կարելի է ճանաչել շիրակցուն:

Պ, կ, տ հնչյունները բառամիջում փոփոխության չեն ենթարկվում *ս, շ, խ* բաղաձայններից հետո՝ հասկանալ-հասկընալ, սպասել-ըսպասել, հաստ-հաստ, աստառ-աստառ և այլն:

Կարելի է նշել բառասկզբում խուլ հնչյունների ձայնեղացման մի քանի մասնավոր դեպքեր՝ **պիտի > քըդի, կընմանի > գըլմանի**:

Պարզ խուլ շփականները՝ ս, շ, խ, հ, ֆ, Շիրակի խոսվածքներում գործառուժ են առանց փոփոխությունների՝ **սունկ-սունգ, աստղ-աստըղ, շուն-շուն, գոմեշ-գօմեշ, կախել-կախել, խսիր-խը-**

սիր և այլն: Մասնակի փոփոխությունների է ենթարկվում միայն *հ* հնչյունը. բառասկզբում՝ *ռ-ից առաջ, հ-ի դիմաց խոսվածքներն ունեն շրթնային շփական Ֆ՝ հող>Ֆոլ* (Այ ֆոլե՞րըս գըլխուդ), *հոր>Ֆոր, հորթ>Ֆորտ, հոտ>Ֆոդ*: Հնչյունափոխական այս երևույթն արդեն դադարել է գործելուց, քանի որ մեր ուսումնասիրություններն ու ձայնագրությունները ցույց են տալիս, որ այս երևույթը առկա է միայն տարեցների խոսքում, իսկ երիտասարդ սերնդի ներկայացուցիչները հավանաբար արդի գրական լեզվի ազդեցությամբ վերոնշյալ բառերն արտասանում են՝ *հոդ, հոր, հորտ*:

Բառամիջում՝ հատկապես ձայնավոր և ձայնորդ հնչյունների արանքում և բառավերջում, *հ-ի դիմաց առկա է յ՝ Վահրամ> Վայրամ, մահլամ > մայլամ, պահել > պայել, մահ > մայ, ահ > այ* (Էրգու այը մէ մայըմ է), *անահ>անայ, անմահ>անմայ, անմահանալ > անմայանալ, շահել>շայել, պահմտոցի>պայմըոծի* և այլն:

Հ հնչյունը, որն արտասանությամբ չի տարբերվում գրական արևելահայերենի նույն հնչյունից, ավելանում է աբեղա, ագույց, ուլունք, արբել, ալևոր բառերում՝ *հաբեղա, հանգուստ, հուլունկ, հարպել, հալիվոր*: Հարկ է նշել, որ Շիրակում որպես հավելական հնչյուն առավել հաճախադեպ է ձայնեղ *ց-ն*, որի մասին խոսել ենք վերը, սակայն այս մի քանի բառերում ավելանում է ոչ թե ձայնեղ, այլ խուլ շփական *հ*:

Շիրակի տարածքի խոսվածքներում առանձնահատուկ դիրք սևորում ունի բառասկզբում *կհ* կապակցության արտասանությունը. հատկապես *հ-ով սկսվող բայերի ենթադրական եղանակի և սահմանական եղանակի՝ կ-ով կազմվող անկատար ժամանակաձևի կազմության ժամանակ*, երբ *կ* եղանակիչը և *հ* հնչյունը հանդիպում են իրար, լսվում է *ք՝ կհանդիպի>քանդըբի, կհանգըստանա>քանգըստանա, կհաջողացնի>քաջողծընէ, կհարմարեցնեմ >քարմարծընեմ, կհամեմատեմ>քամեմադեմ* և այլն:

Կարևոր բարբառի *շնչեղ խուլ* բաղաձայնների վերաբերյալ Հ. Մկրտչյանը գրում է, որ դրանք որևէ էական փոփոխության չեն ենթարկվում [5, էջ 30-31]: Այնինչ Շիրակի խոսվածքներում շնչեղ խուլ բաղաձայններն անփոփոխ են մնում միայն բառասկզբում՝

քար-քար, փուշ-փուշ, թիզ-թիզ, չիր-չիր, ցորեն-ցորեն և այլն: Շընչեղ խուլ բաղաձայնով սկսվող բառերը բարդվելիս և ածանցվելիս պահպանում են իրենց շնչեղ արտասանությունը՝ քարե, անքիստ, անփուշ և այլն:

Ոչ բառասկզբի դիրքում շնչեղ խուլերը *ապաշնչեղանում են՝* փոփուր>փըրպուր, թուղթ>թուխտ, աղքատ>ախկաղ, հարցնել>հարծընել, շունչ>շունճ, թափել>թապել, թաթախել>թատխել, թեքել>թեկել, փչել>փըճել, թեփ>թեպ, կաթ>կատ, քաղաք>քաղակ, բաց>բած, խաչ>խանճ և այլն: Այս երևույթի դրսևորումը հայերենի բարբառներում է. Մուրադյանը համարում է ոչ թե փոխազդեցական հնչյունափոխություն, որը կատարվում է հարևան բաղաձայնի ազդեցությամբ, այլ ապաշնչեղացման ընդհանուր երևույթ, երբ բառամիջի և բառավերջի դիրքերում, անկախ հընչյունական միջավայրի բնույթից, շնչեղ խուլերը համատարած ենթարկվում են շնչեղազրկման գործընթացին: Իհարկե, Մուրադյանը նաև նշում է, որ այս երևույթը վայրից վայր ունի արտահայտվածության ավել կամ պակաս ընդգծվածություն, ինչը համարում է կատարված փոփոխության առանձին աստիճանների դրսևորում [6, էջ 231]:

Տարածքի բարբառային միավորներում բառամիջի և բառավերջի դիրքը շնչեղ խուլերի համար առհասարակ բացառված դիրք է: Շնչեղ խուլերի՝ վերոնշյալ դիրքերում ապաշնչեղացման երևույթը պահպանվում է նույնիսկ ժամանակակից փոխառությունների ժամանակ՝ մեքենա-մեկենա, աթերոսկլերոզ-ատերոսկլերոզ և այլն:

Բառամիջում և բառավերջում շնչեղ խուլերի պարզ արտասանությունը ևս հնչյունական կարևոր հատկանիշներից մեկն է:

Այսպիսով, Շիրակի տարածքի բարբառային նկարագիրը, միատարր չլինելով հանդերձ, բավականին օրինաչափ դրսևորում ունի հնչյունական համակարգում:

Օգտագործված գրականություն

1. Հանեյան Ա., Հայ բարբառների ձայնեղ շնչեղ բաղաձայնների արտաբերական-ընկալողական և ձայնաբանական բնութագիրը, Կանթեղ, Գիտական հոդվածների ժողովածու, Ե., 2002:
2. Հանեյան Ա., Ձայնեղ շնչեղները հայերենի բարբառներում, ՀԲԱ, 3, Ե., 2010:
3. Հանեյան Ա., Շնչեղ ձայնեղների արտաբերական տարբերակները հայերենի բարբառներում, Ե., 1986:
4. Հանեյան Ա., Հայ բարբառների ձայնեղ շնչեղ բաղաձայնների գործառական բնութագիրը, Կանթեղ, Գիտական հոդվածների ժողովածու, Ե., 2003:
5. Սկրտչյան Յ. Ս., Կարևո բարբառը, Ե., 1952:
6. Մուրադյան Յ. Դ., Հայոց լեզվի պատմական քերականություն, հ. I, Ե., 1982:
7. Զահուկյան Գ., Հայ բարբառագիտության ներածություն, Ե., 1972:

Геворгян Лусине - Чередование согласных в говорах Ширакского региона (диахроническое исследование).- В статье описаны исторические чередования согласных звуков в Ширакском регионе. Дренеармянские сонорные, звонкие фрикативные и простые глухие фрикативные звуки в говорах подверглись незначительным изменениям, а начальные звонкие взрывные и взрывные-сонорные проявляют качества звонкости. В данных говорах наличие звонких придыхательных в начале слова можно отнести к числу важных диалектических особенностей. Использование звонких взрывных и полуфрикативных звуков в начале слова исключено в говорах Ширакского региона. В начальной позиции фрикативные глухие звуки дефрикатируются. Итак, диалектное определение Ширакского региона будучи неоднородным, имеет закономерное проявление в системе звуков.

Gevorgyan Lusine - Sound Interchange of Consonants in the Dialects of Shirak Region (a diachronic approach). - The present article deals with the description and historical sound interchange of consonants. The old Armenian sonorants, voiced fricatives and simple voiceless fricatives did not undergo considerable changes in dialects, whereas the initial voiced explosives and explosive sonorants display the feature of voiced sounds. In non-initial position fricative voiceless sounds become non-fricative. Thus, in spite of being heterogeneous, the dialects of Shirak region show regularity in the system of sounds.

Արդի հայերենի փոխաբերական ասացականների դասը

Ասացական բայերը առանձնակի կարևորություն են ներկայացնում նրանով, որ կապված են խոսքին, հաղորդակցման գործընթացին և ունեն տեքստաստեղծ մեծ ներուժ:

Ըստ իմաստային չափանիշի՝ արդի հայերենի ասացական բայերը բաժանվում են երեք դասի՝ *առաջնային*¹, *երկրորդային*² և *փոխաբերական*:

Սույն հոդվածում քննարկման առարկա ենք դարձրել *փոխաբերական ասացականների* (այսուհետև՝ ՓԱ) դասը: Այս դասին ենք վերագրում այն ասացականները, որոնք Է. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանում» (այսուհետև՝ ԱՅԲԲ)³ ունեն «փոխաբերական» նշումը. դրանք 250-ն են: Օր.՝ *ամպրոպել, բառաչել, գգել, երկնել, զրնգալ, ըմբոստանալ, թմբկահարել, ժայթթել, լեգենդացնել, խայթել, ծլվլալ, կռկռալ, հոլովել, դունդունալ, ճլվլալ, մխել*¹, *մռլտալ, ներարկել, շեփորահարել, ոռնալ, չափել, պայթել, ջախջախել, ռմբակոծել, սողցել, վրնջալ, տաքանալ, ցոլացնել, փնչացնել, քրքրել, ֆշշացնել* ևն, օր.՝ Իսկ այդ Լուսիկը բոլորովին բանի տեղ չդրեց փոքր հորեղբորս գերմաներենը, ձեռքը պարզեց և դարձյալ գրնգագ. -Մարդկային ոչինչ խորթ չէ մեր հոգուն (ՅՄ.,227), -Տղա Է, վա՛խ-վա՛խ, -քրքրվեց նա(ՍԽ.,269), -Ուրեմն իսկեք նրանցից, -տաքացավ Կոստանդինը(ՍԽ.,241):

Եթե հարացուցային հարաբերությունների վերլուծության համար անհրաժեշտ նախապայման է լեզվական միավորի իմաստա-

¹ Բուն կամ առաջնային ասացականների դասին ենք վերագրում այն բայերը, որոնք, որպես ասացական գործընթացի արտահայտություն, զրանցված են ԱՅԲԲ-ում իրենց առաջին երկու նշանակություններով:

² Երկրորդային ասացական բայերի դասին ենք վերագրում այն բայերը, որոնք, որպես ասացական գործընթացի արտահայտություն, ներկայացված են ԱՅԲԲ-ում երրորդական, չորրորդական կամ այլ նշանակություններով:

³ Է. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Ե., 1976:

յին կառուցվածքը, այսինքն՝ բառաիմաստային տարբերակների (այսուհետև՝ ԲԻՏ) առկայությունը, ապա երկրորդային և փոխաբերական ասացականների դասերը զուրկ են *իմաստային հակադրությունից*։ Նրանք միայն խոսքային իրադրության մեջ են ձեռք բերում ասացականության հատկանիշ և կապ ունեն խոսքային տարբերակայնության հետ, հետևաբար դուրս են մնում հարացուցային դասդասումից։

Մինչ այս դասի ուսումնասիրությանն անցնելը՝ նախ անհրաժեշտ է պարզել, թե ոճականորեն նշույթավորված բառերը տարբերակվում են արդյոք փոխաբերական կամ, ինչպես լեզվաբանական գրականության մեջ են անվանում, հավելիմաստային¹ կամ հարանշանակային/հարանշանակցական (контотативное) բառերից։

Է.Կուզնեցովայի² վկայությամբ՝ ոճականորեն նշույթավորված բառերը փոխաբերականներից տարբերվում են նրանով, որ ունեն արտաքին բնույթ, այսինքն՝ նրանց իմաստը չի ներառվում բառի բովանդակության մեջ, այլ վերագրվում է հենց բառին՝ որպես լեզվական փաստի։ Ոճական նշույթավորումը շփման որոշակի պայմաններում արտացոլում է բառի պատշաճության, թույլատրելիության, համապատասխանության վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն, ինչպես նաև նրա վերաբերությունը որոշակի գործառական ոճի։ Մինչդեռ փոխաբերական իմաստ ունեցող բառերը առանձնանում են բարդ իմաստաբանությամբ, այսինքն՝ բառի բովանդակության մեջ առարկայական-հասկացական նշանակություններից բացի առկա են նաև հավելիմաստային բաղադրիչներ (այսուհետև՝ ԶԲ), որոնք անձնական բնույթ ունեն։ Նրանցում արտացոլվում է մարդկանց հուզական, գնահատողական

¹ Լեզվաբանական գրականության մեջ շրջանառվող երկու տերմիններից՝ «հավելիմաստ» – «հարանշանակություն» (տե՛ս Ա. Նազարյան, LՏԲ, էջ 525), նախընտրելի ենք համարում օգտագործել «հավելիմաստ» տերմինը(տե՛ս Ֆ. Խըլիպյան, Ոճաբանական բառարան, էջ 96), որը մեր կարծիքով ավելի ճշգրիտ է ներկայացնում նկարագրվող երևույթի էությունը։

² Տե՛ս Ծ. В. Кузнецова, Лексикология русского языка, М., Высшая школа, 1989, էջ187։

վերաբերմունքը զանազան երևույթների նկատմամբ: Այդ բառերը լեզվում կատարում են արտահայտչական գործառույթ: Գործառական ինքնատիպությունն էլ հատկապես որոշում է բառերի մեջ ՅԲ-երի առկայությունը: ՅԲ-ը բառի բառային-համակարգային նըշանակության մասն է, որը լրացնում է նրա հիմնական հասկացական բովանդակությունը այնպիսի իմաստներով, որոնցում արտացոլված են հանրահոգեբանական գնահատականի և համապատասխան երևույթների ասոցիացիաները: ՅԲ-եր են համարվում արտահայտչականությունը, հուզականությունը, գնահատողականությունը և պատկերավորությունը:

Արտահայտչականությունը բնութագրում է երևույթի որոշակի հատկանիշների դրսևորման չափն ու աստիճանը, ինչպես նաև չափից դուրս կատարվող շեղումները, օր.՝ աստվածարել/3. փխբ. Մեծարել, փառքի՝ մեծամեծ պատիվների արժանացնել/, բռթբռթալ/ 2. փխբ. Մեծ-մեծ խոսել, պոռոտախոսել, հոխորտալ/, գծել/5. փխբ. համառոտակի նկարագրել, պատկերացում տալ, բնութագրել, գծագրել/, թնդալ/3.փխբ. Ուժգնորեն հնչել: 4. փխբ. Չայրալից գոռալ՝ գոչել/, խնկարկել/4. փխբ. Շողոքորթելու նպատակով գովաբանել, մեծարել, փառաբանել/, շեշտել/ 3.փխբ. Հատուկ կարևորություն տալ, ընդգծել, ուշադրություն հրավիրել: 4. փխբ. Ցայտուն՝ ակնառու դարձնել: 5. փխբ. Ըրևե բանի արտահայտությունը լինել, նշանավորել/ ևն, օր.՝ Կգաս, Սերո ջան, կրկանգնես գերեզմանիս գլխին. «այ մեր, Արմենակը լավ է, ես լավ եմ, քո գծած ճանապարհով գնացիք»(ՀՄ., 486), -Հրամա՛նդ, ամե՛ն, արդա՛ր... թնդաց բազմությունը (ԴԴ.,99), -Մենք, վրացիները, աղվանները մի բախտի ժողովուրդ ենք, - շեշտեց Վարդանը, - ուրեմն մի ժողովուրդ ենք... (ԴԴ.,192):

Հուզականությունն արտահայտում է հուզական հարաբերություններ, կապված է մարդկային հույզերի և զգացմունքների արտահայտման հետ և իր հիմքում ունի ցայտուն դրսևորված գնահատողական տարր, օր.՝ ժայթքել/8. փխբ. Պոռթկալ/, խլորտալ/4. փխբ. Բուռն կերպով շարժվել՝ դրսևորվել՝ արտահայտվել(զգացմունքի՝ հույզերի մասին), հեկեկալ/ 3.փխբ. Տխուր՝ վշտալից ձայ-

ներ արձակել, հառաչանքի ձայնով երգել/, հորդել/3. փխբ. Բուռն կերպով արտահայտվել՝ դրսևորվել/ ևն, օր.՝ Փողի հաստ ծրարը տեսնելուց հետո Բազենյանն այլևս չկարողացավ զսպել իր մեջ գինու եռացող շոգու ուժը, և այդ ուժն այժմ, ազատ զգալով իրեն, սկսեց դուրս ժայթթել մի երկար շարք ճռճռան ֆրագների մեջ հայրենիքի աղետների մասին...(Ա.), -Հաց չունենք, հեկեկաց կինը (Սև.,46):

Հուզականության հետ սերտորեն կապված է *գնահատողականությունը*, որն ունի ընդհանրական բնույթ: Հույզերը դրսևորվում են երկու ձևով՝ դրական և բացասական՝ սերտորեն առնչվելով հանրային գնահատականին: Իսկ հանրային գնահատականը հարաբերակցվում է նորմի ըմբռնմանը: Բառարաններում դրական գնահատականը դրսևորվում է այնպիսի Նշումներում, ինչպիսին են փղքշ., կտկ. ևն, իսկ բացասականը՝ անխորխ. կամ անհնձն., անրգ., արհմրհ., գռհկ., ծաղր., հեգն., հյհյ., նվաստ. ևն: Նշումները բառի բովանդակության մեջ ցույց են տալիս հասարակական վերաբերմունքի արտահայտությունը: Դրական գնահատական են արտահայտում, օր.՝ գոտեպնդել/3. փխբ. Խրախուսել, քաջալերել, արիացնել./, դարմանել/3. փխբ. Ամոքել, սփոփել, փարատել/, թնդացնել/2. փխբ. Ոգևորել, թունդ հանել: Լերմոստովի ծննդյան հարյուրամյակը... պետք է խնդացներ ու թնդացներ միլիոնավոր սրտեր (ՀԹ.): 3. փխբ. Հռչակել, տարածել, տարածայնել: ...եռյակը Վերդիի անունը թնդագրեց աշխարհով մեկ (Մամուլ)/¹, թմբկահարել/2. փխբ. Ամենուրեք հռչակել, լուրը տարածել: 3. փխբ. Հրապարակորեն գովաբանել, փառաբանել/ ևն: Օր.՝ Որոշվեց գնալ դիրքերը, ոգեշնչել, գոտեպնդել մարտիկներին, որպեսզի նրանք պինդ մնան, չվախենան, դիրքերը ամուր պահեն (Ա.): Սակայն նկատելի է, որ թնդացնել, թմբկահարել և սրանց հոմանիշային շարքի բայերը փոխաբերաբար գործածվելիս ավելի հաճախ բացասական գնահատական են արտահայտում, օր.՝ Շիրակի մարզ կատարած այցելությունից հետո բոլոր իշխանամետ լրրատվամիջոցները չհապաղեցին ի լուր աշխարհի թմբկահարել,

¹ Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. 2, Ե., 1972, էջ 216:

որ մարզում գործող նախագահին նվիրել են քարտաշի գործիքներ(Ա.), Սակայն կուսակցությունը Ձեր հարցում իր ձեռքերը լվաց: -Ինձ մեղադրանք ներկայացնողների նպատակն էր թմբկահատել աշխարհով մեկ, թե տեսեք՝ ինչպիսի ազգադավ գործունեությամբ է զբաղվում պաշտոն զբաղեցնող ՀՅԴ անդամը(Ա.) ևն: Բացասական գնահատական են արտահայտում նաև գգել/ 3. փխբ. Խայտառակել, խիստ նախատել, դատափետել/, թերագնահատել/ 2. փխբ. Ոչ բավարար չափով գնահատել՝ արժեքավորել մեկին՝ մի բան, բավարար նշանակություն չտալ մեկին՝ մի բանի/, թունավորել/ 5. փխբ. Դառնացնել, վշտացնել, վիշտ ու տառապանք պատճառել/ և այլ ՓԱ-ներ, օր.՝ Չէ որ Շիկլգորուբեր-Հիտլերը համոզված էր, որ Բլիցկրիգին հաջողություն կբերեն ոչ միայն ուխտադրժությունը, ոչ միայն միջազգային իրավունքի ոտնահարումը, ոչ միայն պատերազմ վարելու հանցավոր եղանակները, այլև նա հույս ուներ, որ Սովետական Միության տարբեր ազգերն ու ժողովուրդները կսկսեն «իրար գգել»(Ա.), «Ազգի» հետ զրույցում Թոփչյանը թերագնահատեց նաև Ժյուրիի կազմը(Ա.), -Հը՛, ինչպե՛ս կարելի է, - թունավորեց չոր ու խանձված ձայնով Խոսրովը, որ իր հերթին առիթի էր սպասում ծակելու(ԴԴ.,99):

Այսպիսով՝ հուզականությունը անջրպետված չէ գնահատողական բաղադրիչից և, ինչպես Ֆ. Խլղաթյանն¹ է նշում, այն միշտ արտահայտիչ է, որի շնորհիվ էլ դրանք հաճախ միավորվում են *հուզարտահայտչականություն* տերմինով:

Պատկերավորության մեջ առկա է քողարկված համեմատություն, որն աշխուժացնում է մեր պատկերացումները այս կամ այն երևույթի նկատմամբ: Ըստ Ֆ. Խլղաթյանի², պատկերավորությունը խոսքի հատկանիշ է, որի հիմքում ընկած է գեղարվեստական պատկերը: Պատկերավորության շնորհիվ մտքի առարկան ստանում է կոնկրետություն, դառնում շոշափելի, տեսանելի, նկարագրություններն առարկայանում են, զգայապես ընկալունակ դառնում, օր.՝ ամպրոպել/ 2. փխբ. Ամպրոպածայն գոռալ, ահեղա-

¹ Գ. Ջահուկյան, Ֆ. Խլղաթյան, Հայոց լեզու, Ոճաբանություն, Ե., 1998, էջ 38:

² Տե՛ս Ֆ. Խլղաթյան, նշվ. բառարանը, էջ 145:

ծայն գոչել/, այրել/ 16. փիսք. Խոսքով՝ պատասխանով վիրավորել՝ խայթել/ եռայ/ 10. փիսք. Չայրանալ, կատաղել/, խայթել/4. փիսք. Սուր՝ կծու խոսք ասել/ ճղել/ 6. փիսք. Սաստիկ զայրացած խոսել, բորբոքվել./, շանթել/ 3. փիսք. Կծու խոսքով վիրավորանք հասցնել՝ ցավ պատճառել, խայթել, դաղել/ ևն, օր.՝ -Բերանդ օրհնվի՛, Մխիթա՛ր, -եռաց, խշաց ամբոխը, ու դարձյալ բազմագույն, բազմաձև գլխարկները պարեցին օդում(ՍԽ.,81), -Յամարձակվում ես խոսել իշխանի հե՛տ ռամիկդ գքեզ, -այլայլված խայթեց Առաքելին Գյուտը,-հրամայեց զինվորներին, -տարե՛ք սրան (ԴԴ., 157), Ո՛ղջ լինես, Գուսան, Որ քո շանթակերպ, ճշմարիտ խոսքով Շանթել հավիտյան այդ վեստ Սարգսին(ՎԴ., 223):

Բայց հարկ է նշել, որ հավելիմաստային այս բաղադրիչները համարյա միայնակ հանդես չեն գալիս և ավելի հաճախ բառի բովանդակության մեջ ներկայանում են տարաբնույթ համադրումներով, օր.՝ բառաչել/ 2. փիսք. Սաստիկ ցավից՝ զայրույթից ուժգնորեն աղաղակել՝ գոռալ/ բայի մեջ *համադրվում են արտահայտչականությունը, հուզականությունն ու պատկերավորությունը, քվայ* /4. փիսք. Չարագուշակ ենթադրություններ անել՝ հայտնել/ բայի մեջ՝ *գնահատողականությունն ու պատկերավորությունը, ծառկեցնել* /4. փիսք. Որևէ դեպք՝ եղելություն չափազանցնելով հաղորդել՝ պատմել: 5. փիսք. Գուսագարդել, ճոխացնել, մշակելով հարստացնել(գրույց, ավանդություն) ևն: 6. փիսք. Մեկի կենացի վրա երգելով՝ արտասանելով՝ նվագելով ևն պատվել՝ մեծարել՝ փառավորել/ բայի մեջ՝ *հավելիմաստային չորս բաղադրիչներն էլ*, օր.՝ -Ների՛ր... -բառաչեց Արթինն ու ծանր ծունկի իջավ(ԴԴ.,144), - Չնվագե՛ք, -դանակը շին գարկելով, արգելում է Արմենակը: -Յետո կծառկեցնես, հարգելի քեռի(ԺՅ.,291):

ՓԱ-երի մասին դիտարկում ունի Ֆ. Խլդաթյանը, ըստ որի, որոշ բայեր փոխաբերական գործածություն ունեն, նշում են ընդհանրապես ձայն արձակելը, ձայնելը, բայց իրենց սովորական իմաստով գործածվում են ոչ թե մարդկանց, այլ կենդանիների համար: Փոխաբերական գործածությունը նրանց տալիս է գնահատիչ բընույթ (օր.՝ մռմռալ, մռնչալ, ծղրտալ և այլն): Նա այս խմբին է դա-

տում նաև այն բայերը, որոնք, չնայած արտաքննապես ոչ մի կապ չունեն ասացականության հետ, բայց ավելի, քան մյուսները, բը - նութագրում են խոսելու և գործելու կերպը, ուստի արժեքավորում են ոչ միայն տվյալ պահը, իրադրությունը, այլև ընդհանրապես խոսողին(օձացավ, շանթեց և այլն)¹:

ՓԱ-երի դասը հիմնականում լրացնում են *բնածայնական բայերը*², որոնք ոչ միայն մատնանշում են մարդկային խոսքի հնչման առանձնահատկությունները, այլև գնահատում են այն՝ հաղորդելով հուզարտահայտչական դրական(օր.՝ ծվվալ, կչկչալ, դունդունալ, ճկճկալ ևն) և բացասական(օր.՝ գոմռալ, կաղկանձել, կռկռալ, կռնչալ, մռռալ, մռնչալ ևն) երանգավորում, օր.՝ -Ղաչաղ է՛, դաչաղ է՛, -ծվլում է Սուխին(ԺՅ.,284), Վարդանս դեռ իր ջահելական տեղերից չէր եկել, շան տղեն հաստատ սկսել էր սիրահար աղավալու նման դունդունալ, քուն չէր գալիս աչքերին»(Ա.), Իրենց միևնույն և սրտահատոր դիակի վրա մայրեր-մանուկներ, քույրեր-ծերունկներ կաղկանձում էին, սակայն անարցունք (ՊՍ., հ.2, 252), -Ու՞մ շունն եք, -մռնչազ մելիքը (ՍԽ.,45):

ՓԱ-երի մեջ մեծ տեղ են գրավում կենդանիներին բնորոշ այն հատկանիշները, որոնք օգտագործվում են մարդկանց նկատմամբ բացասական կամ արհամարհական վերաբերմունք արտահայտելու համար, օր.՝ Սակայն Դավիթ-Բեկի ձեռքերը նորից կապում էր թուրքերից սպասվող վտանգը: Օսմանյան գազանը գոմռում էր(ՍԽ.,178), Յաչե՛լ ես ուզում, -ա՛ռ, -շնչահատ ու խուլ ծորտազ - վազելով հարկահանի վրա՝ քացով այնպես հարվածեց, որ նա անմիջապես ետ շրջվեց շնչասպառ(ԴԴ.,33), -Ե՛ս կգամ, -կռանալով դեպի դուստրը՝ Ֆշշագոեց Բարիսուդարը (ՍԽ.,222): Եվ եթե այս տեսակը համեմատենք դրական երանգավորում ունեցող ՓԱ-ների հետ, ապա կնկատենք, որ բացասականներում ՅԲ-երը ավելի ցայտուն, պատկերավոր ու ընդգծված են, քան դրականներում:

¹ Ֆ. Խլդաթյան, Դ. Դեմիրճյանի «Վարդանանք» պատմավեպի լեզուն և ոճը, Ե., 1988, էջ166-167:

² Տե՛ս Ռ. Դոխոյան, Բնածայնական բայերի ասացական արժեքը, Յայագիտություն և զուգադրական լեզվաբանություն, 2 պրակ, Ե., 2008, էջ 94-101:

ՓԱ-երի դասը լրացնում են նաև *Ֆիզիկական գործունեության, ֆիզիկական ազդեցության և այլ ԲԻԽ-երի բայեր*, օր.՝ Եվ եթե մենք այսօր կոտրատում ենք այն մերթ - Այդ նրանից է, որ ուզում ենք մեր Նոր խոհերի վրա ժանգ չչոքի (ԵԶ., հ.3,214), -Վերջաց-
 նենք, կտրեց յուզբաշին: -Այժմ միայն մի պայմանով դու կարող ես վայելել արևի լույսը՝ հավատափոխ եղիր, թլպատվիր ու ապ-
 րիր խանի բարձր հովանավորության տակ, այլապես կգլխատվես (ՍԽ.,185), ժամն ու տեղն է, Սպարապետ, կցեց Արթին քեռին, -
 զա՛րկ(ԴԴ., 956), -Սպարապետը... Սպարապետը..., հարվածեց
 շունը ծայրեծայր, զորագնդերը ընդոստ ոտքի ելան(ԴԴ.,945), Ա-
 դամու Ինչու՞ լռեցիր, մնացյալն ասա, Պատմիր դավն այդ նենգ
 ու անարգանքի Սյուներին գամիր դավաճաններին... Գուսան Ա-
 ռայժմ միայն այսքանն եմ հյուսել...(ՎԴ.,223), -Դե, հո հավիտյան
 զինվոր չենք մնալու: Մի օր դադար կլինի, -չգիտես հեգնանքով,
 թե համոզված ձգեց Վեցկի Մարգարը (ՍԽ.,208), -Որ ամեն տուն
 մի զինվոր տա, հարյուր հազարից էլ ավել կլինի, -դառնացած նե-
 տեց Չարմանդը (ՍԽ., 202), -Արքայից արքայի ողջությունն են բա-
 րեմադթում, վերադարձրեց նենգ հարցմունքին հարմար ձևով
 Վասակը (ԴԴ.,88):

Այսպիսով, ինչպես Ս.Էլոյանն է նշում, փոխաբերությունների շնորհիվ բառերը խոսքի մեջ ստանում են այնպիսի իմաստներ, որպիսիք առանձնակիորեն, իբրև լեզվի համակարգի ինքնուրույն միավորներ, չունեն¹:

Խոսքաշարն է այն իրական միջավայրը, որը բառի հիմնական նշանակությանն ավելացնում է ՀԲ-եր՝ առաջին պլան մղելով նրա պատկերային ընկալումը և ստեղծելով, այսպես կոչված, *խոսքա-
 շարային ասացականներ*, օր.՝ -Ամեն, հարյուրապատկեցին
 մյուսները(ՍԽ.,23), -Ուրիշի՞ց լիներ...մթնեց շահը: -Ամոթը մեծ
 է(ՍԽ.,61), -Շենը մնաց կրակի մեջ. մեր ազատվելն ի՞նչ, մոկտաց
 փախստականներից մեկը դառնագին(ԴԴ.,59), -Բակու՛ր գյուղա-
 պետ, օգնի՛ր, շնչատեց տնտեսը, -մա՛րդ ուղարկիր մարզպա-
 նին... (ԴԴ., 27) ևն:

¹ Ս. Էլոյան, Ժամանակակից հայերենի բառային ոճաբանություն, Ե.,1989, էջ 72:

Ըստ Ս.Մելքոնյանի՝ փոխաբերական իմաստը բառին ներքին անսպառ լիցք և ուժ է տալիս՝ կարևոր նախապայման դառնալով խոսքը մշտապես թարմ պահելու համար¹:

Իրոք, խոսքաշարը զարգացնում, ծավալում, ուժգնացնում է բառի արտահայտչական ներունակությունը, որն էլ ի հայտ է գալիս հետևյալ իրադրություններում.

1. Երբ հեղինակը միտումնավոր խախտում է *բայի բառաիմաստային կապակցման օրինաչափությունները* (չեզոք սեռի բնածայնական բայերը, փոխելով սեռը, վերածվում են ներգործականի), օր.՝ Այն խեղճ աշխարհի, Որ զարկի ցավից նույնիսկ տնքալու իրավունք չունեի. Եվ տնքոցի տեղ դեռ «ալելուիա» պիտի որոտար (ՊՍ., հ.3,316), Քնա՛, գնա՛, չեն կախի, -ճրթաց ցավագին ձայնով զզգված շինականը, -Էնքան մարդու ձեռ ու ոտ կապեցին, որ թոկ չի մնացել կախելու(ԴԴ.,64):

2. Երբ բային խոսքաշարում ուղեկցում են *պարագաներ*, որոնք շեշտում են գործընթացի ուժգնությունը, ծավալումը, օր.՝ -Օ՛հ... - *ձանձրացած* - ձանձրության գայրացած չխկչխկաց մահը... (ԱԻ.,43), Բա՛ց շուրթերդ, խոսի՛ր, անգի՛ն, *ժիր* դալլալի՛ր, իմ սիրասուն...(ՍԿ.,13):

3. Երբ արտահայտչական երանգավորում ունեցող բային ուղեկցում է *համեմատական կառուցվածք*, որը անվանվող գործողությունը դարձնում է ավելի պատկերավոր ու տեսանելի, օր.՝ -Դու ի՞նչ ես, ո՞ր... -չգիջեց Ծատուրը: -Յրեն օսմանլուն մեզ վրա մռմռում է՝ միս տեսած շան պես (ՍԽ.,89), -Լռի՛ր, հերի՛ք է, -չթողնելով, որ պարոնտերը շարունակի իր ասելիքը՝ այնպես որոտաց Տեր-Ավետիսը, *որ պատուհանի ապակիները զնգացին* (ՍԽ.,346), *Այնոր արծվի նման կռնչաց* Պահլավունին, Եվ Անվո դարպասներից դուրս սուրաց քաջերի հետ(ՎԴ.,221):

Չարկ է խոսել նաև այնպիսի բուն ասացականների մասին, որոնք *խոսքային իրադրության մեջ են ձեռք բերում փոխաբերական նշանակություն*, օր.՝ Օրոր էր ասում աշունն անտառին, Բայց

¹ Ս. Մելքոնյան, Ակնարկներ հայոց լեզվի ոճաբանության, Ե., 1984, էջ 94:

դեռ անտառի քունը չէր տանում (ՅՍ.,36), Բայց այսպես խոսեց փրփուրն այդ մասին. -Ինչու՞ տեղ չունես ծովի երեսին...(ՅՇ., 52), Ներսս հացադուլ է հալտարարել հիմա, Եվ սիրադուլ՝ սիրտըս...(ՊՍ.,հ.2,391), Գինովանում է մենակությունը՝ Խայամի նրման, Գինովանում ու հալիոյում ... աստծուն(ՊՍ.,հ.1,102), Յավատ չընծայելով իր իսկ խոսքին ճոռոմ՝ Կեղծ-դասական մի հողմ հավատի՞ց է ճառում, խոսում սրբությունի՞ց, Յավերժական սիրու՞ց (ՊՍ.,հ.1,320), Ուտերիս հետ հողն է սիրաբանում, Եվ խաղողի վազըն է ընծյուղ տալիս Վառվող ծխամործիս կրակի մեջ... (ՊՍ., հ.1,573) ևն:

Այսպիսով՝ բառի փոխաբերական իմաստը կապված չէ նրա միջուկային իմաստի հետ: Փվ-ների առնչությունը բուն ասացականներին ընկալվում է խոսողության գործընթացում՝ հիմնվելով հասկացական-ներկայացական հատկանիշների վրա: Յետևաբար, որոշակի խոսքային իրադրության մեջ այլ ԲԻԽ-երի բայերը փոխաբերացման, կապակցական օրինաչափությունների փոփոխության, արտալեզվական գործոնների ազդեցությամբ վերածվում են ասացականների՝ առաջացնելով, այսպես կոչված, *խոսքաշարային ասացականներ*:

Սա նշանակում է, որ բառի փոխաբերական գործածության ժամանակ նրա իմաստային կառուցվածքում տեղի է ունենում առանձնահատուկ վերակառուցում, այսինքն՝ որոշակի խոսքաշարում եզրային իմակները, խոսքային իրադրության որոշակի հանգամանքների շնորհիվ շեշտվելով և դառնալով առավել կարևոր, վերածվում են միջուկային կամ հիմնական իմակների: Իմաստային հատկանիշների այսպիսի տեղաշարժն էլ առաջացնում է *հավելիմաստ*:

Ամփոփելով նշենք, որ ԱԲ-երը արտահայտչական հարուստ հընարավորություններ ունեցող բայեր են, որոնք գործառվում են հաղորդակցման ամենօրյա գործընթացում և բայական բառապաշարում գործածության ամենաակտիվ հաճախականությունն ունեն: Բացի դրանից՝ ասացականության գործընթացը անսպառ հնարավորություններ ունի և, ի հաշիվ փոխաբերական գործա-

ծության, լրացնում և հարստացնում է իր գինևնոցը արտահայտչական պատկերավոր բաղադրիչներով:

Օգտագործված գրականություն

1. Ա. - ԱՐԵՎԱԿ, www.eanc.net:
2. ՎԴ. - Վ. Դավթյան, Երկեր երկու հատորով, հ. 2, Ե., 1985:
3. ԴԴ. - Դ. Դեմիրճյան, Վարդանանք, Ե., 1987:
4. ԱԻ-ԱՎ. Իսահակյան, Արձակ ստեղծագործություններ, Ե., 1985:
5. ՍԽ. - Ս. Խանգաղյան, Մխիթար սպարապետ, Ե., 1960:
6. ՍԿ. - Ս. Կապուտիկյան, Ընտրանի, Ե., 1999:
7. ԺՅ. - Ժ. Հարությունյան, Զո վերջին հանգրվանը, Ե., 1986:
8. ՀՄ. - Հ. Մաթևոսյան, Վիպակներ, Ե., 1990:
9. ՀՇ. - Հ. Շիրազ, Զևար Հայաստանի, Ե., 2000:
10. ԵԶ. - Ե. Չարենց, Երկերի ժողովածու 4 հատորով, հ.3, Ե., 1987:
11. ՀՍ. - Հ. Սահյան, Զարե պատարագ, Ե., 1999:
12. ՊՍ. - Պ. Սևակ, Երկերի ժողովածու 3 հատորով, հ. 1-3, Ե., 1982-1983:

Հապավումների և համառոտագրությունների ցանկ

ԱՅԲԲ- Արդի հայերենի բացատրական բառարան
ԼՏԲ- Լեզվաբանական տերմինների ֆրանսերեն-ռուսերեն- հայերեն ուսումնական բառարան
Ծաղր.- ծաղրական, Կտկ.- կատակային, Հյիյ.- հայիոյական, Հեգն.- հեգնական, Նվստ.- նվաստական, Փխբ.- փոխաբերական, Փղքշ.- փաղաքշական

Дохоян Рузанна - Класс переносных глаголов говорения современного армянского языка.- Глаголы говорения, по семантическому критерию, подразделяются на три класса: 1) подлинные, или первичные глаголы говорения, 2) вторичные и 3) переносные.

Переносные глаголы говорения в толковом словаре современного армянского языка имеют помету «переносное»: их насчитывается 250. Эти глаголы имеют сложную семантику. В содержании слова, кроме референтного - ассоциативного значения наличествуют также коннотативные элементы, в которых отражаются эмоциональные и оценочные отношения к разным явлениям.

Коннотативными элементами считаются образительность, эмоциональность, оценочность и экспрессивность. Эти элементы почти не употребляются раздельно, а часто в содержании слова представляются в совокупности.

Класс переносных глаголов пополняют глаголы звучания, чувства, движения, глаголы физической деятельности, физического воздействия и т. п.

Контекст - та реальная среда, которая к значению слова добавляет коннотативные элементы, на первый план выдвигая его образительное восприятие и создавая контекстные глаголы говорения.

Dokhoyan Ruzanna –The Category of the Metaphoric Verbs of saying in Modern Armenian.- According to the semantic criterion, the verbs of saying fall into 3 classes: primary, secondary and metaphoric. The metaphoric verbs of saying are marked by "mtp" in the E. Aghayan's "Explanatory Dictionary of Modern Armenian". They are 250 in number.

The metaphoric verbs of saying are characterized by complex semantics. Stated otherwise, along with the referential- associative meaning a word may also contain connotative components, namely expressive, emotional, evaluative overtones. These elements do not occur separately, but make part of the word content as a whole. The metaphoric category of the verbs of saying are replenished by the verbs denoting ringing, sound, feeling, movement, physical activity, physical force and others.

The context is the real environment which adds connotative components to the main meaning of the word, pushing its figurative comprehension to the foreground and creating the contextual verbs of saying.

**Որմ և անկյուն հասկացություններն արտահայտող բառերի
բարբառային քննություն**

Մեր կողմից արդեն քննության են առնվել ինդրո առարկա տուն և տնտեսություն իմաստային դաշտն արտացոլող հասկացությունների որոշակի բառանվանումներ՝ առաստաղ, թոնրի օղանցք, ջրհորդան, երդիկ և այլն: Ուսումնասիրվող նյութի իմաստային դաշտը ներառող բառանվանումների ցանկում ընդգրկել ենք նաև պատ և անկյուն հասկացությունների՝ հայերենի բարբառներում առկա բառային դրսևորումները:

Պատ: Հ.Աճառյանը այն համարում է «ընդարձակ զարգացում կրած արմատ», որից ածանցված են պատ՝ «շրջան», պատ՝ «որմ, որ շենքի չորս կողմն է պատում», պատան՝ «փաթաթելու շոր, յատկապես վերքի կապ և կամ մեռելը մեջը պատատելու սաւան», պատեան՝ «պտուղը պատող արտաքին կեղևը», պատիկ՝ «փաթաթող կամ փաթաթուածք» (ի դեպ, այստեղ հիշատակում է նաև բարբառային փաթ բառածևը՝ անգամ նշանակությամբ, որից էլ բխում են յոթնապատիկ, բազմապատիկ բառածևերը), պատիճ՝ «ցորենի կճեպ» և այլն: Վերջում վկայակոչելով Յ.Կարստին՝ նա պատ բառը համարում է ասուրական փոխառություն *pātu* «սահման, շրջապատ» իմաստով (ՀԱԲ, հ. 4, էջ 32-33):

Գ.Ջահուկյանը «Հայոց լեզվի պատմության» մեջ ակկադական փոխառությունների խմբավորումները ըստ իմաստային դաշտերի ներկայացնելիս «բնակարան, տուն, կահ-կարասի» շարքում փաստում է նաև պատ, անաթ, կահույք, կահ-կարասի բառերը (Ջահուկյան, 1987, էջ 473): Սակայն ավելի ուշ հրատարակված «Հայերեն ստուգաբանական բառարանում» նա տալիս է պատ հասկացության «շրջան, պտույտ, չորս կողմ, բոլորտիք, որմ, պատ, պատում, փաթաթում» իմաստները՝ բառը համարելով փոխառություն իրանական աղբյուրից՝ *pat. հնդեվրոպական *pat

«տարածել (հատկապես թւերը)» և **pet* - «տապալել, թռչել, ընկնել» արմատների ածանցյալներից (Ջահուկյան, 2010, էջ 623):

Պատ հասկացությունը հայերենի բարբառներում ունի սահմանափակ թվով տարբերակներ: Բարբառների գերակշռող մասում գործածված է նույն *պատ* բառանվանումը՝ իր հնչյունական որոշակի տարբերակներով՝ *պատ, պար, բար, պատ, բար, բուր, բոր, բուր*:

Ինչպես արդեն բազմիցս նշել ենք, երբ բառանունը միավանկ է և արտասանելիս դժվարություն չի ներկայացնում, այն փոփոխությունների գրեթե չի ենթարկվում, և այս դեպքում արդեն դրսևորվում են միայն տվյալ բարբառին բնորոշ հնչյունական առանձնահատկությունները:

Քանի որ *պատ* հնչյունական զուգաբանությունը ամենահաճախադեպն է, դրան առանձին չենք անդրադարձել: *Պատ* շրթնային արտասանությամբ բառածնը առկա է Վանի միջբարբառախմբի Մուկսի (Մամուտանցի Ապարանց և Սեղ գյուղեր), Շատախի (քաղաքը և Արմշատ գ.), Բերկրիի Աբաղայի շրջ. Խաչան գ., Խոշաբի շրջ. Չենիս գ., ինչպես նաև Դիաղիկի շրջ. Ջուլան գ.-ի խոսվածքներում: Արարատյան բարբառախմբի Բայազետի բարբառին ևս բնորոշ է շրթնայնացումը, որը և դրսևորված է Բայազետի Կարմիր, Աշտարակի Կարբի գյուղերում (որոնց բնակիչները, ի դեպ, հին բայազետցիներ են):

Բար: Արևմտյան խմբակցության Փոքր Ասիայի, այլև Մուշ-Տիգրանակերտի բարբառախմբի որոշ խոսվածքներում *պատ*-ը փաստված է խուլերի շնչեղացմամբ (Խարբերդ, Չմշկածագ, Տրապիզոն, Սեբաստիա, Նիկոմեդիայի Պարտիզակ ք., Մալաթիա, Սասուն և այլն): Տիգրանակերտում և Սևերեկում առկա է *բար* առաջնալեզվային *ii*-ով հնչյունական տարբերակը:

Անտիոքի բարբառախմբի և Կիլիկիայի միջբարբառախմբի խոսվածքներում (Չեյթուն, Մարաշ, Հաջըն) այն վկայված է տրվյալ բարբառախմբերին բնորոշ հնչյունական բառազուգաբանությամբ, որտեղ՝ ա) *ա>օ*, այսինքն՝ *պատ>բոր*, իսկ Քեսաբում բա-

ռագուգաբանությունը վկայված է երկբարբառային արտասանությամբ՝ *բ^{ու}օր, բ* *ա>ու՝ բուղ* (սաև երկբարբառային *բ^{ու}ղ*) հնչյունական տարբերակն է արձանագրված Սվեդիայի հտորբեկ գյուղում:

Յաճախադեպ կիրառությունն ունի *պաղ* (վերջին *տ* հնչյունի ձայնեղացմամբ) տարբերակը, որը դրսևորված է և՛ արևելյան, և՛ արևմտյան խմբակցության բարբառախմբերի խոսվածքներում (Սուրմալու, Իգդիր, Նախիջևան, Նիկոմեդիայի Արմաշ գ.), չնայած ամենալայն տարածական շառավիղը ներառում է Մուշ-Տիգրանակերտ բարբառախմբի խոսվածքները (Ալաշկերտ, Մուշ, Մուկան և այլն):

Անցյալ դարի 70-80-ական թթ. բարբառագիտական հավաքչական աշխատանքների արդյունքում կուտակված 500 խոսվածքային միավորներից ընդամենը մի քանիսում է *պատ* հասկացության բառանուն գրանցվել *որմ* բառը՝ իհարկե, բարբառային հետաքրքիր տարբերակներով: Նախիջևանի Տանակերտ գ.-ում՝ *ուրման*, Ագուլիսում՝ *ո՛ւրման* (շեշտը առաջին ձայնավորի վրա), Կարճևանում՝ *հըէ՛րմը*, Ղարադաղի Ուրգութուն գ.-ում՝ *հէմը*, որը, ըստ երևույթին, *ր*-ի անկումով բառաձև է:

Հիշյալ բառաձևերը վկայված են սաև Յ. Աճառյանի և Յ. Սուրադյանի աշխատություններում: Յ.Աճառյանը «Քննութիւն Ագուլիսի բարբառի» աշխատության մեջ նշում է, որ բառասկզբի *ո*-ն միավանկ բառերի մեջ դառնում է *ու*. ինչպես՝ *ող>ուղ, ունղ, ով>ուվ, որմ>ո՛ւրման* (Աճառյան, 1935, էջ 62-63): Ակնհայտ է, որ Ագուլիսի բարբառը հավատարմորեն պահում է գրաբարի *ւ* իրենցից, միայն հավելեցք, որ գրաբարյան *ւ* վերջնահնչյուն ունեցող *որմ* բառում շեշտից հետո գտնվող գաղտնավանկի *ը*-ն փոխել է *ա*-ի՝ *որմս>ո՛ւրման*: Իսկ Յ.Սուրադյանը նշում է, որ շեշտից հետո գտնվող գաղտնավանկի *ը*-ի դիմաց առկա են հետևյալ համապատասխանությունները. 1) հայերենի *ւ* ձայնավորահանգ վերջավորության ձայնորդից առաջ լսվող *ը*-ն դրափոխությամբ տեղափոխվել է բառավերջ (*ւ*-ից հետո). օր.՝ *ակն>ակնը, մուկն> մօկնը* և այլն: Իսկ մի շարք բառեր, ըստ նրա, կորցնելով *ւ* ձայնորդը,

բառավերջում պահել են ը ձայնավորը: Այստեղից էլ բարբառներում առկա *որմն>հուրմը* (Վարհավար), *հէ՛րմը* (Գուղեմնիս, Կուրիս, Ագարակ) (Մուրադյան, 1967, էջ 57): *Որմ* բառի առնչությամբ արձանագրենք նաև, որ անվանի բարբառագետը, խոսելով բառասկզբի շեշտակիր *ո*-ի մասին, եզրակացնում է, որ խոսվածքներում *ո*-ի դիմաց համապատասխանությունները տարբեր են: Ըստ նրա՝ օրինաչափ երևույթը եղել է *ո>ու*, *ու* հնչյունափոխությունը, ինչպես, օրինակ, Վարհավարի խոսվածքում՝ *որմն>հուրմը*), սակայն մյուս խոսվածքներում (Գուղեմնիս, Կուրիս, Ագարակ) *ո*-ի դիմաց առկա է *է* ձայնավորով տարբերակը՝ *որմն>հէ՛րմը*:

Յ.Աճառյանը ներկայացնում է *որմ* բառի առաջին վկայությունները, սակայն չի անդրադառնում բառի ստուգաբանությանը: Բառը վկայված է 5-րդ դարից՝ Աստվածաշնչի թարգմանության մեջ, Ագաթանգեղոսի, Բուզանդի պատմություններում և այլ աղբյուրներում, որտեղ արձանագրված են *որմգորմայն* «պատից պատ զարնվելով», *որմած*, *որմածակ*, *որմածերպ*, *որմայեց*, *որմաշէն*, *որմարգել*, *քաղաքորմ*, *քարորմ* և այլն բառերը) (ՅԱԲ, հ. 3, էջ 583):

Գ.Ջահուկյանը բառիմաստային թեմատիկ խմբերը առանձնացնելիս *բնակարան*, *տուն*, *կահ-կարասի* թեմատիկ խմբում արձանագրել է նաև *որմ(ն)* բառը (ՅԼՊ, էջ 212): «Չայերեն ստուգաբանական բառարանում» ևս անդրադառնում է հիշյալ բառին՝ այն համարելով բնիկ հնդեվրոպական **orkmō* - **ork-* արմատից, որ **ark-* «պաշտպանել, փակել, կողպել» արմատի մի տարբերակն է. հմմտ. *արգել*-ք, հուն. *apkw* «պահել, պաշտպանել, դիմադրել, հետ մղել», լատ. *arceō*, փոխել, ներփոխել, վանել», խեթ. *hark* «պահել, ունենալ» (ՅՍԲ, էջ 607):

Սահմանափակ տարածական ընդգրկում ունի *պատ* հասկացության բառածև համարվող *դուվար* բառանունը, որը իրանական փոխառություն է: Վերջինս փաստված է Յամշենի բարբառի խոսվածքներում (Օրդու, Ճանիկ, Չիբուլխու, Ունիեի Բալլուղ գ.՝ *դուվար*), Աստիոքի բարբառախմբի Բեյլանի Սովալլուխ և Ա-

թըղ գյուղերում, ինչպես նաև Սևերեկում՝ *բւնդ//դուվւնր*, Նիկոմեդիայի Խասկալ գ.՝ *բարդ//դուվար*: *Դուհար* բառածնն է արձանագրված արևելյան բարբառախմբի Շամախիի բարբառի Սաղյան գ.-ի խոսվածքում:

Անկյուն: Հայերենում լայնորեն ներկայացված են տարածական հարաբերությունների բնիկ հնդեվրոպական նշանակումները, որոնք ամեն մի լեզվի բառապաշարի կարևորագույն մասն են՝ անկախ ժողովրդի մշակույթի և քաղաքակրթության աստիճանից: Ըստ Գ.Ջահուկյանի՝ շատ են տարածության մեջ գրաված տեղի, ձևի, չափի հետ կապված անվանումները, որոնցից ներառված են *սայր*, *կողմն*, *աջ*, *հարաւ*, *արդ*, *անկիւն*, *ոլոր*, *բոլորակ* և այլ հնդեվրոպական ծագման բառանունները: Ջահուկյանը *անկյուն* բառի համար ներկայացնում է՝ *անկիւն (անգիւն)* -եան, յ-է, -ք, եանց, «անկյուն, եզր, խորշ»: Բնիկ հնդեվրոպական **ang/k* - «ծըռել, թեքել» արմատից *-իւն* ածանցով. հմմտ.հհնդկ. *anka* «անկյուն, ծովածք», հուն. *ἀγγων* «ար- մունկ», լատ. *angulus* «անկյուն, խորշ, ծայրամաս» հ.վ.գերմ., *ango*, *angul* «կարթ, խայթ» H.AG 419 (ՅՍԲ, էջ 59):

Աճառյանը ևս բառին վերագրում է հնդեվրոպական ծագում՝ ներկայացնելով նրա մի քանի իմաստները. «1. *անկիւն՝ քունջ, քոշա*, 2. մի առանձին տեղ, ծայր, խորշ, որից ակնիւն հատանել «ական հատանել, պատ քանդել՝ գողութիւն անելու համար»»: Ըստ նրա՝ հայերենի բարբառներում *տուն* և *տնտեսություն* իմաստային թեմատիկ խմբում *անկյուն* բառը գործածվել է Վանի բարբառում պատի մեջ շինված *դարան*, *տօլապ*, իսկ Խնուսի բարբառում՝ *մառան* իմաստով (ՀԳԲ, էջ 102): Բառը առկա է նաև Սալմաստում. «*թոնրի յատակը*, որի վրա բացված է ակը» (ՀՋԲ, հ.1, էջ 200):

Ի դեպ, հայերենի բարբառներում *անկյուն* բառանունը ունի նաև *տան անկյուն՝ պուճախ*, իմաստը, որը, սակայն, տարածական սահմանափակ ընդգրկում ունի: Այն հանդես է գալիս Ղարաբաղի և Պարսկահայքի որոշ խոսվածքներում. *անգուն// պօճախ//*

քունջ բառերի հետ. գործածվել է Մարտակերտի Տոնաշեն գ., *անկյուն*//*քունջ*//*պոծախ*՝ Մարտունու Եմիշճան գ., *անկյուն*՝ Արցախի Դաշբուլաղ, *անգուն*՝ Մարտակերտի Զլդրան գ., *անկյուն*՝ Միանդարի Թաղիաբաղ գ., *անկյուն*՝ Փերիայի Դաշան գ.: 3. Աճառյանը ևս ՀԱԲ-ում Ղարաբաղի բարբառում արձանագրել է *անգին* «կողմ» իմաստով բառանունը:

Նշենք, որ հայերենի բարբառներում *տան անկյուն* իմաստով հիմնականում փաստված են փոխառյալ մի շարք բառանուններ: Տարածական լայն ընդգրկում ունեն հատկապես *քունջ*, *պոծախ* և *քոջա* բառանունները:

1. *Քունջ*: Ըստ Հ.Աճառյանի՝ բառը վկայված է «անկին, խորշ, անկին աչաց» իմաստով և բարբառներում գործածական է «անկյուն» նշանակությամբ: Ծագումը պարս. *kunj* - *անկյուն* արմատից է (ՀԱԲ, հ. 4, 592): Ջահուկյանը ևս, վկայակոչելով Աճառյանին, այն համարում է իրանական փոխառություն (ՀՍԲ, էջ 787):

Ի դեպ, բարբառների գերակշռող մասում *քունջ* բառանունը հանդես է գալիս *պոծախ* կամ *քոջա* բառերի հետ զուգահեռ: Նախ *քունջ* բառածը փաստված է հնչյունական որոշակի զուգաբանություններով: *Անկյուն* հասկացության *քունջ* բառանունը ունի *քունջ*, *քունջ* երկբարբառային *քո՞նջ* հնչյունական տարբերակները, որոնց տարածական շառավիղն ընդգրկում է և՛ արեվելյան, և՛ արևմտյան խմբակցության բարբառների խոսվածքային միավորները: Այսպես՝ և՛ Արարատյան, և՛ Խոյ-Մարաղայի բարբառախմբերում, և՛ Ղարաբաղ-Շամախիի միջբարբառախմբում, ինչպես նաև արևմտյան բարբառներից՝ Մուշ-Տիգրանակերտի բարբառախմբում և Վանի միջբարբառախմբում: Հավելենք նաև, որ Վանի, Խոյ-Մարաղայի, Ղարաբաղ-Շամախիի խոսվածքներում բառը դրսևորված է քմային արտասանությամբ (օր.՝ Շատախի Սըվտըլի, Տղացպար գ.-եր, Խոյի Բադիլբոյի շոջ., Եղեգևաձորի Եղեգիս (Լախկին խոյեցիներ), Արցախի Կոճղուտ գ., Մարտակերտի Վերին Հռոաթաղ՝ *քունջ*), իսկ Մոկսի խոսվածք-

ներում նաև՝ երկբարբառային արտասանությամբ (Մամռտանցի Ապարանց և Սեդ գ.-երում՝ *քո՞ւնջ*): Մինչդեռ Հավարիկում *քունջ*-ին զուգահեռ փաստված է նաև *կունջ* հնչյունական տարբերակը:

Հայերենի բարբառների մի ստվար մասում *անկյուն* հասկացության նշանակիչ է դիտարկվել *պունճախ* բառանունը:

Պունճախ: Հ.Աճառյանը, «Քննություն Համշենի բարբառի» աշխատության վերջում ներկայացնելով բարբառում առկա փոխառյալ բառերը, արձանագրել է նաև *քուջախ* բառը՝ այն համարելով թուրքական փոխառություն (Աճառյան, 1947, էջ 266): Բառանունը *պունճախ* տարբերակով ներկայացրել է նաև Ստ. Մալխասյանցը «Հայերեն բացատրական բառարանում». «1. *Անկին*, յետ ընկած՝ աչքից հեռու տեղ, ծերպ, *պունճախ* (տաճկ. *bugak*, *անկին*, ավելի հաճախ գործածվում է *քունջուպունճախ*)» (ՀԲԲ, հ. 4, էջ 118):

Անկյուն հասկացության *պունճախ* բառանունը գործածական է հայերենի գերակշռող բարբառներում: Ինչպես *քունջ* բառանվան դեպքում, որը փաստված է Մուշում, Համշենում, Վանում, Պարսկահայքում, Ղարաբաղում, Նախիջևանում, նաև Արարատյան բարբառում: Բառանունն առկա է *պունճախ* (Հին Ջուղա, Շուշի, Վան, Սուրմալու, Երևան (Լորք)), *քունճախ* (շնչեղ ձայնեղ տարբերակով) (Էջմիածնի Առատաշեն գ.), *քուջախ* (Համշենի Օրդուի խոսվածք), *պունճիխ* (առաջնալեզվային *ի*), (Վանի Խոշաբի շրջ. Ջնդստան գ.), շրթնային *ի*-ով *պունճիխ*՝ Շատախի Արմշատ գյուղում:

Պունճախտակ: Որպես *անկյուն* հասկացության բառանուն՝ կղզիացած բարբառային հատկանիշ է դրսևորում *պունճախտակ* բառածևը: Վերջինս *պունճախի*՝ *անկյունի տակ* բառակապակցությունից առաջացած բառաբարդում է, որը փաստված է Ագուլիսում (*պըճախտակ*), *պունճախտակ* (Գորիսի Խոտ գ.), *պունճոխտակ* (Նախիջևանի Փառակա գ.), *պըճըխտակ* (Գորիս), *պունճըխտակ* (Նախիջևանի Տանակերտ գ.):

Ինչպես արդեն նշել ենք, բարբառներում շատ հաճախ զուգահեռաբար գործառվել են *քունջ* և *պունճախ* բառանունները, իսկ

որոշ բարբառներում փաստված է նաև նրանց համադրությամբ կազմված բառաձևը՝ ու շաղկապով կամ միացման գծիկով կապակցված. *քունջուպուճախ* կամ *քունջ-պուճախ* (օր.՝ Արցախի Թալիշ գ.՝ *քունջուպոճախ*, Մարտունու Լիճք գ. (Ալաշկերտից, Մուշից գաղթածներ)՝ *քունջուպուճաղ*, Գորիսի Քարահունջ գ, Աբովյանի Ձորաղբյուր, Առինջ, Կամարիս գ.-եր՝ *քունջուպուճախ*, Արճեշի Խարկեն գ.՝ *քունջ-պուճախ*):

Որպես *անկյուն* հասկացության բառանուն հայերենի բարբառներում արձանագրված է *քօշա* բառաձևը: Բառը թուրքական փոխառություն է: Ի տարբերություն *քունջ* և *պուճախ* փոխառյալ բառանունների, որոնք գրեթե համահայերենյան գործառույթ ունեն, այսինքն՝ արձանագրված են թե՛ արևմտյան և թե՛ արևելյան բարբառների խոսվածքներում, *քօշա* բառաձևը վկայված է գերազանցապես արևմտյան տարածքի բարբառներում: Քարտեզի վրա բառի տարածական նկարագիրը ընդգրկում է բարբառների արևմտյան խմբակցության Անտիոքի բարբառախմբի, Կիլիկիայի միջբարբառախմբի, Փոքր Ասիայի, Մուշ-Տիգրանակերտի բարբառախմբերի և Վանի միջբարբառախմբի խոսվածքները: Բառանունը, իհարկե, յուրաքանչյուր բարբառում կամ խոսվածքում դրսևորված է տվյալ բարբառի հնչյունական օրենքներից բխող զուգաբանություններով: Այսպես՝ Անտիոքի Բեյլանի Սովալուխ և Աթըխ գ.-երում, Սեբաստիայի Կանգալի Մանջալիկ գ.-ում, Պարտիզակ, Տրապիզոն ք.-երում փաստված են *քօշü*, Մուշի, Կարսի, Արճեշի խոսվածքներում՝ *քօշա*, Սասունում՝ *քօշü*, քօշը, Նիկոմեդիայի Խասկալ գ., Ասլանբեկ՝ *քօշէ*, Ջավախքի Գանձա, Վաչիան գ.-երում՝ *քէշը*, Քեսաբում՝ *քնիշա*, Չեյթունում՝ *քնիշօ*, Նիկոմեդիայի Արմաշ գ.՝ *քօշէկ* հնչյունական տարբերակները: Պարսկահայ տարածքի որոշ խոսվածքներում *անկյուն* հասկացության բառանուն են վկայված *գօշա*, *գուշա* բառաձևերը, որոնք, մեր կարծիքով, նույն *քօշա* բառաձևի զուգաբանություն-

ներ են (*գուշ*՝ Չահարմահալի շրջ. Սինագան գ., *գուշա*՝ Չահարմահալի Աղբուլաղ, Զյարվանդի շրջ. Վերին Զըրդեր, Գափլալի շրջ. Մարգիյան, *գոշա*՝ Փերիայի Նամագերդ գ.): Արձանագրենք, որ *քօշա* բառաձևի գործածության դեպքում էլ այն շատ հաճախ փաստված է *պուճախ*, *քունջ* բառանուններին զուգահեռ:

Կղզիացած տարածքային հատկանիշ է դրսևորում *բուրջ* բառանունը: *Տան անկյուն* իմաստով վերջինս, ըստ ՀԲԱ ծրագրի հավաքած նյութերի, առկա է Ղարաբաղ-Շամախի որոշ խոսվածքներում (օր.՝ Արցախի Մատաղիս, Հադրութ, Գորիսի Խնձորեսկ, Վերիշեն, Բռուն գ.-եր, Կապանի Արծվանիկ գ., Վ.Ճամբարակ, Տավուշի Բերդ և այլն): Նշենք, որ «Հայոց լեզվի բարբառային բառարանում» *բուրջ* բառաձևը վկայված է բարբառներում առկա *բուրգ*, *աշտարակ* իմաստով բառերի բառահողվածի տակ (ՀԼԲԲ, հ.1, էջ 225): Ինչպես գիտենք, *բուրջ*-ը վկայված է նաև «Սասնա ծռեր» էպոսում՝ որպես բուրգ, աշտարակ («Սասունցի Դավիթ», համահավաք բնագիր, էջ 311): Ստ. Մալխասյանցը *բուրջ* բառը համարում է արաբական փոխառություն (արաբ. *burg*): «Զաղաքի կամ բերդի պարսպի մեջ տեղ-տեղ շինած բարձր աշտարակ՝ պատերազմի կարիքի համար» (ՀԲԲ, հ. 1, էջ 394): Այնինչ Գ. Ջահուկյանը *բուրգ*-«*բուրգ*, *աշտարակ*» ուրարտական փոխառություն է համարում՝ *burgana*: Նա ՀԼԳ-ում վերջին *ւ*-ի պատճառով ավելի քիչ հավանական աղբյուր է համարել ասորական *burga*-ն: *Բուրջ* բառը վկայված է նաև «Միջին հայերենի բառարանում». «Բուրջ- (արաբ. burj), գ. 1. Բուրգ, աշտարակ: Շինեցի զբուրջս ի հալալ արդեաց իմոց՝ յիշատակ ինձ և ծնողաց իմոց» (ՄՀԲ, էջ 126): Իսկ Ա. Սարգսյանի կազմած և արդեն քննարկված «Ղարաբաղի բարբառի բառարանում» *բուրջ* բառի հետևյալ բացատրությունն է տրվում. «*Բուրջ/բորջ* (արաբ. burj, պրսկ. *borj* (ամրոցի աշտարակ), թրք. *burc*- գ. Առարկայի երկու կողմերի հանդիպման վայրը, երկու կողմերի միացումով կազմվող ծայրը» (էջ 268)*, և բերված է օրինակը Կ.Դավթյանի «Լեռնային Ղարաբաղի բարբա-

* Էջերը նշել ենք ըստ ձեռագրի, որից օգտվել ենք և երախտապարտ ենք հեղինակին:

ռային քարտեզը» աշխատությունից.«...Φουեն մին *բուրջումը* տեհա մին օխծը *օզուՄ* ար ինձ կըծե»:

Իսկ ըստ Աշտարակի շրջանի Տեղեր գյուղի մի տեղաբնակի վկայության՝ 12-րդ դարում Մամախաթունի տիկնոջ կառուցած Մայր Աստվածածին եկեղեցու հարևանությամբ գտնվող ձորով բաժանվում են Օրգով և Տեղեր գյուղերը, և այդ ձորի եզրին կա մի սրածայր անկյուն, որը տեղաբնակները կոչում են *բրջի տանիս*: Եվ թե ինչպես է *բուրգ*, *աշտարակ* իմաստից բարբառներում փոխաբերացմամբ առաջացել *անկյուն* իմաստը, առայժմ մեզ համար անբացատրելի է:

Անկյուն հասկացության բառածև է դիտարկվել նաև *քընար* (կամ *քյննյր*) բառանունը: Ըստ Մալխասյանցի՝ բառը տաճկական փոխառություն է՝ *kenar - եզր* իմաստով («Այգու միջևակի երկու կողմի թմբերի երեսները. Էս քնարը լավ խաղող է տվել») (ՋԲԲ, հ. 4, էջ 578): *Քընար* բառանունը կղզիացված գործածվել է Բալուի Նաջարան գ.-ում (*պուճախին* զուգահեռ) և Ախալքալաքի Բուղաշեն գ.-ում (*քյննյր/քէշն*):

Ռուլք բառանունը՝ որպես *անկյուն* հասկացության անվանում, մեկուսացած հանդես է եկել Սասունի Մըշկեղ, Յագոյի Տնգնետ (*ռուլք//քօշաՔ*), Բիթլիսի Յալնձի գ.՝ *ռուլք*, և *ուռուլք//պուճախ//քյննյք՝* Նախիջևանի Շոռուտ գ.: Ի դեպ, բառանունը վկայված է նաև Շատախում՝ մեկնաբանվելով որպես *պուճնխ*՝ «ներսի անկյուն», *ռուլք*՝ «դրսի անկյուն»: Քասախում (բուլանուխցիներ) ևս փաստված է *ըռուկ*-ը՝ *պուճախ//քուննյք*, *անկյուն* իմաստով, հատկապես (դրսի ճակատային անկյուն) իմաստով, գործածական է նաև *ճամնիի ըռուկին* բառակապակցությունը, այսինքն՝ ճանապարհի անկյունում:

Ստ. Մալխասյանցը բառը համարում է արաբական փոխառություն՝ բառացի «անկյունաքար» նշանակությամբ: Տալիս է բառի «1. Անկյունաքար, 2. Անկիւն, 3.Անկիւնի դուրս ցցուած մասը, 4. Լեռան՝ բլուրի երկարացած ծայր» իմաստները (ՋԲԲ, հ. 4, էջ 165):

ՀՀԲԲ-ում ևս փաստված է հիշյալ բառանունը. «*Ռուք՝* Արարատյան, Ղարաբաղ (Գանձակ), Կարին (Զավախք), Մոկս, Մուշ (Բաղեշ), Սասուն՝ *ռոք*, Ղարաբաղ՝ *ռուկք*»: Սասունում բառը գործածված է «շինության անկյունաքար, կապքար (դրսի կողմից)» իմաստներով: Բառարանում ներկայացված են ևս Սասնո բարբառում շենքի մասերի հետևյալ անունները՝ *ասա՝* հիմք, *ռուկք՝* անկյուն, *շպակ (շբաք)՝* տան ներսի պատի մեջ թողնված պահարան (պատրիան) (ՀԼԲԲ, հ. Ե, էջ 239): Ի դեպ, վերջինիս անդրադարձել ենք *պատրիան* բառը քննելիս:

Անկյուն հասկացության դիմաց հայերենի բարբառներում, ըստ ՀԲԱ ծրագրով հավաքած նյութերի, արձանագրված են բառանուններ, որոնց ծագումը մեզ անհայտ է, և որոնք ունեն տարածական սահմանափակ ընդգրկում: Այսպես՝ *գյարիշ՝* Փերիայի Սպահանի շրջ. Հադան գ., *սուքա՝* Վերին Բուրվարի Խորգենդ գ., *չյնկ՝* Սվեդիայի Խորբեկ, *չունկ՝* Եղեսիայի Սևերեկ:

Հայերենի բարբառներում առկա է ևս ևս նկարագրական *տըռան տակ* բառակապակցությունը (Շամխորի Լղարակ գ.), ինչպես ևս *ծակուծուկ* բարդությունը (Աշտարակի Մուղնի գ.):

Այսպիսով, *տուն* և *տնտեսություն* իմաստային դաշտն արտացոլող բառանունների շրջանակում քննելով *պատ* և *անկյուն* հասկացությունների բարբառային բառանունները, գալիս ենք այն եզրակացության, որ հայերենի բարբառները հիմնականում չեն պահպանել հնդեվրոպական բառանունները: Միայն Ագուլիսի և Մեղրու խոսվածքներում է, որ պահպանվել է հնդեվրոպական *որմ*-ը, և Ղարաբաղի բարբառում՝ *անկյուն*-ը: Մնացած վայրերում *որմ*-ի փոխարեն գործածվել են *պատ*, *դուվար*, իսկ անկյուն իմաստով՝ *քունջ*, *պուճախ*, *քօշա* և այլ փոխառյալ բառանուններ:

Համառոտագրություններ

ՀԱԲ - Զ.Աճառյան, Հայերեն արմատական բառարան

ՀԲԱ - Հայերենի բարբառագիտական ատլաս

ՀԲՆ - Գ.Զահուկյան, Հայ բարբառագիտության ներածություն

ՀԲԲ - Ստ.Մալխասեանց, Հայերէն բացատրական բառարան
ՀԲՈՒԲ - Ս.Ամատունի, Հայոց բառ ու բան
ՀԳԲ - Զ.Աճառեան, Հայերէն գաւառական բառարան
ՀԼԲԲ - Հայոց լեզվի բարբառային բառարան
ՀԼՊ - Գ.Զահուկյան, Հայոց լեզվի պատմություն
ՀՍԲ - Գ.Զահուկյան, Հայերէն ստուգաբանական բառարան
ՄՀԲ - Ռ.Ղազարյան, Զ.Ավետիսյան, Միջին հայերէնի բառարան
ՆՀԲ - Նոր բառգիրք հայկազեան լեզուի
գ. - գյուղ, շրջ. - շրջան, ք. - քաղաք

Օգտագործված գրականություն

1. Աճառյան Զ., Հայերէն արմատական բառարան, հհ. 1-4, Ե., 1971-1979.:
2. Աճառեան Զ., Հայերէն գաւառական բառարան, Թ., 1913:
3. Աճառեան Զ., Զննութիւն Ազուլիսի բարբառի, Ե., 1935:
4. Աճառեան Զ., Զննութիւն Համշենի բարբառի, Ե., 1947:
5. Ամատունի Ս., Հայոց բառ ու բան, Վաղարշապատ, 1912:
6. Աւետիքեան Գ., Սիւրմէլեան Խ., Աւգերեան Մ., Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հհ. 1-2, Վենետիկ, 1836-1837:
7. Դավթյան Կ., Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը, Ե., 1966:
8. Հայոց լեզվի բարբառային բառարան, հհ. Ա-Զ, Ե., 2001-2010:
9. ՀԲԱ ծրագրով հավաքած նյութեր:
10. Ղազարյան Ռ., Ավետիսյան Զ., Միջին հայերէնի բառարան, Ե. 2009:
11. Մալխասեանց Ստ., Հայերէն բացատրական բառարան, հհ. 1-4, Ե., 1994-1945:
12. Մուրադյան Զ., Կաքավաբերդի բարբառը, Ե., 1967:
13. Զահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան, Ե., 1987:
14. Զահուկյան Գ., Հայերէն ստուգաբանական բառարան, Ե., 2010:
15. Սասունցի Դավիթ, Համահավաք բնագիր, Ե., 1981

Хачатрян Асмик- Диалектное исследование слов, выражающих понятия *որմ* (стена) и *անկյուն* (угол). - В рамках словарей, отражающих смысловое поле *տուն* (дом) и *տնտնություն* (хозяйство), исследованы диалектные выражения лексических понятий *որմ* (стена) и *անկյուն* (угол). В статье представлены как фонетические, так и словообразовательные варианты этих понятий в диалектах армянского языка, а также даны их территориальные характеристики.

Исследуя указанные понятия, мы пришли к заключению, что из всех диалектов армянского языка только в говорах Агулиса и Мегри сохранилось слово индоевропейского происхождения *որմ* (*որման, հերմ*), а в диалекте Карабаха - *անկյուն*. В остальных регионах вместо слова *որմ* (стена) употреблялись *պատ, դուշար*, а в значении *անկյուն* - *քունջ, պուխի, բջոշ, բուրջ, բուք* и иные заимствованные слова.

Khachatryan Hasmik – The Dialectal Study of the Words Expressing the Concepts “Wall” (*որմ* [vorm]) and “Corner” (*անկյուն* [ankyun]).-

Within the framework of the words presenting the semantic field of “house and household” we have studied the dialectal versions of the concepts “wall” and “corner”. The article focuses on both the phonetic and the word-building variants of these concepts found in the dialects of Armenian and gives their territorial characteristics as well. The study of the above mentioned words shows that the word “wall” (*որմ* [vorm]) of Indo-European origin has been preserved only in the Agoulis and Meghri dialects ([urman], [hermy]), and the word “corner” (*անկյուն* [ankyun]) has been preserved only in the Karabakh dialect. In all the other regions, these concepts are expressed by loanwords, such as [pat, duvar] for [vorm] and [qunj, puchakh, qyosha, burj, ruk] for [ankyun], etc.

*Խաչատրյան Օֆելյա
ՀՀ ՉԱԱ Լեզվի ինստիտուտ
Մուրադյան Անահիտ
Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ*

Յեթում պատմիչի «Պատմութիւն թաթարաց» աշխատության բառապաշարի նորաբանությունները

Յին հայերենով ավանդված մշակութային հուշարձանների բառապաշարի ուսումնասիրությանը մեծապես նպաստում են բնագրային համաբարբառները:

Համաբարբառային մշակման է ենթարկվել նաև հայ պատմագիր, պետական գործիչ Յեթում պատմիչի «Պատմութիւն թաթարաց» աշխատությունը¹: Այն թեև մինչև այժմ Լեզվաբանների ուշադրությանը չի արժանացել, սակայն Ա. Ղարիբյանի նախածեռնությամբ և առաջարկով Լեզվի ինստիտուտի ավագ գիտաշխատող Բամբիշ Աշոտի Եգանյանը կազմել է դրա բնագրային համաբարբառը, որը հնարավորություն է ընձեռում հեղինակի երկի բառապաշարը բազմակողմանիորեն քննել վիճակագրական, Լեզվաոճական և բառակազմական տեսանկյուններից:

Յեթումը հայ պատմագիր է, պետական գործիչ: Սերել է Յեթումյանների տոհմից: Եղել է հայոց սպարապետ (1294 -1305թթ.), վարել է մի շարք հաղթական ճակատամարտեր հարևան մահմեդական իշխանությունների (հատկապես Եգիպտոսի սուլթանության) դեմ:

1842թ. աթոռակալ վարդապետ Հ. Մկրտիչ Ավգերյանը Յեթում պատմիչի «Պատմութիւն թաթարաց» երկը լատիներենից թարգմանել է գրաբար՝ դրան կցելով նաև Յեթումի անունով հայտնի ժամանակագրությունը, որն ընդգրկում է արժեքավոր տեղեկություններ Հայաստանի և ասիական ու եվրոպական մի շարք պետությունների 1096 - 1307թթ. շրջանի պատմությունից²:

¹ Տե՛ս Հայկական համաբարբառ, 17, Յեթում պատմիչ, «Պատմութիւն թաթարաց» (բնագրային, Վենետիկ, 1842), կազմեց՝ Բամբիշ Աշոտի Եգանյան, Ե., 1981:

² Հայկական սովետական հանրագիտարան, հ.6, Ե., 1980, էջ 331:

Երկում տեղ գտած նորաբանությունները կնպաստեն գրաբարի բառային կազմի համալրմանը: Հինհայերենյան բառապաշարի մեջ են թափանցել մի շարք բառային փոխառություններ, դարձվածային միավորներ, զանազան ոճեր ու հեղինակային անհատական նորակազմություններ. վերջիններս ստեղծվել են բառարդման և ածանցման կաղապարներով և ունեն պատմաքաղաքական բովանդակություն՝ կրոնաեկեղեցական, իմաստասիրական տարրերով:

«Պատմութիւն թաթարաց» երկի լեզուն աչքի է ընկնում բառապաշարի հարստությամբ, ինքնատիպությամբ, իմաստային բազմազանությամբ, բառակազմական միջոցների (հիմքերի, ածանցների) գործածականության հաճախականությամբ՝ պայմանավորված տվյալ ժամանակաշրջանին բնորոշ լեզվական օրինաչափություններով:

Հոդվածի շրջանակներում ներկայացնում ենք երկում հանդիպող նորակազմությունների բառակազմական բոլոր կաղապարներն ու ենթակաղապարները, ցույց տալիս դրանց առանձնահատկությունները և բառարդման ընթացքը՝ ըստ բառաքերականական ձևույթների բառակազմական քայլերի, ըստ ածանցների գործածության հաճախականության և ըստ սերող հիմքերի:

Երկի բառապաշարի ինքնատիպությունը պարզելու և բառարաններում չվկայված բառային միավորները առանձնացնելու համար երկի համաբարբառի բոլոր բառամիավորները համեմատելենք ՆՅԲ-ի¹, ԱԲ-ի², ԳԲ-ի³, ինչպես նաև ՄՅԲ-ի⁴, ԳԲԲ-ի⁵, ԳԲ-ի⁶, ԲՅ-ի⁷ գլխաբառերի հետ՝ ճշտելու համար, թե որքանով է երկի բառապաշարն արտացոլված այդ բառարաններում, որոնք

¹ Նոր բառգիրք հայկազեան լեզուի (այսուհետև՝ ՆՅԲ), հ.1-2, Վենետիկ, 1836-1837:

² Առձեռն բառարան հայկազնեան լեզուի (այսուհետև՝ ԱԲ), Վենետիկ, 1846:

³ Ռ.Ղազարեան, Գրաբարի բառարան (այսուհետև՝ ԳԲ), Անթիլիաս-Լիբանան, 2004:

⁴ Ռ.Ղազարյան, Յ. Ավետիսյան, Միջին հայերենի բառարան (այսուհետև՝ ՄՅԲ), Ե., 2009:

⁵ Լ. Խաչատրյան, Գրաբարի բացատրական բառարան, Ե., 2003:

⁶ Լ. Հովհաննիսյան, Գրաբարի բառարան. ՆՅԲ - ում չվկայված բառեր, Ե., 2010:

⁷ Ե. Մեղրեցի, Բառգիրք հայոց, Ե., 1975:

են գրաբարի բառապաշարային հարստությունից օգտվելու միջոցները, ապա բացահայտելու այն նորամուծությունները, որ կատարվել են գրաբարի բառակազմության մեջ:

Երկի բառապաշարի միավորների՝ մեր կատարած համեմատական քննությունից պարզվում է, որ զգալի թվով բառեր ընդհանրապես չեն արձանագրվել նշված բառարաններից ոչ մեկում (բացի *հայրգիր*, *խանկրեմ*, *բասած*, *մեծահամբաւ*, *ջաստել*¹, *յուղի անկեայ*² բառերից, որոնք կա՛մ փոխառյալ են, կա՛մ անհայտ ծագում ունեն): Չվկայվածների մեջ կարելի է առանձնացնել բառերի մի փոքր խումբ, որ ժողովուրդների, ազգերի, որևէ տեղի բնակիչների անվանումներ կամ դրանցից կազմված ածականներ են, ինչպես՝ *կումացի*, *տորկուացի*, *սիդոնացի*, *յոնիական*: Որոշ բառեր հանդիպում են հնչյունական տարբերակներով, օր.՝ *սուլդան*, *քումատ* (Յեթում) - *սուլտան* (ՆՅԲ), *քումաթ* կամ *քումութ*³ (ԱԲ), *ճարտարամիտ* (Յեթում՝ ած.) - *ճարտարամտեմ* (ՄՅԲ՝ բայ): Նկատված բառային միավորների քանակը շուրջ 70 է: Նորակազմ բառերից 22-ը գոյական է, 28-ը՝ ածական, 15-ը՝ բայ, 4-ը՝ մակբայ: Գերակշռում են ածականները: Երկում վկայված բառամիավորներից 11-ը կազմությամբ պարզ բառեր են, իսկ բաղադրյալ (բարդ և ածանցավոր) բառերի քանակն է 62 (20 / 80%):

Թեև երկի ամբողջ բառապաշարի մեջ բարդ և բարդածանցավոր կազմությունները գերակշիռ թիվ չեն կազմում ածանցավորների համեմատությամբ, սակայն այս խմբի բառերի մեջ դրանց տոկոսային հարաբերությունը մի քանի անգամ ավելի

¹ Վերը նշված 5 բառերը (*հայրգիր* «իբրև հայր գրված, հայր համարված» (404), *խանկրեմ* «վնասվել, խեղվել» (306), *բասած* (Ֆր. «անցում, արշավանք, գ.», հատկապես խաչակիրների), *ջաստել* (1. «պատժել», 2. «ամրոց, դղյակ» (Մժ, Ա, 79,74), *մեծահամբաւ*) հանդիպում են ՄՅԲ - ում:

² *Յուղի անկեայ*-ը կա Ռ.Ղազարյանի «Դարձվածաբանական բառարան»-ում, Ե., 2012:

³ *Քումատ* ԱԲ - ում «քումաթ կամ քումութ, ի., գ., պարսկ. նշկ. «քիլբաշ, փրասա», *քումաթ*, *քումաթ* (ՆՅԲ, 1012), ի. «հազարան, կոտիմն», *քումաթն* «բողկրն և շաղգամն, քումաթի և սատապի ջուր»:

մեծ է, որը վկայում է երկի յուրօրինակ բառակերտումների առատության մասին:

Վերջածանցավոր կաղապարները թե՛ իրենց քանակով ու բազմազանությամբ, թե՛ կոնկրետ իրացումների թվով գերազանցում են նախածանցավորներին: Ընդ որում՝ վերջիններս բնորոշվում են անմիօրինակությամբ. տարածված իրացումներ ունեցող կաղապարների կողքին հանդիպում են խիստ սահմանափակ և նույնիսկ եզակի վկայություններ ունեցող օրինակներ:

Քննությունը ցույց է տալիս, որ նորակազմ բառերում առկա են ժամանակի բառակազմական գրեթե բոլոր կաղապարները՝ համադրական և վերլուծական (հիմնակաղապարներով և մասնակաղապարներով): Սակայն վերլուծական ձևերի համեմատությամբ ավելի շատ են համադրականները: Հոդակապով կաղապարները գրաբարի բառակազմական գործընթացում կենսունակ են: Նկատված նորակազմությունների զգալի մասը ըստեղծվել է այս կաղապարներով: Գերակշռում են հոդակապով երկարմատ բարդությունները, որոնք երեք անգամ գերազանցում են անհոդակապ ձևերին: Դրանք խմբավորել ենք ըստ սերող հիմքերի արտահայտման եղանակի (պարզ կամ ածանցավոր), հիմքերի քերականական ձևավորման, ածանցների քանակի և դիրքի, հիմքերի և ածանցների հնչյունափոխության:

1.Սերող պարզ (առաջնային) հիմքով բարդություններն ունեն հետևյալ բանաձևը¹՝ SjS, ինչպես՝ *քաղցրաջուր, դեղամահ, արձակածավալ, զօրաբանակ*. վերջինի առաջնային հիմքը անեզական գոյական է և բարդության մեջ կորցրել է - ք մասնիկը (կամ ածանցը):

2. SjS կաղապարն ունի SjS մասնակաղապարը. այդօրինակ բարդությունների պարզ հիմքը ենթարկվում է շեշտից կախված հնչյունափոխության, օր.՝ *նրբամիտ* (արմատը՝ *նուրբ*), *քաղցրաջուր* (արմատը՝ *քաղցր*):

3.SjS հիմնակաղապարի մի մասնակաղապար է SjS^f կառուցվածքը, որը գրաբարի մատենագրության մեջ տարածված է: Այստեղ

¹Բանաձևերի մասին տե՛ս Լ.Հովսեփյան, Գրաբարի բառակազմությունը, Ե., 1987:

սերող հիմքին ավելանում է քերականական ձևավորում ունեցող որևէ բաղադրիչ: Դրանք հիմնականում բայական հիմքեր են և համընկնում են՝

ա) անցյալ կատարյալի հիմքին՝ *կալ- դիմակալ, կաց - դիմակաց*,
բ) «մաքուր»¹ բայարմատին՝ *ականահատություն*,

գ) բուն հրամայականի եզակի թվին՝ *դիր - վայելչադիր*:

Վկայված է երկու օրինակ առաջին բաղադրիչի հնչյունափոխությամբ և երկրորդ բաղադրիչի քերականական ձևավորմամբ, որոնք ներկայացնում են (SjS^f)a կաղապարը, օր.՝ *դիմակալություն, դիմակացություն*:

SjS հիմնակաղապարի մեջ են մտնում այն կազմությունները, որոնց առաջին կամ երկրորդ բաղադրիչը կամ երկուսն էլ ածանցավոր են: Ածանցավոր (երկրորդային) սերող հիմքերով բարդությունները գրաբարում լայն կիրառություն ունեն. դրանք կարող են լինել թե՛ նախածանցավոր, թե՛ վերջածանցավոր: Օր.՝

ա) (Sa)jS^f - առաջին բաղադրիչը վերջածանցավոր կազմություն է. կարող է տեղի ունենալ ինչպես արմատի, այնպես էլ ածանցի շեշտափոխական հնչյունափոխություն: Օր.՝ *վայելչադիր*²:

բ) Sj(Sa) - երկրորդ բաղադրիչի վերջածանցավոր կազմությամբ ձևերն ավելի շատ են՝ *չարավատթար, մեծահամբալ, աւարահարություն*:

գ) Sj(Sa) - հոդակապով բարդությունների երկրորդ հիմնային բաղադրիչը հնչյունափոխված է, ինչպես՝ սահմանակցություն, վրանաբնակ:

դ) [(S)jSa]aa - երկու կամ երեք վերջածանց ունեցող երկրորդ բաղադրիչով գործածվել է ընդամենը երկու բառ՝ *դժուարաբնակելի, սպառազինելի* [(SjS)a]a:

ե) S^fjSa - առաջին բաղադրիչն ունի քերականական ձևավորում. այս ենթակաղապարով վկայված է ընդամենը մեկ բառ՝

¹ Բառակազմական մաքուր և ձևավոր հիմքերի մասին տե՛ս Է.Աղայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Ե., 1984, էջ 245: Գ. Ջահուկյան, Չայոց լեզվի գարգացումը և կառուցվածքը, Ե., 1969, էջ 128-131:

² Տե՛ս *Արքամիտ*:

ականահատութիւն (առաջին բաղադրիչն ունի եզակի սեռական հոլովածն):

1. Բազմաբաղադրիչ կառուցվածքների մեջ աչքի են ընկնում եռարմատ կազմությունները, «որոնք գրաբարի բառակազմական համակարգում հազվադեպ են»¹: Վկայված է երեք արմատական բաղադրիչ ունեցող մեկ օրինակ. Արմատներն իրար են միանում հոդակապով՝ *հայրապետանկիստ*:

Անհոդակապ բարդությունների կաղապարները ներկայանում են SS կառուցվածքով, որտեղ առկա է բառակազմական մաքուր հիմքերի համադրում: Օր.՝ *հայրգիր, արքակաղնի, սանձարձակ*:

Վերը նշված բառերը հիմնականում ձևավորվել են բառակապակցություններից, որոնցում առաջին բաղադրիչը հանդես է գալիս որևէ հոլովածևի նշանակությամբ՝ առանց հոլովական վերջավորության:

Մյուս անհոդակապ սորակազմությունները ներկայանում են SS հիմնակաղապարի հետևյալ տարբերակներով (մասնակաղապարներով).

1. SS^f - երկրորդ բաղադրիչը քերականական ձևավորում ունի, ինչպես՝ *դիրիմաց (իմաց-իմանալ* բայի երկրորդ հիմք):

2. S(Sa) - երկրորդային սերող հիմքն ածանցավոր կազմություն է՝ *բարձրբերդցի, ակնածելի, նաւարկելի* - S(Sa)a (... ընդ տված են երեք հարիր հազար արանց, ամենեցուն *ակնածելիք* - 69): ... ունի գառատութիւն ձկանց և է *նաւարկելի* - 75):

Բավական մեծ թիվ են կազմում այն բառերը, որոնցում վերջածանցը կցվում է որևէ նախածանց ունեցող հիմքին: Այս դեպքում թե՛ նախածանցների և թե՛ վերջածանցների մեջ կան առավելագույն հաճախականություն ունեցող միավորներ (նախածանցների մեջ *նախ*-ը, վերջածանցների մեջ *-եալ* -ը), որոնք զուգորդվում են միմյանց: Նախածանցավերջածանցավոր կազմությունների մեջ կա հունաբան դպրոցի ստեղծած նախածանցով երկու բառ. *նախ-եալ*՝ *նախանշանակեալ* (Աշխարհն հնդկաց է

¹ 5-րդ դարի մատենագրության մեջ դրանց թիվը 4 տասնյակից չի անցնում (տե՛ս Լ. Դովսեփյան, նշվ. աշխ., էջ 136-137, 276) :

իբրու կղզի, և շուրջ պատեալ է ի *Նախանշանակեալ* անապատե -11), *Նախասացեալ* (Թագաւորութիւն Խորագմեայց ... տարածի ... ի հարաւոյ ընդ *Նախասացեալ* թագաւորութեան թուրքըստանի - 8):

Որոշ թվով կառույցներ, որոնք պարունակում են երկուսից երեք ածանց, տարբեր զուգորդություններով են, ինչպես՝ (Sa)a - *աջողակի*, Saa - *սկզբնաւորութիւն*, (SjS)a - *դժուարաբնակելի*:

Ավելի հաճախ հանդիպում են միայն (*ել/ալ*)- ի ածանցով բառեր, որոնք չունեն իրենց անածանց տարբերակները՝ *Նավարկելի*, *խիթալի* (Մի միայն բերդ կայ ի Քայիր և այն ոչ կարի ամուր, իսկ այլքն ամենայն են անպարիսպ, վասն որոյ չէ *խիթալի* ընդ մեծ դիմակալութիւն - 76):

Յեղիակը հաճախակի գործածում է լրացուցիչ, հավելուրդային մասնիկ (*-ակի*), որը, սակայն, բառին Նոր իմաստ չի հաղորդում, բայց սերող հիմքով շեշտում է սաստկականության իմաստ, օր.՝ *աջողակի* (= *աջողակ*):

Նորակազմությունների մեջ հանդիպում են բարդություններ, որոնք ստեղծվել են հարադրության եղանակով:

Ըստ բաղադրիչների լրացական-կախումային հարաբերությունների՝ բայական հարադրությունները (կամ վերլուծական ձևերը) համարվում են ստորադասական բարդություններ¹: Այդպիսի բարդություններում բայական անդամը հարադրվում է անվանական բաղադրիչին՝ բայական իմաստ հաղորդելով կապակցությանը: Դրանցում բայական և անվանական հարադիրները «հավասարազոր ու համարժեք տարր են, որոնք տարանջատությամբ հանդերձ միախուսվելով իրար, ստեղծում կամ առաջ են բերում մի նոր միավոր»², ընդ որում, ըստ բաղադրիչների խոսքիմասային պատկանելության՝ դրանք սովորաբար բաժանվում են բայական և անվանական հարադրությունների: Բայական հարադրություններում առաջին բաղադրիչը՝ անվանական միավորը, կա-

¹ Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, Ե., 1989, էջ 225-227:

² Ա. Մարգարյան, Հայերենի հարադիր բայերը, Ե., 1966, էջ 70:

տարում է հիմքի, իսկ բայական բաղադրիչը՝ գործողության գաղափարի ցուցիչի դեր: Օր.՝ *անկանել, լինիմ, յարուցեալ, յարդարեմ* բայերով վկայված են հետևյալ հարադրությունները՝ *մեկնիմ ի փախուստ* («*մեկնել(իմ)*»), *մարտ յարդարեմ* («մարտ կանոնավորել, կարգավորել»), *մարտ յարուցանել* (յարել՝ «կցել, իրար միացնել, ավելացնել»), *յուղի անկեալ* («ուղևորվել»)՝ ...ի Թագաւորութեն Թուրքաստանու.... ժողովեցան իբրու վեց հազար արանց... *և յուղի անկեալ* ձեռն տալ արքային Պարսից, դիմեցին և անցին ընդ գետն Փիսն (23):

Այս բարդությունների անվանական հարադիրները անկախ բառեր են, խոսքի մեջ ինքնուրույն գործածություն ունեն, հանդես են բերում թե՛ բայական, թե՛ անվանական բաղադրիչների բազմազանություն և զուգորդելիություն: Հմմտ. *մարտ և մարտ յարդարեմ / մարտ յարուցանել* Յորժամ Ապաղայ *մարտ յարդարեմ* ի վերայ սուլդանին Եգիպտոսի.... (55): ... սա սկսաւ *մարտ յարուցանել* ընդդէմ կայսեր Յունաց.... (27): *Մեկնիմ և մեկնիմ ի փախուստ*. ...գոր տեսեալ այլոց՝ անդէն վաղվաղակի *մեկնեցա՞ն ի փախուստ* յետս ընդ կրունկն (23):և առանց ի խընդիր լինելոյ նորա՝ գոր խնդրէինն, *մեկնեցան* ի տեղուջէն՝ ասելով... (34):....*Նմանող և Նմանող լինի*. զինուք, ծիովք և զգեստուք *Նմանողք* են սովորութեան և ձևոց Թաթարաց (14):

Նմանող բառը գրաբարի մատենագրության մեջ անկախ գործածությամբ չի հանդիպում. այն գործածվել է *Նմանող լինի* հարադրության մեջ, իսկ երկուսն ինքնուրույն գործածություն ունի:

Կիրառված բայական հարադրություններն ունեն կառուցվածքային տարբեր կաղապարներ՝

1. Անվանական հարադրի հայցական հոլովածն.

ա) առանց նախդրի՝ եզակի թվով՝ բայական հարադրի վերջադաս դիրքով՝ *մարտ յարդարեմ, մարտ յարուցանել*.

բ) ի նախդրով՝ եզակի թվով՝ բայական հարադրի նախադաս և վերջադաս դիրքով՝ *յուղի անկեալ, մեկնիմ ի փախուստ*:

Ինչպես վերը նշվեց, բառարաններում չվկայված բառերում կան գոյական, ածական, բայ, մակբայ: Գործածված յոթ պարզ գոյա-

կաններն են՝ մուղալ («մոնղոլ»), ջաստել («պարիսպ»), պոնսագ («հավք»), պալալիս («պատվական քար»), սուլղան («սուլթան»), բասաճ («խաչակիրների արշավանքը»), կոմերլիոն («հավք»)՝¹:

Ածանցավոր գոյականներում առկա են *-եայթ*), *-ոս*, *-որք*, *-ու-թիւն* վերջածանցները, օր.՝ *դեղորեայք*, *տրտվութիւն*, *յարգութիւն*, *նստորք*,² *սարակինոս*³:

Բարդ ածանցավոր գոյականների մեջ-*ութիւն* ածանցով կազմվել է 6 բառ, որոնք ձևավորվում են բառակազմական հետևյալ կաղապարներով՝

ա) բաղադրյալ հիմք + վերջածանց՝ *ականահատութիւն*⁴, *սահմանակցութիւն*, *դիմակալութիւն*⁵:

-*ութիւն* ածանցը առնչվում է հունաբան հայերենին հատուկ՝ վերացականը թանձրացականի փոխարեն գործածելու ոճական հնարին:

Որոշ կառույցներում գոյականակերտ *-ութիւն* ածանցը կցվում է հիմքին այլ վերջածանցների զուգորդությամբ, օր.՝ *առաջ+* (*ի*)*ն +որդ+ութիւն*, *սկիզբն + աւոր + ութիւն*, *վտար + անջ + ութիւն*:

բ) պարզ հիմք + հոդակապ + պարզ հիմք՝ *դեղամահ*:

Բարդ գոյականները պատկանում են հիմք+հոդակապ+հիմք և հիմք+հիմք կաղապարներին. բոլորն էլ իսկական բարդություններ են՝ «մաքուր» անհնչյունափոխ հիմքերով, ինչպես՝ *դեղամահ*, *հայրգիր*, *արքակաղնի*:

Մյուս խոսքի մասերի համեմատ՝ զգալի թիվ են կազմում ածականները: Բարդ ածականներն ավելի շատ են, քան այլ կազմությունները, իսկական բարդությունները հոդակապով են կամ անհոդակապ: Նկատելի է, որ ինչքան մեծանում է բաղադրիչ-

¹ ՄՅԲ՝ մուղալ - գ. «մոնղոլ», իսկ ԱԲ - ում՝ մուղ - գ., «աշխատանքի սովորած կենդանի»:

² ՄՅԲ- ում գոյականի արժեքով չկա, կա նստորական ածականը՝ «նեստորի պականդին հետևող»:

³ Երկում այս բառը 6 անգամ օգտագործվում է հասարակ գոյականի արժեքով և բազմիցս հատուկ անվան (Սարակինոսը):

⁴ Տե՛ս Է.Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, «1. գ.,ած. (հնգ.)՝ «ական փորող» նշանակությամբ, 2 փխբ. «գերեզման կողոպտող»:

⁵ ԳԲ-ում չկա, ՄՅԲ-ում՝ ած. «դիմացկուն, տոկուն»:

ների քանակը, այնքան ավելի քիչ են նրա կոնկրետ իրացումները¹: Լեզվի ոճական առանձնահատկությունների տեսանկյունից առավել հետաքրքրական կազմություններ են երկարմատ, սակավ դեպքերում եռարմատ հիմքերով բարդությունները, որոնցից շատերն արդեն իսկ իրենց բաղադրիչների կցմամբ պատկերավոր են և անկախ համատեքստից՝ ոճական արժեք են ձեռք բերում, ինչպես՝ *Նրբամիտ, ճարտարամիտ, արձակածառալ, մեծահամբաւ, սանձարձակ, քաղցրաջուր, հայրապետանիստ*: Նկատելի է, որ վերը նշված բառերը կամ ձևավորվել են բառակապակցություններից, որոնցում բայը զեղչված է, կամ միայն բայահիմքն է առկա: Մեծ թիվ են կազմում բարդ վերջածանցավոր ածականները (միայն *մեծահամբաւ*-ն է վկայված ՄՅԲ-ում), որոնց բաղադրիչները կապակցվում են հետևյալ կաղապարներով (8 բառ):

ա) *չարավատթար, վրանաքնակ, մեծահարուստ*՝ պարզ հիմք + հոդակապ + պարզ հիմք + ածանց:

բ) *Ակնածելի*՝ պարզ հիմք+քերականական փոփոխված հիմք + ածանց + ածանց:

գ) *Դժուարաքնակելի*՝ պարզ հիմք+ հոդակապ + հնչյունափոխված հիմք + ած. + ած. + ած.:

դ) *Նաւարկելի*՝ պարզ հիմք + բաղադրյալ հիմք:

ե) *Բարձրբերդցի*՝ պարզ հիմք + պարզ հիմք + ած.:

զ) *Վայելչադիր*՝բաղադրյալ հիմք+հոդակապ+քեր.փոփոխ.հիմք:

է) *Սպառազինելի*՝պարզ հիմք + հոդակապ + հնչյունափոխված հիմք + ած. + ած.:

Այսպիսով, բարդ ածանցավոր ածականները կազմվել են բնիկ և փոխառյալ արմատների հիման վրա, ձևավորվել հետևյալ վերջածանցներով՝ *-ակ, -ելի, -թար, -ուչ, -ուստ*, որոնք գրեթե հավասար կենսունակությամբ են հանդես գալիս: Առկա է խառն ածանցում. մի դեպքում առաջին արմատական բաղադրիչն է ածանց ստանում (*վայելչադիր*), մի այլ դեպքում՝ երկրորդը (*մեծահարուստ*):

¹ Լ. Գովսեփյան, նշվ. աշխ., էջ 359:

Նորակազմ ածականների մի խումբ վերջածանցավոր է: Սրանք ավելի շատ են՝ *մերձագոյն, արհեստաւոր, խիթալի, տորկուացի, ջերմագին, սիդոնացի, վճարելի, կումայեցի*: Որպես վերջածանց հանդես են գալիս *-ակի, -ական* ածականակերտ ածանցները՝ այլ ածանցների զուգադրությամբ, օր.՝ *վնաս+ող+ական, յոն+ի+ական, աջ +ող + ակի, վճար + էլ + ի*:

Ածանցավոր բառերը կազմվում են հետևյալ կաղապարներով՝

1. պարզ հիմք + վերջածանց՝ *սիդոնացի, տորկուացի, ջերմագին, արհեստաւոր, թոշակաւոր, խիթալի, մերձագոյն*.
2. անորոշ դերբայ + վերջածանց՝ *վճարելի*.
3. ենթակայական դերբայ + վերջածանց՝ *վնասողական*:

Վերջածանցավոր կազմությունների մեջ ուրույն տեղ են գրավում քերականական ձևավորում ունեցող բայերը: Անորոշ դերբայի վերջավորությունը (համապատասխան լծորդ ձայնավորով) հավասարապես ունի թե՛ քերականական, թե՛ բառակազմական մասնիկի դեր, օր.՝ *պարոնացնել*: Որոշ բայեր խոնարհված են, իսկ մյուսները՝ գործածված դերբայաձևով:

Ներգործական սեռի բայերը երկուսն են (*ուլնող, տեսող*), պատկանում են *ի* և *ե* լծորդության, իրենց կազմում ունեն բաղադրության քերականական ածանց:

Չեզոք սեռի են հետևյալ նորակազմությունները՝ *վտարանջեալ, վտարանջող, սարակինոսանամ, սուլդանանամ, խանկրեմ*: Բացի *ա* լծորդության (*սարակինոսանամ, սուլդանանամ*) բայերից՝ մյուսները կազմությամբ պարզ են: Բայերի մեջ են ներառված նաև նախածանցավոր սերող հիմքերով *նախանշանակեալ* և *նախասացեալ* դերբայական ձևերը, որ գալիս են, ինչպես նշվել է, դեռևս հունարբան դպրոցի գործածության շրջանից: Սրանց բայահիմքերը թեև ածանցավոր են, այնուամենայնիվ, նրանցից ոչ մեկի կազմում որևէ բայածանց չկա, երկուսն էլ պարզ են:

Երկում կան բայածանցով ու գոյականական սերող հիմքով բայեր՝ *պարոնացնել, սարակինոսանամ, սուլդանանամ*:

Նշված բայերում առկա են բառակազմական հետևյալ կաղապարները.

1. ածանցավոր հիմք+բայական վերջավորություն՝ *վտարանջող, վտարանջեալ* (Եւ սարակինոս ոմն Փարուսա անուն... *վտարանջեալ* յԱպաղայէ, հնարեր կորուսանել և փախուցանել զամենայն թաթարս: - 53).

2. նախածանց+ հիմք (բայ) + ածանց (հիմքակազմիչ) + բայական վերջավորություն՝ *նախասացեալ* (Թագաւորութիւն Խորազմեայց ...տարածի... ի հարաւոյ ընդ *նախասացեալ* թագաւորութեան թուրքաստանի -8).

3. նախածանց+հոդակապ+ածանցավոր հիմք+բայական վերջավորություն՝ *նախանշանակեալ* (Աշխարհն հնդկաց է իբրու կըղզի... և շուրջ պատեալ է՝ ի *նախանշանակեալ* անապատէ և յՈվկիանոս ծովէ - 11).

4. հիմք + ածանց (հիմքակազմիչ) + բայական վերջավորություն՝ *պարոնացնել, սարակինոսանամ, սուլդանանամ, խլվիմ*.

5. պարզ հիմք + բայական վերջավորություն՝ *խանկրեմ «վրնասսվել, խեղվել»:*

Նորակազմ մակբայները չորսն են: Դրանք բաղադրյալ կազմություն ունեն, ձևավորվել են հիմնականում *-բար, -պէս, -օրէն* վերջածանցներով: Այս բառերի կազմում հանդիպում են նաև ոչ մակբայակերտ ածանցներ և նախդիրներ: Նշված բոլոր մակբայներն էլ հիմնականում ձևի գաղափար են արտահայտում:

Նորակազմ մակբայները կազմված են հետևյալ եղանակներով.

1. բաղադրյալ հիմք + ածանց՝ *ճարտարարուեստաբար*
2. պարզ հիմք + ածանց՝ *ռամկօրէն, տիրապէս*
3. հիմք + հիմք՝ *յօշյօշ*

Ներկայացնում ենք օրինակներ, որոնց բառամիավորների բաղադրիչներն արտահայտում են շարահյուսական տարաբնույթ հարաբերություններ:

1. որոշիչ-որոշյալ՝ ա) ածական+գոյական՝ *քաղցրաչուր, արծակածաւալ, մեծահամբաւ*. բ) ածական+ածական՝ *մեծահարուստ, չարավատթար*.

2. հատկացուցիչ-հատկացյալ՝ ա) գոյական+գոյական՝ *արքակաղ-նի, հայրգիր, հայրապետանիստ, ավարհարություն, ականահատություն*։

3. ինդիր-բայահիմք՝ ա) գոյական+բայահիմք՝ *սանճարձակ, նաւարկելի*։

4. պարագա-բայահիմք՝ ա) ածական+բայահիմք՝ *վայելչադիր, դժուարաքնակելի, դիրիմաց, նրբամիտ, ճարտարամիտ*։ բ) գոյական+բայահիմք՝ *սպառազինելի, վրանաքնակ*։ գ) գոյական+ գոյական՝ *դիմակացություն, դիմակալություն*։

«Պատմություն թաթարաց» երկում մեր առանձնացրած բառամիավորները կարող են արժեքավոր լինեն հայ բառարանագրության համար։

Օգտագործված գրականություն

1. Աղայան Է., Ընդհանուր և հայկական բառագիտություն, Ե., 1984։
2. Առձեռն բառարան հայկազնեան լեզուի, Վենետիկ, 1846։
3. Խաչատրյան Լ., Գրաբարի բացատրական բառարան, Ե., 2003։
4. Հայկական համաբարբառ 17, Հեթում պատմիչ, Պատմություն թաթարաց, Ե., 1981։
5. Երեմիա Մեղրեցի, Բառգիրք հայոց, Ե., 1975։
6. Հայկական սովետական հանրագիտարան, հ.6, Ե., 1980։
7. Հովսեփյան Լ., Գրաբարի բառակազմությունը, Ե., 1987։
8. Հովհաննիսյան Լ., Գրաբարի բառարան, Ե., 2010։
9. Մարգարյան Ա., Հայերենի հարադիր բայերը, Ե., 1966։
10. Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ.1-2 Վենետիկ, 1836-1837։
11. Ջահուկյան Գ., Գրաբարի քերականության պատմություն, Ե., 1974։
12. Ջահուկյան Գ., Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Ե., 1969։
13. Ջահուկյան Գ., Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, Ե., 1989։

14. Զահուկյան Գ. Յին հայերենի վերջածանցների ծագումը, Պատմա-բանասիրական հանդես, 1-2, 1994:
15. Ղազարյան Ռ., Դարձվածաբանական բառարան, Ե., 2012:
16. Ղազարեան Ռ., Գրաբարի բառարան, Ե., 2000:
17. Ղազարյան Ռ., Ավետիսյան Յ., Միջին հայերենի բառարան, Ե., 2009:

Хачатрян Офелия, Мурадян Анаит- Неологизмы в труде историко-графа Хетума “История татар”.- В статье выявлено около 70 новых слов, отсутствующих в словарях габара и среднеармянского языка. Проведен их словообразовательный и морфологический анализ, определены синтаксические отношения между компонентами этих слов.

Khachatryan Ofelya, Muradyan Anahit - The Innovations in “The History of Tatars” by Historian Hetoum.- In the present article there have been revealed about 70 new words not found in Old Armenian and Middle Armenian dictionaries. There has been carried out a derivational and morfological analysis of these words as well as define the syntactic relations between their components.

Բայազետի և Դիադինի բարբառների փոխհարաբերությունները

Յայոց լեզվի պատմության զանազան հարցեր պարզաբանելու, բարբառային միավորներն ու հատկանիշները ըստ հնարավորին ամբողջականորեն ուսումնասիրելու առումով կարևոր է բարբառային հայերենի տարբեր դրսևորումների համեմատական քննությունը: Կարծում ենք՝ նման քննության առարկա նախ և առաջ կարող են դառնալ պատմաաշխարհագրական առումով մերձավոր բարբառները, որոնց ընդհանրությունների ու տարբերությունների դիտարկումը ոչ միայն որոշել դրանց լեզվական մերձավորության աստիճանը, այլ նաև առանձին դեպքերում թույլ կտա պարզաբանել այս կամ այն հատկանիշի ծագման, դրսեվորման և տարածման յուրահատկություններին առնչվող հարցեր:

Ըստ այսմ՝ համեմատական քննության ենք ենթարկում Բայազետի և Դիադինի բարբառները:

Յայ բարբառագիտության մեջ թե՛ Դիադինի և թե՛ Բայազետի բարբառները նախապես դիտարկվել են իբրև ենթաբարբառներ: Յ. Աճառյանը իր «Յայ բարբառագիտություն» աշխատության մեջ գտնում է, որ Դիադինի խոսվածքը Վանի բարբառի ենթաբարբառ է¹, իսկ Բայազետի խոսվածքը՝ Արարատյան բարբառի²: Սակայն բարբառների հետագա ուսումնասիրության, ինչպես նաև դասակարգման սկզբունքների ճշգրտման արդյունքում երկու խոսվածքներն էլ հայ բարբառագիտության մեջ ի վերջո ճանաչվեցին իբրև առանձին, ինքնուրույն բարբառներ: Նախ Ա. Ղարիբյանն իր «Յայ բարբառագիտություն» աշխատության մեջ առանձնացրեց Դիադինի բարբառը՝ նշելով, որ «հենց իր՝ Յ. Աճառյանի տված

¹ Յ. Աճառյան, Յայ բարբառագիտություն, Մոսկվա, 1911, էջ 145 - 146:

² Նշվ. աշխ., էջ 44 - 45, 48:

փաստերից երևում է, որ այդ խոսվածքն իսկական բարբառ է և ո՛չ ենթաբարբառ»¹: Իր տեսակետը հիմնավորելու համար լեզվաբանը բերում է 11 հատկանիշ, որոնցով բարբառային այս միավորը տարբերվում է Վանի բարբառից, ապա և հիշատակում է չորս հատկանիշ, որոնցով Դիադինի բարբառը նմանվում է Վանի, Ուրմիայի, Մարաղայի բարբառներին²: Ա.Ղարիբյանը եզրակացնում է. «ենթաբարբառ համարված այս խոսվածքն սկզբունքային հատկությունների մի ամբողջ կոմպլեքսով տարբերվում է և՛ Վանի բարբառից, և՛ մյուս բարբառներից այն չափով, որ երևան է բերում շատ ավելի մեծ ինքնուրույնություն, քան շատ բարբառներ, որոնց բարբառ լինելու մասին կասկած չկա: Պարզ է, որ պետք է այդ ենթաբարբառ կոչվածը համարենք միանգամայն **անկախ բարբառ**, անվանելով այն **Դիադինի բարբառ**»³: Համամիտ լինելով այս տեսակետին և իր կողմից կատարված բազմա-հատկանիշ դասակարգման տվյալներից ելնելով՝ Գ.Ջահուկյանը Դիադինի բարբառը Վանի բարբառի հետ միասին ընդգրկում է հայ բարբառների արևմտյան խմբակցության Վանի կամ հարավային միջբարբառախմբում⁴:

Ինչ վերաբերում է Բայազետի բարբառին, ապա այն իբրև ենթաբարբառ դիտարկվեց մինչև Գ.Ջահուկյանի բազմահատկանիշ դասակարգումը, և միայն այդ դասակարգման արդյունքում էր, որ հեղինակը այն ճանաչեց իբրև ինքնուրույն, առանձին բարբառ և Երևանի կամ Արարատյան, Ջուղայի, Աստրախանի ու Արդվին - Թբիլիսիի բարբառների հետ ընդգրկեց հայ բարբառների արեւելյան խմբակցության Արարատյան կամ հյուսիսարևելյան բարբառախմբում⁵:

Անկախ այն հանգամանքից, որ Դիադինի և Բայազետի բարբառները ընդգրկված են հայ բարբառների տարբեր խմբակցությունների բարբառախմբերում, այս բարբառների փոխհարաբե-

¹ Ա.Ղարիբյան, Հայ բարբառագիտություն, Ե., 1953, էջ 91:

² Նշվ. աշխ., էջ 91 - 92:

³ Նշվ. աշխ., էջ 92:

⁴ Գ.Ջահուկյան, Հայ բարբառագիտության ներածություն, Ե., 1972, էջ 134 - 135:

⁵ Նշվ. աշխ., էջ 135:

րությունները որոշակի հետաքրքրություն են ներկայացնում, եթե նկատի ունենանք, որ իրենց բնօրրանում դրանք հարևան բարբառներ էին. ինչպես հայտնի է, Դիադինը գավառակ էր Արևմուտյան Հայաստանի Երզրումի նահանգի Բայազետի գավառի կազմում, գավառակի կենտրոն Դիադին քաղաքը գտնվում էր Բայազետ քաղաքից 38 կմ արևմուտք՝ Երզրում - Բայազետ ճանապարհի վրա¹: Եթե տարբեր բարբառախմբերում ընդգրկված լինելը ենթադրում է Դիադինի և Բայազետի բարբառների միջև եական տարբերությունների առկայություն, ապա դրանց նախնական հարևանությունն էլ բնականաբար հիմք է որոշակի նմանությունների և ընդհանրությունների: Այնպես որ՝ երկու բարբառների փոխհարաբերությունները հետաքրքրական են ինչպես տարբերությունների, այնպես էլ ընդհանրությունների առումով: Հասկանալի է, որ ընդհանրությունների առումով հետաքրքրության ոլորտում են դրական հատկանիշները, իսկ տարբերությունների առումով հետաքրքրական են ինչպես հատկանիշների տարբերությունները, այնպես էլ դրանց դրսևորման տարբերությունները:

Նպատակահարմար ենք գտել երկու բարբառների ընդհանրություններն ու տարբերությունները դիտարկել՝ նախ հիմք ունենալով Գ.Ջահուկյանի բազմահատկանիշ դասակարգման տվյալները²: Ըստ այդմ՝ Բայազետի և Դիադինի բարբառները միմյանց հետ հարաբերվում են 55 հատկանիշների շրջանակում. ընդհանրություն ունեն 24 հատկանիշներով, տարբերություն են դրսևորում 31 հատկանիշների առումով, բայց քանի որ որոշ դեպքերում տարբերությունները մասամբ են դրսևորվում (սման դեպքերում միմյանց զուգադրվում են + - +-, - - +-, + - +¹ և նման այլ նշանակումներ), ուստի դրանց ցուցիչը դառնում է 25:

Հաշվի առնելով Դիադինի և Բայազետի բարբառների վերա-

¹ Թ.Հակոբյան, Ստ.Մելիք-Բախչյան, Հ.Բարսեղյան, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 2, Ե., 1988, էջ 96 - 97:

² Գ.Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 45 - 119:

բերյալ եղած դիտարկումներն ու ուսումնասիրությունները¹, նկատի ունենալով Բայազետի բարբառի յուրահատկությունների մեր դիտարկումները՝ երկու բարբառների փոխհարաբերությունները ըստ 100 հատկանիշների ներկայացնելիս անհրաժեշտության դեպքում կատարում ենք ճշգրտումներ, որի արդյունքում թե՛ ընդհանրությունների և թե՛ տարբերությունների ցուցիչները որոշ փոփոխության են ենթարկվում:

Նախ ներկայացնենք այն հատկանիշները, որոնք դիտարկվող բարբառներում բացակայում են, բայց վերագրված են կամ Բայազետի, կամ Դիադինի բարբառին:

1(7)². **Ոչ բառասկզբի շնչեղ խուլերի ապաշնչեղության առկայություն:** Յատկանիշը վերագրված է Բայազետի բարբառին, մինչդեռ այստեղ շնչեղ խուլերի ապաշնչեղացում հանդիպում է միայն շփականների հարևանությամբ և արդյունք է փոխազդեցական հնչյունափոխության, ինչպես՝ խօսկ, մէշկ, մ^րէիկ, թուխտ, քախկըցի, ուշկ և այլն:

2(28). **յու - ի դիմաց ոչ շրթնային ձայնավոր (ույ ~ ի, է, ա):** Յատկանիշը մասամբ վերագրված է Դիադինի բարբառին, սակայն այստեղ *յու*-ի դիմաց ունենք *ու* /ալուր, սուն, ճհուն/, իսկ ^հէ-ն հանդես է գալիս դ-ից առաջ *լյ^հէղ*, *գ^հէղ*/, ինչպես և Բայազետի բարբառում:

3(39). **Ը - ի լիաձայնություն (ը ~ ի, ու):** Յատկանիշը մասամբ վերագրված է Դիադինի բարբառին, սակայն մեր դիտարկումները և հարցումները անհրաժեշտ որևէ օրինակ ի հայտ չեն բերել:

4(48). **Միջին շարքի («խառն») ը, ըի, աը ձայնավորների վերջավանկային շեշտակրություն ոչ բնաձայն բառերում:** Յատկանիշը հանիրավի է վերագրված Բայազետի բարբառին, և այստեղ անկատար դերբայն ունի ոչ թե *ըմ*, այլ *ում* վերջավորություն,

¹ Ա.Ղարիբյան, նշվ. աշխ., էջ 91 - 93, 227. Ա.Գրիգորյան, Յայ բարբառագիտության դասընթաց, Ե., 1957, էջ 224 - 225. Ռ.Բաղդամյան, Յայերեն բարբառներ, Ե., 1972, Վ.Խաչատրյան, Վարդենիսի բարբառը, Ե., 2004:

² Փակագծերում բերվում է հատկանիշի հերթական համարը Գ.Ջահուկյանի ընտրած 100 հատկանիշների շարքում:

ուստի բացառվում են այնպիսի ձևեր, ինչպիսին են՝ *գըրըմ, գը-
նըմ, մըտնըմ*:

5(50). **Ը - ից տարբեր խառն («միջին շարքի») ձայնավորների (աը, ըե, ըի) առկայություն:** Դիադինի բարբառին վերագրված այս հատկանիշը որևէ դրսևորում չունի նաև մերձավոր բարբառներում:

6(51). **վի և նրանով բաղադրված հոգևակերտներ (վի, վևի, վևեր, վան, վանք, վղիք):** Հատկանիշը վերագրված է Բայազետի բարբառին՝ թերևս նկատի ունենալով այնպիսի հոգևակիներ, ինչպիսին են՝ *իշվանք, տիրվանք, գհլվանք*: Սակայն դրանցում *վ*-ն կապ չունի *վի* մասնիկի հետ, այլ եզակի սեռականի *ու* հոլովիչն է (իշու, տիրու, գհլու), և հոգևակին կազմված է եզակի սեռականից:

7(64)*. **ում - ով ներգոյական:** Հատկանիշը վերագրված է Բայազետի բարբառին, սակայն բարբառն, ի տարբերություն Ում ճյուղի այլ բարբառների, ներգոյական հոլով չունի, իսկ այդ հոլովի իմաստն արտահայտվում է կա՛մ հայցականով, կա՛մ *մեջ* կապով:

8(83). **ներկայի կազմությանը չմասնակցող լիս - ով (լուս - ով) մակդերբայ:** Չնայած հատկանիշը վերագրված է Բայազետի բարբառին, սակայն բարբառումս այդ դերբայի իմաստը արտահայտվում է *գհախ* կապով, ինչպես՝ *ուտ^hելու գհախ* (ուտելիս):

9(84). **ման - ով դերբայ:** Հատկանիշը Դիադինի բարբառին հատուկ չէ, չնայած վերագրված է:

10(90). **նորոշով և -լոց, -լյաց, -լի, -լիք տիպի դերբայներով բաղադրյալ ապառնի՝ ի տարբերություն -լու եմ տիպի գրական ապառնու:** Դիադինի բարբառին վերագրված այս հատկանիշը այդ բարբառում որևէ արտահայտություն չունի:

Այսպիսով, ունենք 10 հատկանիշ, որոնց լրիվ կամ մասնակի վերագրումը բարբառներից որևէ մեկին՝ չի համապատասխանում իրականությանը:

Մյուս կողմից՝ Գ.Ջահուկյանի աղյուսակներում չեն արձանագրվել բարբառներում դրսևորվող մի շարք հատկանիշներ, և

որոշ ճշգրտման կարիք ունեն ինչպես ընդհանրությունները, այնպես էլ տարբերությունները:

Ըստ այդմ՝ բաղաձայնական համակարգում երկու բարբառների համար ընդհանուր են հետևյալ հատկանիշները.

1(2)*. **Բառասկզբի ձայնեղ պայթականների և հպաշփականների շնչեղ ձայնեղություն¹**: Յատկանիշը նկատված է միայն Բայազետի բարբառում, բայց հատուկ է նաև Դիադինի բարբառին:

2(4). **Ը - ից հետո և միջձայնավորային ու բառավերջի ձայնավորային դիրքերում գտնվող ձայնեղ պայթականների և հպաշփականների շնչեղ - խլություն (բ, գ, դ, ձ, ջ ~ փ, թ, ք, ց, չ)**:

3(9)*. **Նգն, նկն հնչունակապակցությունների դիմաց յն**: Այս հատկանիշը Բայազետի բարբառում դրսևորվում է միայն *կանգնել* բառում՝ կանյել, և չնայած Գ.Ջահուկյանը հատկանիշը մասամբ է վերագրել Բայազետի բարբառին, թվում է՝ մեկ օրինակը շատ քիչ է հատկանիշի թեկուզև մասնակի արձանագրման համար: Բայց քանի որ Դիադինի բարբառում ևս ուսումնասիրողները այլ օրինակներ չեն բերում (չնայած հատկանիշը վերագրվել է + նշումով), ուստի այս հատկանիշը երկու բարբառների համար համարում ենք ընդհանուր՝ -+ նշումով:

4(14)*. **Յ - ի դիմաց որևէ դիրքում յ, յի, յ - ի առկայություն**: Յատկանիշը Բայազետի բարբառում չի նկատվել, չնայած առկա է (դահլիճ - դ՛ ալլիճ, ջահել - ջանյել, թագուհի - թաքույի): Նկատված է այս հատկանիշի յուրահատուկ դրսևորում (+²) Դիադինի բարբառում՝ հ ~ յ: Սակայն մեր դիտարկումները ցույց են տվել, որ այստեղ ևս հ - ի դիմաց առկա է յ:

5(15). **Բառասկզբում (ձայնավորից առաջ) գրական լեզուների համեմատությամբ հավելական շնչի առկայություն** (սառեչ, շիրկուն, շուրիշ):

6(16). **Բառասկզբի հ - ի դիմաց ոչ առնմանական խ** (խաց, խիվանդ):

¹ Աստղանիշով նշվում են ճշգրտվող հատկանիշները:

7(20). **Հայերենի համար ոչ սովորական կոկորդային բաղաձայնի (հ) առկայություն:** Երկու բարբառներում էլ այս հնչյունը հիմնականում հանդիպում է փոխառյալ բառերի սկզբում (հփյմ, հփյմյթ): Բայազետի բարբառում նոր սերնդի խոսքում այն վերածվել է *չ* հպականի:

8(21). **Ֆ - ի առկայություն:** Ձայնավորական համակարգում երկու բարբառների համար ընդհանուր են դիտվել հետևյալ հատկանիշները:

9(26). **Շեշտակիր այ-ի դիմաց առաջին շարքի ձայնավոր (եծ,լէն):**

10(29). **Երկբարբառների առկայություն:**

11(30). **Շեշտակիր ե - ի բարձրացող - երկբարբառային արտասանություն (խ^hէլք):**

12(31). **Շեշտակիր ո - ի բարձրացող - երկբարբառային արտասանություն (փⁿօղ):**

13(32). **Միավանկ բառերի սկզբնային ե - ից առաջ յ - ի հավելում (յեզ, յերք):**

14(33)*. **Միավանկ բառերի սկզբնային ո - ից առաջ շրթնային տարրի հավելում:** Այս հատկանիշը Բայազետի բարբառին վերագրվել է մասամբ, մինչդեռ դրսևորվում է բոլոր դեպքերում, այսինքն՝ առկա է ամբողջական ընդհանրություն (վⁿօտ, վⁿօխ, վⁿօր):

15(34). **Քմայնացած ձայնավորների առկայություն (փեսմ):**

Անվանական համակարգում Բայազետի և Դիադինի բարբառներն ունեն հետևյալ ընդհանրությունները:

16(53). **ան (ան - ք) հոգևակերտ՝ առանց «ազգականներ, կողմնակիցներ» լրացական իմաստի (ճ՛իյանք, իծվանք):**

17(58)*. **Է(ն) - ով բացառական:** Հատկանիշը վերագրված է Դիադինի բարբառին, սակայն և՛ այս, և՛ Բայազետի բարբառներում այն մասնակի դրսևորում ունի, ուստի երկուսին էլ այս հատկանիշը մասամբ պետք է վերագրել (տընէ, մⁿէզնէ):

18(59). **ց - ով բացառական (իծուց, տընից):**

19(65). **Դերանունների թեք հոլովածներում /h-ի առկայություն** (ընծի, ք^hեզի, մ^hեզի):

20(66). **իկ - ով դերանվանական ձևեր** (ընծիկ, Էսիկ):

21(67). **Ցուցական դերանունների թեք հոլովածներում (և հոգևակի ուղղականում) հավելական տ, դ** (ըստ^ոօր, ըստու, ընդ^ոօր):

22(74). **Անծի և իրի առումների տարբերակում** (Ճըժուն տըփի. գիորքը քերի):

Յամեմատվող բարբառների ընդհանրությունները բայական համակարգում հանգում են հետևյալին:

23(76)*. **Առաջին և երկրորդ (ել և իլ) լծորդությունների անածանց բայերի խոնարհման ձևերի տարբերակվածություն** (ոչ բաղադրյալ ձևերում՝ լծորդ ձայնավորով, կատարյալի վերջավորություններով): Բայագետի բարբառին մասամբ վերագրված այս հատկանիշը իրականում այս բարբառին հատուկ չէ: Փոխարենը բարբառում առկա են անցյալ կատարյալի ներգործած և կրավորած վերջավորություններ (կըդրեց - կըդրավ /կտրվեց/. գ'ըրի - նըստա): Այդպես է և Դիադինի բարբառում: Եվ քանի որ հարյուր հատկանիշների մեջ բայասեռին վերաբերող միակ հատկանիշը որոշակի ամենություն ունի Բայագետի և Դիադինի բարբառների այս հատկության հետ, պայմանականորեն ընդունում ենք, որ հատկանիշը երկու բարբառներում էլ դրսևորվում է:

24(85). **ր - ով վաղակատար** (յ^hերք^hեր, գագեր):

25(86). **ուկ - ով հարակատար դերբայ** (յ^hերքուկ, գագուկ):

26(87). **Առաջին (ել) լծորդության անածանց բայերի ըզձականի եզ. 3 - րդ դեմքի է - ից տարբեր վերջավորություն /ա/ ՝ գրա:**

27(88). **Օժանդակ բայի եզակի 3 - րդ դեմքի ա - ով ձև:**

28(89). **Օժանդակ բայի անցյալ անկատարի երկձայնավոր ձևերի մեջ ձայնավորներից մեկի սղում** (ի, իր, ինք, իք, ին):

29(95)*. **Առաջին (ել) լծորդության անածանց բայերի ոչ ցուցական կատարյալ:** Այս հատկանիշը մասամբ վերագրված է Դիադինի բարբառին, իսկ Բայագետի բարբառում չի նկատված: Իրա-

կանում այս հատկանիշը երկու բարբառներում էլ նույնական դրսևորում ունի, այսինքն՝ սովորական են ոչ ցոյական ձևերը, թեև գործածական են նաև ցոյական ձևեր (գճրի, յ^hերքի, նան՝ գճրեցի, յ^hերքեցի):

30(99). **Ճխտական դերբայի հատուկ ձևերի առկայություն** (գճրի, էթա, նըստե):

Այսպիսով, Բայագետի և Դիադինի բարբառները Գ.Ջահուկյանի բերած 100 հատկանիշների շրջանակներում ունեն 30 ընդհանուր հատկանիշներ:

Բարբառները 100 հատկանիշների շրջանակներում հանդես են բերում հետևյալ տարբերությունները:

ա) Հնչյունական տարբերություններ:

1(6)*. **Ը - ից հետո և միջձայնավորային ու բառավերջի հետձայնավորային դիրքերում գտնվող խուկ պայթականների և կիսաշփականների ձայնեղություն**: Այս հատկանիշը մասամբ հատուկ է Բայագետի բարբառին, ինչպես, օրինակ, փեդ, պնդայել, անբարանք: /0,5/

2(8)* **Քմայնացած հետնալեզվայինների առկայություն ոչ փոխառյալ բառերում (գ, կ, ը)**: Հատկանիշը Բայագետի բարբառին վերագրվել է ամբողջովին (+), իսկ Դիադինի բարբառին՝ մասամբ (+-): Իրականում այս հատկանիշը Բայագետի բարբառին ընդհանրապես հատուկ չէ, իսկ Դիադինի բարբառին հատուկ է ամբողջովին և ոչ թե մասամբ¹: /1/

3(11)*. **Տ - ի առնմանական փոփոխություն և, ր, ռ ձայնորդերից առաջ**: Երկու բարբառներում էլ այս հատկանիշը նկատված չէ, սակայն Բայագետի բարբառի Հացառատի խոսվածքում *տն/ղն* խմբի դիմաց *նն* - ի առկայությունը հստակ արտահայտված է, ինչպես՝ մատներ-մաններ, մատնիք-մանիք, ոտներ-վո՞տներ: Այսինքն՝ պետք է արձանագրել Բայագետի բարբառում այս հատ-

¹Ռ.Բաղդամյան, նշվ. աշխ., էջ 122 - 123. Վ.Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 36, 42:

կանիշի մասնակի արտահայտություն: /0,5/

4(11/+2)*. **Տր խմբի դիմաց յո:** Դարձյալ չնկատված հատկանիշ է, որ, սակայն, Բայազետի բարբառում ունի մասնակի արտահայտություն, ինչպես՝ կտրել - կըյր^hէլ, կտորել - կօյր^hէլ: /0,5/

5(13). **Կիսաշփականների շփականություն նախաբաղաձայնական դիրքում (ջ, ճ, չ, ձ, ծ, ծ, ց ~ ժ, շ, զ, ս):** Բայազետի բարբառում այս հատկանիշը դրսևորվում է լիովին, իսկ Դիադիսի բարբառում՝ մասամբ՝ միայն շ, ճ, չ բաղաձայնների դեպքում, այն էլ՝ ոչ միշտ (աչք - հանշկ, իջնել - իճն^hէլ, ճանաչել - ճաշնալ, մեջք - մեշկ, ոջլոտ - օշլ^hօտ): /0,5/

6(35). **Ա - ի դիմաց քմայնացած ձայնավոր:** Դիադիսի բարբառում այս հատկանիշը դրսևորվում է կանոնավորապես, Աճառյանի օրենքին համապատասխան (ք^hանզուկ, դ^hանռ, ժ^hանխ, ջ^hանթել), մինչդեռ Բայազետի բարբառում քմայնացած ձայնավորը առկա է հիմնականում փոխառյալ բառերում և առանց որևէ հըստակ օրինաչափության: Այնպես որ, բարբառները այս առումով ունեն մասնակի ընդհանրություն: /0,5/

7(36). **Ո - ի դիմաց քմայնացած ձայնավոր:** Հատկանիշը նկատված է Դիադիսի բարբառում: /1/

8(46). **Ա - ի շրթնայնացածություն:** Հատկանիշը հատուկ է Բայազետի բարբառին (անթօռ, կանտու, նամակ): /1/

բ) Ձևաբանական տարբերություններ:

9(55). **ր, եր, ար, եր + ք, անք, այք տիպի բաղադրյալ հոգնակերտ:** Այս հատկանիշը հատուկ է երկու բարբառներին էլ, բայց Դիադիսի բարբառում ունի դրսևորման յուրահատկություն (+1)՝ նաև ք + եր հոգնակերտ (կ^hօղրանք կամ կ^hօղրանքն^hեր, տ^hեղրանք կամ տ^hեղրանքն^hեր, գ^hեղրանք կամ գ^hեղրանքն^hեր): Ուստի պետք է արձանագրել մասնակի ընդհանրություն: /0,5/

10(56). **(ն)եր - ով հոգնակիի ի հոլովում:** Հատկանիշը հատուկ է Բայազետի բարբառին (քարերի, շղնգ^hերների): /1/

11(75/+³/)*. **Ձայնավորահանգ բառերի կրկնակի հոդառություն:** Հատկանիշը վերագրված է թե՛ Բայազետի (կամուռը), թե՛ Դիադինի բարբառներին, բայց իրականում Դիադինի բարբառին հատուկ չէ: /1/

12(75/+²/). **Ուղղականի հետ որոշյալ հոդի սահմանափակ կիրառություն:** Հատկանիշը նկատված է Դիադինի բարբառում (Իշխըմ^hեր դիլխ^oր շընգ^{ան}): /1/

13(77/+¹/)*. **Չորրորդ (ուլ) լծորդության առկայություն միայն պատճառականում:** Հատկանիշը բնորոշ է Դիադինի բարբառին: Ճիշտ է, Գ.Ջահուկյանը հատկանիշը Բայազետի բարբառում չի նկատում, սակայն այստեղ էլ հանդիպում են այնպիսի ձևեր, ինչպիսին են՝ խասըրցում, նըստըրցում: Ուստի պետք է նկատի ունենալ, որ հատկանիշը մասամբ հատուկ է նաև Բայազետի բարբառին: /0,5/

14(78). **կու - ով (կը, կ, գը, գ) ներկա (և անցյալ անկատար):** Հատկանիշն ունի Դիադինի բարբառը (կը կառթամ, կը կառթի): /1/

15(79). **Ներկայի այլ մասնիկների առկայություն՝ նախաձայն կ - ով (շարունակականի կամ ծագումով շարունակականի). կո:** Նման հատկանիշ ունի Դիադինի բարբառը: Հատկանիշը մասամբ հատուկ է նաև Բայազետի բարբառին, որտեղ դրսևորվում է Սարուխանի և Լանջադըյուրի խոսվածքներում՝ 40 վերաբերակալի ձևով (կօ գ^հ ըրում ^hԷմ): /0,5/

16(81). **Շարունակական ներկա (և անցյալ անկատար):** Դիադինի բարբառին է բնորոշ այս հատկանիշը, ինչպես՝ կօ կը կառթամ, կօ կըգըր^hԷմ: /1/

17(82). **ում - ով ներկա (- անցյալ անկատար):** Հատկանիշը հատուկ է Բայազետի բարբառին (Էթում ^hԷմ, Էթում ի): /1/

18(98). **Ժխտական բաղադրյալ ձևերի կրկնադիմություն (չեմ Էթում ^hԷմ):** Հատկանիշը դիտարկված է երկու բարբառներում էլ, սակայն Դիադինի բարբառին հատուկ չէ: /1/

Այսպիսով, Բայազետի և Դիադիևի բարբառները տարբերություններ են հանդես բերում 18 հատկանիշների շրջանակում, բայց քանի որ մի շարք դեպքերում այդ տարբերությունները մասնակի են, դրանց ցուցիչը դառնում է 14:

Ինչպես վերևում տեսանք, Գ.Ջահուկյանի տվյալներով Բայազետի և Դիադիևի բարբառների տարբերությունների ցուցիչը 25 է, սակայն դիտարկումները ցույց են տալիս, որ բարբառները հիշյալ հարյուր հատկանիշների շրջանակում իրականում տարբերվում են 5,5 հնչյունական և 8,5 ձևաբանական հատկանիշներով, այսինքն՝ ընդամենը 14 բարբառային հատկանիշներով, որը պետք է նշանակեր, որ բարբառային այս երկու միավորները առանձին բարբառներ չեն, այլ միավորվում են մեկ բարբառի շրջանակներում: Բայց պետք է նկատի ունենալ, որ Գ.Ջահուկյանի ընտրած հարյուր հատկանիշներով հայերենի բարբառային հատկանիշները չեն սպառվում, կան այլ հատկանիշներ ևս, որոնք նույնքան կարևոր են այս կամ այն բարբառը բնութագրելու համար: Այլ կերպ ասած՝ եթե բարբառների դասակարգման խնդրին ծառայող հարյուր հատկանիշների ընտրության համար չափանիշ են եղել դրանց կարևորությունն ու տարածվածությունը հայերենի բարբառներում ընդհանրապես¹, ապա բարբառների համեմատական քննության դեպքում կարևոր է ցանկացած բարբառային հատկանիշ, որով համեմատվող բարբառային միավորներն ունեն ընդհանրություն կամ տարբերություն: Յետևում է, որ Բայազետի և Դիադիևի բարբառների փոխհարաբերությունը ճիշտ գնահատելու համար անհրաժեշտ է հաշվի առնել դրանցում դրսևորվող այլ հատկանիշներ նույնպես: Ըստ այդմ՝ Բայազետի և Դիադիևի բարբառները երևան են բերում նաև հետևյալ տարբերությունները.

1. Դիադիևի բարբառում բառավերջի *ք* - ն *ւ* հնչյունից առաջ երբեմն դառնում է *յ* (տղեքներ - տղղեյն^hեր, իրեքնոց - իր^hեյն^oց): /1/

¹ Գ.Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 36 - 38:

2. Դիադիկի բարբառում գործառում է *տիք* հոգևակերտը (քնուրվըտիք, խընամտիք), իսկ Բայազետի բարբառում այն հանդիպում է միայն Նորատուսի խոսվածքում: /0,5/

3. Եթե Բայազետի բարբառում *ռ* հոլովման ենթարկվում են *ի* ձայնավորով ավարտվող բառերը, անորոշ դերբայն ու *Աստված* բառը, ապա Դիադիկի բարբառում եզակի թվում այդ հոլովման ենթարկվում են նաև կենդանիների անուններ ու բազմաթիվ այլ բառեր (օցու, իծու, ճըժու, ջըրու և այլն): Այս առումով կարելի է արձանագրել մասնակի տարբերություն: /0,5/

4. Դիադիկի բարբառում *ռջ* հոլովումը գործուն է (աներոջ, տեքըրոջ, տալոջ), իսկ Բայազետի բարբառում այդ հոլովման ենթարկվում է միայն մեկ բառ՝ տեր - տիր^{ու}օջ: Այս հատկանիշով նույնպես առկա է բարբառների մասնակի տարբերություն: /0,5/

5. Դիադիկի բարբառում ներգոյական հոլովի իմաստն արտահայտվում է նաև սեռական հոլովով և *նէ* կապով, ինչպես՝ օթխի նէ (սենյակում): Սակայն սա մարող հատկանիշ է և քիչ է հանդիպում: /0,5/

6. Բայազետի բարբառում որոշիչ հոդը հանդես է գալիս *ը* և *ն* տարբերակներով (ի՛նուը, փեսեն), իսկ Դիադիկի բարբառում որոշիչ հոդը մեկն է՝ *ն* (ի՛նուն, փեսեն): /1/

7. Ի տարբերություն Բայազետի բարբառի՝ Դիադիկի բարբառը *եսի*, *ետի*, *ենի* ձևերին զուգահեռ ունի նաև *եսան*, *ետան*, *ենան* ձևեր: /1/

8. Դիադիկի բարբառում ցուցական դերանունները եզակի թեք հոլովներում ունեն *ր*, ինչպես՝ *ըստ^{ու}օր*, *ըստ^{ու}օրուց*, *ըստ^{ու}օրով*: Բայազետի բարբառի համապատասխան ձևերում *ր*-ն բացակայում է՝ *ըստու*, *ըստուց*, *ըստով*: /1/

9. Երկու բարբառներում էլ առկա է հարցահարաբերական *վոն* /ով/ դերանուն՝ *վի*, *վին*, *վինից*, *վինով* ձևերով, սակայն Բայազետի բարբառում այդ ձևերն ունեն տարածական սահմանափա-

կություն, և խոսվածքների մեծ մասում գործածական են *վ՛որը, վիր, վիրնից, վիրնօվ* ձևերը: /0,5/

10. Դիադինի բարբառում ստացական դերանվան սեռականի ձևերն են *խմնի, քոնի, մերնի, ձերնի*: Բայազետի բարբառում այդ դերանունները ենթարկվում են *ու* հոլովման՝ *խմու, ք՛նու, մ՛հէրու, ձ՛հէրու*: /1/

11. Բայազետի բարբառն ունի ձևի դերբայ (թփլելուն, դընդընալէն, բոբըռալէն), որը բացակայում է Դիադինի բարբառում: /1/

12. Ժխտական դերբայը *է* խոնարհման բայերի դեպքում Դիադինի բարբառում ունի *է* վերջավորություն (չ՛իւմ *ուտէ*), իսկ Բայազետի բարբառում՝ *ի* (չ՛իւմ *ուտի*): /1/

13. Դիադինի բարբառում պատճառականի ածանցն է *ուց* (սըստըցուցել), իսկ Բայազետի բարբառում՝ *ցն* (սըստըցընել): /1/

14. Դիադինի բարբառում տրամաբանական շեշտը կրող բառի և դիմավոր բայի միջև միշտ հանդես է գալիս օժանդակ բայի եզակի թվի երրորդ դեմքի ձև, ներկայի դեպքում՝ *ա*, անցյալի դեպքում՝ *էր* /Անայիտին ա կուգա. Ի՞նչ ա կասես. դ՛իւրպին եր կաշխատեր/: /1/

Փաստորեն, այս տասնչորս հատկանիշների շրջանակում Բայազետի և Դիադինի բարբառների տարբերությունների ցուցիչն է 11,5: Եթե հաշվի առնենք դիտարկված բոլոր տարբերությունները, ապա կարող ենք արձանագրել, որ համեմատվող բարբառները միմյանցից տարբերվում են 25,5(14+11,5) հատկանիշներով:

Այսպիսով, Բայազետի և Դիադինի բարբառների փոխհարաբերությունների դիտարկումը մեզ բերում է այն համոզման, որ այդ երկու միավորները մերձավոր են ոչ միայն պատմաաշխարհագրական առումով, այլ նաև իրենց լեզվական հատկանիշներով: Ըստ էության, իրենց տարբերությունների նվազ քանակով այս երկու բարբառները պետք է ներառված լինեին ոչ թե տարբեր խմբակցություններում, այլ միևնույն խմբակցության միևնույն բարբառախմբում (ըստ Գ.Ջահուկյանի՝ մեկ բարբառի մեջ պետք է միավորվեն մինչև 22, մեկ բարբառախմբի մեջ՝ մինչև 44 տար-

բերիչ հատկանիշ ունեցող վայրերը): Մնում է ենթադրել, որ Դիադինի և Բայազետի բարբառները Գ.Ջահուկյանի կողմից բարբառների տարբեր խմբակցություններում են գետնովել թերևս այն պատճառով, որ պատկանում են տարբեր ճյուղերի (համապատասխանաբար՝ Կը և Ում):

Катвалян Виктор - Взаимоотношения баязетского и диадинского диалектов.- Названные две диалектные единицы раньше рассматривались как поддиалекты. Однако исследователи в конечном итоге пришли к заключению, что в обоих случаях мы имеем дело с самостоятельными диалектами. Эти близкие в историко-географическом плане диалекты, согласно классификации Г. Джаукяна, включены в разные группы армянских диалектов. Диадинский диалект включен в южную междиалектную группу западной группы диалектов, а баязетский диалект – в северо-восточную диалектную группу восточной группы диалектов. Однако и данные, приведенные Г. Джаукяном, и представленные наблюдения показывают, что оба диалекта по количеству дифференциальных признаков / 25 или 25,5/ должны быть включены в одну группу одной и той же диалектной группы. Возможно, что аналогичный подход был невозможен из-за принадлежности данных диалектов к разным диалектным ветвям.

Katvalyan Victor – On the Interrelationships Between the Dialects of Bayazet and Diadin. – The mentioned two dialectal units were previously considered as sub-dialects, but the researchers eventually came to the conclusion that they both are separate dialects. According to Gevorg Jahukyan’s classification these two historically and geographically close dialects are included in different groupings of Armenian dialects; the dialect of Diadin belongs to the southern group of dialects in the Western grouping, and the dialect of Bayazet belongs to the north-eastern group of dialects in the Eastern grouping. However, both the data presented by Jahukyan and the observations made in this paper show that these two dialects due the number of their distinctive features /25 or 25.5/ should have been included in the same group of dialects within one and the same grouping. Perhaps such an approach was considered impossible, because the two above mentioned dialects belong to different branches.

Նոր դիտարկումներ Երեմիա Մեղրեցու «Բառզիրք հայոց»-ի մի քանի բառի վերաբերյալ

1. *Աղջաման* «ապարանջան, աղթաման» բառը Մեղրեցու «Բառզիրք հայոց»-ում չունի որևէ ձեռագրական տարբերություն, ոչ էլ բնագրի ծանոթագրություն: Բառի բացատրության մեջ կա *աղթաման* բառը, որն իր հերթին բառարանային միավոր է և բացատրվում է «ապարանջան», որն էլ ունի ձեռագրական մեկ տարբերակ՝ *ապրանջան*¹: Հետագայում Ամալյանն այս բառին այլևս չի անդրադառնում²:

Աճառյանի «Արմատական բառարանում» չենք գտնում *աղջաման* բառը, այսինքն՝ Մեղրեցու բառարանի այս տվյալը բաց է թողնված, սակայն դա չի խանգարում *աղջաման* բառի մեկնության համար, մանավանդ որ վերջինիս՝ *աղջ* բաղադրիչի ստուգաբանությունը տալիս է Աճառյանը՝ «պետք, կարիք, հարկավորություն, ներքին պահանջ» բացատրությամբ՝ այն դիտելով փոխառություն ասոր. *elā* «ճնշել, նեղել, ստիպել, հարկադրել, բռնադատել», իսկ ըստ Ջահուկյանի՝ ասոր. *ā ā* ձևից³:

Սակայն մեկնության կարոտ են մնում *աղթաման* և *ապարանջան* բառերը, որոնք հանդիպում են *աղջաման* բառի բացատրության մեջ: Աճառյանն ունի *աղթաման* «ապարանջան» ըստ Հին հայկազյան բառարանի, այլև Մեղրեցու: *Աղթաման* բառի համար Աճառյանը, ելնելով Ս. Ամատունու բառարանի տվյալից, նշում է, որ «կենդանի է» բարբառներում, թեև Կոփի բարբառի կրող տեղեկատու (ինֆորմանտ) Բենսեի ասելով դա էլ է մերժվում⁴:

¹ «Բառզիրք հայոց», քննական բնագիրը, առաջաբանը և ծանոթագրությունները Հ.Մ.Ամալյանի, Ե., 1975, էջ 12-13:

² Հ.Մ.Ամալյան. Հայ միջնադարյան բառարանագրությունը, Ե., 2007:

³ Հ.Աճառյան. Հայերեն արմատական բառարան, հ. 1, 1971, էջ 136-137: Գ.Ջահուկյան. Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան, Ե., 1987, էջ 455, 478, 481:

⁴ Հ.Աճառյան. նշվ. աշխ., էջ 127:

Աղթաման բառի վերաբերյալ կարող ենք միայն ենթադրել *g-թ* լծորդության հնարավորություն՝ *աղցաման-աղթաման* «գիշերանոթ, պետքի աման»: Իսկ *ապարանջան* բառի առկայությունն այս բառահոդվածում, այնուամենայնիվ, կարելի է առայժմ դիտել վրիպում կամ վիճելի:

2. *Դասուն* «խոսել» բառը քննական բնագրում չունի գրչագրական որևէ տարընթերցում, իսկ ծանոթագրության մեջ նշվում է հետևյալը. «Թվում է, թե այս և *դասան*-ի բառահոդվածը նույնը պիտի լինեն, և նրանցից մեկը կամ մյուսը աղավաղված, հետևաբար ավելորդ բառահոդված է: Հավանաբար նախնական և ճիշտ է երկորդը, որի գլխաբառը, գուցե, ծագում է եբր. *lāsōn* («լեզու», *die Sprache*) բառից՝ սկզբնատառի վրիպակով» [*Բառագիրք հայոց*] 1975, էջ 74, 359]: Հետագայում Հ.Ամալյանը հիշյալ ծանոթագրությունը խմբագրում է հետևյալ կերպ. «Թվում է, թե այս բառահոդվածը նույնը պիտի լինի «Դասան, կոխել»-ի հետ, և նրանցից մեկը, որպես մյուսի աղավաղում ու կրկնություն, ավելորդ է: Սակայն բառահոդվածները, ամենայն հավանականությամբ, կապ չունեն: *Դասուն* գուցե եբր. *lāsōn* («լեզու», *die Sprache*) բառն է՝ սկզբնատառի սխալ գրությամբ»¹: Բառի՝ եբրայերենից փոխառությունը լինելը ճիշտ է նկատված, սակայն շարունակության մեջ՝ «սկզբնատառի վրիպակ» կամ «սկզբնատառի սխալ գրություն» բացատրությունը կարոտ է ճշգրտման, որին էլ անդրադառնալու ենք ստորև:

Իսկ մինչ այդ նշենք հետևյալը:

Աճառյանը «Արմատական բառարանում» այս դեպքում գրում է, նախ՝ «*Դասան* «կոխել», ունի միայն Բառ. երեմ. էջ 73», այնուհետև՝ «*Դասուն* «խօսիլ». ունի միայն Բառ. երեմ. էջ 73»²: Ջահուկյանը բառին անդրադառնում է ավելի ուշ. «*Դասուն* «խոսել» (ԲՀ՝ «խօսիլ»): Աղավաղված բառ. տե՛ս *դասան*», այնուհետև՝ «*Դասան* «կոխել» (ԲՀ): Աղավաղված բառահոդված, որ ձեռագրերից մեկում տրված է բայական ձևով՝ *դասեմ* «կոխեմ», ԲՀ-ի հրատա-

¹ Հ.Մ.Ամալյան. նշվ. աշխ., էջ 195:

² Հ.Աճառեան. նշվ. աշխ., էջ 626, 629:

րակիչը (իմա՝ Յ.Ամալյանը - Վ.Յ.) (էջ 359) հնարավոր է համարում նույնացնել *դասու* «խօսիլ» բառահոդվածի հետ՝ սա բիւցնելով երբ. *lāsōn* «լեզու» բառից, որ անհավանական է»¹: Այն, ինչ մասամբ բացատրվել էր Ամալյանի կողմից՝ իբրև փոխառություն երբայերենից, Ջահուկյանը համարում է «անհավանական», որ տեղին չէ:

Կարելի է կարծել, որ հայ. *դասու* «խոսել» բառը, թերևս կապ չունի *դասան* «կոխել» բառի հետ (որն առանձին քննության հարց է): Սակայն ճիշտ է Ամալյանի այն կռահումը, որ բառը կարող է փոխառություն լինել երբ. *lāsōn* «լեզու» ձևից, մանավանդ եթե հաշվի ենք առնում *ղ/լ* տարբերակայնությունը, հնչյունական մի երևույթ, որ նկատում ենք ոչ միայն հին, այլև նոր լեզուներում [իմմտ. խեթ. *tabarna* «տեր. տիրակալ» // *Labarna-* «(տեր) Լաբար-նա(յի)», (հ)լատ. *lingua* // *lingua* «լեզու», անգլ. *tongue* // *language* «խոսք. լեզու» և այլն]²:

3. *Թեսաղ/թեսել* «ժողով, ժողովել» բառի դեպքում քննական բնագրում չկա գրչագրական տարբերություն, ոչ էլ ծանոթագրության մեջ է որևէ բան ասվում [*Բառգիրք հայոց*] 1975, էջ 74, 359]: Յ.Աճառյանը գրում է. «*Թեսաղ* «ժողով» – *թեսալ* «ժողովել». ունի միայն Բառ. երեմ. էջ 118»³: Ջահուկյանն անդրադառնում է հետևյալ կերպ. «*Թեսել* «ժողովել» (ԲՅ): Բաղադրություն՝ *թեսաղ* «ժողով» (ԲՅ): Ծագումն անհայտ է»⁴:

Կարելի է ենթադրել, որ *թեսաղ/թեսել* ձևերի բայարմատը կապ ունի հուն. *τάσσω* (ատտիկ. *τάττω*) «ղնել, կանգնեցնել. տեղավորել, դասավորել», «ընդգրկել, ներառել, մեկտեղել», «շարել, շարք կանգնեցնել» ձևերի *τάσσο-* (ատտիկ. *τάττ-*) արմատի հետ, ընդ սմին եթե ոչ ծագումնային զուգադիպում, ապա փոխառու-

¹ Գ.Ջահուկյան. Յայերեն ստուգաբանական բառարան, Ե., 2010, էջ 185, 186:

² Т. В. Гамкрелидзе, Вяч. Вс. Иванов. Индоевропейский язык и индоевропейцы: Реконструкция и историко-типологический анализ праязыка и протокультуры, 1-2, Тбилиси, 1984, էջ 268, 641:

³ Յ. Աճառեան. Յայերեն արմատական բառարան, հ. 2, Ե., 1973, էջ 173:

⁴ Գ.Ջահուկյան. նշվ. աշխ., էջ 264:

թյուն հունարենից¹: Առայժմ առկախ է մնում դրանց՝ եկեղեցական բառաշերտին բնորոշ լինելու հարցը:

4. *Հաս* «տիք» բառը Մեղրեցու բառարանում բացատրվում է նույն կերպ, ինչ *հաս* «տի» և *հասակ* «չափ, տի» բառերը: Ընդ որում այս երկուսից առաջինի իմաստի պարզաբանման համար բնագրի տողատակին, իբրև գրչագրական տարբերություն, նշվում է «տիք», իսկ ծանոթագրության մեջ ծանուցվում է հետևյալը. «№ 450 ձեռագրում՝ «հաստի. հասարակ, կամ չափ, կամ տիև», № 8606-ում՝ «հաս. տիք», № 528-ը մեկնում է չափ»: Յմմտ. հասակ», այնուհետև հղում է արվում Աճառյանի «Արմատական բառարանին», իսկ երկրորդի դեպքում ծանոթագրվում է՝ «Յմմտ. հաս»: Եվ *հաս* «տիք» բառի համար կա հետևյալ ծանոթագրությունը. ««Այսպես է բառահոդվածը № 8606 ձեռագրում: Յմմտ. հաս» [*Բառգիրք հայոց*] 1975, էջ 180-181]: Ըստ այսմ ստացվում է, որ բառգրքում նույնարժեք են *հաս* «տի», *հասակ* «չափ կամ տի» և *հաս* «տիք» բառերը: Աճառյանն այս բառերից առանձին անդրադառնում է միայն *հաս* «տիև» բառին՝ նշելով, որ «ունի միայն Բառ. երեմ. 177. - Թերևս պետք է կարդալ «տիք», որով և միացնել *հասակ* բառին»²: Իսկ *հասակ* «տարիք, տիք, մարմնի երկարությունը» բառը, ինչպես հայտնի է, առնչվում է *հաս* «ժամանում, հասնել» արմատին:

Ջահուկյանն այս, այլև *հասակ* բառին չի անդրադառնում լեզվի պատմությանը նվիրված աշխատության մեջ, իսկ ստուգաբանական բառարանում *հասակ* «հասնելը, հասունություն, հասակ» բառը դիտում է առանձին՝ իբրև բնիկ հնդեվրոպական, իսկ *հաս* «տիև» բառի համար նշում է հետևյալը. «*Հաս* «տիև» (ԲՀ): Ուղղելի է *տիք. հասակ* բառի արմատն է»³:

Հակված ենք կարծելու, որ հայ. *հաս*- (բառ)արմատը, ամենայն հավանականությամբ, ծագում է հե. *Has- «կրակարան, կրակի աղբյուր՝ կրակ» (հիմքում՝ «արև». հմմտ. հայ. *արևդ ապրի* «եր-

¹ Յմմտ. И. X. Дворецкий. Древнегреческо-русский словарь, т. 2, М., 1958, էջ 1604:

² Հ. Աճառեան. Հայերեն արմատական բառարան, հ. 3, Ե., 1977, էջ 47:

³ Գ.Ջահուկյան. նշվ. աշխ., էջ 448:

կար կյանք ունենաս», ավելի հին՝ «օրդ՝ տարիքդ շարունակվի» և այլն)¹:

5. Հայ. *հաւան* «հլու» բառը Եր. Մեղրեցու բառարանի քննական բնագրում չունի որևէ տարրնթերցված կամ տարակարծության հետ կապված որևէ ծանոթագրություն:

Հայ. *հաւան* «հավանություն՝ համոզում, հաճություն» բառը «Նոր հայկազյան բառարանը» դիտում է իբրև արմատ *այո՛, հա՛* «այո. համաձայն լինելը» բառային տարբերակների՝ արմատի ձայնավորման դիրքի առումով (հմմտ. *սա, այս, տյն* և այլն)²:

Նախորդ ուսումնասիրողներից Տերվիշյանն այն բխեցնում է հնիս. *av- «յագիլ, հաճիլ, հաւանիլ» արմատից, որից սանս. av, հուն. □ω «կշտանալ»՝ գտնելով, որ «մեր մէջ պահուած է *ագ-* և *աւ-* ձևերով. առաջինէն *յագել, յագենալ*, – երկրորդէն՝ *հաւանել, հաւատք, հաւաստիք՝ յ- հ* նախդրով»³: Աճառյանը նշում է, որ *հաւատ* և *հաւան* կապի նկատառումով տեսակետ են հայտնել նաև Պեղերսենը, Կարստը, Մեյեն: Այսուհանդերձ, նա ոչ անկախ Հյուրըշմանից, *հաւան*-ը համարում է «անստույգ բառ»⁴:

Առավել ուշագրավ է Մեյեի կարծիքը, ըստ որի հայ. *հաւան* և *հաւատ* բառերը կապ ունեն ոչ միայն միմյանց, այլև *հաւ* «թռչուն» բառի հետ, ինչպես որ հուն. □□ωμαι «հաւատալ, կարծել» և ο□ων□ς «թռչուն» բառերը: Ընդ որում նկատի է առնվել *հաւ* բառի նման իմաստի կրող լինելը, այսինքն՝ «հնդեվրոպական է համարում՝ կապելով հավահմայութեան արուեստին», որ գոյություն ուներ հին աշխարհում: Իսկ որ այդ չի ընդունում Հյուրըշմանը, կարելի է ասել, բոլորովին այլ տեսակետ

¹ Հմմտ. Վ. Համբարձումյան. Հնդեվրոպական արմատի տարբերակայնությունը հայերեն աստուած բառի ծագումն ու տիպաբանությունը.- «Պատմա-բանասիրական հանդես», 2002, 3, էջ 242-260: Նույնի՝ Ակնարկներ հայոց լեզվի համեմատական բառագիտության, 2, Ե., 2007, էջ 36-37:

² Գ.Աւետիքեան, Խ.Սիւրմէլեան, Մ.Աւգերեան. Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. 2, Վենետիկ, 1837, էջ 72:

³ Հ. Ս. Տերվիշեան. նշվ. աշխ., էջ 65-66:

⁴ Հ. Աճառեան. նշվ. աշխ., էջ 68:

ունենալու հարց է, եթե ոչ գիտական նոր փաստերի նկատառումով անընդունելի¹:

Ձահուկյանը *հալան* «հավանություն, հավանող» բառը, հարցականով, նախկինում բխեցնում է հե.**Ha-* արմատից, իսկ հետագայում նշում է հետևյալը. «Թերևս փոխառություն իրանական աղբյուրից, բայց բուն աղբյուրը չի հաստատված»²:

Այս ամենով հանդերձ, կարելի է ենթադրել, որ հայ. *հալան* (նաև *հալատ*, *հալատալ* և այլն) բառերի *հալ-* արմատը ծագում է հե.**Hay* (յ)- ձևից, որն ավելի հավաստի է դառնում իմաստային-գործառական կողմով, այսինքն՝ եթե նկատի ենք ունենում ոչ միայն «հավահմայության արվեստը», որ նշում է Մեյեն, այլև «առավոտվա՝ լույսի ավետումը, հավի (աքաղաղի) կանչը»՝ իբրև «հավախոսության» գործառույթի դրսևորում:

6. Հայ. *ոգորիլ* «կռվել, մարտնչել, դիմակայել» բայը, ըստ Եր. Մեղրեցու բառարանի տվյալների, ունի *ոգոգել* «գոռալ, հող հանել, հովանալ», այլև *ոգոշել* «նույնը» ձեռագրական տարբերակները («գրչությունները»)³: «Նոր հայկազյան բառարանն» այս բառի *ոգոր-* (**n-գոր-*) արմատը կապում է *եղջիւր* բառի *եղ-* արմատի հետ, որն, ի դեպ, որքան էլ անհավանական կարող է թվալ, սակայն երբ համեմատում ենք զուգահեռ բերվող հուն. κέρας (սեռ. հոլ. κέρατος, էպիկ. κέραος, հոն. κέρεος, ատտիկ. κέρως) «եղջյուր. պոզ», լատ. cornū «եղջյուր, պոզ. եղջերվափող» բառերի κέρ-, cor- արմատի հետ (հմմտ. **n-գոր-*), առաջ է գալիս, մեր կարծիքով, ծագումնային համեմատության հնարավորություն՝ ընդհանուր արմատի վերականգնման համար⁴:

¹ St* u A. Meillet. Notes arméniennes. 3. Etymologies, "Memoire de la Société de linguistique de Paris", no. 8, 1892, էջ 164-165 : H. Hübschmann. նշվ. աշխ., էջ 465: Հմմտ. Հ. Աճառեան. Հայերէն արմատական բառարան, հ. 3, էջ 68:

² Գ. Ձահուկյան. Հայոց լեզվի պատմություն, էջ 113: Նույնի՝ Հայերէն ստուգաբանական բառարան, էջ 453:

³ «Բառգիրք հայոց», էջ 253, 419: Հմմտ. Հ. Մ. Ամալյան. Հայ միջնադարյան բառարանագրությունը, էջ 299:

⁴ Գ. Աւետիքեան, Խ. Սիւրմէլեան, Մ. Աւգերեան. նշվ. աշխ., էջ 503:

Աճառյանը *ոգորհի*-ը համարում է «անստոյգ բառ», ընդ սմին նույնպիսի անորոշությամբ բերվում են նաև *ոգոգել* «վրժ ունենալ, նախանձել» և *ոգոշել* «գոռալ, հող արկանել, դոփել» բառերը՝ վերջինիս համար տալով «հաւանաբար նոյն է նախորդի հետ և մին կամ միւսը սխալ» ձևակերպումը¹:

Ջահուկյանը համեմատաբար ուշ է անդրադառնում այս բառերին, ընդ որում նախ՝ *ոգորհի*-ի համար նշում է հետևյալը. «Ծագումն անհայտ է: Հավանաբար կազմված է *-որ* վերջածանցով *-ոգ-* արմատով, որ հազիվ թե կապ ունենա հ. -ե. **seu-* «ծռել, կտրել, քշել» արմատի հետ (**sou-* > *ոգ-*»), այնուհետև՝ *ոգոգել*-ի - *ոգոշել*-ի հետ կապված մեկ քայլ առաջ է գնում, քան Աճառյանը, մի դեպքում նշվում՝ «Ծագումն անհայտ է: Կապ ունի՞ *ոգորհի* բայի հետ (հմմտ. *տկլոգ - տկլոր*)», մյուսի համար ասվում է՝ «Թերևս նույնն է *ոգոգել* բայի հետ»²:

Ոգորհի, այլև *ոգոգել*, *ոգոշել* բառերի մեջ ընդհանուր է *գոր* (*գոգ*, *գոշ*) արմատը, եթե բառասկզբի *ո-*ն դիտում ենք արմատի ձայնավորման (նախահունչ) տարր: Այն ծագած ենք համարում հե. **k^[h]er-* «բարձունք», այլև «գլուխ», «պոզ. եղջյուր» արմատի [հմմտ. հուն. κέρας «պոզ. եղջյուր», լատ. cerebrum «ուղեղ», ceruus «եղջերու» (բուն իմաստով՝ «պոզավոր՝ եղջերավոր»), հվգերմ. hirmi «ուղեղ»]՝ գրո (Ø) ձայնավորմամբ պայմանավորված *k^[h]r-* [հմմտ. հուն. κάρ, κάρη «գլուխ», հհնդկ. śr̥ṅga- «պոզ. եղջյուր», հանգլ. horn (< գերմ. *hornaz), heorot «նույնը», լատ. cornū «նույնը»] տարբերակից³:

7. *Ողայ* «ողբալի ձայն» բառը կա Աճառյանի «Արմատական բառարանում» հետևյալ բառահոդվածով. «*Ողայ* «ձայնը լալեաց, ողբ ու կոծ». ունի միայն Բառ. երեմ. էջ 250»⁴: «Բառգիրք հայոց»-

¹ Հ. Աճառյան. նշվ. աշխ., էջ 549:

² Գ. Բ. Ջահուկյան. նշվ. աշխ., էջ 599:

³ Հմմտ. Т. В. Гамкрелидзе, Вяч. Вс. Иванов. նշվ. աշխ., էջ 173, 876: Ի դեպ՝ միաժամանակ նշվում է, որ հնդեվրոպական նույն այս արմատից է փոխառված սեմ. **karn-* «պոզ, եղջյուր» արմատը. հմմտ. ակկադ. *karnu-*, ուգար. *krn*, հիթ. *keren*, արաբ. *karn-* ձևերը:

⁴ Հ. Աճառյան. նշվ. աշխ., էջ 553:

ի քննական բնագրում չկա նման բառահոդված՝ այդ իմաստով, իսկ «ձայնք լալեաց» բացատրությունը տրված է *ողբա եւ ողբալի* բառակապակցություն-գլխաբառի համար [*Բառգիրք հայոց* 1975, էջ 254]: Վերջինիս համար տողատակին նշվում է գրչագրական տարբերակ՝ *ողա//ողայ – ողբալի*, իսկ ծանոթագրությունների բաժնում՝ «Այս բառը կա № № 4149 և այլ ձեռագրերում», և հղում է կատարվում «Արմատական բառարանին», որ ունի *ողայ*:

Ձահուկյանը բառին անդրադառնում է «Ստուգաբանական բառարանում»՝ նշելով հետևյալը. *Ողայ* «լացի ձայն, ողբ ու կոծ» (ԲՅ): Թերևս *ողբալի*-ի սխալագրությունը (գրված է առանց *բ*-ի)¹:

Բառի ծագումը կարող է առավել ստույգ լինել, եթե *ող*- արմատը դիտենք նույնը, ինչ (բրբռ.) *ուլուլալ* (**ուլ-ուլ-ալ*) «լալ, ողբալ» բառի *ուլ*- արմատը՝ *ո//ու*, այլև *ղ//լ* տարբերակայնությամբ, որ ծագում է հե. *սլ- [*սլ-սլ-] արմատից: Ի դեպ՝ Ձահուկյանը արմատի կրկնականը դիտում է ավելի վաղ՝ նախագրային ժամանակաշրջանի մեջ, նախալեզվի համար վերականգնվող ձևին համապատասխան ²:

8. *Սուքար* «հովանոց» բառը, ըստ Մեղրեցու քննական բնագրի տվյալների, ներկայացնում է տարբեր ձեռագրերից դուրս բերված անխաթար մի ձև, այսինքն՝ չունի գրչագրական տարբերություններ, ոչ էլ՝ որևէ ծանոթագրություն բնագրի համապատասխան բաժնում [*Բառգիրք հայոց* 1975, էջ 292]:

Աճառյանն այս բառին անդրադառնում է հետևյալ կերպ. «*Սուքար* «հովանոց». ունի միայն Բառ. երեմ. էջ 239»³. Նույնը գտնում ենք Ձահուկյանի բառարանում.«*Սուքար* «հովանոց» (ԲՅ)»⁴: Ըստ այսմ բառի ծագումը մնում է անհայտ:

Կարելի է ենթադրել, որ *սուքար* «հովանոց» բառի արմատն է *սուք*- (իմմտ. *կոց-ար* «մի տեսակ երկարակտուց թռչուն», *մթ-ար* «մութ. մթություն», *փայա-ար* «ծակ, ծերպ, ճեղք, քարանձավ» և այլն), իսկ «հովանոց» իմաստը հնարավորություն է ստեղծում

¹ Գ. Բ. Ձահուկյան. Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 600:

² Գ. Բ. Ձահուկյան. Հայոց լեզվի պատմություն, էջ 154, 164, 219:

³ Յ. Աճառեան. Հայերեն արմատական բառարան, հ. 4, Ե., 1979, էջ 257:

⁴ Գ. Բ. Ձահուկյան. Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 690:

այն համեմատելու հայ. շուք «ստվեր, հովանի» բառի հետ՝ իբրև արմատի տարբերակ:

Այնուհետև, հայ. շուք «ստվեր» բառը Ջահուկյանը հարցակալով՝ ոչ հավաստի ձևով, բխեցնում է հե. *k'xō-ko- [*k'eu-] «լուսավորել, պայծառ» արմատից¹: Որ հայ. շուք բառն ունի երկու՝ «ստվեր, հովանի» և «պատիւ, փառք, վեհություն» իմաստները, հայտնի է ոչ միայն մատենագրական հին վկայություններով, որոնք բերվում են Աճառյանի «Արմատական բառարանում», այլև ամրապնդվում են Մեղրեցու «Բառգիրք հայոց»-ի տվյալով [*«Բառգիրք հայոց»* 1975, էջ 251]:

Եվ ըստ այսմ, կարծում ենք, որ նույնպիսի ծագում ունի նաև հայ. սուք «շուք, պատիվ» բառը, որ հանդիպում է ոչ միայն «Բառգիրք հայոց»-ում՝ *սուքար* «հովանոց» բառի մեջ, այլև, օրինակ, Սայաթ-Նովայի հայերեն խաղերից մեկում. «Վուրտիղ հարսնիք, վուրտիղըն *սուք*, վուրտիղ սոյբաթ խաղ է ըլում. / Վուրտիղ ժամ, վուրտիղ պատարաք, վուրտիղ սիրով տաղ է ըլում./ Թե վուր հոջուտ կամքն իս անում, մարմինտ բեդամաղ է ըլում»²: Յմտ. հայ. *սե(ա)մ*//*շե(ա)մ* «(դռան) սեմ՝ շեմք, բարավոր» և այլն:

9. Հայ. *փոփոգել* (< *փո-փոգել* «հոգի՝ շունչ տալ»), այլև հընչյունական ինչ-ինչ կարգի փոփոխությամբ՝ *ոգի* կամ *հոգի*, ինչպես նաև *սփոփ* ձևերը, ըստ Հ. Ս. Տերվիշյանի ենթադրության, ծագում է հե. *pak- արմատի պարզ *pa- հիմքից³: Ըստ այսմ էլ Աճառյանը գտնում է, որ հայ. *փոփոգել* «ցավը թեթևացնել, սփոփել» բառը «կազմուած է *փոփ* արմատից՝ *-ոգ* մասնիկով. աւելի ընդարձակ տե՛ս *սփոփ*»⁴:

¹ Գ. Բ. Ջահուկյան. Հայոց լեզվի պատմություն, էջ 57, 132, 207, 219, 232:

² Սայաթ-Նովա, Խաղերի ժողովածու, Ե., «Սովետական գրող» հրատ., 1987, էջ 64: Բերված տողերից առաջինում ուրախության, իսկ երկրորդում տխրության հանդիսություն է ներկայացված, ուստի ուրախության համատեքստում *սուք*-ը նշանակում է «շուք, պատիվ. լույս և այլն»:

³ Հ. Ս. Տերվիշյան. Նշվ. աշխ., էջ 46, այլ- 38, 93:

⁴ Հ. Աճառյան. Նշվ. աշխ., հ. 4, էջ 530:

Ձահուկյանն ունի *փոփոգել* «ցավը մեղմել» (որից՝ *փոփոգանք*), որի համար նշվում է՝ «արմատն է *փոփ-*, որն առկա է *սփոփ* բառում» (տե՛ս), իսկ *սփոփ*-ի դեպքում նշվում է՝ «տե՛ս *փոփ*», վերջինս էլ դուրս է մնացել բառարանից¹:

Բառն ունի նաև Եր. Մեղրեցին՝ *փոփոքել* «նուազեցուցանել» ձևով [*«Բառգիրք հայոց»* 1975, էջ 328]: Կարելի է կարծել, որ *փոփոգել*//*փոփոքել* (<*փոգ-փոգ-) կրկնավոր կազմություն է, կապ չունի *փոփ*- արմատի հետ, ինչպես կարծում են Աճառյանը և Ձահուկյանը՝ ոչ անկախ Ա. Մեյեի այն «մեկնությունից», որում մերժվում է Զ. Տերվիշյանի ենթադրությունը²: Վերջինս, ընդհակառակն, օգնում է ավելի հավանական մեկնաբանմանը, այն է՝ բառի ծագումը բխեցնել հե. *pouo- [*p(e)u-, *pɦiu-] արմատից (հմմտ. սանս. pū, pāvana «քամի», հուն. πνέω, πνεμα «շունչ», πρ «հուր», πύω «հոտիլ», լատ. putere «հոտել, փտել»)՝³:

Եր. Մեղրեցու կազմած «Բառգիրք հայոց»-ի շուրջ մեկ տասնյակ բառերի ծագումնային-ստուգաբանական քննությունից ևս պարզվում է, որ հայերենի բառապաշարի շատ միավորներ այսօր ունեն առավել լայն, գիտական նորագույն ուսումնասիրությունների տվյալների հիման վրա կատարվելիք քննության կարիք՝ նման միավորների ճշգրտման, առհասարակ հայերենի բառապաշարի անհայտ մնացած շերտերի լուսաբանման համար:

Амбарцумян Вазген- Новые заметки о некоторых словах “Армянского словаря” Еремии Мегреци.- В “Армянском словаре” Еремии Мегреци (17-й в.) есть еще слова, происхождение которых неизвестно, и эти слова не подвергаются лексикологическому и этимологическому анализу.

В статье нами дается лексический анализ и этимология следующих армянских слов: 1) *աղցաման* ałc'aman “браслет”, 2) *դիսուս* dasawn “говорить”, 3) *թեսաղ*//*թետլ* t'esał//t'esel “собрание; собратъ”, 4) *հաւ* tik^c “время; возраст”, 5) *հաւան* hawan “послушливый;

¹ Գ. Ձահուկյան. Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 769, 698:

² Զ. Աճառեան. նշվ. աշխ., էջ 288, 530: Գ. Ձահուկյան. նշվ. աշխ., էջ 698, 769:

³ Գ. Բ. Ձահուկյան. Հայոց լեզվի պատմություն, էջ 145:

послушный”, 6) *ոգորիլ* *ogoril* “бороться; противо-сто-ять”, 7) *ողայ* *oġay* “скорбный голос”, 8) *սուքար* *suk^car* “зонт”, 9) *փոփոգել* (< *փո-փոգել*) *p^cop^cogel* (*p^co-p^cogel*) “одушевить; одушевлять”.

Hambardzumyan Vazgen - On Some New Words in the “Armenian Dictionary” by Eremia Meghretsi.- In the “Armenian Dictionary” by Eremia Meghretsi (17th A.D.) there are still new words of unknown origin that are not subject to lexicological and etymological analysis.

The present article focuses on the etymology and lexical analysis of the following Armenian words: 1) *աղաման* *aġ^caman* “bracelet, armlet”, 2) *դասոս* *dasawn* “speak”, 3) *թեսաղ/թեսել* *t^cesaġ//t^cesel* “meeting, gathering; gather”, 4) *հաս* *tik^c* “time; age”, 5) *հալան* *hawan* “submissive; pliant”, 6) *ոգորիլ* *ogoril* “fight; struggle; contend with”, 7) *ողայ* *oġay* “lamentable, deplorable (voice)”, 8) *սուքար* *suk^car* “umbrella; awning”, 9) *փոփոգել* (< *փո-փոգել*) *p^cop^cogel* (*p^co-p^cogel*) “animate”.

Քամի հասկացության բառիմաստային դրսևորումները հայերենի բարբառներում

Քամին՝ իբրև բնության ամենաշարժունակ երևույթ, իր տարբեր տեսակներով բազմապիսի բառադրսևորումներ ունի հայերենի բարբառներում: Արևելյան և կենտրոնական բարբառային տարածքներում ընդհանրական առումով գործառում է *քամի* բառանունը, իսկ արևմտյան բարբառային գոտում՝ մասնավորապես *հով* բառանունը:

Դիտարկենք, որ *հով*-ը *քամի* բառանվան ընդգրկած տարածքներում զուգահեռաբար գործառում է «մեղմ քամի, զեփյուռ» նշանակություններով, իսկ արևելահայերենի խոսակցական տարբերակում՝ նաև «զով» և «ստվեր» իմաստներով. օր.՝ *հով եղանակ, ծառի հով, պատի հով*: Ի դեպ, նշված բառակապակցություններին արևմտահայերենում համապատասխանում են *զով օդ, ծառի շուք, պատի շուք* անվանումները, որոնք առկա են նաև արևմտահայերենի բարբառներում:

Քամի բառանունը արևելահայերենի ժողովրդախոսակցական տարբերակում փոխաբերաբար գործածվում է իբրև հիվանդության, մասնավորապես պարբերաբար կրկնվող հանկարծահաս շարժունակ ցավի անվանում:

Նշենք նաև, որ *քամի* բառանունը գռեհիկ խոսակցական լեզվում փոխաբերաբար գործառում է «սուտ» նշանակությամբ. օր.՝ *քամի* «ստախոսություն, փչոց», *քամի անել* «ստել, փչել»:

Քամի բառանունը չունի հ.-ե. ծագում: Նոր հայկազյան բառարանում այն բնորոշված է իբրև «առաւել ռամկօրէն» (ՆՅԲ, հ. 2, էջ 977): Միջին հայերենի բառարանում ներկայացված են *քամի* բառանվան հետևյալ նշանակությունները. «1. Օդ, 2. հողմ, 3. փորի գազեր, փուք, 4. ցավ, 5. հողացավ, 6. փխբ.՝ ոչնչություն, ունայնություն» (ՄՅԲ, հ. Բ, էջ 430): «Ժամանակակից հայոց լեզվի

բացատրական բառարանում» *քամի*-ն ներկայացված է իբրև «1. Օդի հոսանքի շարժումը հորիզոնական ուղղությամբ, ավելի կամ պակաս արագությամբ: 2. (բրբռ.) փոռի գազեր, փուլք: 3. Յոդացավ, ոսկրացավ (բրբռ.): 4. փխբ. Դատարկաբանություն, սուտ, փչոց» (հ. 4, էջ 704-705):

Գ. Ջահուկյանը *քամի* բառանունը տեղադրել է հնագույն հայերենի բարբառային տարբերակների շարքում՝ *ուշ* բնորոշմամբ՝ *հողմ-այս-սիք-քամի* (ուշ) (ՅԼՊՆԺ, էջ 402):

Վանի բարբառում «քամի» հասկացության դիմաց գործառում է *կյնռախո* բառանունը՝ *կյնռ* «խուլ» բարբառային արմատով, որը արտահայտում է քամու «խլացնող» նշանակությունը:

Արդի հայերենի բարբառներում *քամի* բառանունը գործառում է բազմաթիվ հնչյունական տարբերակներով՝ թե՛ ձայնավորային, թե՛ բաղաձայնական ուղորտներում: Նշենք կարևորները.

ա) բառավերջի ձայնավորի տարբերացմամբ. օր.՝ *քամի, քամե* (Արցախ, Չլդրան), *քամփ, քամը, քամու* (Պարսկահայք).

բ) առաջնավանկի *ա* ձայնավորի բացությամբ (շրթնայնացմամբ). ամբողջապես *պ*, կամ մասնակի *պ*. օր. *քպմի, քպմե, քպմի, քպմի*.

գ) խորացած շրթնայնացմամբ, որն ի վերջո հանգում է *ւն>օ* հընչյունափոխության՝ *քօմի* (Տրապիզոն՝ Ալախաձե գյուղ), Յամշեն՝ Ճանիկ՝ Օրսօթյ գյուղ, Օրդու, Չիբլուխու.

դ) առաջնավանկի քմայնացմամբ՝ *քմմի, քմմե* (հարավ-արևմուտյան տարածք՝ Մոկս, Շատախ, Վան, Բաղէշ):

Քամի հասկացությունը հայերենի բարբառներում դրսևորվում է նաև բաղադրյալ կազմություններով՝ բառակապակցություններով. օր.՝ *սամելա* քամի, *խարաֆ* քամի, *ֆըրթոնա* քամի, *պյնրնկ* քամի, *սատանի* քամի, *սատանի* բըլուր, *աջամ* քամի, *սազաղ* քամի, ինչպես նաև բազմաթիվ փոխառյալ բառերով. *Վաջաջ, թիփի, ֆըրթանու, թօֆան, բօրան, սազաղ, գիֆօս* և այլն:

ա) *Սամելա քամին* գործառում է փոթորիկ, մրրիկ իմաստներով Մուշում, Վերին Բուլանուխի Փիրան գյուղում: Այս բառակապ-

կցության մեջ, ըստ երևույթին, արտացոլված է «հարավ-արևմտյան տաք քամի» նշանակությամբ *սամում* արաբերեն-պարսկերեն բառանունը» (ՄՅԲ, հ. Բ, էջ 310): Ըստ Է. Աղայանի՝ *սամում*-ը գոյական է, որը «տաք ավազախառն հողմ է Ասիայի և Աֆրիկայի անապատներում, ավազային փոթորիկ» (ԱՅԲԲ, էջ 1274):

բ) *հարավ/խարաֆ քամի*-հարավային ուժգին քամի (Վանի բրբռ):

գ) *ֆրոթոնա քամի*- փոթորիկ նշանակությամբ գործառում է Կարտում և այլուր, իսկ *մրրիկ, ծովի քամի* իմաստներով՝ Խոտըրջուրում:

դ) *պյւրնկ քամի*-մեղմ, թույլ քամի (Կոտայք, Կաթնաղբյուր գյուղ), փաստորեն *պյւրնկ (բարակ)* ածականով հատկանշվում է քամու որակը:

ե) *սատանի քամի/քնմի* - «պտուտահողմ» նշանակությամբ հանդիպում է Վանի Թիմարի շրջանի Մարմետ և Պօղանց գյուղերում, նաև Արարատյան, Կարսի և Ջավախքի բարբառներում: Հատկանշում է հողմի արագ, դիվային պտույտը:

զ) Առավել պատկերավոր է *սատանի բըլուր* արտահայտությունը, որով բնութագրվում է պտուտահողմի բլրածն դրսևորումը:

է) *աջամ քամի* -նշանակում է պարսկական քամի (Ալաշկերտ, Յեխընթափա գյուղ):

ը) *սազաղ քամի* - Արտաշատի, Ազատավանի և Խոյի բարբառային միավորներում նշանակում է *մեղմ* քամի, թեև ՀԼԲԲ-ում բնութագրված է իբրև ցուրտ քամի (տե՛ս նաև ԺՀԼԲԲ, հ. 4, 1980, էջ 257):

Քամի հասկացության դիմաց հայերենի բարբառներում հանդիպող փոխառյալ բառերը մեծ մասամբ երևույթի թուրքերեն անվանումներն են: Մասնավորապես գործառում են *բորան, թիփի, թօֆան, ֆրոթանու, սազաղ* բառանունները, որոնք ըստ թուրքերեն-ռուսերեն բառարանի՝ բոլորն էլ նշանակում են *ուժգին քամի*,

բուք ու բորան, ձյունամրրիկ (Турецко-русский словарь, էջ 90, 194, 621, 628): Փոխառյալ են նաև *Վաջաջ* և *գօգան* բառանունները:

ա) Թվարկված փոխառություններից *բօրան*-ը բարբառներում հանդիպում է նաև *բօրյազ* տարբերակով, որը նշանակում է «հյուսիսարևելյան գով քամի, որ ամառնամուտից սկսած մինչև աշուն օրվա երկրորդ կեսին Սևանի կողմից փչում է դեպի Արարատյան դաշտը» (ՋԼԲԲ, հ. Ա, էջ 212):

բ) *թիփի* փոխառյալ բառը, ըստ ՋԼԲԲ-ի, գործառում է *ձյունախառն մրրիկ, բուք ու բորան* իմաստներով (Արարատյան, Ղարաբաղի, Կարինի, Յամշենի բարբառներում և Մոկսի խոսվածքում) (ՋԼԲԲ, հ. Բ, էջ 212):

գ) *թօֆան*-ը Մուշի բարբառում գործառում է նաև ժողովրդական բանահյուսության մեջ. «Սևավոր, սև կապիս, սև *թօֆան* գա վրեդ» (ՋԼԲԲ, հ. Բ, էջ 133):

դ) *ֆըրթանու* կամ *ֆըրթընա* - նշանակում է *փոթորիկ*, Չեյթունի բարբառում՝ նաև *ծովի ալիք* (Турецко-русский словарь, էջ 194 և ՄՅԲ, հ. Բ, էջ 467):

ե) *սազադ* բառանունը հանդիպում է Ուրմիայի, Կարսի, Ջավախքի և Խոյի բարբառային միավորներում և նշանակում է «ձմռանը փչող ցուրտ քամի»։ «Սազադը սուր նետի պես ծակում էր» (ՋԼԲԲ, հ. Ե, էջ 244): «Առատունը պաղ սազադ էր փչելի» (Մ. Ասատրյան, Խոյի բարբառը):

զ) *զիֆօս*-ը փոխառություն է հունարենից և նշանակում է «1. կեղտաբիծ, 2. իզուր, դատարկ տեղը, անօգուտ» (Турецко-русский словарь, էջ 690):

է) Փոխառյալ բառերից *Վաջաջ*-ը նշանակում է *փոթորիկ, ուժեղ քամի* և, դատելով առաջնային *Վ* բաղաձայնից (հայն), փոխառություն է արաբերենից:

ը) *գօգան*-ը՝ *գեփյուռ* իմաստով, թերևս փոխառություն է քրդերենից:

Հայերենի բարբառներում առանձին խումբ են կազմում *պտուտահողմ* հասկացության բառանվանումները: Հիմնականում գործառում են՝ *փըթըթօրիկ, փըթօթիկ, փըթութուրիկ* (Մոկս),

բօլուջիկ (Սասուն) (ՅԼԲԲ, հ. 2, էջ 376 և հ. Ա, էջ 206), *բուլուլիճ*, *բօլօլիճ* (Պարսկաստանի 4 գյուղի միատարր խոսվածք, տ. № 359), *պուլուլիկ* (Սասուն՝ Յոսներ, Կոտայք՝ Արամուս, տ. №121 և 270), *պօբօլօզ* (Արծափ, Կոզովիտ գավառ, տ. № 78), *բօրյազ* (Ղալալջի, Արագած, Ատմա (Ապարանի շրջան), տ. №159) և հնչյունափոխված այլ տարբերակներ:

Սրանցից *փըթըթօրիկ*, *փըթութուրիկ*, *փըթօթիկ*, *փօթօթեկ* բառաձևերում, ըստ երևույթին, առկա է եղել փաթաթել բայի՝ *փաթ*՝ «շրջան, պտույտ» նշանակությամբ կրկնավոր արմատը՝ *փաթ+փաթ*, երկրորդ *փ*-ի անկմամբ՝ *փաթաթ*, բարբառներում՝ *փըթըթ*, *փըթութ*, *փըթօթ*, *փօթօթ* հնչյունական տարբերակներով, որոնցով հատկանշվում է պտուտահողմի՝ ոլորապտույտներով գործառույթը: Իսկ ածանցական հատվածը առկայանում է -օրիկ, -ուրիկ, -րիկ, -րեկ տարբերակներով (տե՛ս նաև ՅԼԲԲ, հ. 2, էջ 376-377):

Մեկ այլ խումբ են կազմում «բոլոր» նշանակությամբ գործառվող բարբառային տարբերակները: Օր.՝ *բօլօրջիկ*, *բօլըջիկ*, *բօլուջիկ*, *բօլօմճիկ*: Դրանցում առկա է *բոլոր*՝ «շուրջ» նշանակությամբ բառը (այստեղից՝ շուրջբոլոր), որը նույնպես բնութագրում է պտուտահողմի ոլորածն գործառույթը:

Այս բառախմբից ՅԼԲԲ-ում հանդիպում է *բոլուջիկ* բառը (Սասուն), իսկ *բոլումճիկ դառնալ*՝ «մեկ ոտքի վրա տեղապտույտ կատարել» արտահայտությունը (Բուլանուխ), վերահաստատում է հայերենի բարբառներում *բոլըջիկ*-ի հնչյունափոխված արմատներում *բոլոր*՝ «շուրջը» իմաստի առկայությունը (ՅԼԲԲ, հ. Ա, էջ 205):

Զամի հասկացության՝ հայերենի բարբառներում հանդիպող տարբերակներից վերջին երկուսն են՝ *պուլուլիկ*-ը բարբառային ծագումով, որը ևս նշանակում է *բոլորել*, *պուլուլել*, *պուլուլված* և «պտուտահողմ» նշանակությամբ գործածվող *պօբօլօզ*-ը, որն արտացոլում է օդում պտուտահողմի սրածայր վերելքը:

Համառոտագրություններ

ԱՅԲԲ -Արդի հայերենի բացատրական բառարան
ՀԼԲԲ -Հայոց լեզվի բարբառային բառարան
ՀԼՊԼԺ- Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակա-
շրջան
ՄՅԲ - Միջին հայերենի բառարան
ՆՅԲ - Նոր հայկազյան բառարան
բրբռ.- բարբառային, հ.-ե.- հնդեվրոպական. տ.- տետր, փխբ.-
փոխաբերաբար, օր.- օրինակ

Օգտագործված գրականություն

1. Գ.Աւետիքեան, Խ.Սիւրմէլեան, Մ.Աւգերեան, Նոր բառգիրք
Հայկազեան լեզուի, հհ. 1-2, Ե., 1836-1837:
2. Ռ.Ղազարյան, Հ.Ավետիսյան, Միջին հայերենի բառարան, հհ.
1-2, Ե., 1987-1992:
3. Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հհ. 1-
4, Ե., 1969-1980:
4. Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժա-
մանակաշրջան, Ե., 1987:
5. Է.Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Ե., 1976:
6. Հայոց լեզվի բարբառային բառարան, հհ. Ա-Զ, Ե., 2001-2010:
7. Турецко-Русский словарь, М., 1977.
8. Մ. Ասատրյան, Խոյի բարբառը, Ե., 1962:
9. ՀԲԱ ծրագրով հավաքված նյութեր:

Анеян Анаит- Проявление лексического значения концепции *ветер* в диалектах армянского языка.- В статье представлено сло-
воупотребление концепции *ветер* в диалектах армянского языка. Ис-
следование включает в себя детальное исследование генеалогии, про-
явления лексического значения, чередования звуков, диалектной арти-
куляции, а так же особенности словообразования (составные конст-

рукции: фразы, производные слова и образования). Также представлены заимствованные слова из турецкого, арабского, и греческого языков (*թիփի, ֆրրթանլ, թոֆան, բորան, և աջաջ, սազաղ, զիֆու* и т.д.)

В отдельной главе, представлены исследования диалектного проявления концепции смерч (*փրթրթորիկ, փրթուրիկ, փրթորիկ, փոթոթրէկ* и т.д.)

Иную группу составляют диалектные варианты слова вокруг: *բօլորջիկ, բօլրջիկ, բօլուջիկ, բօլուճիկ*.

Haneyan Anahit- Lexical Manifestation of the Concept *Wind* in Armenian Dialects.- The present article is considers the lexical manifestation of the concept *wind* in the dialects of Armenian. The research includes the scrupulous study of genetics, lexical manifestation, sound interchange, as well as word-building peculiarities (compound structures: word-combinations, derivatives and complexes).

The article also focuses on the loanwords from Turkish, Arabic and Greek (*թիփի, ֆրրթանլ, թոֆան, բորան, և աջաջ, սազաղ, զիֆու* etc.). A separate chapter is devoted to the study of the dialectical manifestation of the concept “storm” *vortex* (*փրթրթորիկ, փրթուրիկ, փրթորիկ, փոթոթրէկ* etc.).

The dialectal variants of the word “round” from another group: *բօլորջիկ, բօլրջիկ, բօլուջիկ, բօլուճիկ* etc.).

Գրաբարի հոլովատիպերի կառուցվածքային դասակարգում

Յայ քերականագիտության պատմության մեջ առաջադրվել են գրաբարի հոլովման տիպերի տարբեր կարգի դասակարգումներ: Չանդրադառնալով դրանց մանրամասն քննությանը, որ արվում է Գ.Ջահուկյանի աշխատություններում¹, նշենք, որ հոլովման տիպերի առանձնացման հիմունքը գլխավորապես համարվել է սեռ.-գործ.-բաց. (Ավետիքյան, Բագրատունի), սեռ.-գործ. (Չալըխյան, Այտընյան), սեռ.-գործ.-հոգն. ուղղ.-սեռ. (Պետերման) հոլովների կազմությունը: Բացի այդ, տարբերակվել են նաև պարզ և խառն հոլովումներ (Ավետիքյան)՝ հոլովման ամբողջ հարացույցում հոլովիչ ձայնավորի պահպանվելու կամ փոխվելու հետ կապված: Առանձնացվել են նաև այսպես կոչված անկանոն կամ զարտուղի հոլովումներ, որոնք որոշ հետազոտողներ համարել են կանոնավոր հոլովումների ենթատեսակներ: Ավելի նոր ժամանակներում սկսում են հատուկ ուշադրություն դարձնել հոլովման ընթացքում տեղի ունեցող հնչյունափոխություններին՝ կապելով դրանք շեշտի դիրքի փոփոխության հետ (Մալխասյանց), իսկ հնդեվրոպական հոլովման համակարգի ուսումնասիրության արդյունքների հիման վրա հոլովման տիպերը սկսում են խմբավորել՝ ելնելով հիմքի ըմբռնումից և հոլովվող բառերի հիմքակազմական առանձնահատկություններից: Ըստ այդմ տարբերակվում են ձայնորդահանգ և ձայնավորահանգ կամ բաղաձայն(ական) և ձայնավոր(ական), ինչպես նաև խառը՝ ձայնավորա-ձայնորդահանգ հիմքերով հոլովումներ: Այս նույն տիպերը, ելնելով հոլովիչ ձայնավորների դիրքից, անվանվում են նաև վերջամասնիկավոր և միջամասնիկավոր (Աճառյան), վերջա-

¹ Ջահուկյան Գ., Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում (V-XVդդ.), Ե., 1954, նույնի՝ Յին հայերենի հոլովման սիստեմը և նրա ծագումը, Ե., 1959, նույնի՝ Գրաբարի քերականության պատմություն, Ե., 1974:

դրական և ներդրական (Ա.Աբրահամյան), իսկ նկատի ունենալով հոլովման ցուցիչի և հիմքի փոխհարաբերությունը (հիմքի ներքին հնչյունական հերթագայություն թե թեքույթի հավելում անփոփոխ հիմքին)՝ դրանք տարբերակում են որպես ներքին թեքման (=ձայնորդահանգ հիմքերով) և արտաքին թեքման (=ձայնավորահանգ հիմքերով) հոլովումներ (Ղարիբյան):

Այսպիսով, «հոլովման տիպեր» կամ «հոլովումներ» տերմինը գրաբարի համար բազմանշանակ է և արտացոլում է երեք կարգի՝ միմյանց ստորակարգվող դասակարգումներ՝ արտաքին և ներքին թեքման հոլովումներ => պարզ և խառն հոլովումներ => առանձին հոլովումներ՝ ըստ հոլովիչ ձայնավորների: Ինչ վերաբերում է կանոնավոր և անկանոն հոլովումներին, ապա դրանք այս ստորակարգության մեջ չեն մտնում, քանի որ դրանց մեջ կարող են միաժամանակ առկայանալ տարբեր տիպի հատկանիշներ՝ թվարկված կարգերից (տե՛ս ստորև):

Նոր ժամանակներում կատարված՝ հոլովման տիպերի զանազան դասակարգումները գնահատելիս կարելի է նկատել երկու հիմնական մոտեցում՝ 1) պատմական հայեցակետ, որ առավել հստակ և հետևողականորեն կիրառում են պատմահամեմատական (հնդեվրոպական) լեզվաբանության ներկայացուցիչները¹, և 2) համաժամանակյա նկարագրություն՝ պատմականության տարրերով, որ հատուկ է ուսումնական նպատակներով գրված աշխատությունների (դասագրքերի և ձեռնարկների) հեղինակներին²: Հետևողական համաժամանակյա-կառուցվածքային

¹ Տե՛ս հատկապես Ջահուկյան Գ., Հին հայերենի հոլովման սիստեմը և նրա ծագումը, Ե., 1959, որը նշված հայեցակետով գրաբարի հոլովման համակարգի ու նրա ծագման ամբողջական և համակողմանի նկարագրությունն է, զգալի չափով նաև՝ Առաքելյան Վ., Գրաբարի քերականութիւն, Ե., 2010, որտեղ հոլովատիպերի դասակարգման և մեկնությունների ժամանակ հեղինակը հաճախ դիմում է հայերենի պատմահամեմատական քննության տվյալներին՝ ի թիվս այլ փաստերի անդրադառնալով նաև հիմքերի բնիկ կամ փոխառյալ լինելուն: Մոտավորապես նույն սկզբունքով է գրված նաև Туманян Э.Г., Древнеармянский язык, М., 1971 մենագրությունը՝ որոշակի անդրադարձով հայերենի համեմատական քերականության և ցեղակից լեզուների տվյալներին:

² Աբրահամյան Ա., Գրաբարի ձեռնարկ, Ե., 1958, Շարաբխանյան Պ., Գրաբարի դասընթաց, Ե., 1974, Ավետիսյան Հ., Ղազարյան Ռ., Գրաբարի ձեռնարկ, Ե.,

հայեցակետից գրաբարի հոլովման համակարգը (և ընդհանրապես գրաբարի ամբողջական կառուցվածքը) չի նկարագրվել¹:

Նշված հայեցակետից գրաբարի հոլովման տիպերը որոշելու համար անհրաժեշտ է բացահայտել հոլովակազմության և հիմքակազմության հիմնական առանձնահատկությունները և հատկապես անդրադառնալ տվյալ ժամանակագրական կտրվածքում հիմքի առանձնացման սկզբունքներին: Պատմական քննության ժամանակ, երբ հաշվի է առնվում քերականական ձևերի ծագումը, այսպես կոչված հոլովիչ ձայնավորները ներառվում են հիմքի կազմի մեջ ոչ միայն ներքին, այլև արտաքին թեքման դեպքում, և հիմքերն անվանվում են հատկապես ըստ այդ ձայնավորների (*ո*-ով, *ի*-ով, *ո-ա*-ով հիմքեր և այլն), իսկ ներքին թեքման դեպքում նշվում են կա՛մ ուղղական հոլովի վերջին ձայնորդները՝ *ն*, *ր*, *ղ* հիմքեր (Աճառյան, Առաքելյան), երբեմն իրենց նախորդող ձայնավորներով՝ *ԱՆ*, *ԻՆ-ԱՆ*, *ԵՐ*, *ԵՂ* հիմքեր (Շարաբխանյան) և համապատասխանաբար՝ հոլովումներ, կա՛մ վերջնաթեր ձայնավորի և նրան հաջորդող ձայնորդի կապակցության հերթագայությունները՝ *ըն/ան/ուն*-ով հիմքեր, *ըն/ին/ուն/ան*-ով հիմքեր և այլն, համապատասխանաբար՝ նաև հոլովումներ (Ջահուկյան): Այս վերջին դեպքում հոլովման տիպերի անվանման մեջ արտացոլվում են հիմքի կրած փոփոխությունները ամբողջ հարացույցում:

Հիմքը փոփոխվող միավոր է ոչ միայն պատմականորեն, այլև համաժամանակյա կտրվածքում՝ բառակազմական և բառափոխական գործընթացների ոլորտում: Յուրաքանչյուր նոր տար-

1976, Խաչատրյան Լ., Թոսուկյան Գ., Գրաբարի դասագիրք, Ե., 2004, Սկրտչյան Է., Գրաբարի դասընթաց, Ե., 2008 նն:

¹ Բացառություն են կազմում միայն գրաբարի հնչյունական համակարգին [Աղայան Է., Գրաբարի քերականություն, հ. 1. Սինխրոնիա: Գիրք 1. Հնչյունաբանություն, Ե., 1964] և բառակազմությանը [Յովսեփյան Լ., Գրաբարի բառակազմությունը, Ե., 1987] նվիրված աշխատությունները: Ինչ վերաբերում է Մ.Սինասյանի «Դասական հայերենի նկարագրական քերականություն» աշխատությանը, ապա այն, թեև վերնագրից դատելով պետք է ենթադրեր կառուցվածքային մոտեցում, իրականում գրված է դարձյալ նույն համաժամանակյա և պատմական մոտեցումների համակցությամբ:

րի կցման ժամանակ նախորդ միավորը հիմք է ծառայում հաջորդի համար¹: Եթե հերթականորեն հատենք բոլոր կցված միավորները, կհանգենք այսպես կոչված առաջնային հիմքին կամ սկզբնահիմքին², որը բառակազմական կամ ձևակազմական տեսակետներից տարբեր կառուցվածք կարող է ունենալ: Բառակազմության մեջ հիմնական ելակետային ձև ենք համարում այն առաջնային հիմքը, որը բուն բառակազմական այլ ձևույթներ չի պարունակում, այսինքն՝ բառակազմական տեսակետից այլևս չի հատույթավորվում: Բառակազմական սկզբնահիմքը կարող է կազմված լինել միայն մեկ արմատից, արմատից և որևէ հիմքակազմ տարր(եր)ից կամ ունենալ քերականական ձևավորում՝ համընկնելով բառի ձևաբանական հարացույցի որևէ անդամին³:

Եթե բառափոխության մեջ ևս դիմենք սկզբնահիմքի գաղափարին, ապա բառի ձևաբանական սկզբնահիմքը կլինի այն անփոփոխ մասը, որը հակադրվում է վերջավորությանը (ներառյալ նաև հոլովիչ կամ նախկին թեմատիկ ձայնավորները) և մշտապես առկա է բոլոր հոլովածներում, անկախ այն բանից, քանի նոր մասնիկ է ավելանում նրան: Այսպիսի սկզբնահիմք գրաբարում կարելի է առանձնացնել միայն արտաքին թեքման մեջ, այն համընկնում է ուղղական հոլովին (բառի ուղիղ ձևին) և զուրկ է քերականական բեռնվածությունից (կամ, որ ավելի ճիշտ է, քերականական նշույթից): Զերականական իմաստների կրողներն այստեղ (արտաքին թեքման մեջ) միայն վերջավորություններն են՝ հոլովաթվանիշ ձևույթները, ներառյալ և զրո ձևույթը՝ ուղիղ հոլովածնի համար:

Ինչ վերաբերում է ներքին թեքմանը, ապա այս դեպքում նույն տիպի՝ քերականորեն չեզոք սկզբնահիմք հնարավոր չէ առանձնացնել, քանի որ չկա հիմքի և վերջավորության գծային հստակ

¹ Ջահուկյան Գ., Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Ե., 1974, էջ 158-161:

² Գ. Ջահուկյանի «Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն» աշխատության մեջ (Ե., 1989) նշված հասկացությանը մասամբ համապատասխանում է «արմատահիմք» տերմինը:

³ Տե՛ս Յովսեփյան Լ., Գրաբարի բառակազմությունը, Ե., 1987, էջ 60 և հաջ.:

հաջորդականություն, և քերականական իմաստներն արտահայտվում են բուն հիմքի կրած փոփոխություններով՝ ձայնավորների հերթագայություններով, որոնք հոլովների ձևավորմանը մասնակցում են կամ առանձին, կամ հոլովակազմիչ տարրերի հետ միասնաբար: Այնպես որ արտաքին և ներքին թեքումների պատկանող հիմքերն ունեն և՛ կառուցվածքային (կազմավորման), և՛ գործառական տարբերություններ: Հետևաբար հիմքակազմությունը հույժ կարևոր դեր է խաղում ինչպես հոլովների ձևավորումը, այնպես էլ հոլովման տիպերի միջև անունների բաշխումը որոշելու տեսակետից:

Այսպիսով, գոյականների հոլովման մեջ ընդհանրապես գործ ունենք երկու կարգի հիմքերի հետ: Դրանցից մեկն, ինչպես ասվեց, սկզբնահիմքն է, որը համընկնում է բառի ուղիղ ձևին և հոլովման ամբողջ հարացույցում պահպանվում է՝ կրելով միայն ինչյունական փոփոխություններ (շեշտափոխական՝ *սիրտ-սրտի* և փոխազդեցական՝ *որդի-որդու*), և որին ավելանում են հոլովները ձևավորող մասնիկները: Հիմքի և վերջավորության հակադրությունն այստեղ գծային բնույթ ունի՝ *ամ - ամ+ի*: Մյուս կարգի հիմքը կրում է ձևաբանական արժեք ունեցող փոփոխություններ, և հակադրությունն այստեղ առաջանում է բուն հիմքի ձևավորման մեջ՝ *հարս(ը)ն - հարսին, տուն - տան, տեր - տեան* և այլն: Ընդ որում, հիմքերի հակադրությունը մի կողմից պահպանվում է բառի ուղիղ ձևի և մնացած բոլոր թեք հոլովաձևերի միջև, մյուս կողմից, քերականորեն ձևավորված հիմքն իր հերթին գծային հակադրության մեջ է մտնում հոլովական վերջավորությունների հետ՝ *ակն -ական - (յ)ական+է, աստղ - աստեղ+բ*: Բացի այդ, գրաբարի հոլովման հարացույցում զգալի թվով դեպքերում թեք հոլովաձևերի համար հիմք է ծառայում ոչ թե ուղիղ կամ մաքուր հիմքը, այլ մեկ այլ հոլովաձև, սովորաբար, սեռականը կամ տրականը՝ բացառականի և ներգոյականի համար, եզակի գործիականը՝ հոգնակի գործիականի համար և այլն, ընդ որում այդ օրինաչափությունը գործում է նշված երկու կարգի հիմքերի դեպքում էլ, իսկ երբեմն հոլովական վերջավորությունն ավելա-

նում է մի այնպիսի ձևավոր հիմքի վրա, որն առանձին հանդես չի գալիս, այսինքն՝ ինքնին մի այլ հոլովածն է, ինչպես՝ *հարսան+է, հար+ք*: Ստացվում է մի այնպիսի վիճակ, երբ տարբեր հոլովածներ ունենում են միայն իրենց հատուկ հիմքակազմական ձևավորում, այլ խոսքով, հիմքակազմ ձայնավորը մի քանի անգամ փոխվում է ամբողջ հարացույցի ընթացքում՝ *մատ(ը)ն-մատին-մատունք-մատանց, հայր- հայր-հայրք* և այլն: Հիմքակազմական այսպիսի, պատկերավոր ասած, պոլիֆոնիան («բազմահնչությունը») գրաբարի հոլովման համակարգի բնորոշ առանձնահատկություններից մեկն է: Հիմքակազմական այս բազմակերպության հետ միասին դասական գրաբարն աչքի է ընկնում հոլովման հարացուցային տեսակների արտակարգ մեծ քանակով և տարազանությամբ: Ջահուկյանի [1959] աշխատության մեջ, որտեղ բերվում են բոլոր տիպերն ու ենթատիպերը, բացառություններն ու շեղումները, ներկայացված է 87 հարացույց, որոնցից 75-ը գոյական անուններին են, իսկ 12-ը ընդգրկում են ածականները, թվականներն ու դերբայները: Եթե նկատի ունենանք, որ այստեղ ներառված չեն հավաքական մասնիկներով կազմված հոգնակիի հոլովումները, օր.՝ *մանկտի-մանկտույ, մարդիկ- մարդկան, որեար-որերոյ*¹ և այլն, ապա այդ թիվն ավելի կմեծանա: Մյուս կողմից, սակայն, նկատելի է, որ տարբերակային ձևերը հաճախ առաջանում են ոչ թե ամբողջ հարացույցում, այլ այս կամ այն առանձին հոլովածնի կազմության մեջ:

Տարբերակային կամ փոփոխակային ձևերի այդ ամբողջ բազմազանությունը սահմանափակ թվով հոլովատիպերի հանգեցնելու (ինչպես նաև որոշ չափով ավանդականությունը պահպանելու) նպատակով հոլովման տիպերի առանձնացման, հետևաբար նաև նրանց անվանման համար հիմք ենք ընդունում եզակի սեռական հոլովի կազմությունը՝ մյուս հոլովներում առկա տար-

¹ Սրանք թերևս ծագումնաբանական և հ.-ե. համակարգի հետ ունեցած առնչությունների առումով այնքան էլ էական չեն, բայց յուրատեսակ կառուցվածքային տիպ են, որ չպետք է անտեսվեն, մանավանդ հայերենի հոլովման համակարգի հետագա պատմական զարգացման տեսակետից:

բերությունները դիտելով որպես ենթատիպերի կամ հոլովակազմական փոփոխակների արտահայտություն:

Փոփոխակային ձևերը նույնպես կարող են լինել տարբեր բընույթի: Նկատելի են հետևյալ առանձնահատկությունները:

1. Առաջին հերթին պետք է նշել ավանդաբար խառն հոլովում կոչվածները, երբ հոլովիչ ձայնավորը նույնը չէ ամբողջ հարացույցում. դրանք են արտաքին թեքման *ի-ա, ո-ա* խառն հոլովումները (*ի* և *ո* հոլովիչները գործում են եզ. թվի սեռ., տր., մասամբ՝ բաց. հոլովներում, և *ա* հոլովիչը՝ եզ. գործ. և հոգն. բոլոր թեք հոլովներում): Այս երևույթը համակարգային բնույթ ունի: Ավանդաբար ընդունված արտաքին թեքման երկու խառն հոլովումներին մենք ավելացնում ենք ևս երկուսը՝ *ու-ա, ոջ-ա*, քանի որ դրանց կազմության սկզբունքը նույնն է, այսինքն՝ եզակի գործիականում և հոգնակի թեք հոլովներում հոլովիչը փոխվում է:

2. Այնուհետև, արտաքին թեքման ենթարկվող որոշ բառերի հոգնակին կազմվում է *ք*-ով բաղադրված *այք, ակք, ինք, ունք* հոգնակերտներով, որով թվացյալ նմանություն է ստեղծվում ներքին թեքման հոգնակի հոլովման հետ, մանավանդ որ թեք հոլովներում բացի *ք*-ն *ց*-ով փոխարինվելուց, երբեմն տեղի է ունենում նաև ձայնավորի հերթագայություն՝ *քարինք -քարանց*. Ներքին թեքման դեպքում, սակայն, *ք*-ին նախորդող մասը մտնում է հիմքի կազմի մեջ, իսկ արտաքին թեքման ժամանակ սկզբնահիմքից դուրս է մնում:

3. Սրան հակառակ՝ որոշ դեպքերում ներքին թեքման պատկանող բառերի հոգնակին կարող է ունենալ տարբերակային զուգաձևություններ, որոնք նմանվում են արտաքին թեքման հոլովատիպերին՝ *դուռն - դրան => դրունք // դուրք, ոտն - ոտին => ոտք - ոտաց*: Այս երևույթը երբեմն ուղեկցվում է նաև տարահիմքությամբ՝ *ակն => աչք - աչաց, ունկն => ականջք - ականջաց*:

4. Հավաքական հոգնակերտների դեպքում փոխվում է հոգնակի թվի կազմության կառուցվածքային տիպը՝ հոլովաթվանիշ միասնական թեքույթի փոխարեն (որ թեքական լեզվատիպին բնորոշ առանձնահատկություն է) առկա է կցական կազմություն՝

հոգնակերտ + եզ. թվի հոլովանիշ վերջավորությունն՝ *իկ+ան, տի+ոյ, էար+ոյ* և այլն: Այս տիպը, խիստ հազվադեպ լինելով գրաբարում, հետագայում տարածվում է և դառնում հոգնակի թեք հոլովների կազմության հիմնական եղանակը միջին հայերենում և աշխարհաբարում:

5. Վերջապես, նկատելի են և հոլովիչ ձայնավորների փոփոխակային ձևեր՝ հիմնականում *ա*-ի երկբարբառացում, որը ձևականորեն համընկնում է ներքին սանդիհի հետևանքով առաջացած երկբարբառին (*ի+ա>եա՝ պատանի-պատանեալ*), բայց երբեմն ի հայտ է գալիս և այնպիսի բառերում, որտեղ հիմնային *ի* չկա՝ *եռանդն - եռանդեան, սիրիլլա - սիրիլլեայ, Կաղմոս - Կաղմեայ* և այլն:

Նշված բոլոր տարբերակային ձևերը մենք առանձին հոլովատիպերի չենք հանգեցնում, քանի որ անփոփոխ է մնում հոլովման տիպերի առանձնացման համար հիմք ընդունված՝ եզակի սեռական հոլովածևի կազմության սկզբունքը: Այլ է խնդիրը, երբ հենց եզակի սեռական հոլովածևում է առկա միաժամանակ և՛ հիմքի հերթագայություն, և՛ հոլովական թեքույթի հավելում (երբեմն ոչ սովորական), այսինքն՝ ներքին և արտաքին թեքման առանձնահատկությունների համակցում: Այսպիսի թեքման ենթարկվող բառերը խիստ սակավաթիվ են և ավանդաբար համարվել են անկանոն կամ զարտուղի հոլովման բառեր:

Այս կառուցվածքային առանձնահատկություններից ելնելով՝ գրաբարի հոլովման տիպերը ներկայացնում ենք ներքին թեքման, արտաքին թեքման ու համակցական խմբերի մեջ (տե՛ս Աղյուսակ № 1, 2, 3):

Աղյուսակների մասին պետք է նշել հետևյալը.

1. Մինևույն հոլովատիպի մեջ խմբավորվում են եզ. սեռ. Հոլովի նույն կազմությունն ունեցող ձևերը. մյուս հոլովներում եղած տարբերությունները դիտվում են որպես փոփոխակային ձևեր: Փոփոխակային ձևեր են համարվում նաև եզ. ուղղ. և սեռ. հոլովների միջև առկա հերթագայությունների տարբերությունները ներքին թեքման դեպքում, օր.՝ *ը/ա, ու/ա, ը/ա/ու, ու/ուա* և այլն,

որոնք բոլորն էլ մտնում են ներքին թեքման Ա հոլովման մեջ: Արտաքին թեքման դեպքում փոփոխակային ձևերը հանգում են փոխառյալ բառերի մեջ ուղղականի տարբեր վերջավորություններին, որոնք սեռականում ընկնում են: Որպես տարբերակային ձևեր բերվում են նաև այն բոլոր դեպքերը, որոնք որևէ յուրահատկություն են դրսևորում այս կամ այն հոլովի կազմության մեջ:

2. Աղյուսակները չծանրաբեռնելու նպատակով (ելևելով սույն ժողովածուի տպագրական հնարավորություններից)՝ չեն նշվում որոշյալ հայցականի *զ* և բացառականի կազմությանը միշտ մասնակցող *ի(յ)* նախդիրները: Եզակի ուղղ. և հայց. հոլովածները տրվում են մեկ վանդակում՝ որպես բառի ուղիղ ձև, նույն վանդակով են տրվում նաև եզակի սեռական և տրական, հոգնակի սեռական, տրական և բացառական հոլովները: Հոգնակի հայց. և ներքին թեքման հոգն. գործ. հոլովների համար վանդակներ չեն առանձնացվում, քանի որ նրանց կազմության սկզբունքը բոլոր տիպերի համար ընդհանուր է: Ներգոյական հոլովը նույնպես առանձին չի նշվում, քանի որ մեծ մասամբ համընկնում է եզ. տր. և հոգն. հայց. հոլովներին, իսկ շատ հարացույցներում ընդհանրապես բացակայում է:

3. Արտաքին թեքման դեպքում, եթե հիմքի և վերջավորության կցույթում տեղի են ունենում հնչյունափոխություններ, հիմքի հնչյունափոխված տարրը արտացոլվում է համապատասխան թեք հոլովածների բուն վերջավորություններից առաջ (օր.՝ *որդիւնոյ, Մանէ-եայ*): Հնչյունական անսովոր փոփոխությունների կամ տարահիմքության դեպքում բերվում է ամբողջ հոլովված բառաձևը՝ *կին-կանայք, ոտն-ոտք, ակն-աչք, այր-առն* և այլն: Նույնը վերաբերում է ներքին թեքման պատկանող միավանկ բառերին՝ *տուն - տան*:

4. Պակասավոր հարացույցների դեպքում բացակայող հոլովածնի վանդակում դրվում է « - » նշանը, հոլովակազմական գուգաձևությունները բերվում են «/» նշանով՝ *տեարց/տերանց, -եղց/-եղաց* և այլն:

5. Ներքին թեքման և համակցական տիպերի աղյուսակներում վերջին վանդակում նշվում են հարացույցում առկա բոլոր հնչյունական հերթագայությունները, արտաքին թեքման աղյուսակում՝ ուղղականի այն վերջավորությունները, որոնք ընկնում են սեռականում: Մնացած դեպքերում դրվում է Ø նշանը:

6. Հարացույցներում արտահայտություն են գտնում գոյականի հոլովի և թվի քերականական կարգերը, իսկ առկայացման կարգը, որը կապվում է հոդերի գործածության հետ, հարացույցների մեջ չի արտացոլվում:

Աղյուսակ №1.

ԱՐՏԱՔԻՆ ԹԵՔՈՄ

Հոլովում	Հոլով							Վերջավորություններ
	Եզակի				Հոգնակի			
	Ու, Հ	Ս,Տ	Բ	Գ	Ու	Ս, Տ, Բ	Գ	
(Եա)	տիտան	այ	այ	աւ	ք	աց	աւք	Ø
	Արշակ	այ	այ	աւ	-	-	-	Ø
	Քուշանք ¹	այ	այ	-	ք	աց	աւք	Ø
	Աննա	այ	այ	-	-	-	-	ա
	Ասիա	այ	այ	եաւ	-	-	-	իա
	Կեսարիա ²	այ	այ	-	-	-	-	(ի)ա
	Ղուկաս	այ	այ	աւ	-	-	-	աս
	Վրթանես	այ	այ	աւ	-	-	-	ես
	Հոմերոս	այ	այ	եաւ	-	-	-	ըս
	Գլիլիա	եայ	եայ	եաւ	-	-	-	իա
	Մանե	եայ	եայ	եաւ	-	-	-	է
	Հերակլես	եայ	եայ	եաւ	-	-	-	ես
	Արիստակես ³	եայ	եայ	եաւ	-	-	-	ես
	Տիմոթեոս	եայ	եայ	եաւ	-	-	-	էոս
	Տիբերիոս	եայ	եայ	եաւ	-	-	-	իոս
Տիգրանուհի	եայ	եայ	եաւ	-	-	-	(ուհ)ի	
Սիբիլա	եայ	եայ	եաւ	-	-	-	ա	
Կաղմոս	եայ	եայ	եաւ	-	-	-	ոս	
Ի	սիրտ	ի	է	իւ	ք	ից	իւք	Ø
	քար	ի	է	իւ	իւք	անց	ամբք	Ø
Ի-Ա	ամ	ի	է	աւ	ք	աց	աւք	Ø
	դիք ¹	-	-	-	դիք	դից	դիաւք	Ø

Ո	գայլ որդի հոգի ջուր ⁵ աղախին	ոյ ւոյ ւոյ ⁴ ոյ ոյ ոյ	ոյ ւոյ ւոյ ոյ ոյ	ով ւով ւով ջուրբ ով	ք ք ք ք այք	ոց ոց ոց ոց այց/ա նց/աց	ովք ւովք ւովք ջուրբք ովք	Ø Ø Ø Ø Ø
Ո-Ա	մաքի այգի տեղի	ւոյ ւոյ ⁴ ւոյ ⁴	ւոյ ւոյ ւոյ	եաւ եաւ եաւ	ք ք ք	եաց եաց եաց	եաւք եաւք եաւք	Ø Ø Ø
Ու	ցուլ զարդ	ու ու	է ուէ	ու ու	ք ք	ուց ուց	ուք ուք	Ø Ø
Ու-Ա	զար երեց	ու ու	ուէ ուէ	ու/ ուամբ	ք ուսք	աց անց	աւք ամբք	Ø Ø
Աս	գարուն մանուկ	ան ան	անէ անէ	ամբ ամբ	ք ուսք/ տիք	անց անց/ տւոյ	ամբք ամբք/ տւով	Ø Ø
Եան	տեսիլ ծնունդ	եան եան	ենէ ենէ	եամբ եամբ	ք ք	եանց ոց	եամբ ովք	Ø
Նջեան	տիւ	նջեան	նջենէ	նջեամբ	ք	-	-	Ø
Ուան	մահ	ուան	ուանէ	ուամբ	ուսք	ուանց	ուամբք	Ø
Ոջ-Ա	կին տիկին	ոջ ոջ	ոջէ ոջէ	կնաւ/ կանամբ աւ/ամբ	կանայք այք	կանաց/ այց աց/այց/ անց	կնաւ/ կանամբք աւք/ ամբք	Ø Ø

1 Անեգական անուններ

2 Հոլովվում է և *Գայլիլիա* բառի օրինակով:

3 Հոլովվում է և *Վրթանես* բառի օրինակով:

4.Տրականում ունի և *ւոջ* վերջավորությունը:

5 Հոլովվում է և *գայլ* բառի օրինակով:

6 Հոլովվում է և *Ու* հոլովմամբ:

Աղյուսակ № 2.

ՆԵՐՔԻՆ ԹԵՔՈՒՄ

Հոլովում	Հոլով						Հերթագայություններ
	Եզակի				Հոգնակի		
	Ու, Հ	Ս,Տ	Բ	Գ	Ու	Ս, Տ, Բ	
Ա	կողմն ատամն եռանդն եռանդն ստիկն մրջիմն տուն անուն պաշտպան դուռն ակն ունկն ոտն	ան ան ան եան եան ան տան ուան ման դրան ան ան ան	անե անե անե ենե ենե - տանե ուանե մանե դրանե նե անե անե	ամբ ամբ ամբ եամբ եամբ - տամբ ուամբ մամբ դրամբ ամբ ամբ ամբ	անք ունք - - ինք ունք տունք մունք րունք/ դուրք աչք ականչք ոտք	անց անց - - եանց անց տանց մանց րանց/ րաց աց աց աց	ը/ա ը/ա/ու ը/ա ը/եա ի/եա ը/ա/ու ու/ա ու/ուա աւ/ամա/ու ու/ա/ու, ո/ր ը/ա/Յ, ո/ր ը/ա/Յ ը/ա ը/ա/Յ
Ի (Ի-Ա)	անձն եզն բառն հարսն ոտն	ին ին ին ին ին	նե անե (ա)նե (ա)նե անե	ամբ ամբ ամբ ամբ ամբ	ինք ինք ինք ունք ոտք	անց անց անց անց ոտից	ը/ի/ա ը/ի/ա ը/ի/ա ը/ի/ու/ա ը/ի
Ե	աղբեր/իւր դուստր աստղ քոյր	եր եր եր քեռ	երե երե երե քեռե	երբ երբ երբ քերբ	երք երք երք եղք քորք	երց երց եղաց քերց	ել(իւ)/ե ը/ե ը/ե ոյ/ե/ու, ո/ր
ԵԱ	սիւն անկիւն եութիւն մրջիւն	սեան եան եան եան	սեանե իւնե ենե ենե	սեամբ եամբ եամբ եամբ	իւնք իւնք իւնք իւնք	սեանց եանց եանց եանց	իւ/եա իւ/եա իւ/եա իւ/եա
ԱԼ	հայր	հաւր	հաւրե	հարբ	հարք	հարց	այ/աւ/ա
Ու	աւր	աւուր	աւրե	աւուրբ	աւուրք	աւուրց	Յ/ու

1 Համանուն *ակն* հիմքը «աղբյուր» իմաստով հոլովվում է *ատամն*, իսկ «թանկագին քար» իմաստով՝ *կողմն* բառի նման:
 2 «Կանթ, բռնակ» իմաստով հոլովվում է *ատամն* բառի օրինակով:
 3 Տե՛ս նաև Ի հոլովման մեջ:

Հո- լո- վու մ	Հոլով						Յերթագա- յություններ
	Եզակի				Հոգնակի		
	Ու, Յ	Ս,Տ	Բ	Գ	Ու	Ս, Տ, Բ	
Ա	այր տեր	առն տեառն	առնէ տեառ նէ	առն տեառն	արք տեար ք	արանց տեարց/տ երանց	ա/ա, ր/ռն ե/եա/ե, ր/ռն
Ե	գիւղ/գեղ	գեղջ	գեղջէ	գեղջ	գիւղք	գիւղից	իւ(եւ)/ե, Օ/ջ
Ու	ծաղր արտաւար բարձր	ծաղու - բարձու	ծաղու - ծուէ	ծաղու - ծու/ծամբ	- ասուք ունք	- ասուաց անց	ր/ու /ա, ր/ու/ուա /ու/ա

Այսպիսով, դասական գրաբարի համար առանձնացվում են հետևյալ 21 հոլովատիպերը կամ հոլովումները, ինչպես ընդունված է անվանել հայագիտության մեջ.

I. Արտաքին թեքման 12 հոլովատիպ՝ որոնցից 8-ը պարզ՝ Ա (2 տարբերակով՝ Ա և Եա), Ի, Ռ, Ու, Ան, Եան, Նջեան, Ուան, և 4-ը խառն՝ Ի-Ա, Ռ-Ա, Ու-Ա, Ոջ-Ա,

II. Ներքին թեքման 6 հոլովատիպ՝ Ա, Եա, Ե, Ի (Ի-Ա)¹, Ու, Աւ,

III. Համակցական 3 հոլովատիպ՝ Ա, Ե, Ու:

Գրաբարի ավանդական քերականություններում (դասագրքերում և ձեռնարկներում) առանձնացվում են միայն արտաքին թեքման Ա, Ի, Ռ, Ու պարզ և Ի-Ա, Ռ-Ա, խառն հոլովումները և ներքին թեքման Ա, Ե պարզ և Ի-Ա խառն հոլովումները, ինչպես նաև մի շարք զարտուղի կամ անկանոն հոլովումներ: Ընդ որում, տարբեր գործերում նկատելի են զանազանություններ ու անհամապատասխանություններ ինչպես հոլովատիպերի անվանման, կանոնավոր ու անկանոն հոլովումների առանձնացման, այնպես էլ դրանց բաշխման պատկերը ներկայացնելիս:

¹ Իրականում ներքին թեքման Ի-Ա խառն հոլովատիպի առանձնացումը շեղում կլիներ մեր ընդունած սկզբունքից, քանի որ խառն հոլովումների առանձնացման հիմունքը հարացույցում տարբեր հոլովիչների առկայությունն է, իսկ ներքին թեքման դեպքում ընդհանրապես գործ ունենք ոչ թե հոլովիչի, այլ հիմքի ձայնավորների հերթագայությունների հետ: Ուստի տվյալ հոլովատիպն անվանվում է պարզապես «Ի», իսկ փակագծում նշվում է նրա ավանդական «Ի-Ա» անվանումը:

Գրաբարի հոլովատիպերի՝ մեր առաջարկած կառուցվածքային դասակարգումը, հաշվի առնելով հայագիտության մեջ մինչև այժմ եղած ուսումնասիրություններն ու դասակարգումները և ներառելով բոլոր «շեղումներն» ու «անկանոնությունները», հնարավորություն է տալիս միասնական կառուցվածքային հատկանիշի հիման վրա հասնելու դասակարգման առավել լիակատարության և անհակասականության՝ միաժամանակ նշելով հոլովատիպային անփոփոխակներն ու տարբերակային ձևերը:

Մեր դասակարգման մեջ հոլովման տիպերի տարբերակման առաջին քայլի հիմքը ներքին և արտաքին հոլովումների հստակ սահմանազատումն է, իսկ հաջորդ քայլում, այսինքն՝ առանձին հոլովումները որոշելիս հաշվի է առնվում հոլովիչ ձայնավորների տարբերությունը, որով առանձնացվում են պարզ և խառն հոլովումները: Հետևաբար, արտաքին թեքման հոլովատիպերի թիվն այստեղ ընդլայնվում է ի հաշիվ *Ան, Եան, Նջեան, Ուան* պարզ և *Ոջ-Ա, Ու-Ա* խառն հոլովումների, որոնց պատկանող անունները կա՛մ համարվել են գարտուղի հոլովում ունեցող, կամ մտցվել են այլ հոլովատիպերի մեջ (արտաքին թեքման *Ա* կամ այլ):

Ներքին թեքման հոլովատիպերի թիվը նույնպես ընդլայնվում է ի հաշիվ սովորաբար անկանոն համարվող *Եա, Աւ, Ու* հոլովատիպերի, որոնք ևս կա՛մ դիտվել են որպես անկանոն, կամ ներկայացվել են ներքին թեքման *Ա* հոլովման մեջ, թեև ուղղականի հակադրությամբ սեռական հոլովում առկա են հիմքի ձայնավորների այլ կարգի՝ հիմնականում երկբարբառների հերթագայություններ՝ *իւ-եա (սիւն-սեան), այ-աւ (հայր-հաւր), Փ/ու (աւր-աւուր)*: Ներքին թեքման խառն հոլովումներ ընդունելը, ինչպես նշվեց, օրինաչափ չենք համարում, քանի որ խառն հոլովումների առանձնացման հիմունքը հարացույցում տարբեր հոլովիչների առկայությունն է, իսկ ներքին թեքման դեպքում ընդհանրապես գործ ունենք ոչ թե հոլովիչի կցման, այլ հնչյունական հերթագայությունների հետ: Բացի այդ, ներքին թեքման մեջ չկա *Ի* պարզ հոլովում, հետևաբար նաև պարզ և

խառն (*հ* և *հ-Ա*) հոլովումների հակադրություն, ինչպես արտաքին թեքման դեպքում է: Այնուամենայնիվ, ավանդույթից շատ չհեռանալու նպատակով, ինչպես նաև արտաքին թեքման համակարգային հենարանը հաշվի առնելով՝ ներքին թեքման *հ* հոլովման անվանմանը զուգահեռ տալիս ենք նաև նրա ավանդաբար ընդունված *հ-Ա* անվանումը:

Ե, Ա, Ու համակցական հոլովատիպերն առանձնացվում են եզակի սեռական հոլովածնում ներքին ու արտաքին թեքման օրինաչափությունների զուգակցման հիման վրա:

Այսպիսով, մեր դասակարգման մեջ առանձնացվում են արտաքին թեքման *Ան, Եան, Նջեան, Ուան, Ոջ-Ա, Ու-Ա*, ներքին թեքման *Եա, Աւ, Ու* և համակցական *Ե, Ա, Ու* լրացուցիչ հոլովատիպերը, որոնց պատկանող բառերը սովորաբար համարվել են կա՛մ անկանոն («զարտուղի», «մասնական») հոլովման, կա՛մ այլ հոլովումների տարբերակային ձևեր:

Овсепян Лиана - Структурная классификация типов склонения в древнеармянском языке.- В истории армянской грамматической науки предлагались различные системы классификации типов склонения в древнеармянском языке. В основном выделялись типы внешней и внутренней флексии, а также отмечались отклонения или неправильные типы склонения. В статье предлагается структурная классификация на основании единого признака - формы род. падежа ед. числа. Выделяется 21 тип: 12 - внешнего склонения, из коих 8 простых и 4 смешанных, 6 - внутреннего и 3 - комбинированного типа склонения. Так наз. неправильные склонения распределены по вышеуказанным типам.

Hovsepyan Liana - Structural Classification of Declension Types in Old Armenian.- In the history of Armenian linguistics various classifications of Old Armenian declension types have been suggested. In general two main types of external and internal inflections and some irregular declension types were differentiated. The present article suggests a new structural classification based on the unique criterion of gen. sing form. 21 pattern types of Old Armenian nominal declension are differentiated: 12 of external (8 simple and 4 of mixed types), 6 of internal and 3 of combined types. The so-called irregular forms are distributed among the above mentioned 21 pattern types.

Ժամանակակից հայերենի բայի բառակազմական կաղապարները

Բայի բառակազմական կաղապարների մշակման համար ինչ-պես և անվանական բառակազմական կաղապարների դեպքում [1] կիրառվում է Ս.Կ.Շահումյանի և Պ.Ա.Սոբոլևայի [2] ձևային սերող քերականությունը:

Հիշեցնենք, որ բառակազմական կաղապարների բանաձևերում խոսքի մասերը նշվում են հետևյալ կերպ՝ R_1 - բայ, R_2 - գոյական, R_3 - ածական, R_4 - մակբայ: Որպես բառակազմական կաղապարի հիմք ընտրվում է արմատական (ոչ ածանցյալ) բառը: Արմատական բառերը ներկայացվում են որպես՝ OR_1 - բայ, OR_2 - գոյական, OR_3 - ածական, OR_4 - մակբայ:

Ինչպես և գոյականի բառակազմական կաղապարները նկարագրելիս [1, էջ 133], բառի սերման ամենաընդհանուր բանաձևը ներկայացվում է հետևյալ կերպ՝ OR_i^{n+1} , որտեղ i -ն խոսքի մասի համարն է ($1 < i < 4$), n -ը բառի սերման փուլն է:

Եթե բանաձևում ծայրային R_i -ին վերագրվի բայի արժեքը (R_1), կստացվի բայի $n+1$ փուլի սերման բանաձևը $OR_i^n R_1$:

Այս բանաձևից հետևում է, որ բայի բառակազմական կաղապարը ստացվում է բառակազմական շղթայից [3], որում տվյալ բայը եզրային է: Բառակազմական շղթան սահմանվում է որպես նույնարմատ բառերի շարք, որոնք իրար հետ կապված են հետևողականորեն սերման ածանցելիության հարաբերությամբ: Շղթայի ելակետային բառը ածանցյալ չէ (արմատական է) և կատարում է միայն ածանցող բառի դեր: Հաջորդ փուլերի բառերը (բացառությամբ վերջինի) միևնույն ժամանակ հանդես են գալիս և՛ որպես սերող, և՛ որպես ածանցյալ: Բառակազմական շղթան, հետևաբար նաև բառակազմական բանաձևը և կաղապարը, իրենց կառուցվածքով շատ բազմազան են, որը

բառակազմական շղթայում խոսքի մասերի հարաբերակցության, փուլերի քանակի և բառակազմական միջոցների բազմազանության հետևանք է: Կաղապարը՝ տվալ բանաձևի լեզվում իրականացումը, նշում է նաև բառակազմական միջոցը: Օրինակ՝ **OR₂R₁** բանաձևը իրականանում է տարբեր կաղապարներով՝ *-անալ (ճահճանալ)*, *-ավորել¹ (կահավորել)*, *-վել (ապառաժվել)* և այլն:

Բայի ածանցյալ և ոչ ածանցյալ լինելը որոշելու համար հիմք ենք ընդունում Լ.Յոսեփյանի [5, էջ 125] և մեր [2, էջ 135] աշխատություններում տրված սկզբունքներին:

Բառակազմական բանաձևերը և կաղապարները վեր են հանվել ժամանակակից հայերենի «Բայական բառակազմական կաղապարները» հենքից, որի բառացանկը պարունակում է մոտավորապես 5400 բայ, որոնց համար կաղմվել են բառակազմական կաղապարներ: Ստացվել են ամեն մի կաղապարին վերաբերող ածանցների արտադրողականության քանակական տվյալներ:

Չայտնի է որ արմատական բայերը հայերենում ըստ ձևույթակազմության բաղկացած են արմատից և վերջավորությունից, *-ել*, *-ալ* վերջավորությունները անորոշ դերբայի բառակազմական ածանցներ են: «Կառուցվածքային տեսակետից բայական ցուցիչ մասնիկներին կարող են նախորդել՝ ա. կրմատներ: բ. Ինքնուրույն բառակազմական նշանակություն ունեցող բայական ածանցներ, որոնց մեջ՝ կերպածանցներ՝ ոտ, ատ, տ, սեռածանցներ՝ եցն, ացն, ցն, վ: գ. Այլ ածանցներ, որոնք բայական ձևերում հանդես են գալիս ցուցչի հետ որպես բաղադրյալ ածանց (*-ան-*, *-են-*, *-ավոր-*): դ. Ելակետային ձևերի հիմքակազմ բաղադրական ածանցներ (և, չ), որոնք արդի հայերենում գործածական ձևերում բառակազմական նշանակություններ չեն դրսևորում» [4, էջ 242-243]:

¹ «Այս ածանցի բառակազմական արժեքը հատկապես ընդգծվում է այն կազմություններում, որոնք առանց բայական ցուցչի մասը որպես ինքնուրույն բառային միավոր լեզվում գործածական չէ» [4, էջ 245-246]:

Առաջին դեպքում (ա) ունենք արմատական բայեր՝ **OR₁** (*գրել, կարդալ*) և առաջին փուլի՝ այլ խոսքի մասերից սերված բայեր՝ **OR₁R₁** (**OR₂R₁**՝ *յուղել, թշնամել, OR₃R₁*՝ *ազատել, թեքել, OR₄R₁*՝ *հեռանալ, մոտեցնել*): Նշենք, որ արմատական բայերի (**OR₁**) քանակը հենքում 290 է:

Երկրորդ դեպքում (բ) կստանանք նույնպես առաջին փուլի սերման բայեր կերպածանցներով՝ **OR₁R₁** (*թռչկոտել, կտրատել*), սեռածանցներով՝ **OR₁R₁** (*եռացնել, աճեցնել, լվացվել*), այլ ածանցներով (*լցավորել, ծավավորել*):

Բայի բառակազմական կաղապարներ ստանալու համար առավել արդյունավետ եղանակ է՝ ստանալ կաղապարների բանաձևերի հաշվարկը, դուրս գրելով բայի սերման ամեն մի փուլի հավանական բանաձևերը (այսինքն՝ 1-ին փուլի համար՝ 4 բանաձև, երկրորդի՝ 16, երրորդի՝ 64 և այլն):

Առաջին փուլում սերվում են բայեր, որոնք կազմված են արմատական բայից **OR₁R₁**, արմատական գոյականից **OR₂R₁**, արմատական ածականից **OR₃R₁**, արմատական մակբայից **OR₄R₁**:

Բայից **OR₁R₁** բանաձևով սերված բայերի քանակը հենքում հասնում է 1000-ի. դրանց մեծ մասն ունի նախածանցով կազմված կաղապարներ (մոտ 800-ը), մնացածը վերջածանցավոր կազմություններ են:

OR₁R₁ բանաձևով նախածանցավոր կաղապարները ներկայացնենք ըստ դրանց արտադրողականության նվազման.

վեր(ա)՝ ավելի քան 200 բայ, (*վերօրհնել, վերանայել, վերաքրննել*), ներառյալ այլ կաղապարները, հենքում այս նախածանցով առկա է 400 բայ,

ներ՝ 115 բայ (*ներքաշել, ներշնչել, ներգրավել*), ընդամենը 136,

արտ(ա)՝ 88 (*արտագրել, արտաթորել, արտահանել*), ընդամենը՝ 112 բայ,

թեր(ա)՝ 83 (*թերածել, թերասնել, թերբռնել*), հենքում՝ 115,

գեր(ա)՝ 61 (*գերածել, գերազանձել, գերլարել*), հենքում՝ 86,

փոխ(ա)՝ 56 (*փոխադրել, փոխարկել, փոխաբերել*), հենքում՝ 80,

տար(ա)՝ 46 (*տարանջատել, տարագրել*), հենքում՝ ընդամենը 73 բայ,
կանխ(ա)՝ 41 (*կանխագրել, կանխազգալ, կանխորոշել*), հենքում՝ 48,
նախ(ա)՝ 40 (*նախագծել, նախատեսել, նախազգալ*), 72,
համ(ա)՝ 35 (*համընկնել, համալրել, համադրել*), ընդամենը 88 բայ,
հակ(ա)՝ 25 (*հակաճառել, հակակրել, հակամարտել*), հենքում՝ 39,
ստոր(ա)՝ 16 բայ (*ստորագրել, ստորաբաշխել, ստորագծել*), 19,
հար(ա)՝ ընդամենը 14 (*հարաբերել, հարատունել, հարակայել*),
առ՝ 13 ընդամենը բայ (*առգրել, առգրավել, առհոսել*),
բաց(ա)՝ ընդամենը 13 (*բացառել, բացորոշել, բացահայտել*),
մակ(ա)՝ ընդամենը 12 բայ (*մակագրել, մակածել, մակադրվել*),
ընդ՝ 10 բայ, (*ընդգծել, ընդգրկել, ընդհատել*), ընդամենը 54,
անդր(ա)՝ 8 բայ, (*անդրադառնալ, անդրածգել, անդրանետել*),
ան՝ 8 (*անտեսել, անհիշել, անգիտենալ*), հենքում առկա է մոտ 200 բայ, որոնց մեծ մասը ածականական ծագում ունի և կոիտարկվի **OR₃** պարունակող բանաձևերի ներքո,
տրամ(ա)՝ 7 օրինակ (*տրամաբանել, տրամաչափել, տրամադրել*), հենքում այս նախածանցով առկա է ընդամենը 15 բայ,
բաղ(ա)՝ 6 (*բաղադրել, բաղակցել, բաղակուտել*),
ենթ(ա)՝ 5 (*ենթարկել, երթածել, ենթադրել*), հենքում՝ 14 բայ,
ապ(ա)՝ 5 բայ (*ապանեխել, ապագողել, ապավիժել*), ընդամենը 34 բայ:

Նույն **OR_{1R₁}** բանաձևով կազմվում են վերջածանցավոր բայերը: Դրանց մի մասը կերպածանցներով կամ արմատի կրկնությամբ կազմված բայեր են (*պատռտել, ցատկոտել, շողշողալ, ջրկջրկել*): -վ սեռածանցով բայերի քանակն է 76 (*բացվել, գրվել, ծեծվել*): *-եցն, -ացն, -ցն* սեռածանցներով բայերը մոտ 57-ն են՝ *երևացնել, գոյացնել, եռացնել* և այլն: Մեր ընտրանքում այս բանաձևով վերջածանցավոր բայերի ընդհանուր քանակը չի գերազանցում 200-ը:

Դիտարկենք **OR_{2R₁}** բանաձևով սերված բայերը: Այս բանաձևով հենքում առկա է 935 բայ, որոնցից *-անալ* վերջածանցով

բայերի քանակը հասնում է 346 (ճահճանալ, ճորտանալ, անապատանալ), *-ավորել* վերջածանցով կա մոտավորապես 240 բայ (*պարենավորել, ակտավորել, նորմավորել*), կան բայեր՝ (*ա/ե/ցնել* վերջածանցով՝ 42 օրինակ (*առարկայացնել, աստվածացնել, օքսիդացնել*), *-վել*՝ 126 (*փալանվել, ապառաժվել, կոթողվել*), որոնցից 42-ը *-ավորվել* ածանցով (*անձնավորվել, ֆինանսավորվել, նյութավորվել*), *-ատել* վերջածանցով՝ 27 բայ (*բեկորատել, ճեղքատել, անկյունատել*):

OR₃R₁ բանաձևով սերվում է ավելի քան 600 բայ՝ հետևյալ ածանցներով.

-անալ՝ 388 բայ (*գիրանալ, ջերմանալ, փոքրանալ*), *-ացնել*՝ 165 բայ (*աշխուժացնել, ջերմացնել, կարմրացնել*), *-վել* վերջածանցով՝ 22 բայ (*սթափվել, հարթվել, կրկնվել*):

OR₄R₁ բանաձևով հենքում առկա է ընդամենը 24 բայ, որոնք ներկայացնում են հետևյալ կաղապարները՝ *-անալ* (*առաջանալ, վերջանալ, հեռանալ*), *-ացնել* (*առաջացնել, այժմեացնել, մոտեցնել*):

Ինչպես տեսնում ենք, **OR₁R₁** բանաձևի կաղապարներում առավել արտադրողական են նախածանցավոր կաղապարները, վերջածանցավորները կազմում են դրանց մեկ քառորդը: **OR₂R₁**, **OR₃R₁** և **OR₄R₁** բանաձևերով կաղապարներ ունեցող բայերը հիմնականում սերվում են վերջածանցմամբ:

Երկրորդ փուլի սերման բայերի բառակազմական կաղապարները ներկայացվում են հետևյալ 16 բանաձևերով 1)**OR₁R₁R₁**, 2)**OR₁R₂R₁**, 3)**OR₁R₃R₁**, 4)**OR₁R₄R₁**, 5)**OR₂R₁R₁**, 6)**OR₂R₂R₁**, 7)**OR₂R₃R₁**, 8)**OR₂R₄R₁**, 9)**OR₃R₁R₁**, 10)**OR₃R₂R₁**, 11)**OR₃R₃R₁**, 12)**OR₃R₄R₁**, 13)**OR₄R₁R₁**, 14)**OR₄R₂R₁**, 15)**OR₄R₃R₁**, 16)**OR₄R₄R₁**:

Սրանցից իրագործվում են **OR₁R₁R₁** բանաձևով 30 բայ, բոլորը նախածանցավոր, դրանց մի մասը՝ երկու նախածանցով (*փոխընդհարվել, գերարտադրել, թերաթողարկել*): **OR₁R₂R₁** բանաձևով հենքում առկա է մի քանի բայ (*փոխպայմանավորել, զսպանակել, կցորդել*), **OR₁R₃R₁** բանաձևով՝ 25 բայ (*գիտականալ, դիմացկունանալ, թափանցիկանալ*), **OR₁R₄R₁**-ով բայ չկա, **OR₂R₁R₁** - 180 բայ, որոնց մեծ մասը նախածանցավոր է, դրանցից 16-ը՝ *-ավորել*

վերջածանցով (*վերապլանավորել, փոխապայմանավորել, ներմարմնավորել*), 19-ը՝ *-անալ* ածանցով (*ապաբյուրեղանալ, ապակուլականալ, տարակենտրոնանալ*), 13-ը՝ *-(ա/ե)ցնել* ածանցով (*վերապատկերացնել, ապակենտրոնացնել, ապահայացնել*), 62-ը՝ *-վել* ածանցով (*արտապատկերվել, վերապատճենվել, ներշրթայվել*), **OR₂R₂R₁** բանաձևով՝ 17 բայ (*հարսնյականալ, գյուղացիանալ, ձիավորվել*), այս փուլում **OR₂R₃R₁** բանաձևով կաղապարները առավել արգասավոր են՝ մոտ 300 բայ, որոնցից 92-ը՝ *-ացնել* վերջածանցով, երբեմն էլ նաև նախածանցավոր բայեր են (*դժբախտացնել, դժգունացնել, գունեղացնել*), դրանցից 57՝ *ական-ացնել* (*աշխարհականացնել, բանվորականացնել, դեմոկրատականացնել*), 7-ը՝ *այն-ացնել* (*ազգայնացնել, նյարդայնացնել, ներվայնացնել*): *-անալ* ածանցով այս բանաձևով ունենք մոտ 100 բայ (*անճարանալ, աներեսանալ, հանճարեղանալ*), դրանցից՝ *ական-անալ* ածանցով՝ 28 բայ (*հուզականանալ, ձևականանալ, մահմեդականանալ*), 17-ը՝ *այն-անալ* (*ազգայնանալ, հանքայնանալ, մարդկայնանալ*) ածանցներով: **OR₂R₄R₁**-ով բայ չկա, **OR₃R₁R₁** բանաձևով ունենք 45 բայ, բոլորը նախածանցավոր, դրանցից 14-ը՝ *-անալ* ածանցով՝ (*ընդլայնանալ, գերնրբանալ, վերաթարմանալ*), 7-ը՝ *-(ա/ե)ցնել* ածանցով (*կանխագգուշացնել, ապախոշորացնել, վերակենդանացնել*), 14-ը՝ *-վել* ածանցով՝ (*ընդլայնվել, վերծգվել, համախառնվել*), **OR₃R₂R₁** բանաձևով հենքում առկա է մեկ օրինակ՝ *տարբերակել*, **OR₃R₁R₁**, **OR₃R₃R₁**, **OR₃R₄R₁** և **OR₃R₄R₁** բանաձևերով կաղապարներ չկան: **OR₄R₁R₁** բանաձևով կա 2 բայ (*վերառաջանալ, վերառաջացնել*), **OR₄R₂R₁**-ով ունենք 2 բայ (*առաջնորդել, առաջնորդվել*), **OR₄R₃R₁**՝ 5 բայ (*այժմեականացնել, մոտավորել*), **OR₄R₄R₁** բանաձևով բայ չկա:

Այսպիսով, երկրորդ փուլի սերման 16 բանաձևերից լեզվում իրականանում են 11-ը, ընդ որում՝ դրանցից արտադրողական կարելի է համարել երկուսը՝ **OR₂R₁R₁** (180) և **OR₂R₃R₁**-ը (300), որոնց հաջորդում են **OR₃R₁R₁** (45), **OR₁R₁R₁** (30), **OR₁R₃R₁** (25), **OR₂R₂R₁**(17), և **OR₃R₂R₁**, **OR₄R₁R₁**, **OR₄R₂R₁**, **OR₄R₃R₁**՝ մեկից

հինգ օրինակներով: Մնացած հինգ բանաձևերով (**OR₁R₄R₁**, **OR₂R₄R₁**, **OR₃R₃R₁**, **OR₃R₄R₁**, **OR₄R₄R₁**) կադապարներ չկան:

Երրորդ փուլի սերման բայերի բանաձևերի քանակը 64-ն է: Դրանք չեն ներկայացվում, քանի որ այդ փուլի սերման բայերի քանակը հենքում ընդամենը 37-ն է, և դրանք նկարագրվում են միայն երկու բանաձևով. **OR₂R₃R₁R₁**՝ 18 բայ (*ապագգայնացնել, համաժողովրդականացնել, համամարդկայնանալ*) և **OR₂R₃R₃R₁**՝ 19 բայ (*դրամատիկականացնել, ապօրինականացնել, ապապետականացնել*): Ի դեպ նշենք, որ այս երկու բանաձևերով բայերը երկպատճառաբանված են և երկու բանաձևերով էլ կարող են ներկայացվել՝ **OR₂R₃R₁R₁** / **OR₂R₃R₃R₁**:

Այժմ դիտարկենք բայերի բառաբարդման բառակազմական կադապարները: Առաջին բաղադրիչը՝ բայ **OR₁OR₁** բանաձևով բայերի քանակը 47 է (*ստուգաճշտել, անցաթողել, կարագարդել*):

Առաջին բաղադրիչը՝ գոյական **OR₂OR₁**. հենքում այս բանաձևով բայերի քանակը հասնում է 1000-ի: Դրանցից մոտավորապես կեսից ավելին կազմվում է ստորև բերվող հետևյալ 14 բաղադրիչներով: Դիտարկենք այս բանաձևի առավել արդյունավետ կադապարները ըստ երկրորդ բաղադրիչի քանակի նվազման.

հարել բայով՝ 154 օրինակ (*սարսափահարել, թմբկահարել, պոզահարել*),

պատել՝ 145 բայ (*մոմապատել, հայելապատել, կրապատել*),

գրկվել՝ 78 (*բաժնեգրկվել, գունագրկվել, աղագրկվել*),

գերծել՝ 47 (*փառագերծել, լիցքագերծել, սանձագերծել*),

հատել՝ 44 (*ծառահատել, հուսահատել, վիրահատել*),

արկել՝ 32 (*փաստարկել, ահարկել, անվանարկել*)

գրել՝ 20 (*ճառագրել, անդամագրել, հուշագրել*),

բանել՝ 17 (*փառաբանել, լուսաբանել, սիրաբանել*),

զօծել՝ 14 (*սնդկազօծել, լուսնազօծել, բռնկազօծել*),

կցել՝ 8 (*անվանակցել, արտասովակցել, անդամակցել*),

մարտել 8 (*ճակատամարտել, գոտեմարտել, թրամարտել*),

զարդել՝ 7 (*նկարագարդել, երիզագարդել, նախշագարդել*),

գրկել 7 (անտառագրկել, ցավագրկել, անվանագրկել):

Առաջին բաղադրիչը ածական՝ **OR₃OR₁** 93 բայ (պարզաբանել, բռնադատել, թերթևամտել):

Առաջին բաղադրիչը՝ մակբայ **OR₄OR₁** 30 բայ (առաջադիմել, շրջափակել, բոլորատնկել):

Կան ավելի բարդ կառույցներ.

OR₁OR₁R₁՝ 9 բայ (փոխանցագրել, վերափոխադրել, վերահավաքագրել): **OR₂OR₁R₁**՝ 46 բայ (ջրարգելակել, վերաբեմադրել, ապակողմնորոշել), **OR₂OR₂R₁**՝ 30 բայ (կենսաթոշակավորել, երկնականարել, կինտկրանավորել), սրանք հիմնականում բարդ գոյականներից կազմված բայեր են, ավելի ճիշտ է բանաձևը ներկայացնել հետևյալ կերպ՝ (**OR₂OR₂**)R₁:

OR₂OR₃R₁՝ 7 բայ (կողաթեքվել, աչալրջանալ, սանձարձականալ), այս կաղապարով ունենք նաև 19 բայ կիսա- առաջին բաղադրիչով (կիսահանդարտվել, կիսամերկացնել, կիսամթնեցնել): **OR₃OR₂R₁**՝ 21 բայ (բազմամարդանալ, պաղստտել, հաշմանդամանալ), այս դեպքում էլ կարելի է նշել հետևյալ բանաձևով՝ (**OR₃OR₂**)R₁:

Ինչպես երևում է դիտարկումների արդյունքներից, ժամանակակից հայերենում բայի բառակազմական բոլոր միջոցները՝ նախածանցումը, վերջածանցումը և բառաբարդումը դրսևորում են համարյա հավասար արտադրողական կաղապարներ:

Օգտագործված գրականություն

1. Մանուկյան Ա., ժամանակակից հայերենի գոյականի բառակազմական կաղապարները, Ջահուկյանական ընթերցումներ, Ե., 2006, էջ 133:

2. С.К.Шаумян, П.А.Соболева, Основания порождающей грамматики русского языка, Москва, Наука, 1968.

3. А.Н.Тихонов, Словообразовательный словарь русского языка, Москва, 1984.

4. Ս. Գալստյան, Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում, Ե., 1978:

5. Լ. Յովսեփյան, Բառերի ստուգաբանական և բառակազմական վերլուծությունը հայոց լեզվի զարգացման տարբեր փուլերում, Ջահուկյանական ընթերցումներ, Ե., 2006:

Манукян Анжела- Словообразовательные модели глаголов современного армянского языка.- В работе рассматриваются словообразовательные модели префиксальных и суффиксальных глаголов первого – третьего тактов порождения, а также сложных глаголов на материале “Базы словообразовательных моделей глаголов современного армянского языка”. Показывается, что все три способа словообразования в современном армянском языке – префиксация, суффиксация и словосложение почти одинаково продуктивны.

Manukyan Anzhela- Word-formative Verbal Models of the Modern Armenian Language.- The word-formative models of prefixal and suffixal verbs of the first - third derivation steps, and also the word-formative models of compound verbs on the material of "Database of word-formative verbal models of the modern Armenian language" are considered. It is become clear, that all three methods of word-formation in modern Armenian language - prefixation, suffixation and compounding are almost equally productive.

Աստվածածնի պատվանունները հայերենի բարբառներում

Աստվածամոր մասին առաջին վկայությանը հանդիպում ենք Եսայու մարգարեության 7-րդ գլխի «Էմմանուելը պիտի տարբերի չարն ու բարին» հաստատումով: Տերը, խոսելով Հրեաստանի թագավոր Օզիայի որդի Հովաթամի որդու՝ Աքազի հետ, ասում է. «Խորհրդատուում լինի, թե բարձունքում, քեզ համար նշան խընդրի՛ր քո Տեր Աստծուց»: Սակայն Աքազը հրաժարվում է Տիրոջը փորձելուց, որի պատճառով Տերը ինքն է նախաձեռնում նշան ցույց տալ և ասում է նրան. «Ահա կոյսը պիտի յղիանայ ու որդի ծնի, եւ նրա անունը պիտի լինի Էմմանուել»¹ :

Ինչպես նկատում ենք, Հին կտարականում Հովսեփի կին Մարիամը պարզապես կույս է կոչվում, որը տվյալ նախադասության մեջ պատվանունն է: Մաթեոս ավետարանիչը Հիսուս Քրիստոսի ծննդյան մասին խոսելիս աստվածամորը անվանում է *մայր, Հովսեփի նշանած և կին*, կամ պարզապես *Մարիամ*. «Յիսուս onceտոսի ծնունդը այսպես եղաւ. նրա մայրը՝ Մարիամը, որ Հովսեփի նշանածն էր...»² կամ «Յովսեփ, Դավթի՛ որդի, մի՛ վախեցիր քեզ մօտ առնելու Մարիամին՝ քո կնոջը»³: *Մայր* անվանմանը հանդիպում ենք Մաթեոսի («Մինչ Յիսուս դեռ խօսքն ուղղում էր բազմութեանը, ահա նրա մայրն ու նրա եղբայրները կանգնած էին դրսում...»⁴), Մարկոսի («Եկան նրա եղբայրներն ու մայրը»⁵), Ղուկասի («Նրա մօտ եկան իր մայրն ու եղբայրները»⁶) ավետարաններում: Ղուկաս ավետարանչի մոտ հանդիպում ենք կույս, Մարիամ անվանումներին («Վեցերորդ ամսին Գաբրիել հրեշ-

¹ Եսայի, 7.14

² Մատթեոս, 1. 18

³ Մատթեոս, 1. 20

⁴ Մատթեոս, 12. 46

⁵ Մարկոս, 3.31

⁶ Ղուկաս, 8.19

տակը Աստծու կողմից ուղարկուեց... մի կոյսի մօտ»¹ և «Մի՛ վախեցի՛ր, Մարիա՛մ»² կամ «Իսկ Մարիամը հրեշտակին ասաց»³ և այլն), *շնորհընկալ* կոչականին («Ուրախացի՛ր, ով շնորհընկալ, Տերը քեզ հետ է») և *աղախին* բառին, որով Մարիամը հայտնում է իր հնազանդությունը («Ահալասիկ ես մնում եմ Տիրոջ աղախինը»⁴): Մարիամն իրեն աղախին է անվանում Ղուկասի ավետարանի մի այլ՝ «Մարիամի օրհներգությունը» հատվածում («Նա իր հայեացքը դարձրեց իր աղախինի խոնարհութեան վրայ»⁵):

Աստվածամայրը, որը բնորոշվում է նաև Սիոնի դուստր, Նոր Եվա պատվանուններով, վայելում է քրիստոնյա աշխարհի սերը և մեծարանքը: Բազմաթիվ երգահաններ (Շուբերտ, Բախ, Ռախմանինով, Մոցարտ, Բրամս, Բիզե, Կաչչինի) «Ավե Մարիա» ըստեղծագործություններ են նվիրել տիրամորը, նկարվել են կտավներ (Վարդգես Սուրենյանց, Յովնաթանյաններ, մանրանկարիչներ Թորոս Ռոսլին, Սարգիս Պիծակ, Գրիգոր Աղթամարցի), պատմվել սրբազան ավանդազրույցներ: Արևմտյան եկեղեցում Աստվածածնի դերակատարությունն ավելի մեծ է: Տիեզերական երրորդ ժողովը սուրբ կոյսին տալիս է *Թեոդոքոս*, այսինքն՝ «աստուածակիր» տիտղոսը:

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու սրբադասմամբ Տիրամայրը սրբերի գլուխն է, դասվում է հրեշտակներից վեր և աստվածային նվիրապետության մեջ ստորակայվում է միայն Աբ. Երրորդությանը, այսինքն՝ Հայր Աստծուն, Որդի Աստծուն և Սուրբ Հոգի Աստծուն:

Միջնադարյան շարականների մեծացուցե աղոթքները հյուսվել են Տիրամոր գովքն անելու համար: Մեյրան սարկավագ Ղազարյանը, «Տիրամօր կերպարը Մեծացուցե շարականներում» հոդվածում անդրադառնալով առկա բազմաթիվ մակդիրներին, նշում է, որ Աստվածամոր հիմնական բնորոշիչները 4-ն են՝ *կոյս*,

¹ Ղուկաս, 1.26

² Ղուկաս, 1. 30

³ Ղուկաս, 1. 34

⁴ Ղուկաս, Ա, 26-38

⁵ Ղուկաս, 1. 46

*Աստվածածին, սրբուհի և մայր*¹: Ինչպես նկատում ենք, *կույսը* և *մայրը* սկզբնապես գործածվել են սովորական բառիմաստներով և հարգանվան իմաստ չեն ունեցել, իսկ *աստվածածինը* և *սրբուհին* պատվանուններ են:

Ժամանակի ընթացքում քրիստոնեության տարածման և քրիստոնյաների՝ Մարիամի հանդեպ ունեցած առանձնակի վերաբերմունքի հետեւանքով կերտվում են բազմաթիվ պատվանուններ, որոնցով հատկապես հարուստ են շարականները: Շարականագիրները Մարիամին անվանում են *լոյս, մայր լուսոյ կամ լուսոյ մայր, անճառելի լոյսի մայր, անսկզբնակից որդու բնակարան, անհասանելի տնօրինութեան մայր, Աստծու Բանի անձնաւորուած տաճար եւ ընկալող, բոլորի փրկութեան մայր, ամենասրբուհի, հոգնածների հանգիստ, աղբիւր անսպառ լոյսի, բնակարան աստուածային մարդեղութեան, տաճար, առագաստ, երկնային դուռ, ծառ կենաց* և այլն, և այլն: Այս շարքը կարելի է համալրել *ողջունընկալ* նորաբանությամբ, որը կերտել է Գրիգոր Տաթևացին «Գիրք հարցմանցում»²:

Հայրաբանական գրականության մեջ առկա պատվանունները և Տիրամոր հոմանիշները համապատասխան բնագրային օրինակներով ի մի են բերված Ա. Աբրահամյանի «Երկրագործական գործիքների անվանումները հայերենի բարբառներում» ատենախոսության մեջ³: Խոսելով *արոր* բառի փոխաբերական իմաստի մասին՝ Ա. Աբրահամյանը վկայաբերում է Ներսես Շնորհալուն, Գրիգոր Նարեկացուն, Աթանաս Ալեքսանդրացուն, Կյուրեղ Երուսաղեմացուն, Հովհան Ոսկեբերանին, Հովհաննես Օձնեցուն, Սիմեոն Երեւանցուն և այլ աստվածաբանների, որոնք Աստվածամորն անվանում են՝ *Լուսոյ մայր* և *տաճար Բարձրեալի Բանի*,

¹ Ղազարեան Ս., Տիրամոր կերպարը Մեծացուցե շարականներում, «Էջմիածին», 2009, Է, էջ 18:

² Տե՛ս Ս. Գրիգորյան, Նորաբանությունները Գ. Տաթևացու «Գիրք հարցմանցում», Ջահուկյանական ընթերցումներ, Ե., 2012:

³ Տե՛ս Ա. Աբրահամյան, Երկրագործական գործիքների անվանումները հայերենի բարբառներում, ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտ, թեկնածուական ատենախոսություն (ձեռագիր), Ե., 2011, էջ 67-71:

Չկուսածին անսերմնաւոր Չանապական և գողգեւոր (Ն. Շնորհալի), դուռն աղիւեալ, հովիտ անվար, անապատ անկոխ, կուսական արգանդ, կոյս արգանդ, անապական արգանդ, անսերմնական (անսերմն) արգանդ, անապատացեալ արգանդ, անարօր արգանդ, ամուլ արգանդ, անարատ արգանդ, ամենամաքուր արգանդ, լուսազգեստ արգանդ, հողենկար արգանդ, արգանդ... առանց կցորդութեան առն և այլն, և այլն:

Քրիստոնեական գրականութեան մեջ հանդիպում են նաեւ *տիրածին կոյս, լուսածին կոյս, կուսածին, յիսուսածին, վիմածին, Տալիթա* (եբր. *օրիորդ, կոյս*), *տեառնամայր, տիրամայր* և այլ հարգանուններ: Նշված բազմաթիվ պատվանուններին հակադրված է միայն *մարդածին* բացասական իմաստ կրող որոշիչը, որը Նեստորի կողմից կատարված հայիոյաբանություն է համարվում: Ինչպես նկատելի է, բերված օրինակները հիմնականում շրջասություններն են կամ վերաիմաստավորված, փոխաբերացված իմաստային միավորներ:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ գրական հայերենի բոլոր տարբերակներում ամենագործածականը *աստվածամայր, աստվածածին, տիրամայր* բարդություններն են, որոնք ուղեկցվում են *սուրբ* կամ *սրբուհի* մակդիրներով (*սուրբ աստվածամայր, սուրբ աստվածածին, սուրբ տիրամայր*, ինչպես նաև *սուրբ կոյս, մայր սուրբ* և այլն):

Թվարկված բազմաթիվ որոշիչներն ու մակդիրները բարբառային բառապաշարում արտահայտված չեն: Որպես կանոն հայերենի գրեթե բոլոր բարբառներում գործածվում են «աստվածածին» գրական փոխառության՝ տվյալ բարբառին բնորոշ ինչ-չատարբերակները: Հոգելեզվական այս ընտրությունը, իհարկե ոչ թե *աստվածածին*, այլ *աստված* հասկացության համար, փիլիսոփայորեն հիմնավորում է Էդ. Աթայանը իր «Հոգի և ազատություն» գրքում¹: Նա քննում է *ազատություն - արարիչ - արարչական* փիլիսոփայական կարգերի հարաբերակցությունը և հանգում այն եզրակացության, որ իր Ես-ը ամեն ինչից գերակայող

¹ Աթայան Է., Հոգի և ազատություն, Ե., էջ 137:

եսակենտրոն մարդ սուբյեկտը ընդունում է միայն Արարչի աներկբայելի, անընդվզելի, Ես-ի ազատությունը չսահմանափակող իշխանությունը: Աթայանն ասում է, որ յուրաքանչյուրը՝ Աստված և մարդ, իր տիրույթում իշխող է, և այդ է պատճառը, որ հանրությունը հակված չէ վերերկրայինը տարբեր լեզվական նշաններով արտահայտելու և դրանով իսկ սահմանափակելու իր ազատությունը: Հայտնի է, որ գրական լեզվի համեմատ բարբառային հաղորդակցությունը ավելի ազատ և բնական է, և այդ բնականությունը, ինչպես նաև ակնածական վերաբերմունքն են դրդում բարբառախոսներին բավարարվել միայն մեկ, տվյալ դեպքում *աստվածածին* խորհրդանշանով:

Հայերենի մի շարք բարբառներում (Նոր Ջուղա, Նախիջևանի Կ'աղ, Ուրմիա, Խոյի Կարակըզի և Բադիլբոյ, խոյեցիներով բնակեցված Արտաշատի Բուրաստան, Փերիայի Շուրիշկան, Մակուից եկածներով բնակեցված Ապարանի Վարդենիս, Ղարաբաղի Ուրզուլթուն, Մանազկերտի Բաղնու, Բոգդանովկայի Գանձա, Գորիսի Վաղատուր, Իջեանի Ծաղկավան, Սպարկերտի Տոսու և Վերին Հուրուբ, Ախալքալաք, Ախալքալաքի Բեժանո, Բերկրի, Մոկսի Կըճավ և այլն) պահպանվում է *աստվածածին* բառի գրական ձևը:

Համապատասխանաբար հետևյալ հնչատարբերակներն են գրանցված.

ա) արևելյան և պարսկահայ բարբառների խմբակցություն. *աստուվածածին* (Հավարիկ), *աստվածածըն* (Մարաղա), *ըստվածածին* (Գորիսի Շինուհայր), *աստւածածին* (Գորիսի Կորնիձոր), *աստըվածածին* (Նախիջևանի Փարաղաշ, Էջմիածնի Առատաշեն), *աստվածածին* (Իգդիրի Հախվերիս), *աստվածածին* (Աբովյանի Առինջ), *աստվածածին* (Կարճեան, Ղարաղաղի Սարդու, Բյուրականի Երևանի մայլա), *աստվածագին* (Աշտարակի Փարպի), *աստվածաճին* (Կարճեան, Կաքավաբերդ), *աստ^{ու}օծածին* (Թումանյանի Թեղուտ, Ստեփանավանի Կուրթան), *աստօծածին* (Եղվարդ, Իգդիրի Կողբ, Աբովյանի Բալահովիտ), *աստուծածին* (Վարդաշեն), *աստ^{ու}օծածին* (Լոռի), *աստըվածածին* (Խոյից Ե-

կածներով բնակեցված Արտաշատ, Մասիս), *ասորվաճածին* (Սուրմալուի Բլուր), *աստրվաճածին* (Եղեգնաձորի Խաչիկ, Գնի-
չիկ և Աղավնաձոր, Արարատ), *ասվաճածին* (Ագուլիս, Խոյ-Սալ-
մաստից եկածներով բնակեցված Էջմիածնի Խաթուն-Արիս, Ձո-
րաղբյուր, Մասիսի Այնթափ, Սիսիանի Ուզ), *ասպարածին* (Խոյ-
Սալմաստից եկածներով բնակեցված Էջմիածնի Աղավնատուն և
Հայթաղ), *ասվաճածին* (Բուրդուր, Խոյից եկածներով բնակեցված
Էջմիածնի Արագած, Աշտարակի Բյուրական և Անտառուտ, Շա-
րուր-Նախիջևանի Ուլյա, Նորաշեն), *ասվարածին* (Սուրմալուի
Դաշբուռուն), *աստվարածին* (Սուրմալուի Մոլլաղամար), *ըստը-
վաճածին* (Հաղորթի Զարամլուիս), *ըստվաճածին* (Թումանյանի
Թեղուտ, Ղարաբաղ, Մարտունու Նոր Շեն), *ըստըլըծածեն* (Շու-
շիի Ղարաղըշլաղ), *ըսսա՛ծին* (Ագուլիս), *ըստուճածին* (Գորիսի
Զարահունջ), *ըստուճածեն* (Ղարաբաղի Ղազարահող և Մաղա-
ղիս) և այլն:

բ) Արևմտյան տարածքի բարբառներ. *անստվաճածին* (Շատա-
խի Տղացպար), *աստրվաճածին* (Խիզանի Խարիղ), *աստվաճա-
ծին* (Համշեն, Ունիե, Բալլուղ), *աստվաճածին* (Երզնկա, Մուշ, Շա-
պին Գարահիսար, Խոտրջուրի Միջին թաղ, Սասունի Գելիեգու-
զանից եկածներով բնակեցված Աշտարակի Լեռնարոտ, Սասու-
նի Հոսներից գաղթածներով բնակեցված Թալինի Ներքին Սաս-
նաշեն, Խուրթի Շեն և Թաղավանք, Վերին Բասենի Ալիճագրակ,
Մուշ-Ալաշկերտից ներգաղթածներով բնակեցված Ապարանի
Ղալայչի, Արագած, Ատմա, Խարբերդի Հաբուսի, Նիկոմեդիայի
Արմաշ), *աստվոճածին* (Հաջըն), *հաստվաճածին* (Սպիտակի Շի-
րակամուտ), *ըստվաճածին* (Սասունի Ընգուզնակ, Սաղդուն),
անստվաճածին (Բայազետի Կարմիր գյուղ), *աստրվաճածին* (Ար-
ծափի Կոմսովիտ, Ալաշկերտից եկածներով բնակեցված Մար-
տունու Մաղինա, Բուլանուխի Գյաբոլներ), *ասղվաճածին* (Կարսի
Ղըզըլղոջ, Ճըջըխլար գյուղերից եկածներով բնակեցված Ղուկաս-
յանի Ցողամարգ), *ասղվաճածին* (Սվեդիա, Տիգրանակերտ), *աս-
վաճածին* (Երզնկա, Մալաթիա, Պոլիս, Տիգրանակերտ, Ակն, Խար-
բերդ, Եղեսիա, Եղեսիայի Գարմունջ, Արաբկիր, Մալաթիա, Խար-

բերդի Բագմաշեն, Բոգդանովկայի Փոգա, Նիկոմեդիայի Խասկալ, Սասունի Գոմք, Զղիի Յարդիֆ, Սեբաստիայի Չարա), *ասվածածին* (Եվդոկիա, Թոխաթ), *ասվամրամծին* (Դիադիսի Ջուջան), *ասվամծամծին* (Շատախի Արմշատ), *աստվամրամծին* // *աստվամծամծին* (Մոկսի Մամռտանց), *ասվածածին* (Մարաշ), *ասպարածին* (Վան, Մոկս), *ասպարածին* (Մուշ, Ալաշկերտի Ուլքիլիսա), *ասպածածին* (Արտամետ, Վանի Թիմարի շրջանի Մարմետ և Պողանց, Վանի Ավրակ, Մոկսի Յադին և Կըճավ), *ասպածածրին* (Մոկսի Խալենց), *ասպածածին* (Մուշ), *ասպըծածին* (Չեյթուն), *ասվածածին* (Վան, Արճակի Մանդան, Բիթլիսի Տուսու, Ախալքալաքի Բեժանո), *ասվածածին* (Մոտկանի Կոռ), *ասվածճածին* (Մոտկանի Նիջ), *ասվըծածին* (Ռոդոսթո), *ասվարածին* (Ապարան, Բուլանուխ, Մոկս, Վան), *ասվարածին* (Բուլանուխի Միրբար), *ասվամրամծին* (Շատախ) այլն: Էնկյուրիի թրքախոս հայերի բարբառում գործառական էր *ասվայիզին* հնչատարբերակը:

Աղաբազարում բարբառային մի քանի հնչյունափոխության արդյունքում *աստվածածին* բառը կորցրել է իր գրական հնչողությունը՝ վերածվելով *ածվըծած* հնչատարբերակի:

Ինչպես նկատելի է, որոշ հնչատարբերակներ բնորոշ են և՛ արևելյան, և՛ արևմտյան տարածքի բարբառներին:

Պարզ դիտարկման հիման վրա կարող ենք ասել, որ հնչյունափոխվել են *աստվածածին* բառի բոլոր ձայնավորները (ա > *աի*, *աի*, *ու*, *ը*, *ո*, *ու*, *ի* > *է*, *էի*, *ուի*, *ա*) և բաղաձայնները (տ > *դ*, *պ*, *ժ*, *ծ* > *ձ*, *ժ*, *զ*, *վ* > *ժ*): Առանձնապես կայուն են *ս* շփականը և բառավերջին *ն* ձայնորդը, չնայած դրանք և առանձին բարբառային կըղզյակներում հնչյունափոխված են (ս > *սս*, ն > *ժ*):

Կեսարիայի բարբառում *ասվազագին* հնչատարբերակը, որպես բազմիմաստ բառ, թրքախոս հայերից անցել է թուրքերին և թրքախոս հույներին՝ նշանակելով «1. Աստվածամայր, 2. աստվածածնի վերափոխման տոնը»: Ի դեպ, գրեթե բոլոր բարբառներում *աստվածածին* բառը իր հիմնական իմաստից բացի, փոխանունության արդյունքում նշում է աստվածածնի վերափոխ-

ման տոնի օրը: *Աստվածածին, Սուրբ Աստվածածին, Աստվածածին Վերին Կաթան, Սպիտակավոր (Աստվածածին), Ճերմակավոր (Աստվածածին), Ծիրանավոր (Աստվածածին), Կարմրավոր (Աստվածածին), Չորավոր (Աստվածածին), Կաթողիկե (Աստվածածին)* են կոչվում նաև աստվածածինն նվիրված եկեղեցիները:

Փերիայի Դագարջիրիբում *աստվածածան* հնչատարբերակը բացատրված է պարզապես «տոն օր» բառակապակցությամբ: Նման բացատրության հանդիպում ենք բարբառային նշումներով մի շարք տետրերում: Կարծում ենք՝ օգոստոսի 12-15-ը ընկած կիրակի օրը կատարվող Աստվածածնի վերափոխման տոնին՝ Խաղողօրհնեքին, ծանոթ չլինելու հետևանքով է բացատրությունը ոչ հստակորեն նշված:

Մառնեուլի Խոժռնի բնակավայրում որպես *աստվածածին* բառի ենթախոսվածքային համարժեք է գրանցված *աստղծուց ծընված* բառակապակցությունը: Ենթադրում ենք, որ լրացնողը՝ Երևանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական համալսարանի 4-րդ կուրսի ուսանողուհի Նարինե Վերմիշյանը, ոչ ճիշտ է ներկայացրել *աստվածածին* բառի իմաստը:

Բարբառային մի քանի կղզյակներում գրանցված է *աստվածամայր* բառը՝ հետեւյալ հնչատարբերակներով՝ *ասվածամէր* (Բուլանուխ), *ասվածամայր* (Երզնկա), *ասվածամար* (Մալաթիա), *ասղվածամար* (Լեհահայք):

Արճեշի Ծայծակ բնակավայրում գրանցված են *մայրաստվածածին*, Բուլանուխում՝ *տիրամէր* բառանվանողական զուգաբանությունները:

Ղարաբաղի տարածքի մի շարք բնակավայրերում գրանցված է *աստվածատուր* կազմությունը՝ համապատասխան հնչյունական տարբերակներով. *ըստըծատոր* (Մարտակերտի Ղազանչի), *ատուծատուր* (Մարտակերտի Չագլիկ), *ըստուծատուր* (Ճարտար), *ըստուծատոր* (Պողոսագոմեր, Դաթերք), *ըստուծատորք* (Զանյաթաղ): Մարտակերտի Առաջածոր գյուղի խոսվածքում *աստվածատուր*-ը հնչյունափոխվելով դարձել է *ըստըծատուր*, սակայն որպես անձնանուն գրանցված է մասնակի հնչյունափոխությամբ

Ասատուր ձևը, չնայած Ղարաբաղի տարածքում գործառական է նաև *Ճատուր* արտակարգ հնչյունափոխության ենթարկված տարբերակը: Պետք է ասել, որ ընդհանրապես *աստվածատուր* ածականը, որից էլ ունենք *Ասատուր* անձնանունը, նշանակում է «Աստծուց տրված՝ պարգևված» և ոչ թե «աստված տվող»¹: Ինչպես նկատելի է, վերոնշյալ տարածքում տեղի են ունեցել իմաստային տեղաշարժ և բազմիմաստության առաջացում:

Աստվածամոր մակդիր-պատվանուններից է *չարխափան*-ը, որը հանդիպում է հիմնականում արևմտյան տարածքի բարբառներում՝ Ակնում, Պոլսում, Կարինում, Մուշում, Վանում: Վանի վիլայեթում կար *Չարխափան Սուրբ Ասպարածին* անունով վանք:

Մարիամ աստվածածնին են նվիրված Այրարատ նահանգի ճակատք գավառի Սուրբ Մարիամ>Սուրբ Մարի բերդաքաղաքը և համանուն դաշտը՝ Սուռմառի>Սուռմառու>Սուրմալու անունով:

Արևելյան տարածքի Հադրութ, Գորիսի հոտ, Ղափանի Ներքին և Վերին հոտանան, արևմտյան տարածքի Ոգմ, Արծափ բնակավայրերում *աստվածամայր* հասկացությունը բառանվանողական զուգաբանությամբ արտահայտված է: Կարելի է ենթադրել, որ այդ տարածքներում գործառվել են այնպիսի բառաձևեր, որոնք բարբառակիրները չեն հիշել:

Հայերենի բարբառներում *աստվածածին* հասկացությամբ կազմվում են բառակապակցություններ, դարձվածքներ, առածներ, ասացվածքներ, անեծքներ և իմաստային այլ միավորներ: Օրինակ՝

Ասվածամէր քավոր էրինք, կարկըտան մըզկէ ուզեց (Բուլանուխ):

Աստվածածնուն բազը մտի, Սուրբ Խաչն արա, ծակը մտի (Աշտարակ, Աստապատ, Հավարիկ):

Աստվածածնուն տուն մտի, Սուրբ Խեչին սնդուն (թոնրի օղանցք) մտի (Աշտարակ, Լոռի):

Աստվածածին արա, բազը մտիր, Սուրբ Խաչն արա, ծակը մտիր, Մուղնուխտն արա, դուռը հետ արա (Սուրմալուի Կուլապ):

Տիրամօր բըրբ^ոօղ, բրին էլնա քու էրես (Բուլանուխ):

¹ Ստ. Մալխասեանց, Հայերեն բացատրական բառարան, հ. 1, էջ 246:

Աստվածամոր անվան հետ են առնչվում մի շարք բարբառային արտահայտություններ:

Մայրամաթռիկ (Վան)- «գատիկի տեսակի միջատ», *մարիամ ք^{ու}օլ^{ու}օջ* (Մուշ) - «գատիկ բլուճ», *մարիամա բանջար* (Արարատյան) // *սասպսծսմմօր պսնջսր* (Մուկս) - «թելուկ», *մարիամի ծանդիկ* (Արարատյան) - «բրաբիոն», *մայրամախոտ* (Շիրակ)- «մանրիկ թփերով հոտավետ բույս», *մայրամածաշ* (Շիրակ, Շիրվան-ջրղ, Ապարան)-«ձավարից- սպիտակաբանջարից՝ ծննդյան ճրագալույցի երեկոյան պատրաստվող կերակուր»:

Խ^{ու}օրվու (Ակն) - «տոն վերափոխման սուրբ Աստվածածնի», *խ^{ու}օրվուհ լալ^{ու}օր* (Ակն)- «մի տեսակ սալոր»:

Տիրամօր բրբռղ (Բուլանուխ) - «պալար, վերք», *տիրամօր քամի* (Վան) // *տիրամօր քամի* (Արարատյան, Մուշ)«հողացավ», *տիրամոր յարա* (Արարատյան, Մուշ, Վան, Մուկս, Մամըռտանցի Ապարանց և Սեղ) - «սիֆիլիսից առաջացած վերք, որը բուժելու համար ապավինում էին Տիրամոր վանքին» // *կ^իերցավ* (Վան)- «վերք, փտախտ»: Ըստ Խլղաթյանի՝ Կերա աստվածուհուց պատժված :

Տիրամ^{ու}օր ընկնավ^{ու}օր (Վան) - «լուսնոտություն, որ վերագրում են Աստվածամոր ազդեցությանը և կեղծ մարգարեական գուշակություններով դրամահավաքություն են կազմակերպում»:

Այսպիսով, հայերենի և՛ արեւելյան, և՛ արևմտյան խմբակցության բարբառներին բնորոշ է *աստվածածին* պատվանունը՝ համապատասխան հնչափոփոխակներով: Միայն սակավ թվով բարբառային կղզյակներ գործառում են *աստվածամայր*, *աստվածատուր*, *տիրամայր* բարդությունները՝ համապատասխան հնչյունական զուգաբանություններով:

Օգտագործված գրականություն

- ՀՀ զԱԱ լեզվի ինստիտուտի բարբառային ձեռագիր նյութեր:
Աստուածաշունչ մատենան Հին Եւ Նոր կտակարանաց, Հայաստանի
աստուածաշնչային ընկերություն, 1997:
- Աբրահամյան Ա., Երկրագործական գործիքների անվանումները
հայերենի բարբառներում (թեկն. ատենախոսություն), Ե., 2011:
- Աթայան Է., Հոգի և ազատություն, Ե., 2006:
- Աղայան Է. Ընդհանուր և հայկական բառագիտություն, Ե., 1984:
- Աճառեան Հ., Հայերեն գաւառական բառարան, Թիֆլիս, 1913:
- Ավետիսյան Զ., Աստվածամոր պատկերները Թորոս Տարոնացու
նկարագրող ձեռագրերում, «Էջմիածին», 2006, Ե.:
- Ավետիսյան Զ., «Աստվածամոր ննջի» պատկերասիրությունը հայ
միջնադարյան արվեստում, «Էջմիածին», 2007, Ը:
- Գիւտ աւագ քահանայ Աղանեանց, Կարգ աստուածպաշտութեան
Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ, Թիֆլիզ, 1904:
- Ղազարեան Ս., Տիրամօր կերպարը Մեծացուցե շարականներում,
«Էջմիածին», 2009, Է:
- Ղանալանյան Ա., Հայկական առածանի, Ե., 1951:
- Մալխասեանց Ս., Հայերեն բացատրական բառարան, հհ. I-IV, Ե.,
1944-1945:
- Շարական, աշխարհաբարի վերածեցին Ա. Մադոյանը և Գ. Մադո-
յանը, Ե., 2001:
- Պետրոսյան Հ., Հայերենագիտական բառարան, Ե., 1987:
- Ջահուկյան Գ., Հայ բարբառագիտության ներածություն, Ե., 1972:
- Ջահուկյան Գ., Աղայան Է., Առաքելյան Վ., Քոսյան Վ., Հայոց լեզու,
1-ին մաս, Ա պրակ, Ե., 1980:
- Տեր-Միքելյան Ա., Հայաստանյայց Սուրբ Եկեղեցու քրիստոնեականը,
Ս. Էջմիածին, 2007:
- Տեր-Վարդանեան Գ., Թովմա Մեծովեցու նորայայտ՝ Ս. Աստուա-
ծածնի աւետման նախատօնակի ճառը, «Էջմիածին», 2008, ԺԲ:
- Քրիստոնյա Հայաստան (հանրագիտարան), Ե., 2002:
- Օրմանեան Մաղաքիա արք., Ծիսական բառարան, Անթիլիաս, 1957:

Месропян Айкануш- Почтительные имена Богоматери в армянских диалектах.- В статье представлена общая характеристика диалектных почтительных имен Богоматери.

В Ветхом Завете Мария названа просто *девой*. Евангелисты Богоматерью называют *девой, матерю, женихом Жозефа и женщиной, слугой* или просто *Марией*. В Шараканах встречаются разные почтительные имена Богоматери.

В литературном армянском языке больше всего употребляются сложные слова *սուղիծաւիսյր, սուղիծածին, տիրաւիսյր*, которые сопровождаются эпитетом *святая*.

И в восточных, и в западных армянских диалектах больше всего употребляется слово *սուղիծածին*.

В армянских диалектах часто встречаются фразы, поговорки связанные с именем Богоматери.

Mesropyan Haykanush- The Honorary Names of “Mother of God” in the Armenian Dialects.- The present article studies the honorary names of “Mother of God” in different regions.

In Old Testament Mary is referred to as virgin. The disciples called Holy Mother as “the Virgin”, “the Mother”, “Joseph’s wife and spouse, servant” or simply Mary. In psalms Mary has a lot of honorary names.

The most common versions in the literary Armenian are “Mother of God”, “Holy Mother”, “the Madonna” which are generally modified by the attribute “holy”.

The honorary name “Mother of God” with its corresponding variants is typical of both the Eastern and the Western Armenian dialects. Only a few dialects use the complex forms of “Our Lady”, “the Madonna”, “the Virgin Mary”, “the Blessed Virgin” and “the Virgin”.

In the Armenian dialects the expression “Mother of God” is often found in word combinations, metaphors, sayings, proverbs, curses and other linguistic units.

Բայի երկրորդական բաղադրյալ ժամանակները Ջուղայի և Ագուլիսի բարբառներում

Ջուղայի և Ագուլիսի բարբառները մտնում են արևելյան խմբակցության տարբեր ենթախմբերի մեջ: Դրանք կրողները դարեր ի վեր ապրել են վարչատնտեսական տարածքային հարևանությամբ: Այս բարբառների բայական համակարգերի երկրորդական բաղադրյալ ժամանակները ուսումնասիրել ենք՝ հիմնականում հենվելով Հ. Աճառյանի և Ս. Սարգսյանցի համապատասխան աշխատություններից քաղած նյութերի վրա: Օգտագործել ենք նաև հրատարակված այլ աշխատություններ և ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտում առկա՝ ՀԲԱ («Հայերենի բարբառագիտական ատլաս») ծրագրով հավաքված ձեռագիր նյութերը:

Հետազոտության ժամանակ հիմք ենք ընդունել հայերեն բարբառների բազմահատկանիշ դասակարգումը, ըստ որի՝ Ջուղայի բարբառը բաղկացած է Ջուղայի, Նոր Ջուղայի և Լիվասիանի, իսկ Ագուլիսի բարբառը՝ Ագուլիսի և Ցղնայի խոսվածքներից [Զահուկյան, էջ 135-136]: Ուսումնասիրելով վերոհիշյալ ձեռագիր նյութերը՝ գտել ենք, որ Ջուղայի բարբառին են պատկանում նաև Փերիայի գավառի (Պարսկաստան) որոշ գյուղերի ենթախոսվածքները: Ցավոք, վերը նշված բարբառային բոլոր միավորներով խոսող հանրություններ ներկայումս Հայաստանի Հանրապետությունում չեն բնակվում: Ընդհանրապես, այս բարբառները (հատկապես Ջուղայի բարբառը) կրողների վերաբերյալ տեղեկությունները շատ չեն, ուստի հարմար ենք գտնում մի փոքր պատմական անդրադարձ կատարել:

Հ.Աճառյանը գրում է, որ Պարսկաստանի հայախոս «Նոր-Ջուղայի թեմը սկսվում է Կասպից ծովի եզերքում գտնված Էնգելի քաղաքից, սփռվելով Պարսկաստանի ամբողջ արևելյան և հարավային գավառները, հասնում է մինչև Հնդկաստան, Բիրմա-

նիա և Ջավա» [Աճառեան, 1940, էջ 9]: Ըստ հեղինակի՝ Էնգելիից մինչև Նոր Ջուղա բնակչությունը խոսում է մի բարբառով, որը շատ նման է Արարատյանին, իսկ Նոր Ջուղայից մինչև Ջավա բնակչությունը խոսում է մեկ այլ բարբառով, որը նա անվանում է Նոր-Ջուղայի բարբառ (իմա՝ Նոր Ջուղայի խոսվածք) [սույն տեղում, էջ 13-14]: Պատմությունից հայտնի է, որ վերոնշյալ տեղանքի բնակչությունը բռնի տարհանվել է Արարատյան գավառներից՝ 1605-1606 թթ.: Սկզբում ջուղայեցիները բնակություն են հաստատել Նոր Ջուղայում, որը նրանք հիմնեցին Պարսկաստանի Սպահան քաղաքի մոտակայքում, Սպահանի գյուղերում, Փերիայում, Չարմահալի շրջաններում՝ մինչև Համադան և Շիրազ: Այնուհետև գաղթելով՝ հասել են Հնդկաստան, Ջավա, ապա՝ Թեիրան, Ղազվին, Ռաշտ ու Էնգելի [տե՛ս սույն տեղում]: Եվ, բնականաբար, տարբեր վայրերից հավաքված հայ բնակչությունը լեզվական առումով միատարր լինել չէր կարող: Մեծ լեզվաբանը փաստում է, որ Նոր Ջուղայի բարբառային միավորը արդեն 20-րդ դարի սկզբներին անհետանալու ընթացքում էր, որովհետև դրանով հագիվ մի 2000 մարդ էր խոսում, այն էլ հին սերնդի ներկայացուցիչները [սույն տեղում, էջ 24]: Այն Ջուղայի (Հին Ջուղա) խոսվածքի համեմատ փոխվել է՝ հատկապես կրելով Արարատյան բարբառի ազդեցությունը. ունի շնչեղ ձայնեղներ, երկբարբառներ: Իսկ ընդհանուր բառամթերքի առումով, Նոր Ջուղայի խոսվածքը ավելի մոտ է Ղարաբաղի և Ագուլիսի բարբառներին: Այնուամենայնիվ, հեղինակը գտնում է, որ «Նոր-Ջուղայի բարբառի նախահայրենիքն էլ Հին-Ջուղայում է...» [Աճառեան, 1940, էջ 23, 26]:

Ջուղայի բարբառի բայական համակարգը ունի *ՈւՄ* ճյուղին բնորոշ յուրահատկություններ: Միայն մի քանի բայերի ներկան և անցյալ անկատարը կազմվում են *-ման* ձևույթ ունեցող դերբայով: Հ. Աճառյանը գտնում է, որ *-ման*-ով բայական ձևերը ավելի հատուկ են եղել Հին Ջուղայի բարբառային միավորին և իր ուսումնասիրության պահին գործածական էին հնդկահայերի միջավայրում: Իսկ Նոր Ջուղայում *-ման*-ը «պահվում է միայն

գալ, լալ, տալ, կալ միավանկ բայերի ծայրը՝ կազմելով այպես մի տեսակ համադրություն Երևանի բարբառի միավանկ բայերի *-լիս* ներկայի հետ»՝ *գօլման, լալման, տալման, կալման* [Նույն տեղում, էջ 255]: ԳԱԱ լեզվի ինստիտուտում առկա բարբառային ձեռագիր նյութերում Հին Ջուղայի ենթախոսվածքը (տետր թիվ 174), իրոք, զգալիորեն տարբերվում է Հ. Աճառյանի նկարագրած Նոր Ջուղայի խոսվածքից: Բարբառային այդ միավորը գրանցող Դարիկո Կոստանոյանի կարծիքով՝ հինջուղայեցիները բազմիցս գաղթել են տեղից տեղ, ուստի նրանց լեզվի և՛ հնչյունական, և՛ ձևաբանական համակարգերը կրել են բազմաթիվ այլ՝ հատկապես Արարատյան և Դարաբաղի բարբառային ազդեցություններ (օրինակ՝ բառասկզբի ձայնեղ բաղաձայնների խլացումը): Սակայն Դ. Կոստանոյանի հավաքած նյութերում, ի տարբերություն Հ. Աճառյանի բերած փաստարկի, *-ման* վերջավորությամբ սահմանականի ներկայի կազմություններ գրանցված չեն: Նույնիսկ վերոհիշյալ բայերի բացառությունները այստեղ ընդհանուր օրենքին են ենթարկվում՝ *կ՞օլքմ (քմ, քս, ա...)*, *տալքմ (քմ, քս, ա...)* և այլն [տե՛ս Նույն տետրում]:

Ջուղայի, ինչպես և արևելյան խմբակցության մյուս բարբառներում, գլխավոր բաղադրյալ ժամանակները կազմվում են *եմ* օժանդակ բայի օգնությամբ: Այս բայը խնդրո առարկա բարբառի խոսվածքային միավորներում ունի իր տարբերակները: Այսպես, Նոր Ջուղայի խոսվածքում և Փերիայի գավառի Սպահանի շրջանի Հադան գյուղի ենթախոսվածքում (տետր թիվ 216) *եմ*-ի սահմանականի ներկան է՝ *ամ, աս, ա, անք, ա/էք, ան*, Հին Ջուղայում (տետր թիվ 174)՝ *եմ, քս, ա, քնք, էք, էն*, Փերիայի գավառի Միլակերտի ենթախոսվածքում (տետր թիվ 242)՝ *եմ, էս, ա* և այլն, Նամագերդ գյուղի ենթախոսվածքում՝ *՞եմ, ՞ես, է, ՞էնք, էք, ՞էս* (տետր թիվ 328): Ինչ վերաբերում է օժանդակ բայի սահմանականի անց. անկատարին, այն խոսվածքային տարբերակվածություն չունի՝ *ի, իր, էր, ինք, իք, ին*: Ի դեպ, Նոր Ջուղայի և Հադան գյուղի խոսակցական լեզվում *ե/է*-ի (*եմ, էս, է...*) դիմաց

եզակի և հոգևակի թվերի բոլոր դեմքերում *ա*-ի առկայությունը, կարծում ենք, օժանդակ բայի եզակի երրորդ դեմքի *ա*-ի (արևելյան խմբակցության բարբառներին հատուկ) համաբանության արդյունք է:

Բայական համակարգերում երկրորդական բաղադրյալ ժամանակները, բնականաբար, գործառում են գլխավորներին զուգահեռ: Ինչպես հայտնի է, երկրորդական են համարվում այն բաղադրյալ ժամանակաձևերը, որոնք կազմվում են մեկ այլ՝ ինքնուրույն համարվող, սակայն սրանցում որպես օժանդակ բայ ծառայող, խոնարհված բայաձևերի օգնությամբ Բարբառային այդ կառույցներում սովորաբար նման դեր է կատարում *լիսեւի*-ը: Թեպետ, պետք է նշել, որ ոչ միշտ են այդպիսի բայաձևերը գործառում երկրորդաբար, քանի որ տվյալ համակարգում դրանց զուգահեռ այլ ձևեր հնարավոր է՝ չլինեն, ինչպես օրինակ՝ Մեղրու բարբառի Մեղրու խոսվածքում բացակայում են երկրորդական ժամանակները՝ չնայած *լիսեւի* բայով կազույթունների առկայությանը [տե՛ս Աղայան]:

Յ. Աճառյանը բարբառագիտական իր աշխատություններում սովորաբար չի առանձնացնում խնդրո առարկա ժամանակները՝ որպես այդպիսիք: Նման դեպքերում բային վերաբերող «Բաղադրեալ ձևեր» ենթավերնագրի ներքո հեղինակը, ի թիվս գլխավորների, բերում է նաև *լիսեւի* բայով կազմված բաղադրյալները (բոլորը տրված են եզակի առաջին դեմքով): Նոր Ջուղայի խոսվածքում դրանք են. *բ՛երած յէլա* «բերած եղա», *բ՛երած պըտի յ՛էլմ՛էմ* «բերած պիտի լինեմ», *բ՛երած պըտի յ՛էլնի* «բերած պիտի լինեի», *բ՛երած ամ յ՛էլ՛էլ* «բերած եմ եղել», *բ՛երած ի յ՛էլ՛էլ* «բերած էի եղել», *բ՛երած յ՛էլմ՛էմ* «բերած լինեմ», *բ՛երած յ՛էլնի* «բերած լինեի», *բ՛երած կ՛էլմ՛էմ* «բերած կլինեմ», *բ՛երած կ՛էլնի* «բերած կլինեի», *թ՞ոյ բ՛երած յ՛էլմ՛էմ* «թող բերած լինեմ», *թ՞ոյ*

բէրած յ'ելնի «թող բերած լինեի», բ՛երելու յ'ելն'եմ «բերելու լինեմ», բ՛երելու յ'ելնի «բերելու լինեի», բ՛երելու կ'ելն'եմ «բերելու կլինեմ», բ՛երելու կ'ելնի «բերելու կլինեի», բ՛երելու յեւա «բերելու եղա» [Աճառյան, 1940, էջ 267]: Սրանք կազմված են խոնարհվող բայի (տվյալ դեպքում «բերել») հարակատար և ապառնի դերբայների ու լինել օժանդակ բայի խոնարհված ձևերի հարադրությամբ: Ինչպես կարելի է վերոբերյալ օրինակներից նկատել, բայի եղանակներից բացակայում է միայն հրամայականը: Տվյալ դեպքում խոնարհվածը ներգործական սեռի բայ է, սակայն, կարծում ենք, նույն կերպ կխոնարհվեն նաև չեզոք (օր.՝ *խօսացած յեւա*), կրավորական (*սիրված յեւա*) սեռերի բայերը:

Չիշյալ բարբառային բայաձևերը, իսկապես, պետք է առանձնացնել որպես բայի երկրորդական բաղադրյալ ժամանակաձևեր, քանի որ խոսվածքն ունի միայն *եմ* օժանդակով խոնարհված, այսպես կոչված, գլխավոր բաղադրյալ ժամանակներ նույնպես՝ *մ'ուռանում ամ (աս, ա և այլն)*, *մ'ուռանում ի (իր, էր և այլն)*, *մ'ուռաց'ել ամ (աս, ա և այլն)*: Ի տարբերություն արևելյան իմբակցության այլ բարբառային միավորների, օրինակ՝ Կարճևանի խոսվածքի, Արարատյանի որոշ ենթախոսվածքների՝ անկատար դերբայով երկրորդական բաղադրյալ ժամանակաձևեր Նոր Ջուղայում չեն կազմվում, իսկ համակատար դերբայ (*-լիս* ձևությամբ կազմությունն)՝ որպես այդպիսին, խոսվածքը չունի:

Մեծ լեզվաբանը հիշյալ բարբառային միավորում նկատել է նաև խիստ յուրօրինակ այլ ժամանակաձևեր: Այսպես. նա գրում է, որ սահմանականի *ապառնի ներկան* «կազմելու համար ստորադասական (իմա՝ ըղձական - ժ.Մ.) ներկայի վրայ դնում ենք *մամ, մաս, մա, մանք, մեք, ման*, իսկ անցեալի վրայ՝ *մի, միր մ'եր, մինք, միք, մին*» [Աճառեան, 1940, էջ 260-261]: Սրանք, ըստ հեղինակի, կազմվել են *ուզել* բայի խոնարհված ձևերի օգնությամբ: Ավելի ստույգ՝ *եմ* օժանդակ բայի ներկայի և անցյալի ձևերին է միացել *ուզում* անկատար դերբայի վերջին *-մ* հնչյունը: Ինչպես՝

ապառնի ներկա եզ.թ. - մամ խաղամ < ուզում ամ խաղամ, մաս խաղաս < ուզում աս խաղաս, մա խաղա < ուզում ա խաղա, հգն.թ. - մանք խաղանք < ուզում անք խաղանք, մէք խաղէք < ուզում էք խաղէք, ման խաղան < ուզում ան խաղան: Սրա ապառնի անցյալը է՝ եզ.- մի խաղի < ուզում ի խաղի, միր խաղիր < ուզում իր խաղիր, մեր խաղեր < ուզում էր խաղեր, հգն.- մինք խաղինք < ուզում ինք խաղինք, միք խաղիք < ուզում իք խաղիք, մին խաղին < ուզում ին խաղին: 3. Աճառյանը գտնում է, որ հիշյալ ժամանակները կազմվում են պարսկերենի ապառնիի համաբանությամբ, որտեղ ապառնի ժամանակը կազմվում է ուզել (xāstan) բայի խոնարհված ձևերի համադրությամբ: Իսկ հայերեն բարբառներում սա նոր երևույթ է: Հնչյունների սղման այս դեպքերը, ըստ հեղինակի, հավանաբար «արագաբանության» հետևանք են [Աճառեան, 1940, էջ 260-261]:

Հարկ է նշել, որ, ընդհանրապես, նախաշեշտ վանկի անկումը խոսքի շղթայում հատուկ է արևելյան խմբակցության հայերեն բարբառներին: Սակայն վերը բերված օրինակներում հատկանշական է, որ սղվել է ոչ միայն անշեշտ վանկ ու-ն, այլև մյուս՝ շեշտված վանկի երկու հնչյունը՝ -գու-ն: Հավանաբար խոսքի արագաբանության հետևանքով հնչաշղթայում գործել է ինչպես ներքին *ամփոփման օրենքը*:

3. Աճառյանը Նոր Ջուղայի խոսվածքին հատուկ մեկ այլ ապառնի բաղադրյալ ժամանակածն էլ է հիշատակում՝ այն անվանելով «անորոշ ապառնի», որը «...ցույց է տալիս, որ գործողությունը կարող է լինել, որ տեղի ունենայ ապագայում. կազմվում է *պլա* մասնիկով, որ ծագում է «*պիտի լինի, պետք է լինի*» բառակապակցությունից և կցվում է ստորադասական ներկային: Այսպես՝ *պլա ք'եր'եմ* «կարող է լինել, որ բերեմ»,

պիտ լա կամ՝ *պլա սիր'եմ* «կարող է լինել, որ սիրեմ», *պլա սիր'ես* «կարող է լինել, որ սիրես», *պլա սիրի* «կարող է լինել, որ սիրի», հգն.թ. - *պլա սիր'ենք, պլա սիրէք, պլա սիր'են* [Նույն տեղում, էջ 262]: Հեղինակը *պլա*-ի հնագույն ձև է անվանում *պիտ լա*-ն: Ի դեպ, այս *լա*-ն 3. Աճառյանի հիշյալ աշխատանքում, որ-

պես լինելի առանձին բայածև, գրանցված է: Թերևս, չի բացառվում, որ Ջուղան այն փոխառել է հարևան այլ բարբառներից (օրինակ՝ Ագուլիսի, Մեղրու), որոնցում լինելի վաղակատար դերբայն է *(ի)լա* (կամ հարակատարը՝ *իլած*):

Ինչպես նկատելի է, բերված հարադիր կազմության նախնական ձևի մեջ՝ *պիտ լա*, շեշտակիր է երկրորդ վանկը, որը պահպանվել է, և տվյալ դեպքում դարձյալ հնչաշղթայում տեղի է ունեցել *ամփոփում*: Անորոշ ապառնի կազմությունը ձևով նման է նույն համակարգի գլխավոր ժամանակածներից հարկադրականի ապառնիին, ինչպես՝ *պըտի սիր՞եմ, պըտի սիր՞ես, պըտի սիրի...* և անցյալը՝ *պըտի սիրի, պըտի սիրիր, պըտի սիրէր ...* և այլն:

Ապառնի յուրահատուկ այս բաղադրյալ բայածևերը՝ *ներկան* և *անորոշը*, պետք է համարել երկրորդական վերլուծական, թեպետ դրանք առկա տեսքով ոչ թե ինքնուրույն բայերի, այլ մասնիկների (*մամ, մաս, մա, մանք, մէք, ման, մի, միր, մեր...*, կամ՝ *պըլա*) օժանդակությամբ են կազմվել: Կարևորն այն է, որ համակարգում դրանց զուգահեռ գործառում են գլխավոր բաղադրյալները՝ *(ք՛երելու) ամ, աս, ա, ի, իր, էր...* «բերելու եմ, ես, է... // էի, էիր, էր...», կամ՝ *պըտի սիր՞եմ, պըտի սիր՞ես* և այլն: Բացի այդ, նշված մասնիկավոր ձևերը խոսքին տալիս են ոչ հավաստի լինելու, թեականության իմաստ, որը բնութագրական է հատկապես երկրորդական բաղադրյալ ժամանակածներին:

Նոր Ջուղայի խոսվածքում բայի թե՛ գլխավոր, թե՛ երկրորդական բաղադրյալ ժամանակների ժխտականը կազմվում է չ- մասնիկի օգնությամբ, որը նախադաս է և դրվում է կա՛մ օժանդակ բայի, կա՛մ բայի խոնարհված ձևի վրա: Այսպես՝ *չ՞եմ, չ՞ես, չի...* (*ք՛երելու*), *ք՛երած չելա, ք՛երած չելար...*, *ք՛երած պըտի չել՞եմ...*, *ք՛երելու չ՞եմ յ՛ելնի...*, *պըլա չըսիր՞եմ // չըպիտ լա սիր՞եմ ... մամ չըխաղամ*:

3. Աճառյանը իր «Քննութիւն Նոր-Ջուղայի բարբառի» աշխատության վերջում ունի բարբառային տեքստեր: Սակայն պետք է

նշել, որ դրանցում չենք հանդիպել խնդրո առարկա բաղադրյալ ժամանակների կիրառության և ոչ մի դեպքի: Լեզվի ինստիտուտում առկա ձեռագիր վերոհիշյալ նյութերում երկրորդական բաղադրյալ ժամանակածներ ընդհանրապես գրանցված չեն:

Այնուամենայնիվ, հենվելով բերված փաստերի վրա, կարելի է ասել, որ Ջուդայի բարբառը ունեցել է *բայի երկրորդական բաղադրյալ ժամանակներ*, որոնք գործառել են պատմողական ոճի մեջ՝ խոսքին հաղորդելով պատկերավորություն, ինչպես նաև գործողության թեականության, ոչ հավաստի լինելու երանգ:

Բարբառային հաջորդ միավորը, որ քննության ենք առել մեզ հետաքրքրող խնդրի տեսանկյունից, ինչպես վերը նշեցինք, արևելյան խմբակցության Ագուլիսի բարբառն է (Գողթն գավառ): Ս. Սարգսյանցը գրում է, որ «գուկերենը»՝ Ագուլիսի բարբառը, «բռնում է Ագուլիսից բացի բառականին նշանաւոր տարածութիւն, որի մէջ գտնվում են հետևեալ գիւղերը՝ Տղնա, Տանակերտ, Ռամիս, Քաղաքի և շատ ուրիշ գիւղեր, որոնք քանի հեռանում են Ագուլիսից, այնքան շատ են աղաւաղում իրանց լեզուն» [Սարգսեանց, էջ 16]: Այս բարբառը պատկանում է *Ռիւ* և *Լիս* ճյուղերին: Հատկապես *ա* լծորդության, ինչպես նաև *լինել* (Տղնայում), *խօսել* բայերը խոնարհվում են *Լիս*-ով. օրինակ՝ *նելիս ըմ* «գնում եմ», *ըլնսլիս ըմ* կամ՝ *ըլնսս ըմ* «լինում եմ», *խըսելիս ըմ*:

Ագուլիսի բարբառի բայական համակարգը, Ջուդայի նույն համակարգի համեմատությամբ, բավական բարդ է: Ի տարբերություն այլ բարբառների՝ Ագուլիսի խոսվածքներում բայի բաղադրյալ ժամանակները գերակշռում են:

Ա.Ղարիբյանը գրում է.«Ագուլիսի բարբառն ունի օժանդակ բայի միայն ներկան (*ըմ, ըս, ւն, ըք, ըք, ըն*). անցյալի ձևերը Ագուլիսի բարբառին անծանոթ են» [Ղարիբյան, էջ 247]: Ինչպես հայտնի է, այն բացակայում է նաև Մեղրու խոսվածքում: Այստեղից բխում է այն հետևությունը, որ սահմանականի անցյալ ժամանակների բաղադրյալ ձևերը այդ համակարգում, շեղվելով արևելյան խմբակցության բարբառներին հատուկ *եմ* օժանդակի անցյալով կազմելու ավանդույթից, ստեղծվում են մեկ այլ բայի

օգնությամբ: Ավելին ասենք, բարբառային այս տարածքում քիչ գործածական է սահմանական եղանակի անցյալ կատարյալ պարզ ժամանակը, որը, ըստ Ա. Ղարիբյանի, «նոր է ձեռք բերված»: Անցյալ ժամանակի բաղադրյալ բայածևերը կազմվում են *նէլ* բառով, որը հեղինակը համարում է բառ-մասնիկ կամ *լիսեւ* բայի սղված ձևը [տե՛ս նույն տեղում]: Իսկ, օրինակ, Յ. Աճառյանի կարծիքով՝ *նէլ* մասնիկը գրաբարի *լեալ* «եղած» դերբայն է: Այն նախ դարձել է *լէլ* և հետո տարնմանությամբ՝ *նէլ*: «... Մեղրիի բարբառը, որ նոյն պարագային գործածում է *լւի* ձևը, ներկայացնում է երկուսի միջին աստիճանը..» [Աճառեան, 1935, էջ 264]: Այլ կարծիք ունի Ս. Սարգսյանը. *նէլ-ը* բայական *-ել* վերջավորությունն է՝ գումարած *ն-* հավելական հնչյունը [Սարգսեանց, էջ 107]:

Փաստենք, որ բարբառներում *լիսեւ*-ի օժանդակությամբ գործառող բաղադրյալ ժամանակածները ընդհանրապես կազմվում են ոչ թե այդ բայի անորոշ դերբայով, այլ մյուս՝ անկատար, հարակատար, վաղակատար, ապառնի դերբայներով: Այս դեպքում *նէլ-ը* *լիսեւ*-ի վաղակատար *դերբայն* է, ինչպես՝ *յեղեր-ը* Պոլսի բարբառում, *յեղէլ-ը*՝ Արարատյանում, *լւի // լէլ* կամ *իլւի // իլէլ* բայածևերը՝ Մեղրու, Ղարաբաղի և այլ բարբառներում: Կարծում ենք՝ ավելի հավանական է, որ *նէլ-ը* ծագում է (*լ)էլ* -ից՝ որպես *էլիլ* բայի վաղակատար դերբայի նախածև: Ինչ վերաբերում է բառասկզբի *ն-* հնչյունին, գուցե այն հավելական է:

Ի դեպ, Յ. Աճառյանը արձանագրում է, որ *ն* - հնչյունի հավելում Ագուլիսի բարբառի խոնարհման համակարգին բնորոշ է: «Այն բայերը, որոնք սկսվում են ձայնաւորով, այս պարագային ստանում են նախածայն *ն*, որ ըստ Պատկանեանի և Սարգսեանցի (տե՛ս էջ 113) յունաբան հեղինակների գործածած ներգոյականի *ըն* մասնիկն է. *նօտում ըմ* «ուտում եմ», *նիզւմ ըմ* «ուզում եմ»» [Աճառեան, էջ 263]: Այսինքն՝ այս հարցում Յ. Աճառյանը համամիտ է Պատկանյանի և Սարգսյանցի հետ:

Վերը նշվեց, որ Ազուլիսի բարբառում բացակայում են *եմ* օժանդակ բայի՝ գրական հայերենին հատուկ անցյալի՝ *էի, էիր, էր* և այլն, պարզ ձևերի համարժեքները: Դրա փոխարեն բարբառը նույն իմաստով ունի *էլիլ* -ի՝ եզ.- *ըմ նէլ, ըս նէլ, ա նէլ, հզն.- ըք նէլ, ըք նէլ, ըն նէլ* հարադրությունները: Օրինակ՝ *նապրամ ա նէլ մոյն հարուստ քօրդ* [Սարգսեանց, էջ 58] «ապրում էր մի հարուստ քուրդ», կամ՝ *նօտում ըմ նէլ* «ուտում էի»: Զմմտ. Մեղրու խոսվածքի *եմ* օժանդակ բայի անցյալ անկատար ժամանակին՝ *ըմ լււ, ըս լււ, ա լււ* և այլն: Այս հարադիր կազմություններում *լււ* -ն *լինել* բայի վաղակատար դերբայն է [Աղայան, էջ 202-203]:

Ազուլիսի բարբառի Ազուլիսի խոսվածքում հարկադրական եղանակը կազմվում է *մււտււմ* (կամ *մւտււլ*) *ււ*, իսկ Յղնայի խոսվածքում՝ *մէտիլ ա* (կամ *մէտում ա*) բառաձևերի օգնությամբ (հմմտ. Մեղրու բարբառի խոսվածքներում *մէտիլ ա, մատիլ ա*) [տե՛ս նույն տեղում]: Զ. Աճառյանը ունի այն կարծիքը, որ *մււտււմ* *ււ*-ն ծագում է «պիտում է, պիտոյանում է» ձևերից, իսկ *մւտււլ* *ււ*-ն՝ «պիտիլ է» ձևից: Զեղինակը գտնում է, որ հենց սրանց «նուազ ձևերն են ներկայացնում Յղնայում մէտիլ, մէտում» [Աճառեան, 1935, էջ 271]:

Ինչպես Ջուղայի բարբառում, այստեղ նույնպես երկրորդական վերլուծական ժամանակները հիմնականում կազմվում են խոնարհվող բայի հարակատար կամ ապառնի դերբայներով և *լինել*-ի խոնարհված ձևերով: Ազուլիսի խոսվածքում *լինել* -ի սահմանականի ներկան է՝ *նէլււմ* (*ըմ, ըս, ա, ըք, ըք, ըն*), իսկ Յղնայում այն կլինի՝ *ըլնււ(լի)ս* (*ըմ, ըս ա և այլն*) «լինում եմ, լինում ես, լինում է» և այլն: Այս՝ *էլիլ* (Յղն. *էլնալ*), բայի անցյալ անկատարն է՝ Ազ.՝ *նէլււմ* (Յղն. *ըլնււ(լի)ս*) *ըմ նէլ, ըս նէլ, ա նէլ, ըք նէլ* և այլն «լինում էի, լինում էիր, լինում էր» և այլն [Սարգսեանց, էջ 123]:

3. Աճառյանը «Բաղադրեալ ձևեր» վերտառությամբ, ինչպես Նոր Զուղայի խոսվածքին սվիրված բայի բաժնում, այստեղ էլ ներկայացնում է բայի բաղադրյալ ժամանակաձևերը (դարձյալ եզակի թվի առաջին դեմքով): Սրանցից ներկայացնում ենք երկրորդականները: Այսպես օրինակ՝ *մնտննլ ւն թակած ննմ* «պիտի ծեծած լինեմ» (հարկ. ներկա), *մնտննլ ւն թակած ննմ նէլ* «պիտի ծեծած լինեմ» (հարկ.անց.), *թակած ննմ* «ծեծած լինեմ» (ըղձ. ներկա), *թակած ննմ նէլ* «ծեծած լինեմ» (ըղձ. անց.), *թակած ըմ նիլ* «ծեծած կլինեմ» (ենթադ. ապառ.), *թակած ըմ նէլ նիլ* «ծեծած կլինեմ» (ենթադ. անց.), *թակած ըմ էլննծ* «ծեծած եմ եղել» (սահմ.վաղակ.), *թակած ըմ նիլ էլննծ* «ծեծած էի եղել» (սահմ.անց. վաղակ.), *թակած ըմ ըլէլննց* «ծեծած եմ լինելու» (սահմ. ապառ), *թակած ըմ նիլ ըլէլննց* «ծեծած էի լինելու» (սահմ. ապառ.), *թակած էլնն* «ծեծած եղի՛ր» (հրամ.), *թըկէլննց ննմ* «ծեծելու լինեմ» (ըղձ.ներկա), *թըկէլննց ննմ նէլ* «ծեծելու լինեմ» (ըղձ. անց.), *թըկէլննց ըմ նիլ* «ծեծելու կլինեմ» (ենթ. ապ.), *թըկէլննց ըմ նէլ նիլ* «ծեծելու կլինեմ» (ենթադ. անցյալ): 3իշյալ ժամանակաձևերը, անշուշտ, ունեն իրենց գուգահեռ գլխավորները: Օրինակ՝ *մնտննլ ւն թակիմ* «պիտի ծեծեմ», *մնտննլ ւն թակիմ նէլ* «պիտի ծեծեմ», *թակիմ* «ծեծեմ», *կըթակէմ* «կծեծեմ», թակիլ ըմ «ծեծեցի, ծեծել եմ» և այլն:

Հարկ է փաստել, որ ուսումնասիրվող երկու բարբառներում էլ բայական համակարգերի երկրորդական ժամանակաձևերում բացակայում է սահմանական եղանակի ներկա ժամանակը՝ ի տարբերություն արևելյան խմբակցության Մեղրու և Արարատյան բարբառների որոշ միավորների (ինչպես օրինակ՝ խօսում աս լինում) :

Վերոհիշյալ բայաձևերում խնդրո առարկա բայական բոլոր ժամանակները կազմվել են խոնարհվող բայի (*թակիլ*) հարակա-

տար՝ *թակած* (Յղևայում՝ *թակօծ*), ապառնի՝ *թըկէլւնց* դերբայնե-
րի ու *լիսել* օժանդակ բայի խոնարհված ձևերի հարադրությամբ:
Լիսել-ի վաղակատար դերբայն է *սել*, հարակատարը՝ *էլւծ* և
ապառնին՝ *ըլսնլու* (*ըլէլւնց*՝ Յղև.): Ի դեպ, երկրորդական ժամա-
նակներում կիրառվող *սիլ* բառածևը հանդիպում է Հ. Աճառյանի՝
այս բարբառին կիրված աշխատությունում՝ *լիսել* բայի ենթա-
դրական եղանակի ապառնի ժամանակի կազմության մեջ. *սիլ*
ըմ, սիլ ըս, սիլ ա ... «կլինեմ, կլինես, կլինի...»:

Ազուլիսի բարբառի բայի երկրորդական վերլուծական ժա-
մանակներում առկա են բայական բոլոր եղանակները, անգամ
հրամայականը՝ *թակած էլւն*՝ (Ս. Սարգսյանցի գրքում՝ էջ 124, *լի-*
սել բայի հրամայականը գրանցված է *էլի*՝): Որպես հետաքրքրի
փաստ նշենք, որ այս եղանակը խնդրո առարկա ժամանակա-
ձևերի մեջ բարբառներում շատ հազվադեպ է հանդիպում:

Խոնարհվող բայի ժխտական ձևը Ազուլիսի բարբառում նույն-
պես կազմվում է *չ*- մասնիկի օգնությամբ, որը, ինչպես և այլ
բարբառներում, դրվում է բայի (օժանդակ բայի) խոնարհված
ձևերից առաջ: Օժանդակ բայի՝ *եմ*-ի ժխտական ներկան է՝ *չիմ*,
չիս, *չի*, *չիք*, *չիք*, *չին*, սրանցով կազմված երկրորդական բաղա-
դրյալ ժամանակները կլինեն՝ *թըկէլւնց (չիմ, չիս, չի, չիք, չիք, չին)*
սիլ, թըկէլւնց չիմ սել սիլ, կամ՝ *մնտնլ ն թակած չիննմ, մնտնլ*
ն թակած չիննմ սել, թըկէլւնց չիննմ սիլ, թակած չիմ սիլ ըլէլւնց և
այլն:

Ս.Սարգսյանցի գրքի բարբառային նմուշներում հատուկ ենտ
հանդիպում են մեզ հետաքրքրող բայածևերից, իսկ Ազուլիսի
բարբառին վերաբերող՝ Հ.Աճառյանի, Մ. Չաքարյանի, Ա.Այվազ-
յանի աշխատությունների նմանատիպ տեքստերում դրանք բա-
ցակայում են: Պատճառը, հավանաբար, այն է, որ բարբառա-
կիրները կամ բարբառը գրի առնողները, խնդրո առարկա ժա-
մանակաձևերը համարելով ոչ դյուրընկալելի, խուսափել են
դրանք կիրառելուց:

Ստորև ներկայացնենք մի քանի նմուշ. (Ցղն. խսվ.) ...*օխժը թւն-գադան գօլիս ա թաքավօրին պալատը, ըլնսս ստօլը, ուրին կըշտին օր նըստօծ ըն ըլնսս* («նստած են լինում») *թաքավօրնէն ...քիցնիւմ ա ըմանին մէչը մուն թանգակին քօր, ուրն օր պըրնսնին բըռնօծ ա ըլնսս* («բռնած է լինում »), *յիտ նսլիս* [Սարգսեանց, «Պայմանաւոր խօսքեր» հավելված, էջ 55]: ...*ըշտեղ օր նէլիս ընսս* («գնալիս լինես»), *այ դարիք, իս քիզ հինգիր էմ* [Նույն տեղում, էջ 61]: *Իբօր քու խասկերիտ հըվըտէլաց չինսն* («հավատալու չլինեն»), *դնի հրամայա մույն քօռ կընակ* [Նույն տեղում, էջ 66]:

Այս օրինակներում երկրորդական վերլուծական ժամանակաձևերի բայերը ներգործական և չեզոք սեռերին են պատկանում:

Եթե վաղ շրջանի բարբառագիտական իր աշխատություններում (ասենք՝ Նոր Ջուղայի և Ագուլիսի բարբառային միավորներին նվիրված) Յ.Աճառյանը երկրորդական բաղադրյալ ժամանակները չի առանձնացնում գլխավոր բաղադրյալներից, ապա հետագա նմանատիպ աշխատություններում, ինչպես օրինակ՝ «Պոլսի բարբառը», նա երկրորդականները ներառում է «Պատմողական եղանակ» վերտառությամբ ենթաբաժնում, որով էլ հեղինակը հաստատում է պատմողական ոճի մեջ այդ ժամանակների կիրառվելու փաստը:

Վ. Առաքելյանը, խոսելով գրական արևելահայերենում երկրորդական բաղադրյալ ժամանակներում ստորոգյալի կազմության մասին, նշում է. «Այս ժամանակները կոչվում են նաև հարաբերական ժամանակներ, որովհետև հարաբերում են գլխավոր ժամանակներին՝ ցույց տալով նրանց գործողության նկատմամբ միաժամանակություն, նախաժամանակություն և ետժամանակություն» [Առաքելյան, էջ 116]: Այնուհետև հեղինակը, իր միտքը շարունակելով, գրում է՝ այդ ժամանակաձևերը արտահայտում են տևական, «որոշ շրջանում պարբերաբար» կատարվող, կըրկընվող գործողություն: Դրանք ցույց են տալիս և այնպիսի գոր-

ծողություն, որի կատարման մասին խոսողը լսել է ուրիշներից: Նման գաղափարը ցայտուն երևում է հատկապես հեքիաթներում, երբ պատմողը սովորաբար գործածում է բայի երկրորդական բաղադրյալ ներկա ժամանակը [տույն տեղում, էջ 117]:

Օգտագործած գրականություն

1. Աղայան Էդ., Մեղրու բարբառը, Ե., 1954:
2. Աճառեան Յ., Քննութիւն Նոր-Չուղայի բարբառի, Ե., 1940:
3. Աճառեան Յ., Քննութիւն Ագուլիսի բարբառի, Ե., 1935:
4. Այվազյան Ա., Ագուլիսի բարբառի մասունքներ, Ե., 2011:
5. Առաքելյան Վ., Հայերենի շարահյուսություն, Եր., 1958:
6. Չաքարյան Մ., Ագուլիսի բարբառը, Ե., 2008:
7. Ղարիբյան Ար., Հայ բարբառագիտություն, Ե., 1953:
8. Զահուկյան Գ., Հայ բարբառագիտության ներածություն, Ե., 1972:
9. Սարգսեանց Ս., Ագուլեցոց բարբառը, մասն 1-2, Մոսկվա, 1883:
10. Ձեռագիր նյութերից՝ թիվ 20, 149, 174, 216, 242, 328 տեսքերը:

Микаелян Жанна - Второстепенные составные временные формы глагола в джугаинском и агулисском диалектах.- В глагольных системах армянских диалектов наряду с главными функционируют и *второстепенные составные временные формы* глагола. Они характерны для повествовательного стиля речи и передают оттенок предположительности, недостоверности сказанного. Эти формы указывают также на продолжительность действия, поэтому называются еще и *продолжительными временами* глагола. В своих диалектологических трудах, описывая эти формы того или иного диалекта армянского языка, авторы обычно не подвергают их особому изучению.

В статье делается попытка выявления особенностей *второстепенных составных временных форм* глагола восточных диалектов армянского языка: *джугаинского* и *агулисского*. Последние, употребляя для таких форм общие во всех диалектах конструкции со вспомогательным

глаголом լիւնել (есть), все же проявляют своеобразие. В джугаинском диалекте, например, в роли вспомогательного глагола наряду с լիւնել, также функционируют глагол ուզել (хотеть) и словоформа պըլա < պիտ լա (должно было бы быть). А в агулисском диалекте во *второстепенных составных формах* времени глагола функционирует и повелительное наклонение, которое очень редко встречается в таких конструкциях.

Mikayelyan Zhanna –The Secondary Composite Tense Forms of the Verb in the Dialects of Dzhuga and of Agulis.- The verbal systems of the Armenian dialects include major as well as minor compound tense forms of verbs. They are typical of the narrative style of speech and express the nuances of assumption and unreliability. These forms also indicate the duration of action, and therefore are also called the continuous tenses of the verb. In the investigations of dialectologists they are not usually subject to special study.

In present article is an attempt to study the characteristics of the secondary composite tenses of the verb in the Eastern Armenian dialects of Dzhuga and Agulis. The latter use the constructions with the auxiliary verb լիւնել which are the same in all dialects, though they have some peculiarities. In the dialect of Dzhuga, for example, as an auxiliary verb, along with լիւնել (to be), the verb ուզել «want» and the word պըլա < պիտ լա (should have been) are also used. In the dialect of Agulis in the secondary composite tenses of the verb the imperative forms are used as well, which rarely occur in such constructions.

Հնագույն նվագարանների անվանումները Աստվածաշնչում

Աստվածաշնչի գրաբար թարգմանության խնդրին նվիրված ուսումնասիրություններում սովորաբար նկատի են առնվում երկու հիմնահարց՝ մինչև գրերի ստեղծումը Աստվածաշնչի ընթերցման լեզվի խնդիրը և հայերեն թարգմանության քննությունը¹: Մ.Օրմանյանը վկայում է, որ հայ եկեղեցում գոյություն է ունեցել թարգմանիչների հատուկ դաս, որը բանավոր թարգմանել և ժողովրդին է մատուցել Ս.Գրքի օտարալեզու ընթերցումները²:

Աստվածաշնչի հայերեն թարգմանության ժամանակաշրջանի, նախօրինակի և թարգմանիչների մասին հայ պատմագրության մեջ կարևոր սկզբնաղբյուրները 5-րդ դարի հայ պատմիչների (Կորյուն, Ագաթանգեղոս, Մ.Խորենացի, Ղ.Փարպեցի) երկերն են³: Տարբեր ժամանակներում Աստվածաշնչի հայերեն թարգմանությանը վերաբերող ամենատարբեր խնդիրների լուսաբանումը կատարվել է այս սկզբնաղբյուրների հաղորդած տեղեկությունների հիման վրա:

Դարերի ընթացքում Ս.Գիրքը հոգևոր սնունդ է տվել մտածողների ու արվեստագետների անթիվ սերունդների, հուշել գաղափարներ, կերպարներ ու սյուժեներ, դարձել բանաստեղծության, նկարչության, երաժշտության և այլ արվեստների նյութ:

¹ Գ. Չարբհանալեան, Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց (Դ-ԺԳ), Վենետիկ, 1889: Մ.Тер-Мовсесян, История перевода Библии на армянский язык, С.Пб., 1902. Ն.Ակիևյան, Սուրբ Գրքի հայերեն թարգմանութիւնը, «Հանդես ամսօրեայ», 1935, N 10-12: Յ.Աւգերեան, Ակնարկ մը Ս.Գրոց թարգմանութեան վրայ, «Բազմավէպ», 1935, N 9-12: Յ.Թորոսեան, Հայ Ոսկեդարը եւ Աստուածաշնչի թարգմանութիւնը, «Բազմավէպ», 1935, N 9-12: Ն.Վրդ. Ծովակալ (Պողարեան), Աստուածաշնչի հայերէն հին թարգմանութիւնները, «Սիոն», 1945:

² Մ.Օրմանեան, Հայոց եկեղեցին եւ իւր պատմութիւնը, վարդապետութիւնը, վարչութիւնը, բարեկարգութիւնը, արարողութիւնը, գրականութիւնը ու ներկայ կացութիւնը, Կ.Պոլիս, 1912, էջ 33:

³ Կորին, Վարք Մաշտոցի, Ե., 1980: Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, Տըփ-դիս, 1909: Մովսիսի Խորենացոյ Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1904:

Յուրաքանչյուր սերնդի այն ներկայանում է նոր կողմերով, նոր խորհրդով ու իմաստով, տեղիք տալիս նոր մեկնաբանությունների: Աղոթքները, հոգևոր երգերը բովանդակային առումով խտացումն են Հին կտակարանի օրենսդրական, պատմական, իմաստության և մարգարեների գրքերի, որոնք բացահայտում են մարդու ներաշխարհը, զգացմունքները, ակնկալիքները: Դրանք խոսք են Աստծո մասին և առ Աստված: Քրիստոնեական պաշտոնագության մեջ Ս.Գիրքը եղել է ներշնչանքի և գրական խոսքերի մեծ մասի հիմնական աղբյուր: Հայ հոգևոր երաժշտության մեջ թվերգով կատարվել են Ավետարանը և մարգարեների գրքերը Հին կտակարանից, իսկ սաղմոսներն ու մարգարեական օրհնությունները նաև երգվել են: Երգվել են ինչպես առանց նվագակցության, այնպես էլ նվագարաններով. «Երգէին նուագարանօքն երգս» (Բ Մնաց., ԻԳ, 13): Պատահական չէ, որ Մ. Մաշտոցը պաշխարության շարականներից մեկում հորդորում է. «Հնչմամբ փողոյ, սաղմոսարանաւ եւ քնարիւ օրհնեցէք զՏէրն ի յերկինս»¹ :

Աստվածաշնչում հիշատակված հնագույն նվագարանների քննությունը նպատակ ունի վերհանել հայկական երաժշտական և մերձավորարևելյան հին ժողովուրդների մշակութային ընդհանրությունները, ցույց տալու ավանդաբար մեզ հասած հոգևոր, եկեղեցական երգերում հին և հնագույն շերտերի գոյությունը, նշելու, որ հայկական հին և միջնադարյան երաժշտարվեստը մերձավորարևելյան երգ ու նվագի, արևելյան քրիստոնեական երգարվեստի և, անշուշտ, համաշխարհային երաժշտական մշակույթի մեծ պատմության արժեքավոր, ինքնատիպ ու անկրկնելի էջերից է²: Աստվածաշնչյան նվագարանների բազմազանության մեջ փողայիններն առանձնանում են ոչ միայն երաժշտական բովանդակությամբ և կառուցվածքով, այլև տարատեսակ անվանումներով՝ *շոֆար, կերեն, յոբել, խացոցրա, մաշրոկիտա, խալիլ*: Հայերեն թարգմանության մեջ դրանք գործածվում են մի ընդ-

¹ Ն.Թահմիզյան, Քննական տեսություն հայոց հին և միջնադարյան երաժշտության պատմության, «Լրաբեր հաս. գիտությունների», 1971, N 1, էջ 44:

² Grov's Dictionary of Music and Musicians, 5-th ed., London, 1954, Armenian Folk Music (vol.III-Folk Music), Armenian Church Music (vol.II-Eastern Church Music).

հանուր *փող* անվանումով, իսկ տարատեսակները (Նայած թե ինչից և ինչպես են պատրաստված)՝ *եղջերափող*, *եղեգնափող*, *գալարափող*, *սրափող*: Նկատի ունենալով նրանց գործառույթը՝ անվանել են *ազդեցության փող*, *ռազմական փող*, *հաղթության փող*, *որսորդական փող*, *Նվիրակափող* և այլն:

Շոֆար-ը բացառիկ դեր էր կատարում հին հրեաների հոգևոր կյանքում: Նվագարանի վերաբերյալ հետաքրքիր տեղեկություններ են հիշատակված Թալմուդում, որտեղ հաճախ է գործածվում *սգո շոֆար* անվանումը: Վերջինս, սակայն, Աստվածաշնչում ընդհանրապես վկայված չէ: Թալմուդում շեշտվում է հատկապես շոֆարի՝ խոյի, վայրի քարայծի կամ լեռնային այծի եղջյուրներից պատրաստված լինելու հանգամանքը՝ մերժելով ցուլի եղջյուրներից պատրաստված նվագարանը՝ ցուլ-Ոսկե հորթ զուգորդության պատճառով¹: Ա. Քոչարյանը հնագույն փողային նվագարան է համարում *եղջերափող*-ը, որը հայերենում գործածվում էր նաև *շեփոր* անվանումով: Պարսիկներն այն անվանում են *nafir*, ռուսները՝ *por*, իսկ գերմանացիները՝ *horn*²:

Եբրայերեն *šōṣar*, ասորերեն *šīporā*, հայերեն *շեփոր(այ)*, *շիփոր(այ)* բառերը նշված են Գ. Ջահուկյանի՝ հայերենի նախագրային շրջանում սեմական լեզուներից կատարած փոխա-ռությունների ցանկում³: Նկատի ունենալով հայերեն բառերի՝ միայն ասորերենում հանդիպելը կամ ասորերեն ձևերին ավելի մոտ լինելը, բնորոշ վերջնահնչյուններ ունենալը, ինչպես նաև ասորերեն բառերի՝ հունարենից փոխառյալ լինելը՝ հայերեն բառերի՝ ասորերեն ձևերին ավելի մոտ լինելու պայմաններում՝ Գ. Ջահուկյանը *շեփորայ*-ն (*շիփորայ*) դասում է բուն ասորական փոխառությունների շարքում⁴: Հայերեն արմատական բառարանում *փող* անվանումը չմեկնված, անստույգ բառ է, որ նշանակում է «նեղ անցք, խողովակաձև երաժշտական փչողական գործիք, ռուս. труба,

¹ Штейнзальц А., Введение в Талмуд, Иерусалим, 1993, 77-79.

² Ա. Քոչարյան, Երաժշտական գործիքները Հայաստանում, ՊԲՀ, 1963, 13, էջ 163:

³ Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան, Ե., 1987, էջ 459:

⁴ Նշվ. աշխ., էջ 477-479:

պրսկ., արաբ. *բնգ՝ եղջերեայ փող տերվիշաց*¹: Ջահուկյանը *փողը*-ը դասում է հնագույն հայերենի բառային տարբերակների համանշալին շարքում: Տարբերակներ, որոնք արտահայտվում են միևնույն կամ մերձավոր իմաստների համար տարբեր բառերի անկայությամբ՝ *ռուկզն-ծուծք-պիկզ-փող*: Այնուհետև նշում է, որ մեծ թիվ պետք է կազմեն ուրարտական ծագումով բառերը բառապաշարի այն շերտում, որի հնդեվրոպական ծագումը և մեզ հայտնի լեզուներից փոխառյալ լինելը ապացուցված չեն. «Ուրարտերենի *ի*-ով հիմքերի անկայության պայմաններում կարելի է հայերենի *ի* հոլովում ունեցող և չստուգաբանված բառերի մեջ ևս փնտրել ուրարտական հիմքեր»²:

Այդ հնագույն նվագարանները ահագանգ էին հնչեցնում. «Ձայն փողոյն հնչեր մեծածայն...» (Ելք, ԺԹ, 13): Նախագգուշացնում էին թշնամու հնարավոր հարձակումները. «Եւ զարիւրեցաւ ամենայն ժողովուրդն յոյժ. քանզի հասանէին ձայնք փողոցն ի բաց...» (Ելք, ԺԹ, 16): Ազդարարում էին պատերազմի սկիզբ և ավարտ. «Եւ գոչեցին երեքհարիւրեքին փողքն եղջերեայք...» (Դատ., Է, 22), «Եւ փող եհար Յովաբ, եւ մեկնեցան ժողովուրդն ամենայն» (Թագ.2, Բ, 28):

Մինչև օրս էլ հրեական սինագոգներում Նոր տարին, Քավության տոնը երբեմն նշանավորվում են փողերի ազդանշաններով: Այդ հնագույն նվագարանների պատկերները հաճախ են հանդիպում հին իրերի՝ սափորների, սկուտեղների զարդանախշերում: Երևանի Մատենադարանում պահված միջնադարյան ձեռագրերում ևս կան հնագույն ժամանակներից վերաբերող փողերի պատկերներ: Դրանք ռազմական երկար շեփորներն են³, կարճ պղնձե փողը⁴, եղեգնյա հսկայական ավագափողը⁵, եղջերափողի տեսակները⁶, հովվական սրինգը¹, շվին², կոնաձև փողերն ու սը-

¹ Գ.Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ.Դ, Ե., 1979, էջ 512-513:

² Գ.Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 387,436,440:

³ Մաշտոցի անվ.Մատենադարան, Ձեռ.Ն 5472, էջ 595ա, Ձեռ.Ն 189, էջ 43ա:

⁴ Ձեռ.Ն 3387, էջ 112բ:

⁵ Ձեռ.Ն 6325, էջ 15բ:

⁶ Ձեռ.Ն 8688, էջ 10բ, Ձեռ.Ն 349, էջ 546ա, Ձեռ.Ն 206, էջ 496բ, Ձեռ.Ն 349, էջ 89բ, Ձեռ.Ն 189, էջ 13բ, Ձեռ.Ն 7651, էջ 70բ:

րափողերը³, պարկապզուկը⁴: Հիշատակություններ կան նաև պատմիչների երկերում. «...Եւ էր փողն ընդ երկար»⁵: «Ի ձայն մեծի փողոյն պատրաստ հրամայէր լինել...Եւ ի ձայն մեծ գալարափողոցն զիւր գունդսն ստիպէր»⁶: «Տայր հրաման Մամիկոնեանն Վահան հնչեցուցանել զփողսն պատերազմականս»⁷:

Փողերը գործածվել են նաև հոգևոր ծեսերի ժամանակ: Թերևս նվագարանների ուժեղ և բիրտ ձայնն է ստիպել մարդկանց հավատալ, որ այդ հնչյուններից սարսափում էր անգամ սատանան: Եղջերափողին վերագրվում էր նաև մոգական ուժ. հնչյունների ճնշմամբ, իբրև, ցրվում է խավարը. «...Եւ ի սաստկութենէ փողոցն ձայնից հնչեալ երկիրն թնդէր»⁸: Ըստ շվեյցարացի հոգեբան, մշակութաբան Կ. Յունզհի՝ փողային գործիքները կապված են շնչառությանը, առաջին հերթին՝ աստվածային շնչին, ոգուն. «Եւ Յոզֆ Տեառն զօրացոյց զԳեդէոն, եւ եհար փող եղջերեան...» (Ղատ. 2, 34): Բացի այդ փողային նվագարանները արականի, իսկ լարայինները՝ իգականի խորհրդանիշներն են: Յունզհը նշում է նաև հին ժողովուրդների մոտ փողային նվագարանով հիվանդի ականջի մեջ փչելով բուժման մեթոդների գոյության մասին: Ընդ որում նվագարաններով թերապիան պայմանավորված է այն նյութով, որից դրանք պատրաստվում են: Ենթադրվում է, որ փայտյա լարային նվագարանները կրում են Կենսաց ծառի հատկությունները, իսկ փողայինները՝ այն տոտեմ կենդանու, որի եղջյուրից պատրաստված են⁹:

Եղջերափողի մի տեսակ է նաև Աստվածաշնչում հիշատակված *հոբեյյան փող*-ը, որը գործածվել է նաև Հայաստանում և համարվել

¹ Ձեռ. N 5511, էջ 161բ, Ձեռ. N 2670, էջ 3բ, Ձեռ. N 7782, էջ 1բ:

² Ձեռ. N 5783, էջ 4ա:

³ Ձեռ. N 3387, էջ 53ա, Ձեռ. N 9599, էջ 133բ:

⁴ Ձեռ. N 6670, էջ 120բ, 138ա, 166ա, Ձեռ. N 9599, էջ 188բ:

⁵ Փաւստոսի Բուզանդացոյ Պատմութիւն Հայոց, Ս. Պետերբուրգ, 1883, էջ 171:

⁶ Եղիշէ, Վասն Վարդանայ եւ հայոց պատերազմին, Երեւան, 1957, էջ 115, 118:

⁷ Ղազարայ Փարպեցոյ Պատմութիւն Հայոց, Տիֆլիս, 1904, էջ 164:

⁸ Նույն տեղում:

⁹ К.Юнг, Человек и его символы, М., 1998, стр. 77. H.Smejesters, Musiktherapie als, Stuttgart-Iena-N.Y., 1994, p. 54.

սրբազան նվագարան, կոչվել է նաև *Նվիրափող*¹: Յոթեյանը, ըստ Յին կտակարանի, հրեաների գլխավոր տոներից էր, որը կատարվում էր յուրաքանչյուր 50 տարվա յոթ տարիներին: Այդ յոթ տարիներից ամեն մի տարվա ինը օրը ուրախության, ճամփորդության օրեր էին, որոնց ժամանակ հրեաներն իրավունք չունեին աշխատելու. սևվում էին նրանով, ինչ տալիս էր բնությունը: Տասներորդը մեծ քավության օրն էր, և հնչեցվում էին հոբեյան փողերը²: Կրոնական տոների ժամանակ երբեմն յոթ փողհարներ էին հնչեցնում այդ փողերը. «Եւ եւթն քահանայ առցեն զեւթն փողսն եղջերեայս յոբելեան առաջի տապանակին, եւ յաւուրն եւթներորդի պատեսցիք զքաղաքն եւթն անգամ» (Յեսու, 2, 4):

Յայերեն *յոբելեան* բառի աղբյուրը Գ.Ջահուկյանը համարում է լատ. *iubilaeus*-ը, հուն. *Ἰωβηλατος* «հոբեյան», որը ծագում է եբր. *yōbēl* «խոյ» բառից. վերջինս հանդիպում է եբր. *pōrōth hajōbelim* «խոյաշէփորներ», *qeren hajōbēl* «խոյեղջյուր» կապակցություններում³: Ըստ օտար աղբյուրների՝ բառը (հոբեյան) ծագում է Կայենի սերունդներից Յոբադի անունից, որին ընդունված է անվանել երաժիշտների հայր⁴: Յետաքրքիր է նաև Ի. Ամուսինի մեկնությունը, ըստ որի հոբեյանը 7×7, այսինքն՝ 49 տարի մեկ կատարվող տոն է, որի ժամանակ ժողովուրդը մի քանի անգամ պըտըտվում է տաճարի շուրջը, և հնչում են բազում փողեր: Այդ պտույտը խորհրդանշում է արևի շրջադարձը, խոյի ոլորուն եղջյուրները, մահվան և կյանքի հաջորդականությունը⁵: Ընդ որում այս ծեսը մանրամասն նկարագրվում է Աստվածաշնչի Նավեի որդի Յեսուի գրքում՝ Երիքովի գրավման տեքստում (Յեսու, Ե, 2):

Եղջերափողերից բացի հնագույն նվագարաններից են նաև մետաղյա կամ պղնձե փողերը: Յնում պղինձն ու բրոնզը համարվել են նույն մետաղը: Այդ համընկնումը որոշ գիտնականներ համա-

¹ Ա.Քոչարյան, *Նշվ. աշխ.*, էջ 165:

² *Еврейская энциклопедия*, стр. 46.

³ Գ.Ջահուկյան, Ստուգաբանություններ, «Լրաբեր հաս. գիտությունների», 1976, N 12, էջ 42:

⁴ T.Reik,Shofar, Westport, Connecticut, 1975, p. 7.

⁵ И.Амусин, Кумранская община, М., 1983, стр. 246.

րել են ոչ պատահական, թեպետ Աճառյանը հակառակն է ապացուցում¹: Բառիմաստում առկա *փոս*, *հանք*, նաև *անդրաշխարհ*, *ստորին աշխարհ* նշանակությունները թույլ են տվել եզրակացնել, որ մետաղների նման անվանումները հավանաբար փոխարինել են իսկական անուններին, որոնք տաբուացված են եղել հատուկ մոգական նշանակություն ունենալու պատճառով: Նըշենք՝ հենց պղնձից էին պատրաստվել բոլոր ծնծղայատիպ նվագարանները, որոնք պարտադիր և որոշակի տարրորոշված գործառույթ ունեին հոգևոր ծեսերի ժամանակ: Պատմությունը վկայում է, որ Անդրկովկասը, հատկապես Հայաստանը, դեռևս հնագույն ժամանակներից եղել են զարգացած մետաղագործության, հատկապես պղնձի ու բրոնզի արդյունաբերության երկրներ²: Պատմիչների երկերում հիշատակված պղնձյա փողերը ևս վկայում են Հայաստանում այդ նվագարանների՝ դեռևս հնագույն շրջանում գործածվելու մասին.«Եւ Սմբատ հրամայէր զփողսն պղնձիս հնչեցուցանել եւ յառաջեալ զճակատն իւր, իբրեւ զարծիւ յերամս կաքաւուց խոյանայր»³:

Աստվածաշնչում հիշատակված հնագույն նվագարաններից են նաև եբրայական *խացոցրա* կոչվող արծաթե նշանավոր երկու փողերը:«Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ ասէ, Արա դու քեզ երկուս փողս արծաթիս...» (Թիւք, Ժ,2): Աստվածաշնչի եբրայերեն տարբերակում դրանք գործածվում են հոգևակի թվով (ուրօւօռ խացոցրոտ) և կոչվում նաև *ազդեցության փողեր*: «Եւ հարիջիք փող ազդեցութեան եւ չուեսցեն բանակքն բանակեալք ընդ արեւելս» (Թիւք., Ժ,5): Խացոցրաները հրեաների սրբազան նվագարաններն էին և պահվում էին Երուսաղեմի տաճարում: Այս փողերի մասին հիշատակություն կա նաև Գր. Տաթևացու «Գիրք Խարցմանց»-ում.«Այլ Մովսես օրինադրեաց ի թիւքն առնել կրկին

¹ Տե՛ս «մետաղ» բառահոդվածը, Հ.Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ.3, Ե., 1977, էջ 306:

² Կ.Ղազանյան, Պղինձ, Ե., 1961, էջ 9:

³ Մովսիսի Խորենացույ Մատենագրութիւնք, Վենետիկ, 1832, Բ, 46:

փողս արծաթի. եւ կոչեաց զնոսա փողս ազդեցութեան. որպէս դռնէս գոն ի դրունս թագաւորեաց կրկին փողք»¹:

Նկարագրելով կովկասյան ժողովուրդների նվագարանները՝ երաժշտագետ Ա.Մասլովը առանձնացնում է 1մ 37սմ երկարության մետաղյա փողը, որն անվանում է *դորոտոտո* (որոտնային ձայն) կամ *սաղվիրի* (գոռոց)²: Ուղղահայաց երկար մետաղյա փողերը մինչև այժմ էլ գործածվում են Միջին Ասիայում: Այդ փողն ուզբեկներն անվանում են *կարնայ*: Ուսումնասիրելով Կենտրոնական Ասիայի երաժշտական գործիքների ողջ հավաքածուն՝ գերմանացի երաժիշտ Ավգուստ Էյխգոռնը նշում է, որ *կարնայ*-ը նույն աստվածաշնչյան *խացոցրա*-ն է և գործածվել է Մովսեսից շատ ավելի վաղ: Կարնայի հնչյունների ներքո պատերազմների էին մեկնում Դարեհի, Չինգիզ Խանի, Նադիր Շահի նվաճող հորդաները³: Կարելի է եզրակացնել, որ մեր պատմիչների կողմից հիշատակված *պղնձե երկար փողերը* ամենայն հավանականությամբ նմանատիպ նվագարաններից են: Այդ կարգի փողերից է նաև *ավագափողը*, որը հավանական է՝ գործածվել է հայ ցեղապետների կամ տոհմի ավագների կողմից և այդ պատճառով էլ կոչվել է *ավագափող*⁴:

Փողի հնագույն տեսակներից է նաև *կերենը* (որք), որը երբայերենում նշանակում է *եղջուր*, ունի նաև *ամուր*, *ուժեղ* նշանակությունները⁵: Գ.Ջահուկյանը *եղջուրը* համարում է անհայտ ծագման բառ՝ գրելով, որ «*եղջուր*-ի համար վաղնջահայերենը դռնս պահպանած է եղել և հետագայում կորցրել է հնդեվրոպական ընդհանուր անվանումը *k-er- արմատից, որից ծագում է սար «սար, լեռնագագաթ» բառը⁶»: *Կերեն*-ը կենդանու եղջուրից

¹ Գր. Տաթևացի, Գիրք հարցմանց, Համաբարբառ, Կազմ.՝ Ս. Գրիգորյան, Ե., 2011, էջ 618:

² Маслов А.Л., Материалы и исследования по изучению народной песни и музыки, Труды муз. этнографической комиссии, т.2, М., 1911, стр. 254.

³Эйхгорн А.Ф., Полная коллекция музыкальных инструментов Центральной Азии, 1885, стр.128.

⁴ Ա.Քոչարյան, Նշվ. աշխ., էջ 167:

⁵ Шапиро Ф.М., Иврит-русский словарь, М., 1963, стр. 174.

⁶ Գ.Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն:Նախագրային ժամանակաշրջան, Ե., 1987, էջ 261:

պատրաստված փողային սվազարանների ընդհանուր անվա-
 նումն է: Ս.Գրքում գործածվում է ինչպես ուղիղ, այնպես էլ փո-
 խաբերական նշանակություններով՝ որպես մեծարանք Աստ-
 ծուն. «Ճառագայթք տորա իբրել զլոյս եղիցին, եւ եղջերք ի ձեռին
 տորա. եւ հաստատեաց զսեր սաստիկ զօրութեան իւրոյ» (Ամբ.,
 Գ,4)¹, եկեղեցու սեղանի զարդ. «Եւ արասցես սեղան յանփուտ
 փայտից... եւ արասցես զեղջերս տորա ի վերայ չորեցունց ան-
 կեանց իւրոց, ի նմանէ ընտրեալ իցեն եղջերքն» (Ելք, ԻԷ,2): Այն
 նաև աստվածային ուժի, կամքի հզորության խորհրդանիշն է. «Եւ
 խօսեցաւ Դաւիթ Տեառն զբանս օրհնութեանս... Եւ ասէ, Տեր վեմ
 իմ, եւ ամրութիւն իմ, եւ փրկիչ իմ... վերակացու իմ եւ եղջեր
 փրկութեան իմոյ, պաշտպան իմ եւ ապաւեն փրկութեան իմոյ.
 յանիրաւէ փրկեսցես զիս, Տեր» (Թագ.,Բ, ԻԲ,1,3): Ժամանակակից
 եբրայերէնում *կերենը* կորցրել է *սվազարան* իմաստը. բա-
 ցառություն է միայն *որսորդական փող* բառակապակցությունը՝
 רֶרֶן - קֶרֶן - qeren ya'ar :

Աստվածաշնչում գործածվող հնագույն սրնգային սվազա-
 րանները երաժշտության ընկալման մի տոր որակ են խորհրդա-
 նշում: *Մաշրոկիտա*-ն սեմական ժողովուրդների փողային սվա-
 զարաններից է՝ նման բազմափող ֆլեյտայի: Աստվածաշնչում
 հիշատակվում է Բաբելոնի Նաբուգոդոնոսոր թագավորի արքու-
 նական սվազախմբում. «Յորժամ լուիցէք զձայն փողոյ, սրնգի,
 թմբկի եւ քնարի անկանիջիք եւ երկիր պագանիջիք պատկերին
 զոր կանգնեաց Նաբուքոդոնոսոր արքայ» (Դան.,Գ,5): Անվանումն
 արամեերեն է՝ (šaraq/קֶרֶן) *տուլել* բայից: Հունարեն Աստվածա-
 շնչում այն թարգմանված է *սիրիկա* (συριγγή), հայերէնում հունա-
 րենի նմանողությամբ՝ *սրինգ*, Վուլգատայում՝ *ֆիստուլա* (fistula),
 Պեշիթայում պահպանվել է արամեերեն անվանումը՝ *մաշրոկի-
 տա* (mašrokītā), վաղսլավոնական տեքստերում հունարենի նմա-
 նողությամբ գործածվում է *սիրինա* *լսիրիզինա* ռուսացված ան-

¹ Եբրայերեն բնագրում «...եւ եղջերք ի ձեռին տորա» նախադասության փո-
 խարեն գրված է «ճառագայթք ի ձեռանէ տորա» (Հմմտ. Biblia Hebraica Stuttg-
 artensia, 1997):

վանումը, ավելի ուշ շրջանում՝ *շվի, սրինգ* (свирель), ներկայիս ռուսերեն հրատարակություններում՝ նաև *փող* (труба)¹:

Ինչ վերաբերում է հայերեն *սրինգ* և հունարեն *σύριγξ* բառերին, ապա սովորաբար դրանց կա՛մ միջերկրական, կա՛մ արևելյան ծագում է վերագրվում, մինչդեռ Աճառյանը բխեցնում է փոքրահական աղբյուրներից²:

Հայերեն Աստվածաշնչում *սրինգ*, երբեմն էլ *փող* է թարգմանվում նաև հնագույն նվագարաններից *խալիլ*-ը: Հին եբրայերենում (לִילִי / - אִלִּיל) նշանակել է «փուլ», «սնամեջ»³:

Թալմուդում նշվում է *ugratъ на халилах* - հարկանել զխալիլս (māhallālim bahālim)⁴: Արտահայտությունը կարելի է ընկալել երկու իմաստով. ա) որպես փողային նվագարանների հավաքական անվանում, բ) կարող է նշանակել նաև բազմափող(սրինգ): Նվագարանը հիշատակվում է ինչպես հոգևոր ծիսական արարողությունների. «Եւ Ղեւտացիքն սաղմոսանուագք, ... եւ տաւօք եւ քնարօք եւ սրընգօք կային յարեւելից կողմանէ սեղանոյն, եւ ընդ նոսա քահանայք հարելր եւ քսան՝ հարկանէին փողս...» (Մնաց. Բ, Ե, 12), այնպես էլ հանդիսավոր երթերի. «... եւ Դաւիթ եւ ամենայն Իսրայել խաղային առաջի Աստուծոյ ամենայն զօրութեամբ, երգովք սաղմոսաց, տաւօք եւ քնարօք եւ թմբօք եւ ծնծղայիւք եւ փողովք» (Մնաց. Ա, ԺԳ, 8), հեթանոսական պաշտամունքին առնչվող ժողովրդական տոնախմբության. «... փողովք եւ թմբկաւ եւ քնարաւ եւ երգովք զգինին ըմպեն...» (Եսայի, Ե, 12), նաև սուգի և տխրության ժամանակ. «... Վասն այնորիկ սիրտ իմ ի վերայ արանց առ որմովքն խզելոց իբրև զինչին փողոյ. վասն այնորիկ զոր ինչ ստացան՝ կորեաւ ի մարդկանէ» (Երեմիա, ԽԸ, 36):

Հունարեն Աստվածաշնչում *խալիլ*-ը թարգմանված է *ավլոս* (αύλος), հանդիպում է նաև *պար առեալ* կապակցությունը (έσ

¹Е. Коляда, Библейские музыкальные инструменты к проблеме интерпретации и перевода, Москва, 1998, стр.29-30.

² Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 310:

³ Шапиро Ф.М., указ.соч., 47.

⁴ Штейнзальц А., указ.соч., 121.

χοροίς). «Եւ ել ամենայն ժողովուրդն զհետ ևորա, եւ պար առեալ պարուք ուրախ լինէին մեծաւ ուրախութամբ, եւ հնչեաց երկիրն ի բարբառոյ ևոցա» (Գ Թագ., Ա, 40): Հայերենում գործածվում են ինչպես *սրհնգ*, այնպես էլ *փող* անվանումները: Ռուսերեն Աստվածաշնչում նախապատվությունը տրվում է *ֆլեյտա*-ին, թեպետ գործածվում է նաև *свирель* - ը (Ис. 30:29 ; Иер. 48:36): Արդի երբայերենում *խալիլ* նշանակում է *երկայնակի ֆլեյտա*¹:

Ակնառու է, որ հաճախ նվագարանների անվանումների հայերեն թարգմանության մեջ հունարենին և մյուս քնագրերին համապատասխանող ձևերի կողքին կան նաև նմանակությամբ ստեղծված անվանումներ: Այդ օրինակները հաճախադեպ են և արժեքավոր տեղեկություններ են հաղորդում ոչ միայն արևելյան, այլև հայկական համանման նվագարանների, նրանց անվանումների, նաև գործիքային նվագի, աշխարհիկ և հոգևոր երաժշտարվեստի զարգացման մասին:

Ստորև նշված աղյուսակում տրված են Աստվածաշնչում հիշատակված փողային նվագարանները՝ ըստ գործածության հաճախականության:

Շոֆար	Ելք, ԺԹ, 16, 19. Ի, 18: Ղեւտ., ԻԳ, 24. ԻԵ, 9: Յեսու, 2, 3-5, 7-8, 12, 15, 19: Ղատ., Գ, 27, 2, 34 . Է, 8, 16, 18-20, 22: Ա Թագ., ԺԳ, 3: Բ Թագ., Բ, 28. 2, 15. ՃԵ, 10. ՃԸ, 16. Ի, 1, 22: Գ Թագ., Ա, 34, 39, 41: Դ Թագ., Թ, 13: Ա Մևաց., ՃԵ, 28: Բ Մևաց., ՃԵ, 14: Նեեմի, Դ, 18, 20: Յովբ, ԼԹ, 24-25: Սաղմ., Խ2, 6. Ղ2, 6. ԺԾ, 3: Եսայի, ՃԸ, 3. ԻԷ, 13. ԾԸ, 1: Երեմիա, Դ, 5, 19, 21. 2, 1, 17. ԽԲ, 14. ԾԱ, 27: Եզեկիել, Է, 14. ԼԳ, 3-6: Ովսեե, Ե, 8. Ը, 1: Յովել, Բ, 1, 15: Ամովս, Բ, 2. Գ, 6: Սոփ., Ա, 16: Չաք., Թ, 14:
Կերեն	Յեսու, 2, 4: Ղան., Գ, 5, 7, 10, 15:
Յոբել	Ելք, ԺԹ, 13: Յեսու, 2, 3, 5, 7, 13:

¹ Шапиро Ф.М., указ.соч., 57.

Խաղոցրա	Թիւք, Ժ, 2-5, 8-10. ԼԱ, 6: Դ Թագ., ԺԱ, 14. ԺԲ, 13: Ա Սաաց., ԺԳ, 8. ԺԵ, 24, 28. ԺԶ, 42: Բ Սաաց., Ե, 12-13. Է, 6. ԺԳ, 12, 14. ԺԵ, 14. Ի, 28. ԻԳ, 13. ԻԹ, 26-28: Ա Եզր, Գ, 10: Նեեմի, ԺԲ, 35, 41: Սաղմ., ԴԵ, 6: Ովսէէ, Ե, 8:
Մաշրոկիտա	Յովք, ԻԲ, 12. Լ, 31: Սաղմ., ԾԾ, 4: Դան., Գ, 3:
Խալիլ	Ա Թագ., Ժ, 5: Գ Թագ., Ա, 40: Եսայի, Ե, 12. Լ, 29: Երեմիա, ԽԸ, 36:

Мхитарян Гаяне- Названия старинных музыкальных инструментов в Библии.- Цель настоящего исследования - выявить культурную общность армянского и ближневосточных древних народов, отметить, что древняя и средневековая армянская музыкальная культура является одной из страниц не только восточнохристианской, но и всемирной музыкальной культуры.

В Библии упоминаются названия духовых музыкальных инструментов - *шофар, керен, йовел, хацоцра, машрокита, халил*. В армянском переводе используются *փող* и его варианты – *եղեգնափող, եղջերափող, գալարափող, սրափող*. В переводах Библии иногда они заменяются другими словами, но, как в других языках, так и в армянском названия музыкальных инструментов ранее имели свои эквиваленты.

Mkhitaryan Gayane -The Names of Ancient Musical Instruments in the Bible.- The aim of the present research is to reveal the common cultural character of Armenian and the Middle-Eastern ancient nations, to note that the Ancient and Medieval Armenian culture makes part of not only East Christian, but also world musical culture.

The names of wind musical instruments *shofar, keren, jobel, khatsotsra, mashrokita, khalil* are mentioned in the Bible. In the Armenian translations *փող* and its variants *եղեգնափող, եղջերափող, գալարափող, սրափող* are used. Sometimes the above mentioned words are replaced by other words or different descriptive expressions. It is supposed that all the musical instruments in different languages, as well as in Armenian, once had their equivalents.

Դարձվածային հոմանիշները և նրանց կառուցվածքային տեսակները ժամանակակից հայերենում

Յուրաքանչյուր լեզու ներկայանում է իբրև շարժուն ու փոփոխական համակարգ: Այս հատկանիշները նախապայման են լեզվի զարգացման և հարստացման համար: Այդ հարստությունը դրսևորող լեզվական երևույթներից են դարձվածաբանությունը և հոմանշությունը, որոնց շնորհիվ խոսքը դառնում է առավել արտահայտիչ, գեղեցիկ և պատկերավոր: Դարձվածային միավորները լեզվում առկա փոխաբերական-այլաբանական իմաստ ունեցող կայուն կապակցություններ են, որոնք անբաժանելի և իմաստով ամբողջական բառակապակցություններ կամ նախադասություններ են և խոսքում վերարտադրվում են իբրև խոսքային պատրաստի միավորներ: Հոմանիշները տարբեր ձևեր, բայց նույնական կամ մերձավոր իմաստ ունեցող միավորներն են:

Ընդհանուր առմամբ հայերենը չափազանց հարուստ է հոմանիշ դարձվածային միավորներով: Մասնագիտական գրականության մեջ ինչպես բառային, այնպես էլ դարձվածային հոմանիշների վերաբերյալ մինչև այժմ միասնական սահմանում չկա:

«Բառային հոմանիշների նման՝ հոմանիշներ պետք է համարել այն դարձվածքային միավորները, որոնք ունեն նույն կամ մոտ իմաստներ, բայց կարող են տարբերվել ոճական տարբեր կիրառություններով ու հուզաարտահայտչական գունավորումներով (երանգավորումներով) և որոշակի համատեքստերում կարող են փոխարինվել իրարով»¹:

Դարձվածային հոմանիշներն իրենց գոյությունը հաստատում են հոմանիշների շարքի մեջ, որոնք կարող են լինել սակավանդամ և բազմանդամ: Դրանք կարող են հոմանշային շարքեր կազմել, եթե ունեն կառուցվածքային ընդհանրություն: Ըստ այդմ էլ

¹ Ա. Սուքիասյան, Ժամանակակից հայոց լեզու, Ե., 2004, էջ 310:

հոմանիշ դարձվածային միավորների երկու խումբ կարելի է առանձնացնել.

1. որպես նախադասություն հանդես եկող դարձվածային հոմանիշներ, որոնք տրամաբանորեն դատողություն են արտահայտում.

2. բառային արժեք ունեցող դարձվածային հոմանիշներ, որոնք համարժեք են բառին և տրամաբանորեն հասկացություն են արտահայտում:

1. Նախադասություններով հարուստ է հայոց լեզվի դարձվածային բառապաշարը: Այստեղ բաղադրիչներն ամբողջությամբ վերցրած են վերախմաստավորված լինում և իրենց կազմում ունենում են խոնարհված բայ: Այսինքն՝ նախադասություն-դարձվածային միավորների համար կարևոր հատկանիշ է ստորոգումը: Օրինակ՝ *Ասածս քամին տանի* - ասածս թող չասված համարվի, *Քթից ընկնողը հագար կտոր կլինի* - գոռոզ է:

Հանդիպում են նաև այնպիսի նախադասություն-դարձվածային միավորներ, որոնց կազմում գեղչված է լինում ստորոգյալը, որը, սակայն, մտովի հասկացվում է: Օրինակ՝ *գլուխը քարը (քարին, ի քարը)*//*քարը գլուխը (տա)* -1. պետքս (պետքը) չէ, 2. ոչինչ, կարելի չէ, 3. ինձ համար նշանակություն չունի, *արևիդ մատաղ // գլխիդ մատաղ (լինես)* - փաղաքշական արտահայտություն (քեզ համար մեռնես):

Մասնագիտական գրականության մեջ նշվում են նախադասություն-դարձվածային միավորների կառուցվածքային հետևյալ տեսակները՝ *ենթակա+ստորոգյալ* (*Կյանքդ երկարի-բարեմադթանք*), *ենթակա+ստորոգյալ+ստորոգյալի լրացում (լրացումներ)* (*Երեսին մեռնն չկա- անամոթ է*), *ենթակա+ենթակալի լրացում+ստորոգյալ* (*Հաշված օրեր են (էին) մնացել* -մահը կամ վախճանը մոտ), *ենթակալի լրացում+ենթակա+ստորոգյալի լրացում+ստորոգյալ+ (ստորոգյալի լրացում)* (*Երկուսի ջուրը մի առվով չի գնում // Երկուսի արանքով սև կատու է անցել* - անհաշտ են, անմիաբան են):

Եթե հոմանշային շարքում ընդգրկվեն նախադասություն- դարձվածային միավորների տարբեր տիպեր, ապա այն ավելի բազմանդամ կդառնա: Օրինակ՝ *աչքն առաջը չի տեսնում // քրթից ընկնողը հազար (տասը) կտոր կլինի // (բրբ.) քթի ծայրին որդը շուրթով չի հասնիլ* - գոռոզ է:

2. Բառային արժեք ունեցող դարձվածային միավորների արտահայտած իմաստներն ունեն տարբեր խոսքիմասային նշանակություն՝ գոյականական, ածականական, բայական, մակբայական, եղանակավորող¹:

Ըստ այդմ էլ գոյականի իմաստ ունեցող դարձվածային միավորները կազմում են գոյականական հոմանշային շարքեր, ածականները՝ ածականական, բայերը՝ բայական և այլն: Ուստի, հայերենում դարձվածաբանական հոմանիշները լինում են անվանական, բայական, մակբայական և եղանակավորող:

Անվանական դարձվածային հոմանիշներ: Անվանական դարձվածային միավորները հանդես են գալիս անվանողական դերով՝ համարժեք դառնալով բառին: Սրանք կարող են նշել երևույթը, առարկան և դրանք հատկանիշները: Հայերենում տարբերակվում են գոյականական, ածականական դարձվածային միավորներ, համապատասխանաբար գոյականական և ածականական դարձվածային հոմանիշներ: Եվ քանի որ դրանք կարող են տվյալ խոսքի մասին փոխարինել՝ իմաստային առումով, ապա պարտադիր չէ, որ տվյալ դարձվածային միավորը կազմված լինի միայն այդ խոսքի մասին պատկանող բառերից. ինչպես՝ գոյականական դարձվածային միավորը՝ գոյականներից, ածականականը՝ ածականներից: Այսինքն՝ տվյալ դարձվածային միավորի միջոցով ձևավորված հասկացությունն է որոշում դարձվածային

¹ Մասնագիտական գրականության մեջ այսպիսի դասակարգում ընդունում են Ե. Գևորգյանը «Հայերենի դարձվածքները», Պ. Բեդիրյանը «Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն», Խ. Բաղիկյանը «Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները» գրքերում: Բացի եղանակավորող դարձվածային միավորներից դասակարգման մյուս ձևերը կան Նան Ա. Սուքիասյանի «Հոմանիշները ժամանակակից հայերենում», «Հայոց լեզու» և Գ. Ջահուկյանի, Է. Աղայանի, Վ. Առաքելյանի, Վ. Զոսյանի «Հայոց լեզու» գրքերում:

միավորի խոսքիմասային պատկանելությունը:

1. Գոյականական դարձվածային հոմանիշներ: Սրանք գոյականական կայուն բառակապակցություններ են: Ըստ իրենց կազմում եղած բաղադրիչների քանակի՝ գոյականական դարձվածային միավորները կարող են լինել երկանդամից մինչև հնգանդամ¹: Մասնագիտական տեսական գրականության մեջ նշված են գոյականական երկանդամ դարձվածային միավորների՝ գոյական+գոյական, ածական+գոյական, թվական+գոյական, դերբայ+գոյական կամ գոյական+դերբայ, ածական+ածական կառուցվածքային տեսակները, որոնց ավելացնում ենք թվական+ածական, թվական + դերանուն, ածական+դերանուն կամ դերանուն + ածական կառույցները: Օրինակները ներկայացնում ենք գծապատկերներով՝ ընդգրկելով և՛ հոմանիշներ, և՛ հոմանշային տարբերակներ²:

գոյական+գոյական
դժոխքի պետ (պահպանական)/խավարի իշխան- սատանա, Աղասի մերկություն // Եվայի հագուստ- մերկություն

ածական+գոյական
Երկնային դատավոր (արքա, վարդապետ) // Ամենակարող տեր // Ամենատեղծ հայր // Քաջ հովիվ - Աստված

թվական+գոյական
երկրորդ երիտասարդություն//երկրորդ շուն-չառություն-ևոր ուժերի ծաղկում

ածական+ածական
երկար ականջավոր - Էշ, մեծ լուսավոր - արև, արեգակ

դերբայ+գոյական
կամ
գոյական+դերբայ
շուն խաղացնող // շուն բռնող // ճանճ թշող // աղվես նալող - խեղկատակ

թվական+դերանուն
երկրորդ «ես» - մեկին հոգեհարազատ եւթյուն

ածական+դերանուն կամ դերանուն+ածական
փոքր ես - համեստություն, սեփական ես- յուրաիատուկ ինքնություն, մեզնից լավերը (մեզնեն աղեկները (արևմտ.)) - սատանա

թվական+ածական
առաջին ավետաբերորև բնագավառում երևացող անձ , երևույթ

¹ Դարձվածային միավորի բաղադրիչների քանակը որոշելիս հաշվի ենք առել բաղադրիչների ոչ թե բերականական նշանակությունը, այլ զուտ քանակական կողմը:

² Զանի որ կառուցվածքային բոլոր տիպերում մեծամասնություն են կազմում երկանդամ կառույցները, ուստի միայն դրանց օրինակներն ենք ներկայացնում այս եղանակով:

Եռանդամ, քառանդամ և հնգանդամ կառույցներում անդամներից մեկը արտահայտված է լինում գոյականով, իսկ մյուսները՝ տարբեր խոսքի մասերով (ածական, թվական, բայ): Օրինակ՝ *աչքի մազ (սուրմա) թռչնող // մոր կոճակ կտրող // աչքից մազ հանող* - գող, *ջրի երեսն ընկած տաշեղ* - հայտնի դարձած չնչին բան, *գրի սևն ու սպիտակը ջոկող (իմացող)* - գրաճանաչ:

Հայերենը հարուստ է գոյականական հոմանշային շարքերով: Շարքը հնարավորինս ամբողջական ներկայացնելու համար ընդգրկել ենք կառուցվածքային տարբեր տիպեր ունեցող դարձվածային միավորներ: Օրինակ՝ *խաղողի արյուն // խաղողի ջուր // հիսուսական ջուր // կարմիր ջուր // ծերոց գավազան // ծերունյան կաթ* - գինի, *ծեռքը ծուռ // ձեռքից քաշ // աչքի(ց) սուրմա (ծարիր, մազ) թռչնող // մոր կոճակ կտրող // աչքից մազ հանող* - գող:

2. Ածականական դարձվածային հոմանիշներ: Դարձվածային այս միավորները հարաբերակից են ածականներին կամ ածականի դերում հանդես եկող այլ խոսքի մասերին և բնութագրում են այն անձը կամ առարկան, որի վրա դրվում են: Հայերենում ածականական դարձվածային միավորները զգալի թիվ են կազմում և ըստ բաղադրիչների քանակի՝ լինում են երկանդամից վեցանդամ:

Տեսական գրականության մեջ նշված են ածականական երկանդամ դարձվածային միավորների՝ գոյական+գոյական, գոյական+ածական կամ ածական+գոյական, գոյական+դերբայ կամ դերբայ+գոյական, ածական+դերբայ, թվական+գոյական, թվական + ածական, կապերով և կապական բառերով կառուցվածքային տեսակները: Մեզ հանդիպել են նաև դերբայ+դերբայ, դերանուն+դերբայ կաղապարով կառույցները: Օրինակ՝

գոյական+գոյական
մտածու գառ //
խելքը գլխին
(գլուխը) // խելքի
բույն (կտոր,
շտեմարան)-խելոք

**գոյական+ածական կամ
ածական+գոյազգական**
բերանից թույլ // կզակը
թույլ // մաղը ծակ -
անգաղտնապահ,
անմեղ գառ//աններկ
կտավ-միամիտ

թվական+գոյական
երկու հոգով (հոգիս) -
հղի, մի մատ // մի թիգ
-փոքրամարմին

թվական+ածական
երկու երեսանի - կեղծա-
մոռ

**գոյական+դերբայ կամ
դերբայ+ գոյական**
դենքը (երեսը) թթվեցրած
(թթվեցնելով) // հոնքերը
(Նոթերը) կիտած (կիտե-
լով) - դժգոհ, թափելու
բան - անպիտան

**կապերով կամ
կապական բառերով**
նմուշի համար// եղուն-
գի չափ-քիչ

ածական+դերբայ
շատ հաչող -
շատախոս

դերանուն+դերբայ
իր ասածի - համար

դերբայ+դերբայ
ընկած-ելած//ելած-
ելած//ընկած-սրած-
փորձառու, թքած-
կայցրած-ոչ ամուր,
մեծացած - փոքրացած -
ժամանակից շուտ
հասունացած

Եռանդամից վեցանդամ կառույցներում բաղադրիչները կարող են արտահայտվել տարբեր խոսքի մասերով (գոյական, ածական, թվական, դերանուն, բայի անդեմ ձևեր, կապ): Օրինակ՝ *ասեղի ծակով (ծակից) անցնող//կողերն իրար կպած//ցամաք ձորի աղվես-նիհար, կոպեկի համար արյուն թափող//մութ տեղը նամագ անող- ժլատ, մի աչքը հյուսիս, մյուսը՝ հարավ (Մասիս) - շիլ, մեծի հետ մեծ, երեխայի հետ երեխա - համեստ:*

Հարուստ են նաև ածականական դարձվածային միավորների հոմանշային շարքերը: Օրինակ՝ *քթից թռած//մի տաշտի խմոր // մի (նույն, միևնույն) խմորից (հունցված)//մի (նույն) սանրի կըտավ // մի խնձորի երկու կես//մի ծառի (դաշտի) պտուղ//մի մկրատով կտրած//մի ձու՝ մեջտեղից կիսած//ինչպես ջրի երկու կաթիլ և այլն - նման, նույն:*

Բայական դարձվածային հոմանիշներ: Հայերենում բայական դարձվածային միավորները ամենամեծ թիվն են կազմում: Դա բացատրվում է նրանով, որ բայը կարևոր դեր է կատարում լեզվում: Մեծաքանակ են նաև բայական դարձվածային հոմանիշները և՛ քանակական, և՛ մեկ դարձվածային միավորի հոմանշային շարքի բազմանդամության առումով: Բոլոր տիպի կառույցներում գերադաս անդամը անորոշ դերբայն է, որը կարող է գործածվել գրեթե բոլոր խոսքի մասերի հետ:

Բայական դարձվածային միավորներին սերտորեն առնչվում են հարադիր բայերը՝ սովորական և դարձվածային:

Սովորական հարադիր բայերը չունեն այլաբերական-փոխաբերական նշանակություն (օրինակ՝ *անց կենալ, խաղ անել, լաց լինել* և այլն), իսկ դարձվածային հարադիր բայերն ունեն (օրինակ՝ *պար գալ*-խոնարհվել, *աչք առնել*-չարակնել և այլն):

Ըստ բաղադրիչների քանակի՝ բայական դարձվածային միավորները լինում են երկանդամից ութանդամ:

Երկանդամ դարձվածային միավորները կառուցվածքային հետևյալ կադապարներն ունեն՝ գոյական+բայ, ածական+բայ, թրվական+բայ, դերանուն+բայ, բայ+բայ, մակբայ+բայ, կապ (կապական բառ)+բայ, ծայնարկություն+բայ: Օրինակ՝

գոյական+բայ

կախաղան հանել (բարձրացնել) // հոգին հանել // մահապատժի ենթարկել // աստղը խավարեցնել // սրի քաշել // արևը սևացնել/ծրագը հանգցնել

ածական+բայ

սև կապել // սև հագնել - սգալ

թվական+բայ

ութ գրել (գծել) - հարբեցողի նման կամ հավասարակշռությունը կորցրած քայլել

բայ+բայ

ուտել-խմել - 1. պրել, 2. գվարճանալ, քեֆ անել, 3. վատնել,

դերանուն+բայ

իրենն անել - ուզածին համառորեն հասնել, հոռո ուտել - կռվել

մակբայ+բայ

շատ համարել - խնայել, վերևից նայել // երեսից գցել - արհամարհել

կապ(կապական բառ)+բայ

հետ տալ/հետ ուղարկել/հետ անել - վերադարձնել

ծայնարկություն+բայ

այի այն // այի քաշել -

Եռանդամից ութանդամ կառույցներում անորոշ դերբայի հետ կարող են գործածվել տարբեր խոսքի մասեր: Օրինակ՝ *նույն անցյալը շալակել* - նույն ճակատագիրն ունենալ, *լեղին ջուր դառնալ*//*սիրտը ահ (վախ, դող) ընկնել*//*թուրքը կատիկը թռչել* // *սրտի թելը փրթել*//*ծայնը փորը գցել (քաշել)*//*փորը կատու ընկնել* - վախենալ, *միսը շան բաժին (փայ) դարձնել (շինել)*//*մեծ կտորն ականջը թողնել*- սպանել, *մի գնդակով երկու նապաստակ որսալ* // *մի ձեռքով երկու ձմերուկ բռնել*- մի քայլով մեկից ավելի գործեր կատարել, *մութ սենյակում սև կատու բռնել*- անհնարին, անտրամաբանական գործ կատարել, *սատանայից յոթ օր առաջ աշխարհ գալ*- խորամանկել, *վանքի հավերը ուտել*՝ *մեղքը խեղճ ուխտավորների վրա դնել* - իր մեղքը ուրիշի վրա գցել:

Բայական դարձվածային միավորները նախորդների համեմատ հոմանշային ամենաբազմանդամ շարքերն են կազմում: Օրինակ՝ *աչքերը (աչքը) խփելի/հայր Աբրահամի գիրկն ընկնելի/հոգին ավանդելի/շունչը փչելի/ոտները պարզել (տնկել) (գռիկ.)// սատա- նայի բաժին դառնալ // կյանքի թելը կտրվել // աստղը խավարել // մոխիր դառնել // արևը սևանալ // աշխարհի (կյանքի) հետ հաշի- վը փակել // մյուս աշխարհ գնալ // աշխարհին մնաս բարով ասել // շիրիմ գրկել և այլն - մեռնել¹:*

Մակբայական դարձվածային հոմանիշներ: Շարահյուսորեն մակբայական գործառություն ունեցող դարձվածային մի- ավորները սակավաթիվ են: Ըստ Ե. Գևորգյանի՝ զուտ մակբա- յական դարձվածային միավորներ հայերենում չկան. դրանք միայն մակբայի կիրառություն կամ արժեք ունեն²:

Սրանք լինում են երկանդամից հնգանդամ: Երկանդամները կարող են ունենալ հետևյալ կաղապարները՝ գոյական+ գոյա- կան, գոյական+ածական կամ ածական+գոյական, թվական+ գոյական կամ գոյական+թվական, գոյական+դերբայ կամ դեր- բայ+ գոյական, դերանուն+գոյական կամ գոյական+ դերանուն, գոյական+կապ կամ կապ+ գոյական: Օրինակ՝

գոյական+գոյական
հոգու (մտքի) խորքում -
ներքուստ, ներքևայես,
երես երեսի - առերես

գոյական+ածական կամ
ածական+գոյական
աչքը փակ(գոց)-1. անվերապա-
հորեն, 2. կուրորեն, թեթև ձեռքով
// թեթև սրտով - անխիտմաբար

թվական+գոյական կամ
գոյական+թվական
երկու խոսքով - համառոտակի,
աշխարհով մեկ - ամենուրեք

գոյական+դերբայ կամ
դերբայ+գոյական
շուն ծեծելով (թակելով)
(ապրել) - չարչարանքով,
կտորած սրտով -
հիասթափված

դերանուն+գոյական
կամ
գոյական+դերանուն
ես ըրպեին - հիմա,
տարի(ն) բոլոր - միշտ,
շարունակ

գոյական+կապ կամ
կապ+գոյական
թարսի նման (պես) -
դժբախտաբար, մինչև
կոկորդ // մինչև
ականջները - ամբողջա-
աես

¹ *Մեռնել* բայի համար մեր ընտրանքում կա շուրջ 69 դարձվածային միավոր:

² Ե. Գևորգյան, Հայերենի դարձվածքները, Ե., 1969, էջ 127:

Ավելի քիչ են բազմանդամ դարձվածային միավորները: Օրինակ՝ *մատի մեկ շարժումով//գրչի մեկ հարվածով* -միանգամից (եռանդամ), *ոչ դես, ոչ դեն//անկախ դեմքից ու դիրքից*-հաշվի չառնելով, չիսնայելով, *երեկ մեկ, այսօր երկու* -շտապ, անմիջապես (քառանդամ), *մի աչքը քուն, մյուսը՝ արթուն*- կիսաքուն, կիսարթուն, *մեկ երեսը լաց, մեկը՝ ծիծաղ* - ակամա (հնգանդամ):

Սակավ են նաև մակբայական հոմանշային շարքերը. *ամբողջ (հզվր. լրիվ) ձայնով // ամբողջ (բոլոր) սրտով // այբից (մինչև) ֆե (քե) // մինչև ականջների բլթակները // մինչև ականջները // մինչև ականջ(ներ)ի ծայր(եր)ը // մինչև ականջները կարմրած // մինչև ատամները գինված // մինչև (արյան) վերջին կաթիլը // մինչև բուկը // մինչև մազերի ծայրը // մինչև ոսկորները // մինչև ոսկորների ծուծը // մինչև վարդապետի խազը // մինչև վերջ // մինչև վերջին շունչը // մինչև վերջին թելը // մինչև վիզը // մինչև ուղն ու ծուծը // մազերից մինչև կրունկները // ներսից-դրսից // մի շնչով (շնչում) // ոտքով գլխով // ոտից (մինչև) գլուխ // տակից գլուխ* - ամբողջովին, ամբողջապես, լիովին, առանց մնացորդի:

Եղանակավորող դարձվածային հոմանիշներ: Լեզվում հանդիպում են նաև եղանակավորող դարձվածային միավորներ, որոնք հիմնականում խոսքին հաղորդում են հուզարտահայտչական երանգ: Անեծքների և օրինանքների մեծամասնությունը կազմում է եղանակավորող դարձվածային միավորների բառապաշարի մի մասը: Ըստ բաղադրիչների քանակի՝ այս միավորները երկանդամից քառանդամ են: Բաղադրիչները կարող են լինել գոյական, ածական, դերանուն, բայ, կապ, ձայնարկություն:

Մասնագիտական տեսական գրականության մեջ նշված են եղանակավորող երկանդամ դարձվածային միավորների՝ գոյական+գոյական, գոյական+դերբայ, դերանուն+բայ, արտահայտված ըղձական եղանակով, ածական+գոյական, ածական+բայ, արտահայտված հրամայական եղանակով կառուցվածքային տեսակները:

Հանդիպել են նաև եղանակավորող բառ+բայ՝ արտահայտված ըղձական եղանակով կառույցը, որը նույնպես տեսական գրականության մեջ տարբերակված չէ:

գոյական+գոյական
գլուխը քարը-1.պետքս չէ,
 2.ոչինչ, կարևոր չէ

գոյական+դերբայ
հերն անիծած-արհամարհական կամ դժգոհության արտահայտություն

դերանուն+բայ՝ արտ. ըղձական եղանակով
ի՛նչ իմանաս - հայտնի չէ

ածական+բայ՝ արտ. հրամայական եղանակով
բարի եղիր - հորդորական արտահայտություն

ածական+գոյական
բարի լույս - բա չէ՞, բարի՛ եկար (հեզն.)

եղ. բառ + բայ՝ արտ. ըղձական եղանակով
հենց իմանաս - կարծես, թվում է, ոչ բարով - 1.իբր թե, 2.լավ բան .:

Փոքրաթիվ են եռանդամ և քառանդամ կառույցները: Օրինակ՝ *խոսքը շաքարով կտրել* - խոսողին ընդմիջելու արտահայտություն, *քո մուր քո գլուխ/քո մեղք քո վիզ*- պատասխանատվությունից խուսափելու արտահայտություն:

Եղանակավորող դարձվածային միավորները նախորդների նըման ևս կարող են կազմել հոմանշային շարքեր: Օրինակ՝ *աստված գիտի// ո՞վ գիտի // ի՛նչ իմանաս* - անհայտ է, *ա՛յ քեզ բան // ա՛յ քեզ օյին // արի ու տես* - զարմանքի արտահայտություն:

Դարձվածային հոմանշային շարքերին հոմանիշ բառը ևս կարող է իր հոմանիշն ունենալ: Օրինակ՝ վախենալ // երկյուղել // սարսափել // ահաբեկվել - *աչքը (աչքերը) վախենալ // արյունը (երրակներում) սառչել (պաղել, ցամաքել, (արևմտ.) ցամքիլ)// արյունը (սիրտը) ջուր դառնալ//լեզուն (ծայնը, ձենը) փորը գցել (ընկնել)//լեղին (ջուր) կտր(վ)ել (դառնալ)//ջանը դող (ահ ու դող) ընկնել // փոխանը (փողքը) կատու ընկնել // սիրտ չունենալ // սիրտը դողալ (դողացնել, դողդողալ, դող ընկնել)//մկան ծակը (բունը) հազար (հարյուր) թումանով (թումանի) առնել (խնդրել, (բրբ.) պտրտել)//գույն տալ, գույն առնել // (բրբ.) օխտը ռանգ փոխել // երեսին գույն չլինել (չմնալ) // թուքը կատիկը թռչել և այլն:*

Գիտական գրականության մեջ չի նշվում այն մասին, որ միևնույն դարձվածային միավորը իր արտահայտած բազմաթիվ ի-

մաստներով կարող է հոմանշային տարբեր շարքեր կազմել¹: Օրինակ՝ *հոգի(ն) հանել* դարձվածային միավորը հոմանշային շարք է կազմում շուրջ 52 դարձվածային միավորով և համազոր է *տանջել // չարչարել* հոմանիշ բառերին, բայց երբ իր իմաստով համարժեք է *ստիպել* բառին, հոմանշային շարք է կազմում շուրջ 10 դարձվածային միավորով, *ձանձրացնել* բառի հետ՝ 13 դարձվածային միավորով.


տանջել//չարչարել - *հոգին հանել//հոգին ուտել//հոգին բերանը բերել (տալ)//հոգին կատիկը հասցնել//հոգին կտոր-կտոր լինել ((արևմտ.) ըլլալ)//հոգին կրծել//հոգին (կյանքը) մաշել// սիրտն ուտել//կրակե շապիկ հագցնել//գլխին աղուև աղալ// գլխին քարակարկուտ աղալ//գլխին հատիկ ծեծել//գլխին պոպոք կոտրել // քոռ սղոցի տակ դնել//մեծ կտորը բկումը թողնել// պոչը տրորել// կատիկին հուպ տալ (ջուր դնել)//կատիկին (բկին) չոքել// արյունը ջուր շինել//կաշին քերթել (քերել)//կաշին ջուրը դնել //վերքի վրա աղ լցնել//մկան ծակը կոխել//մկան ծակը ծուխ տալ// երկու ոտ(ք)ը մի կոշիկի մեջ մտցնել//օձի հետ ընկերացնել// հավատից գրցել//միսը բերանը տալ//միս ու աղցան անել//միսը իրան ուտեցնել //խորոված օձի միս ուտեցնել//օձի փուշ ուտեցնել//շլինքովը օձ փաթաթել//հալումմաշ անել//գլխին ջրաղաց աղալ//դժվար տեղը ձգել և այլն.*

ստիպել - *հոգին հանել// հոգին կատիկը հասցնել // հոգին ուտել // հոգուն ջուր դնել// կատիկին հուպ տալ// կատիկին (բըկին) չոքել //կատիկին ջուր դնել//կալուկապ անել// երկու ոտը մի մաշիկ դնել // բկիցը բռնել.*

ձանձրացնել - *գլուխ(ը) տանել//գլուխը ցավացնել//գլխացավանք պատճառել//ականջը տանել//ականջը սղոցել (խարտոցել) //ականջի միսն ուտել//գահլա(ն) տանել//հոգի(ն) հանել//հոգին ուտել//հոգին կատիկը հասցնել//սխտոր ծեծել//համը հանել (տանել) // ճլերք գցել (գվռ.):*

¹ Ա. Սուբխայանի «Յայոց լեզվի հոմանիշների բառարան»-ում և «Յայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան»-ում շատ բառերի համար տրվում են նաև դարձվածային հոմանիշներ, ուստի մենք ուշադրություն ենք դարձրել այդպիսի հոմանշային շարքերում առկա այլ երևույթների:

Ընդգծված դարձվածային միավորներն ընդհանրական են իմաստային բոլոր դաշտերի համար: Ստորև ներկայացված գրաֆիկական օրինակի 4-րդ դաշտում հատվում են մյուս երեք դաշտերի ընդհանուր օրինակները: Դաշտերի քանակը կարող է ավելանալ արդյունքում դարձվածային միավորներին հոմանիշ բառերը կարող են արտահայտել տարբեր և իրար հետ ոչ առնչակից իմաստներ:



Այսպիսով՝ 1) գիտական գրականության մեջ դարձվածային միավորների դասակարգված կառուցվածքային ձևերից բացի առկա են նաև թվական+դերանուն, ածական+դերանուն, թվական+ածական գոյականական, դերբայ+դերբայ, դերանուն+ դերբայ, ածական+ածական, թվական+թվական ածականական, եղանակավորող բառ+բայ՝ արտահայտված թղձական եղանակով եղանակավորող դարձվածային միավորների կաղապարները:

2) միևնույն դարձվածային միավորն իր արտահայտած բազմաթիվ իմաստներով կարող է հոմանշային տարբեր շարքեր կազմել, որոնցից ընդհանրական իմաստ ունեցողները հատվում են որևէ դաշտում:

Օգտագործված գրականություն

1. Բաղիկյան Խ., Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները, Ե., 1986:
2. Բաղիկյան Խ., Ուսումնական դարձվածաբանական բառարան, Ե., 2002:
3. Բեդիրյան Պ., Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն, Ե., 1973:
4. Բեդիրյան Պ., Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան, Ե., 2011:
5. Գևորգյան Ե., Հայերենի դարձվածքները, Ե., 1969:
6. Էլոյան Ս, Արդի հայերենի սորաբանությունների բառարան, Ե., 2002:
7. Զահուկյան Գ., Աղայան Է., Առաքելյան Վ., Քոսյան Վ., Հայոց լեզու, Ե., 1980:
8. Ա. Սուքիասյան, Հոմանիշները ժամանակակից հայերենում, Ե., 1971:
9. Ա. Սուքիասյան, Ս. Գալստյան, Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Ե., 1975:
10. Ա. Սուքիասյան, Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան, Ե., 2003:
11. Ա. Սուքիասյան, Ժամանակակից հայոց լեզու, Ե., 2004:

Մկրտչյան Արմինե - Фразеологические синонимы и их структурные типы в современном армянском языке.- 1. В научной литературе, помимо классификационных структурных форм фразеологических единиц, встречаются следующие модели: номинативные: числительное+местоимение, прилагательное+ местоимение, числительное+прилагательное; адъективные: причастие+ причастие, местоимение+причастие, прилагательное+прилагательное, числительное+числительное; модальные: модальное слово+ глагол в сослагательном наклонении.

2. Многозначная фразеологическая единица может составлять различные синонимические ряды. Некоторые из них, близкие по значению, пересекаются в определенных семантических полях.

Mkrtumyan Armine - Phraseological Synonyms and Their Structural Types in Modern Armenian.- In Modern Armenian we often meet the following structures of phraseological units. For nominal – numeral + pronoun, adjective+ pronoun, numeral + adjective, adjectivals – gerund+ gerund, pronoun + gerund, adjective + adjective, numeral + numeral; modal-modal verb + subjunctive.

The article also focuses on the description of various phraseological units having close or identical meanings.

**Գրական արևելահայերենի կարող եմ հարադրության
ձևաբանական արժեքի հարցը**

Լեզվում շատ կարևոր և կիրառելի միավորներ այս կամ այն պատճառով երբեմն դուրս են մնում քերականական ուսումնասիրությունների շրջանակից կամ բավարար չափով ուշադրության չարժանանալով՝ տեղ չեն գտնում քերականական դասագրքերում: Այսպես՝ խոսքի թե՛ գրավոր, թե՛ բանավոր տարբերակներում, գործառական բոլոր ոճերում խիստ գործածական *կարող+ եմ// ես// Է// ենք// եք// են//էի// էիր// Էր// էինք// էիք//էին* հարադրության քերականական բնութագիրը, թվում է, թե անվիճելի է:

Անշուշտ, հարադրությունը կազմված է երկու բաղադրիչներից՝ *կարող* ածական + օժանդակ բայ (բոլոր հնարավոր խոնարհումներով): Ա. Աբրահամյանը, խոսելով բառերի խոսքիմասային փոխանցումների մասին, գրում է. «*կարող* գրաբարյան *կարել* «կարողանալ» բայի ենթակայական դերբայից է առաջացած, իսկ *կարել* բայը այսպիսի իմաստով ժամանակակից գրական լեզվում գործածություն չունի (կա *կարողանալ*, ինչպես և՛ բարբառային *կարենալ*)»¹: Սակայն «*կարողացող*-ը կամ *կարեցող*-ը,- նույն տեղում շարունակում է Աբրահամյանը,- չի կարող դիտվել իբրև *կարող*-ի բառագույգ»²: Այնուհետև նշվում է, որ խոսքիմասային փոխանցման արդյունքում բառը վերածվում է ածականի: Եվ այդպես էլ այն ներկայացվում է բացատրական բառարաններում³: Այստեղ է, որ հարց է ծագում՝ արդյո՞ք մեզ հետաքրքրող կազմության մեջ *կարող*-ը ածականի արժեք ունի, կամ արդյո՞ք

¹ Ա. Աբրահամյան, Բայը ժամանակակից հայերենում, 1, Ե., 1962, էջ 411:

² Նույն տեղում:

³ Տե՛ս Է.Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Ե., 1976, էջ 711. (Աղայանը նշում է նաև *կարող է ձևը*՝ «հնարավոր է, կարելի է» նշանակություններով՝ չնշելով միադիմի բայի արժեքը): Ժամանակակից հայոց լեզվի

այն տրոհելի է իբրև լեզվական միավոր:

Ընդունելով, որ *կարող եմ* հարադրությունը *ածական + օժանդակ բայ* կառույցն է ներկայացնում, այն համեմատենք նմանատիպ այլ կազմությունների հետ, ինչպես՝ *գեղեցիկ է, վտանգավոր է, հիվանդ է, բարի է, հայտնի է* և այլն, կամ՝ ենթակայական դերբայից խոսքիմասային փոխանցումով առաջացած՝ *գրող է, ուսանող է (գոյական+օժանդակ բայ)*: Նշված ձևերի ժխտականը կլինի՝ *գեղեցիկ չէ, վտանգավոր չէ, հիվանդ չէ, բարի չէ, հայտնի չէ, գրող չէ, ուսանող չէ* և այլն: Խնդրո առարկա *կարող եմ* հարադրության ժխտականը կլինի՝ *չի կարող*, այնպես, ինչպես դիմավոր բայի դեպքում է (*աշխատում է-չի աշխատում, գրել է-չի գրել* և այլն): Այլ կերպ ասած՝ օժանդակ բայը ժխտական է մասնիկով գալիս է բայից առաջ, իսկ 3-րդ դեմքի *է* - ն վերածվում է *ի* - ի: Ի դեպ, այդ հատկանիշը բնորոշ է նաև որոշ միադիմի բայերի (*կարելի է-չի կարելի, թվում է- չի թվում* և այլն):

Փաստորեն ժխտական խոնարհման հարացույցում այն հարում է դիմավոր բային (շարահյուսական մակարդակում՝ բայական ստորոգյալին), որը կարող է լինել նաև միադիմի: Բացի այդ, քննարկվող լեզվական միավորն ունի ևս մեկ առանձնահատկություն. այն երբևէ հանդես չի գալիս առանց անորոշ դերբայի: Երբ ասում ենք՝ *կարող եմ*, հետևում է հարցը՝ *ի՞նչ (կարող եմ գրել, կարող եմ երգել)* և այլն, այսինքն՝ այն դրսևորում է սեռային հատկանիշ (ներգործական)՝ իբրև ուղիղ խնդիր ընդունելով անորոշ դերբայ (այս մասին կխոսենք ավելի ուշ): Այս առումով նույնական են, ասենք, *սիրում եմ երգել (դիմավոր բայ + անորոշ դերբայ)* - *կարող եմ երգել* կառույցները: Տրամաբանական է, որ նշված կազմությունը շարահյուսական մակարդակում կարող ենք ընդունել իբրև բաղադրյալ ստորոգյալ՝ *դիմավոր բայ + անորոշ դերբայ* կառույցի օրինակով¹:

բացատրական բառարան, հ. 3, Ե., 1974, էջ 90: Ստ. Մալխասեանց, Հայերեն բացատրական բառարան, հ. 2, Ե., 1944, էջ 414:

¹ Տե՛ս Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Ե., 1974, էջ 403-404:

«Ժամանակակից հայոց լեզու» աշխատության «Բայական բաղադրյալ ստորոգյալ» բաժնում նշվում է, որ «բաղադրյալ ստորոգյալ են կազմում պարտավորական, անհրաժեշտական, կարելիական կամ հնարավորական նշանակություն արտահայտող պետք է, պիտի, անհրաժեշտ է, կարելի է, անկարելի է, անհնար է, անհնարին է, կարող է, դժվար է, հեշտ է, պատրաստ է, ապարդյուն է և այլ ձևերը անորոշ դերբայի հետ»: Նույն տեղում շարունակվում է. «Սրանք, որ կազմված են ածականից, մակբայից կամ այլ խոսքի մասից և բայական հանգույցից, հարադրվելով անորոշ դերբային, արտահայտում են մեկ գործողություն, հանդես գալով որպես բաղադրյալ ստորոգյալ անդեմ նախադասության համար: Սրանց արտահայտած գործողությունը կապվում է ոչ թե որևէ դեմքի հետ, այլ վերաբերում է ընդհանուրին»¹: Անշուշտ, մեջբերումը վերաբերում է միադիմի բայերին, որոնց մեջ ներկայացվում է նաև *կարող է* ձևը:

Վերլուծությունը շարունակելով՝ դիմենք հայերենին ցեղակից և մեզանում խիստ գործածական լեզուների միևնույն իրողության արտահայտությանը ևս: Այսպես՝ հարադրության ռուսերեն համարժեքն է՝ *могу*, որը նույնպես գործածվում է անորոշ դերբայի հետ միայն՝ ձևավորելով բաղադրյալ ստորոգյալ: Ռուսերեն *Могу* և я *вас* *помогу* արտահայտությունը թարգմանվում է՝ *կարող եմ* արդյոք ձեզ *խնդրել*: Բայի ուղիղ ձևն է՝ *могу* «կարողանալ, ի վիճակի լինել»²: Անգլերենում *կարող եմ* ձևի համարժեքներն են՝ *can* «կարողանալ, ի վիճակի լինել»³ - *may* «կարենալ, թույլտվություն ունենալ»⁴: Նշված լեզուներում ներկայացված ձևերը դիտվում են իբրև մոդալ (եղանակավորող կամ

¹ Ս. Աբրահամյան, Ն. Պառնասյան, Զ. Օհանյան, Խ. Բաղիկյան, Ժամանակակից հայոց լեզու, Շարահյուսություն, հ. 3, Ե., 1976, էջ 161:

² Ա. Ղարիբյան, Ռուս-հայերեն բառարան, Ե., 1977, էջ 497:

³ Զ. Ասմանգուլյան, Մ. Զովհաննիսյան, Անգլերեն-հայերեն բառարան, Ե., 1984, էջ 133, էջ 579:

⁴ Նշվ. աշխ., էջ 579:

պակասավոր) բայեր, որոնց բնորոշ է անորոշ դերբայի հետ գործածությունը¹:

«Լեզվաբանական բառարանում» եղանակավորող բայերը բը-նորոշվում են հետևյալ կերպ. «Եղանակավորման նշանակությամբ հանդես եկող որոշ բայածներ, որոնք արտահայտում են գործողության սուբյեկտի՝ ենթակայի վերաբերմունքը գործողության նկատմամբ: Այդպիսիք են, օրինակ, գերմ. *können, dürfen, mögen, müssen, sollen, wollen, lassen* բառերը: Դրվում են սովորաբար դերբայական ձևերի (անորոշ դերբայի) վրա»²:

Անդրադառնալով մեր լեզվի գործառույթյան նախորդ փուլերին և տեսնելք, թե մեզ հետաքրքրող միավորն ինչպիսի արտահայտություն ուներ նախկինում: Այսպես՝ գրաբարում նույն նշանակությամբ գործածվում է *մարթի* բայը, որը թարգմանվում է «կարելի է, կարող է, հնարավոր է»³: Օրինակ՝ «Եւ զայն ոչ գիտեն, թէ որպէս վնասակարացն ընդ անվնասակարսն *չմարթի* բնակել, նոյնպէս եւ ոչ բարույն ընդ չարին *մարթեր* ի միում արգանդի յղենալ»⁴: Թարգմանվում է՝ «Եվ չգիտեն այն, որ ինչպես վնասակարներն անվնասների հետ *չեն կարող բնակվել*, այնպես էլ բարին և չարը *չեն կարող* միևնույն արգանդում *հղանալ*»: Բացի միադիմի լինելուց, այն նաև կանոնավոր խոնարհման բայ է՝ բազմաթիվ իմաստային նրբերանգներով: ՆՅԲ-ն (1, 224-225)⁵ նշում է բայի «կարել, զօրել, կարող եմ» նշանակությունները՝ բերելով մի շարք օրինակներ, ինչպես՝ «Երանի է ձեզ, թէ *մարթիցէք* աղաչել զերեսս տեառն» (Ագաթանգեղոսից): Կամ՝ «Դիւրաւ ճանաչել *մարթիցենք* (Եվսեբիոս Կեսարացոյց) և այլն: ՆՅԲ-ն նշում է նաև *կարեն (կարացի, կարացեալ)* չեզոք բայը և մեկնաբանում

¹ Տե՛ս Ալ. Մարգարյան, Զայերենի հարադիր բայերը, Ե., 1966, էջ 390-392: (Այստեղ քննության է ենթարկված մի քանի օտար լեզուների եղանակիչ բայերի զարգացման ընթացքը):

² Զ. Պետրոսյան, Ս. Գալստյան, Թ. Ղարաբյուլյան, Լեզվաբանական բառարան, Ե., 1975, էջ 88:

³ Վ. Առաքելեան, Գրաբարի քերականութիւն, Ե., 2010, էջ 174:

⁴ Նշվ. աշխ., Եգևիկ, Բ, էջ 132-133:

⁵ Գ. Աւետիքեան, Խ. Սիւրմէլեան, Մ. Աւգերեան, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Վենետիկ, 1836-37 թթ. (այսուհետև՝ ՆՅԲ):

Է՝ «ունել զկար բաւական առ ի գործել ինչ, ձեռնհաս լինել» (1, 1067): Դարձյալ բերվում են բազմաթիվ օրինակներ, ինչպես՝ «Ոչ կարեմք հակառակ ինչ չար ասել բարւոյ» (Ագաթանգեղոսից), «Յով և կարաց ոք գերծանել» (Թովմա Արծրունուց) և այլն: Ի դեպ, ՆՅԲ-ն նշում է կարող եմ հարադրության գործածության օրինակներ ևս՝ վկայելով «Յաճախապատումը» (1, 1076), ինչպես նաև կարողիմ/եմ «կարողանալ, հնարիլ» նշանակությամբ ձայնակրական բայը՝ վկայելով Ագաթանգեղոսին, 10-11-րդ դդ. հեղինակի (1, 1076): Ստ. Մալխասյանցը նույնպես նշում է կարողեմ բայը՝ «կարողանալ, հնարավորություն գտնել» իմաստներով (հ. 2, 414): Թերևս այս բայի հետագա տրոհմամբ էլ առաջացել է քննարկվող հարադրությունը:

Միջին հայերենում գործածական է կարնալ (համապատասխանում է գրաբարյան կարել «կարողանալ» բային), ինչպես՝ «Չեմ կարնար գրել չարիքն, գոր վերին աշխարհն քաշեց ևս առաւել ծովու բոլորս»¹:

Վերադառնալով հայերենի արդի փուլ՝ նշենք, որ հետաքրքրող լեզվական միավորն ունի իր խոսակցական և բարբառային տարբերակները: Արարատյան բարբառի տարբեր խոսվածքներում գործածական է կարամ բայը: Բայագետի բարբառում գործածվում է կանամ բայը և այլն: Յ. Աճառյանը բառի կար իրանական ծագման արմատի դիմաց նշում է նրանից բաղադրված գ'արնիլ (Սվեդիայի), գրնալ (Սեբաստիայի), գռնալ (Խարբերդի), գըրամ, կռնալ (Ալաշկերտի, Մշո), գրնամ (Ակնի), կանամ (Վանի) և բարբառային այլ տարբերակներ²: Պետք է նկատել, որ մի շարք բարբառներում էլ բայն անորոշ դերբայի առումով պակասավոր է, կամ այն նվազ գործածական է: Ամփոփելով գրաբարյան, միջինհայերենյան, ժամանակակից հայերենի բարբառային օրինակների գրառումը՝ փաստենք, որ մեզ հետաքրքրող կազմության համարժեքները բոլոր դեպքերում բայեր են:

¹ Ռ. Ղազարյան, Յ. Ավետիսյան, Միջին հայերենի բառարան, Ե., 2009, էջ 367:

² Յ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 2, Ե., 1973, էջ 543:

Արևմտահայ գրական լեզվում *կրևամ* բայը ներկայացվում է պակասավոր բայերի շարքում: Ռ. Սաքապետոյանը գրում է. «*Կրևամ* բայը ունի բոլոր ժամանակաձևերը, բացի սահմանական ապառնի, անցյալ ապառնի և ըղձականի ձևերից, որոնք լըրացվում են *կարենալ* բայի ձևերով (*պիտի կարենամ, պիտի կարենայի*): *Կարենալ* և *կրևամ* բայերը փոխադարձաբար լրացնում են միմյանց. *կարենալ* բայի պակասող ձևերը լրացվում են *կրևամ* բայի ձևերով»¹: Պետք է նկատել, որ գրական արևելահայերենում ևս *կարող եմ* և *կարողանում եմ* ձևերը լրացնում և փոխարինում են միմյանց՝ ըստ համապատասխան կիրառությունների:

Կարող եմ հարադրության մասին թեթևակի խոսվում է Մ. Աբեղյանի «Հայոց լեզվի տեսություն» աշխատության մեջ՝ «Հավելավոր բայերի սահմանական ներկա և անկատար անցյալ ժամանակները և ստորադասությունը» բաժնում, որտեղ այն իբրև բայ է ներկայացվում: Աբեղյանը գրում է. «*Կարող եմ* բայի ստորադասականը լրանում է *կարենալ* և *կարողանալ* բայերով»²: Խոսելով գրաբարի քերականական առանձնահատկությունների մասին՝ Աբեղյանը գրում է, որ կան բայեր, որոնք առանձին գործածությամբ դրվելով անորոշ դերբայի հետ՝ տալիս են նրան որևէ եղանակի, երբեմն աշխարհաբարի որևէ բաղադրյալ ժամանակի իմաստ: Այդ բայերը դիտելով իբրև եղանակիչներ՝ այնուհետև նշում է, որ *բոլոր պակասավոր բայերը եղանակիչ բայեր են*: Ապա թվարկում է այդ բայերը՝ *ունիմ, պարտիմ, պիտի, մարթի, լինիմ, եմ*³: Նույն տեղում ներկայացնում է *ունիմ* բայի նշանակությունները անորոշ դերբայի հետ՝ «*կարեմ, մարթեմ, գիտեմ=կարողանալ, կարող լինել, գիտենալ, ունենալ*: Իբրև օրինակ՝ նշում է հետևյալ նախադասությունները՝ «Նաև ոչ շնչական **ունիմ անուանիլ**» = «Շնչավոր էլ **չեմ կարող կոչվել**»⁴:

Աբեղյանը գրում է. «...ինչպես շատ լեզուների մեջ, նույնպես և հայերենում, կարելիական կամ հարկադրական բնավորություն է

¹ Ռ. Սաքապետոյան, Արևմտահայերենի դասագիրք, Ե., 2006, էջ 172:

² Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Ե., 1965, էջ 310:

³ Տե՛ս Մ. Աբեղյան, Երկեր, հ. 2, Ե., 1974, էջ 752:

⁴ Տե՛ս նույն տեղում:

ստանում, երբ բայի սահմանական կամ ըղձական եղանակի վրա ավելանում է ձևական նշանակություն ունեցող մի բառ կամ մասնիկ, որ ցույց է տալիս հնարավորություն կամ անհրաժեշտություն, կամ թե **անորոշ դերբայը դրվում է իբրև լրացում այնպիսի բայերի, որոնք նշանակում են՝ կարողանալու, կարելի, հնարավոր կամ անհրաժեշտ, հարկավոր լինելու գաղափարը:**

Դրանք եղանակական կամ եղանակիչ բայեր են: Գրաբարի սովորական եղանակիչ բայերն են կարելիական նշանակությամբ՝ **կարեմ, մարթեմ, մարթի, մարթ է.** աշխարհաբար **կարող եմ, կարելի է, գուցե, թերևս** և նման բառեր: Այս բայերի սահմանական եղանակի հետ անորոշ դերբայը ստանում է ենթադրական կամ հարկադրական եղանակի նշանակություն¹:

Քննարկվող միավորին անդրադարձել է նաև Զ. Աճառյանը: Այսպես՝ *կրնամ-կարենամ* արևմտահայերենի ձևերի քննություն կատարելիս Աճառյանը գրում է. «Արևելյան գրականում սովորական են միայն ստորադասական ներկա *կարենամ...* – ստորադասական անկատար *կարենայի* ձևերը: Մնացյալի համար գրական լեզուն գործ է ածում *կարողանալ* կամ *կարող եմ* բայերը»² (այստեղ կարևորում ենք հատկապես *քայլ* եզրույթի գործածությունը): Այնուհետև ներկայացնում է *կարամ* գավառական ձևի խոնարհման եղանակաժամանակային դրսեվորումները՝ դրանք դիտելով իբրև «խոտելի» գործածություններ:

Չետագայում *կարող եմ* բայը կարծես թե ուշադրությունից դուրս է մնում հայ քերականագիտության մեջ, կամ գուցե նրա քննությունը կարևորություն չի ստանում:

Խոտելով պարզ բայերի սոսկածանցավոր բառազույգերի իմաստային նրբերանգների մասին (*գիտեմ-գիտենում եմ, ունեմ-ունենում եմ*)՝ Մ. Ասատրյանը գրում է. «Իմաստային այս նույն երանգն է դրսևորվում նաև *կարող եմ-կարող էի//կարողանում եմ-կարողանում էի, ուզում եմ-ուզենում էի* համապատասխան

¹ Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 244:

² Զ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 4, գիրք Բ, Ե., 1961, էջ 38:

գույգերի մեջ»¹: Սակայն ոչինչ չի նշվում *կարող եմ* հարադրության ձևաբանական արժեքի մասին:

Հայերենի եղանակավորիչ բայերի քննությանը անդրադարձել է Ալ. Մարգարյանը՝ «Հայերենի հարադիր բայերը» աշխատության մեջ, որտեղ հեղինակը հանգամանալից կերպով քննում է վերը նշված բայերի և անորոշ դերբայի միասին գործածվելու երևույթը: Թեև *կարող եմ* բայը հատուկ ուշադրության չի արժանանում նրա կողմից, սակայն *կը* եղանակիչի ծագումը քննելիս (այն կապում է *կամիլ* եղանակիչ բայի ներկայի 3-րդ դեմքի *կամի* ձևի և *անորոշ դերբայի* լայն գործածության հետ, մեկի «անսովոր կրճատման», իսկ մյուսի դիմավորման ենթարկվելու ճանապարհով) կարևոր դիտարկումներ է անում, որոնք ընդհանրություններ ունեն ուսումնասիրվող միավորի հետ ևս: Այսպես՝ Մարգարյանը գրում է. «...գործողության նկատմամբ խոսողի վերաբերմունքը ոչ միայն «մաքուր եղանակային» ձևերով է արտահայտում, այլև գործ է ածում այլ լեզվական միջոցներ, որոնք և, անորոշի հետ արտահայտելով եղանակային կամ դրան մոտ նշանակություն, անխզելի ու սերտ կապի մեջ են գտնվում նրա հետ, մի կապ, որ մթազնել է տալիս եղանակիչ բայերի նախնական նշանակությունը և առանձին լեզուներում նրանց գրկելով եղանակային նշանակությունից՝ վերածում եղանակիչ-մասնիկի»²: Այստեղ մեզ համար կարևորվում է *կարող եմ + անորոշ դերբայ* կառույցի նույն յուրահատկությունը: Մեկ այլ կարևոր դիտարկում է արված եղանակավորող բայերի խնդրառության վերաբերյալ. «Եղանակավորող բայերի մեջ կան այնպիսիները, ինչպես՝ **կարողանալ, կարենալ, ճգնել, պատրաստվել, համարձակվել** և այլն, որոնք չեզոք սեռի բայեր են: Դրանք հանդես են գալիս անորոշ դերբայի հետ, բայց անորոշը ոչ թե **ուղիղ խնդիր է, այլ ստորոգյալի մաս է** և այդ չափով էլ ենթակայի գործողություն է ցույց տալիս»³: Դրանով է լեզվաբանը բացատրում այն, որ ժո-

¹ Մ.Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու, Ե., 2002, էջ 325:

² Ալ. Մարգարյան, նշվ. աշխ., էջ 378:

³ Տե՛ս նշվ. աշխ., էջ 249:

ղվրդախոսակցական լեզվում անորոշ դերբայը հաճախ դիմավորվում և գործածվում է խոնարհված ձևով: Նույն տեղում Մարգարյանը գրում է. «Ինչպես համադրական, այնպես էլ հարադրական բայերի անորոշի ձևերը եղանակավորիչ բայերի հետ հավասարապես բաղադրյալ ստորոգյալ են կազմում»:

Հարադրությունը դիտարկելով իբրև մեկ ամբողջական լեզվական միավոր՝ պետք է հաշվի առնել մեկ հանգամանք ևս. այն եզակի երրորդ դեմքով գրական և խոսակցական տարբերակներում հանդես է գալիս *եղանակավորող բառի* արժեքով՝ երկբայական նշանակությամբ, ինչպես՝ «-Ա՛, մե՛ծ պապիկ,- ուրախ գոչեցի ես՝ նույնիսկ չմտածելով, որ մերոնք *կարող է* արթնանան ու զարմանան, թե այդ ու՛մ հետ եմ խոսում» (Ս. Խանգադյան, «Արաբսը պղտորվում է», Ե., 1985, էջ 4), կամ՝ «Արձակուրդից վերադառնալը դժվար է. *կարող է* հիվանդանաք» (www.tert.am): Այնուհանդերձ, որ այն հանդես է գալիս իբրև մեկ ամբողջական միավոր: Մեկ այլ պարագայում՝ *կարող է/չի կարող պատահել* հարադրության մեջ, այն գործածվում է իբրև միադիմի բայ :

Ուսումնասիրելով *կարող եմ* հարադրության գործածության զանազան դրսևորումները, եղանակավորող բայերի ընդհանուր առանձնահատկությունները՝ կարելի է ասել, որ այն գրական արևելահայերենում հանդես է գալիս իբրև մեկ ամբողջական, անտրոհելի լեզվական միավոր: Եղանակավորումը բնորոշ է ոչ միայն ռուսերենի, անգլերենի, գերմաներենի և այլ լեզուների, այլև հայերենի որոշ բայաձևերի (և՛ գրաբարում, և՛ միջին հայերենում, և՛ ժամանակակից հայերենում): Այդ երևույթի դրսևորումներից է *կարող եմ* հարադիր կազմությամբ բայը, որն ունի *եղանակավորող կամ եղանակիչ* (ինչպես Աբեղյանն է բնորոշում) *բայի* արժեք: Խոնարհվում է ներկա և անցյալ ժամանակների բոլոր դեմքերով և հանդես է գալիս միայն անորոշ դերբայի հետ: Շարահյուսական մակարդակում ձևավորում է բաղադրյալ ստորոգյալ:

Հարադրությունը հանդես է գալիս նաև իբրև վերաբերական խոսքի մաս՝ երկբայական նշանակությամբ:

Нерсиян Варсик- Вопрос морфологического значения сочетания լարող եմ в восточноармянском литературном языке.- Модальность характерна для некоторых глаголов не только русского, английского, немецкого и других языков, но и армянского (в древнем, среднем и новом периодах).

Одно из выражений этого явления - сочетание *լարող եմ* („могу”), которое имеет значение модального глагола. Глагол спрягается в настоящем и в прошедшем временах во всех лицах и употребляется вместе с инфинитивом.

На синтаксическом уровне глагол образует сложное сказуемое.

Nersisyan Varsik - The Question of the Morphological Value of the Compound Structure լարող եմ in Eastern Armenian Literary Language.- Modality is typical not only of some verbs in Russian, English, German and other languages, but also of verbs in Armenian (in Old, Middle and Modern periods).

One of such examples is the compound structure with the verb *լարող եմ* (“can”) which has a modal meaning in ssEastern Armenian literary language. It is conjugated in all the persons of present and past tenses and is used only with the infinitive. At the syntactical level, it forms a compound verbal predicate.

Ակնարկ կինոտերմինների մասին

Արվեստը ստեղծագործական գործունեության բարձրագույն արտահայտությունն է, հոգևոր գործունեության մշակութային այն ձևը, որն իրականությունը արտացոլում է գեղարվեստական պատկերների միջոցով: Արվեստը, ինչպես ընդունված է ասել, աշխարհի հուզական, գեղարվեստական-պատկերային ընկալումն է:

Յուրաքանչյուր գիտակարգի տերմինաբանություն սկզբնավորվում է տվյալ գիտակարգի ծագման հետ:

Եթե արվեստի մյուս տեսակների ծագման կոնկրետ ժամանակը հայտնի չէ, ապա կինոարվեստն ունի իր ծննդյան ստույգ տարեթիվը՝ 1895 թ. դեկտեմբերի 28: Այդ օրը փարիզյան «Գրան կաֆեոլմ» տեղի ունեցավ Լուի և Օգյուստ Լյումիերների գյուտի հրապարակային ցուցադրությունը: Լյումիեր եղբայրներն իրենց հայտնագործությունն անվանեցին «սինեմատոգրաֆ», որ բառացի նշանակում է «շարժման գրանցում»: Նրանց առաջին կինոնկարների սյուժեները պարզունակ էին, սակայն այն երեսունհինգ հոգու համար, որ առաջին անգամ, մեկ ֆրանկ վճարելով, դիտեցին այդ կինոնկարները, դրանք հրաշք թվացին: Նույնիսկ «Գնացքի ժամանումը» երկուրոպեանոց ֆիլմը խուճապ առաջացրեց, և հանդիսականների մի մասը փախուստի դիմեց:

Այդ օրը ծնվեց 10-րդ մուսան¹ կինոն: Այն համադրական արվեստ է ու ներառում է գրականության, կիրառական արվեստի, գեղանկարչության, երաժշտության տարրեր, և այդ պատճառով է, որ կինոտերմինների մեջ զգալի թիվ են կազմում այդ բնագա-

¹ Ըստ հունական դիցաբանության՝ ինը մուսաներն են Կալիոպեն՝ էպիկական պոեզիայի մուսան, Էվտերպեն՝ լիրիկայի, Էրատոն՝ սիրային երգերի, Մելամոնեն՝ ողբերգության, Թալիան՝ կատակերգության, Տերպսիբորեն՝ պարերի, Կլիոն՝ պատմության, Ուրանիան՝ աստղաբաշխության, Պոլիհիմնեան՝ սրբազան հիմների (Ն.Ա.Կուն, Հին Հունաստանի լեզենդներն ու առասպելները, Ե., 1965, էջ 46):

վառներից անցած տերմինները: Ընդ որում, դրանք ունեն յուրաքանչյուր տերմինահամակարգի առանձին միավորի արժեք, որն առաջացնում է տերմինային արտահամակարգային բազմիմաստություն: Այդպիսի տերմինների առկայությունը բացատրվում է արվեստի տարբեր ճյուղերի փոխադարձ կապով: Իհարկե, կինոտերմինները չեն նույնանում այլ ենթահամակարգերում հանդես եկող համապատասխան տերմինների հետ:

Կինոն երիտասարդ և միևնույն ժամանակ ամենամասսայական արվեստն է: Նրա պատմությունը, համեմատած արվեստի մյուս տեսակների հետ, այնքան էլ երկար չէ: Սակայն, չնայած իր ոչ երկարատև պատմությանը, այն հսկայական ներգործություն ունի մարդկանց մտքի և զգացմունքների վրա: Բնականաբար, կինոարվեստը հետաքրքրում է արվեստաբաններին, սոցիոլոգներին, մշակութաբաններին, բոլոր նրանց, որոնց հետաքրքրում է գեղարվեստական ստեղծագործությունը և նրա ընկալումը, հասարակության տրամադրության նպատկամղումը, մարդկանց գիտակցության վրա նրա ազդեցությունը: Կինոարվեստը հսկայական ուժ ունի:

Կինոտերմինների լեզվաբանական քննություն հայ իրականության մեջ կատարվում է առաջին անգամ:

Չանազան աղբյուրներից՝ մամուլից, կինոգրականությունից, տարբեր բառարաններից հավաքել ենք 1200-ից ավելի տերմին: Այդ տերմինները կարելի է դիտարկել տարբեր տեսանկյուններից՝ ըստ ժանրերի, ծագման, շերտերի, կազմության և այլն:

Կինոտերմինները, ըստ շերտերի, կունենան մոտավորապես հետևյալ պատկերը՝ 1) ծագումով հայերեն բառեր, որոնք բառիմաստի նեղացմամբ՝ տերմինացումով, դարձել են կինոտերմիններ, 2) փոխառություններ, 3) զուգահեռ ձևեր, 4) պատճենումներ:

Սույն հոդվածում անդրադառնում ենք փոխառյալ կինոտերմիններին:

Արվեստի դասական ստեղծագործությունները պատկանում են ամբողջ մարդկությանը, համամարդկային արժեքներ են, և արվեստին վերաբերող շատ հասկացություններ և դրանց անվանու-

մները՝ տերմինները, ժողովուրդները հաճախ փոխառում են միմյանցից:

Փոխառությունները, ինչպես հայտնի է, հետևանք են ժողովուրդների միջև զանազան՝ տևտեսական, քաղաքական, մշակութային կապերի ու շփումների: Ֆրանսիայում ծնված նոր բնագավառի տերմինները, բնականաբար, սկզբնապես պետք է փոխառվեին: Դրանով է բացատրվում այս գիտակարգում փոխառությունների մեծ թվի առկայությունը նաև հայերենում: Ժամանակային տեսակետից դրանք նոր փոխառություններ են՝ կատարված եվրոպական լեզուներից և ռուսերենից կամ ռուսերենի միջնորդությամբ՝ չնչին բացառություններով, ինչպես՝ *երալաշ*-ը թուրքերենից է՝ «անկարգություն, թափթփվածություն» - *неразбериха*» իմաստով¹:

Փոխառյալ կինոտերմիններից կարելի է նշել *անշլագ* (լեփ-լեցուն դահլիճ), *անտեպրենյոր* (հանդիսանքային մասնավոր ձեռնարկության տեր), *բենեֆիս*, *բուտաֆոր*, *գրանդամ*, *դետեկտիվ*, *ժեստ*, *իմպրեսարիո*, *խարակտեր*, *կադր*, *կինեմատոգրաֆ*, *կորիֆեյ*, *մոնտաժ*, *նովինացիա*, *պերսոնաժ*, *ռեժիսոր*, *ռեցենզիա*, *սցենար*, *սցենոգրաֆիա*, *օպերատոր*, *ֆոնոգրաֆ* և այլն:

Մեծ թիվ են կազմում *կինո* բաղադրիչով փոխառությունները: *Կինո* բառը *կինեմատոգրաֆ* բառի կրճատված ձևն է: *Կինեմատոգրաֆ*-ը հունարեն *kinēma* (*kinēmatos*)՝ «շարժում» + *graphō*՝ «գրանցել, գրել» բառերից է կազմված: Կինո բառը ժամանակակից հայերենում բազմիմաստ է. ունի հետևյալ իմաստները՝ «1. Կինեմատոգրաֆիա, կինոարվեստ: 2. Կինոնկարներ ցուցադրելու շենք: 3. (խսկց.) Կինոնկար»²: Կարծում ենք, այս իմաստներին կարելի է ավելացնել ևս մեկը՝ փխբ. «*ծիծաղելի դեպք, անհավանական իրադրություն*»՝ «Իսկական կինո էր»: Այս դեպքում որոշիչ դեր է կատարում հնչերանգը:

¹ М. Фасмер, Этимологический словарь русского языка, т. 2, Москва, 1967, стр. 22.

² Է. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Ե., 1976, էջ 728:

Կինո-ով կազմված տերմինները կարելի է բաժանել երկու խմբի՝

ա) կինոօտար բաղադրիչ, այսինքն՝ դրանք ամբողջական փոխառություններ են՝ կատարված տարբեր լեզուներից, ինչպես՝ *կինոարտիստ, կինոդեստեկտիվ, կինո-էպոպեա, կինոժուռնալ, կինոռեժիսոր, կինոսցենար, կինոտեխնիկա* և այլն,

բ) կինո+հայերեն բաղադրիչ. սրանք, այսպես կոչված, կիսապատճենումներն են, որոնց մի բաղադրիչը օտար է, իսկ մյուսը՝ հայերեն, ինչպես՝ *կինոակնարկ, կինոաշխարհ, կինոաստղ, կինոարդյունաբերություն, կինոարվեստ, կինոբանավեճ, կինոդեր, կինոդիտող, կինոհանդիսատես, կինոհեքիաթ, կինոմշակույթ* և այլն:

Ըստ մեր հաշվումների՝ կինո+հայերեն բաղադրիչով տերմինները գերիշխում են:

Կինո-ով կազմված տերմինների մեջ որոշակի թիվ են կազմում նորաբանությունները. կարելի է նշել՝ *կինոաղբ* (գաղափարապես թույլ, անարվեստ կինոնկար), *կինոարշավարան* (կինոսերիալների երկար տևողությունը), *կինոգործ* (կինոնկար), *կինոբանավեճ* (բանավեճ կինոյի խնդիրների վերաբերյալ), *կինոդարան* (կինոժապավեններ պահելու տեղ), *կինոժառանգություն* (կինեմատոգրաֆիական արտադրանքի ժառանգությունը կամ ժառանգության իրավունքը), *կինոհասարակայնություն* (կինոյով հետաքրքրվող հասարակայնություն), *կինոհնարք* (կինոնկարում ցուցադրվող ճարպիկ խաղ), *կինոհամաժողով, կինոմոլ* (կինոնկարներ դիտելու մոլի սեր ունեցող), *կինոշուկա* (ցուցադրվող, վաճառվող ֆիլմերի շրջանառության ոլորտը) և այլն:

Կինոտերմինաբանության մեջ զգալի քանակ են կազմում փոխառյալ և հայերեն տերմիններով կազմված զուգահեռ ձևերը: Հաճախ փոխառյալ տերմինի՝ լեզու մուտք գործելուց հետո անմիջապես կամ որոշ ժամանակ անց ստեղծվում է (կերտվում է) նրա հայերեն համարժեքը կամ համարժեքները, և փոխառյալ և հայերեն տերմինները սկսում են գործածվել զուգահեռաբար: Այս դեպքում, փաստորեն, գործում է տերմինների երկակի բնույթը: Այս կապակցությամբ Գ.Ջահուկյանը գրում է. «Տերմինները, մի

կողմից, որպես բառեր, մտնում են լեզվի ընդհանուր համակարգի մեջ, և, հետևաբար, պայմանավորվում են տվյալ ազգային լեզվի պատմական զարգացման տենդենցներով ու առանձնահատկություններով. նրանք մյուս կողմից մտնում են տերմինային տվյալ մասնակի համակարգի մեջ և պայմանավորվում են տվյալ բնագավառի հասկացությունների փոխադարձ կապով և տվյալ շրջանում այդ բնագավառի ընդգրկած գիտելիքների շրջանակով: Լեզվի համակարգը, որպես տվյալ ազգի անդամների հաղորդակցման ընդհանուր միջոց, ձգտում է համազգայնության: Տերմինային համակարգը, որպես տվյալ բնագավառի գիտելիքների ու հասկացությունների արտահայտություն, ձգտում է համամարդկայնության»¹:

Կինոտերմինների օտար և հայերեն զուգահեռաբար գործածվող համանիշային շարքեր են՝ *ամպլուա - դերատեսակ, անշլագ - լեփ-լեցուն դահլիճ, անոնս - ազդ, ապարտ - մեկուսի, ավանսցենա - նախաբեմ, բենեֆիս - պատվախաղ, գրիմյոր - դիմահարդար, դեկորատոր -բեմահարդար, դիալոգ - երկխոսություն, դիկցիա - առոգանություն, դրամատուրգ - թատրերգակ, էպիզոդ - դրվագ, էպիլոգ - վերջաբան, էքսպրոմտ - հանկարծաստեղծություն, իմիջ - կերպար, իմպրովիզացիա - ստեղծաբանություն (հեղաստեղծում), ինտոնացիա - ելևէջավորում, հիպերբոլ - չափազանցություն, միզանսցեն - բեմավիճակ, պրեմիերա - առաջնախաղ, ֆինալ - ավարտակետ* և այլն:

Հաճախ օտար տերմինի դիմաց հայերենում ստեղծված համարժեքի կամ համարժեքների դեպքում էլ հաղթում է օտար ձևը:

Որոշ դեպքերում մայրենի ձևը չի կարողանում փոխարինել փոխառյալ տերմինին բոլոր կիրառություններում, կամ փոխառյալ տերմինը շատ է արմատացած հայերենում:

Այսպես, վերոբերյալ համանիշային զույգերից *անշլագ², բենե-*

¹ Գ.Ջահուկյան, Հայոց լեզվի տերմինաբանության հարցերի քննարկում, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1971, թիվ 9, էջ 95:

² *Անշլագ* բառը փոխառություն է գերմաներենից՝ *Anschlag*, հետևյալ նշանակություններով՝ «1.Հայտարարություն, 2.Հայտարարություն՝ թատրոնում բոլոր տոմսերի վաճառված լինելու մասին» (Словарь иностранных языков, М., 1949, 58):

Ֆիս¹, դրամատուրգ, էքսպրոմտ, իմիջ, իմպրովիզացիա, միզանս-
ցեն, պրեմիերա, ֆինալ տերմիններն ավելի գործածական են,
քան դրանց հայերեն համանշանակները, իսկ *էպիզոդ-դրվագ*, *է-
պիլոդ-վերջաբան*, *ինտոնացիա- հնչերանգ*, *հիպերբոլ-չափա-
զանցություն* զույգի անդամները գործածվում են հավասարապես
(կինոտերմինների ծագումնային քննությանը անդրադարձել ենք
առանձին):

Այստեղ կարևորվում է խոսողի կրթությունը, ընդհանուր մա-
կարդակը: Ռուսական կրթությունն ստացած անհատները ավելի
հակված են գործածելու համանիշային շարքի առաջին անդամը:

Փոխառյալ և հայերեն տերմինների զուգահեռ գործածու-
թյունը ժամանակավոր բնույթ է կրում: Հաղթում է շարքի անդամ-
ներից մեկը:

Փոխառյալ կինոտերմինները հայերենում միասեռ չեն. դրանց
մի մասը արմատացել է հայերենում, մի մասը գործածվում է հա-
յերեն տերմինների հետ զուգահեռաբար, մյուս մասն էլ իրենց
հայերեն համարժեքների հաղթելուց հետո դուրս է եկել գործա-
ծությունից:

Ըստ այդմ՝ փոխառյալ կինոտերմինները կարելի է բաժանել
երեք խմբի՝

1. Երբ փոխառյալ կինոտերմինի համարժեքը չկա հայերենում,
փոխառյալ տերմինն արմատացած է հայերենում:

¹ Բենեֆիս-ը փոխառություն է ֆրանսերենից՝ *benefice*՝ «շահ, օգուտ» նշանա-
կություններով (իմմո.К.Ганшина, Французско-русский словарь, М., 1977, 93/
: Ռուսերենում բացատրվում է «Спектакль в честь (или, по обычаям буржуазного
тетра, в пользу/ одного из участников его» (С.Ожегов, Словарь русского языка,
М., 1970, 42):

Բենեֆիս-ը սկիզբ է առել Ֆրանսիայում 1735 թ., այնուհետև տարածվել է
աշխարհում: Այն բեմական գործչին պատվելու, նաև նյութական որոշակի օգ-
նություն ցույց տալու նպատակ ուներ: Տարածված է եղել նաև նախախոր-
հորդային Հայաստանում, այնուհետև վերացել է: Ե. Աղայանի «Արդի հայերենի
բացատրական բառարանում» բառի առաջնային իմաստը՝ «Ներկայացում՝
հոգուտ մասնակցողներից մեկի», «հնացած» նշումով է: Մյուս իմաստներն են՝
«Ներկայացում՝ դերասաններից մեկի պատվին» և «փխբ. տոն, տոնահանդես»
(Ե. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Ե., 1976, էջ 186): Կար-
ծում ենք՝ բառը երկրորդ կյանք է ձեռք բերել և ստացել «տոն, պատվախաղ»
իմաստները:

Երբեմն օտար տերմինի դիմաց հայերենում առաջացած մի քանի համարժեքների դեպքում էլ դարձյալ հաղթում է փոխառյալ ձևը, որովհետև շատ դեպքերում մայրենի ձևը չի կարողանում հաղթահարել օտար տերմինի յուրացվածությունը:

Բառը յուրացված է, եթե փոխառյալ լեզվական միավորը փոխառու լեզվում հարմարվել է նրա արտասանական և քերականական նորմերին, բառակազմորեն սերողունակ է, լեզվակիրների համար ընդունելի ու հասկանալի է:

Սովորության ուժն այս դեպքում գործում է հոգուտ փոխառության, և փոխառյալ բառը կենսունակ ու հաղթող է դառնում:

2. Երբ փոխառյալ կինոտերմինի դիմաց հայերենում կա դրա համարժեքը, և դրանք գործածվում են զուգահեռաբար,

3. երբ զուգահեռաբար գործածվող փոխառյալ և հայերեն միավորներից հաղթել է վերջինս, և փոխառյալ տերմինի գործածությունը դիտվում է օտարաբանություն:

Բերենք օրինակներ, երբ օտար և հայերեն զուգահեռաբար գործածվող տերմիններից հաղթել է հայերեն համարժեքը՝ *նախաբեմ- ավանսցենա, հյուրախաղ- գաստրոլ, երկխոսություն- դիալոգ, եռագրություն-տրիլոգիա, ողբերգություն-տրագեդիա, բեմավիճակ-միզանսցեն, խաղացանկ - ռեպերտուար, մենախոսություն - մոնոլոգ* և այլն:

Այսպիսով, ամփոփելով վերոշարադրյալը, կարելի է եզրակացնել, որ ժամանակակից հայերենի կինոտերմինաբանության մեջ մեծ տեսակարար կշիռ ունեն փոխառությունները, ապա փոխառյալ և հայերեն ձևերով կազմված զուգահեռ ձևերը: Հայերենն աշխատում է փոխառյալ տերմինների դիմաց ստեղծել ազգային համարժեքները: Չուգահեռաբար գործածվող տերմիններից հաճախ հաղթում են հայերեն ձևերը, որոշ դեպքերում էլ փոխառյալ տերմիններն արմատանում են լեզվում և ընդգրկում գործածության մեծ շրջանակ:

Папикян Сильва - Очерк о кинотерминах .- В терминологии современного армянского языка определенное место занимают кинотермины. Часть этих терминов выступает в качестве вариантов, другая – синонимов. Большая часть этих терминов являются заимствованиями. В некоторых случаях укореняются армянские кинотермины, в других - заимствованные кинотермины укрепляются в языке и приобретают большую сферу употребления.

Papikyan Silva- A Study of Film Terminology.- In the terminology of Modern Armenian there are certain number of film terms. Most of them are new loanwords. There are many terms composed of the component *film*. In the film terminology there are certain number of parallel forms of both loanwords and terms in Armenian.

**Հայերեն մեքենագիտական-մեքենաշինական
տերմինաբանության արտացոլումը Նորագույն շրջանի
հայ բառարանագրության մեջ**

Նորագույն շրջանի գիտատեխնիկական բառարանների բառամթերքի քննությամբ դիտարկվել են դրանցում հայերեն մեքենագիտական-մեքենաշինական տերմինների արտացոլման ընթացքը, ինչպես և մասնագիտական բառարանագրության որոշ առանձնահատկություններ, որոնց վերհանումը կնպաստի մասնագիտական բառապաշարի բառարանագրման հետագա բարելավմանը, դրանով իսկ՝ տերմինահամակարգերի կանոնակարգմանը և նորմավորմանը:

Հայերեն գիտատեխնիկական, մասնավորապես մեքենագիտական-մեքենաշինական բնույթի տերմիններ հայ բառարանագրության մեջ ի հայտ են գալիս դեռևս հին շրջանի առաջին տպագիր բառարաններում և ավելի ընդլայնված ներկայանում են հատկապես Մխիթարյանների և XX դարասկզբի ռուս-հայերեն բառարաններում: Սակայն որպես տերմինահամակարգեր դրանց ձևավորումն իրականացավ գիտատեխնիկական բառարանագրության Նորագույն շրջանի (XX դ. 20-ական թթ. մինչև այսօր) տասնամյակից տասնամյակ զարգացմանը զուգընթաց:

1. *XX դ. 20-40-ական թթ.* լույս են տեսնում գիտատեխնիկական բնույթի առաջին 4 բառարանները [1]: Սրանց մեջ մեքենագիտական-մեքենաշինական տերմինների առավել նկատելի ճյուղավորումներով առանձնանում է Հ. Աճառյանի և Ա. Տոնոյանի բառարանը: Օրինակ՝ *հեծան* տերմինը ներկայացված է 69 ճյուղավորումներով, *հեղյուսը*՝ 12, *բեռը*՝ 13, *մեքենան*՝ 25, *մոմենտը*՝ 33, *հաստոցը*՝ 40, *կարանը*՝ 105 և այլն: Իր բնույթով նեղ մասնագիտական բառարանին ավելի մոտ է Գ. Անտոնյանի բառարանը, որում ընդգրկված տերմինները մեքենագիտական-մեքենաշինա-

կան բնույթի են, քանի որ ավտոմոբիլաշինությունը մեքենաշինական արդյունաբերության մի ճյուղն է:

Հատկանշական է, որ այս բառարաններում ընդգրկված տերմիններից շատերը առկա են նաև Մ.Քաջունու բառարանում և «Մեքենականություն» աշխատության մեջ [2]: Սա նշանակում է, որ Մխիթարյանների բառարանագրական ժառանգությունը նորագույն շրջանի բառարանագրության հիմքն է:

2. *50-70-ական թթ.* հայերեն գիտատեխնիկական տերմինաբանության զարգացման առումով վճռորոշ նշանակություն ունեցավ ռուս-հայերեն պոլիտեխնիկական առաջին լիահավաք բառարանի [3] հրատարակումը: Բառարանում լայնորեն են ներկայացված մեքենագիտական-մեքենաշինական տերմինները. բուհերում հիմնվել էին մեխանիկային, մեքենագիտությանը և մեքենաշինությանն առնչվող մասնագիտություններ, և Հայաստանում սկզբնավորված մեքենաշինական արդյունաբերության պահանջով սկսել էին կատարվել գիտական մշակումներ: Ուսումնական և գիտական գրականության մեջ շրջանառվող առաջին տերմիններն արտացոլվեցին նաև բառարաններում:

Մեխանիկայի տերմինների համակարգման փորձ է Կ. Մնջոյանի առաջին տեղեկագիրքը [4]՝ ըստ մեխանիկայի հիմնական բաժինների՝ *ստատիկա, գրաֆոստատիկա, կինեմատիկա, դինամիկա*: Օրինակ՝ որպես մանրահամակարգ *ստատիկա* բաժնում համախմբված տերմիններից են՝ *մեխանիկական սիստեմ* (այժմ՝ *համակարգ*), *նյութական մասնիկներ, մասնիկի շարժում, պինդ մարմին, մասնիկների փոխադարձ տեղափոխումներ, արտաքին (ներքին, կենտրոնացված, բաշխված) ուժ, ուժերի սիստեմ* (այժմ՝ *ուժահամակարգ*), *համազոր ուժ, սիստեմի* (այժմ՝ *համակարգի*) *մեխանիկական շարժման ազատություն, հակազդող մոմենտ, ուժազույգ, ուժի զուգահեռ տեղափոխում, պինդ մարմնի վրա կիրառված ուժեր, ծանրության կենտրոն, հավասարակշռություն հարթության նկատմամբ, նյութական կետի ստատիկ մոմենտ, կետի մասսա* (այժմ՝ *զանգված*), *սահումի* (այժմ՝ *սահքի*) *շփման գործակից, շփման զույգի բազուկ* և այլն:

3. *70-90-ական թթ.*, գիտության մեջ կատարված հսկայական տեղաշարժերին զուգընթաց, մեքենագիտական-մեքենաշինական տերմինաբանության մեջ ավելի ու ավելի հստակորեն էին տարբերակվում մանրահամակարգերը, ճյուղավորվում էին գլխաբառ տերմինները: Դրանք նաև կանոնակարգվում էին միջազգային ստանդարտներին համապատասխան: Այս իրողության արձագանքն էր մեքենագիտական ուղղվածությամբ առաջին տերմինարանը [5], որը կազմված է տերմինների միջազգային ստանդարտներին համապատասխան: Տերմինարանն արժեքավոր է նաև մեքենագիտության մեկ առանձին մանրահամակարգին՝ ռոբոտ-մանիպուլյատորներին առնչվող տերմինների հայերեն համարժեքների առաջին անգամ բառարանագրմամբ. *ազգակից մեխանիզմներ, դիրքորոշման ճշգրտություն, մանիպուլյատորի աշխատանքային տարածություն, մանիպուլյատորի առաջադրող (գործադիր) օրգան, մանիպուլյատորի սպասարկման տիրույթ, մանևրայնության աստիճան, մարդ-մեքենա համակարգ, մարդ-օպերատոր, մեխանիզմի ապրոքսիմացիոն (ինտերպոլյացիոն) սինթեզ, տրամաբանական մեխանիզմ (տարր)* և այլն:

Մեխանիկայի ու մեքենագիտության տերմինների թեմատիկ դասակարգման և հենց դրանով էլ իմաստների հստակեցման փորձ է Կ. Մնջոյանի հաջորդ տեղեկագիրքը [4]: Գիրքն ընդգրկում է նաև նոր տերմիններ, որոնք չկան առաջին «Ռուս-հայերեն պոլիտեխնիկական բառարանում». *ավազաշիթային մաքրում, մշակման մաքրություն, վերջնամշակում* և այլն:

1988թ. լույս տեսավ երկրորդ լիահավաք պոլիտեխնիկական բառարանը [6], որը մեծապես նպաստել է ամենատարբեր բնագավառների տերմինների ու տերմինային ճյուղավորումների հավաքման, կերտման և ըստ բնագավառների դրանց դասակարգման բարդ ու դժվարին խնդրի լուծմանը:

Նկատելի է երկու լիահավաք բառարանների բառամթերքի քանակական հսկայական տարբերությունը (50000 տերմին և տերմինային կապակցություն), որը արդյունք էր գիտատեխնիկական տերմինաբանության զարգացման մի կողմից՝ արտաքին գործոնների՝ գիտությունների զարգացման, մյուս կողմից՝ ներ-

քին գործունների՝ առանցքային տերմինների ճյուղավորումների, նորակերտումների, տերմինային նոր իմաստների և տերմինային մանրահամակարգերի հաստատագրման:

Քանակական և որակական փոփոխություններն առանձնապես արդյունք են եղած և նոր գլխաբառ տերմիններից ճյուղավորումների առաջացման: Այսպես, առաջին լիահավաք բառարանում *Մեքենա* տերմինը ներկայացված է 46 ճյուղավորումներով, երկրորդում՝ 675: *Մեքենա* տերմինի ճյուղավորումների այսպիսի ծավալումը, պայմանավորված նրա իմաստային զարգացմամբ, տերմինը վերածել էր ոչ միայն մեքենագիտական և մեքենաշինական, այլև բազմաթիվ այլ բնագավառների առանցքային տերմիններից մեկի:

Հայերեն մեքենաշինական տերմինաբանության մեջ մեկ առանձին՝ *հաստոց* տերմինային մանրահամակարգի զարգացման ընթացքը ցույց տալու համար համեմատել ենք 1925 թ. մինչև 1988 թ. Հայաստանում լույս տեսած մասնագիտական բառարանների տվյալները [1] [3] [6] [7]:

Համեմատությունը ցույց է տալիս հետևյալը.

1. Տերմինի և նրա ճյուղավորումների զարգացման ընթացքն առավել պարզորոշ երևում է պոլիտեխնիկական երկու լիահավաք բառարաններից [3] [6], իսկ պոլիտեխնիկական մյուս երկու բառարանները [7], թերևս պայմանավորված իրենց դպրոցական և ուսումնական բնույթով, առաջին լիահավաքի համեմատությամբ նորություն չեն բերում *հաստոց* տերմինի ճյուղավորումների առումով:

2. Բառարանից բառարան ճշգրտվել են *հաստոց* և *դազգահ* հասկացությունների տերմինները. սկսած ավտոտրակտորային տերմիններ ընդգրկող բառարանից [1]՝ станок հասկացության համար ընդունվել է *հաստոց* տերմինը, верстак հասկացության համար՝ *դազգահ* (գործասեղան) տերմինը:

3. Բառարանից բառարան հարստացել է նաև *հաստոց* և *դազգահ* տերմինների ճյուղավորումների շարքը, որը պարզորոշ երևում է՝ սկսած շինարարական տերմիններ ընդգրկող բառարանից [1]:

4. Ռուս-հայերեն պոլիտեխնիկական լիահավաք երկու բառարանները ցույց են տալիս *հաստոց* հասկացության տարատեսակների հայերեն տերմինների յուրացման բարձր աստիճանը՝ յուրաքանչյուրն իր ժամանակաշրջանի համեմատությամբ: Հաստոցաշինությունը հայկական արդյունաբերության բավականին զարգացած ճյուղերից էր, և հաստոցների շատ տեսակներ ըստեղծվել են Հայաստանում: Այս հանգամանքով է բացատրվում հաստոցաշինության հայերեն տերմինաբանության համակողմանի զարգացումը, ինչպես և տերմինի ճյուղավորումներում փոխառությունների աննշան լինելը:

4. XX դ. 90-ական թթ. *մինչև այսօր*: Այս շրջանում լույս են տեսնում մեքենագիտական ուղղվածությամբ երկրորդ տերմինարանը [8], երկլեզվյան [9] և եռալեզու [10] երկու բառարանները, որոնք, սակայն, մեքենագիտական-մեքենաշինական տերմինները հավաքելու առումով նորություն չեն բերում «Ռուս-հայերեն պոլիտեխնիկական» բառարանի համեմատ:

Վերջին շրջանում լույս է տեսել մեքենագիտական ուղղվածությամբ երրորդ՝ եռալեզու տերմինարանը [11]՝ կազմված Մեխանիզմների և մեքենաների մասին գիտության աջակցության միջազգային ֆեդերացիայի (IFTOMM) տերմինաբանական ստանդարտին [12] համապատասխան: Ավելի քան 1600 տերմիններն ու տերմինային կապակցությունները ներկայացված են իրենց եռալեզու սահմանումներով (բառահոդվածներով), թեմատիկ սկզբունքով՝ մեխանիզմների և մեքենաների տեսության բաժիններին և ենթաբաժիններին համապատասխան: Տերմինարանն արտացոլում է նաև մեխանիկայի և մեքենագիտության բնագավառում առկա նորագույն զարգացումները, դրանց տերմինների խաչասերումը այլ բնագավառների (*մեքենաների կառավարում և չափումներ, ռոբոտագիտություն, կենսամեխանիկա, մեխատրոնիկա*) տերմինների հետ: Հեղինակները կատարել են բառարանագրական որոշակի աշխատանք՝ եղած տերմինների իմաստային ճշգրտումներ, հոմանիշ տարբերակներից ընտրություն, ինչպես նաև բավական թվով տերմինների հեղինակային թարգ-

մանություններ. *խնդրածին, վարգաքայլք, գետնահրպում, հավելուրդայնություն, մերձակայություն, առջևույթ* և այլն:

Նորագույն շրջանում գիտատեխնիկական բառարանների բառամթերքի քննությունը երևան է հասնում նաև դրանցում մեքենագիտական-մեքենաշինական տերմինաբանության արտացոլման որոշակի առանձնահատկություններ:

Այսպես մեքենագիտական-մեքենաշինական տերմինները նորագույն շրջանի բառարանագրության մեջ արտացոլված են ինչպես հարակից մասնագիտական և ավելի լայն՝ հանրագիտական-մասնագիտական բառարաններում, այնպես էլ նեղ մասնագիտական՝ մեքենագիտական և մեքենաշինական ուղղվածությամբ բառարաններում: Հարակից մասնագիտական բառարաններում հատկապես մեքենագիտական (մեխանիկայի) տերմինների ընդգրկումը բնորոշ էր բառարանագրության առաջին փուլին և ամենևին պատահական չէր, քանի որ մեքենագիտության առանցքային հասկացությունները մեծ չափով ընկած են հարակից գիտատեխնիկական մասնագիտությունների հիմքում: Սակայն տերմինների բառարանագրման նման իրավիճակը բնորոշ է գիտությունների զարգացման որոշակի, կարելի է ասել, ավելի ցածր մակարդակին: Առաջին փուլի բառարաններում գերիշխում են փոխառյալ տերմինները:

50-90-ական թթ., գիտության զարգացմանը, գիտական հասկացությունների ծավալմանը զուգընթաց, բառարանները հատկանշվում են տերմինների տարբերակային ձևերով. դրանք հեղեղված են հոմանիշ տերմիններով կամ հայերեն-օտար համարժեքներով: Իր ժամանակին խիստ արժեքավոր այնպիսի մի երեվույթ, ինչպիսին «Ռուս-հայերեն պոլիտեխնիկական բառարան» է, նույնպես ծանրաբեռնված է հոմանիշ տերմիններով, հատկապես հայերեն-օտար կրկնակներով, որոնցից հաճախ նախապատվությունը տրված է օտար համարժեքին: Մինչդեռ այս բառարանը տեխնիկական մասնագետների համար առայժմ հրապարակի վրա եղած հիմնական ուղեցույցն է: Հետևանքն այն է, որ մինչև այսօր էլ գիտատեխնիկական մասնագիտական և ուսումնական գրականության մեջ դժվարությամբ են արմատավորվում հայերեն

համարժեքները: Նկատելի է վերադարձ փոխառությանը, և հաջողված թարգմանություններից կամ նորակերտումներից շատերը այդպես էլ մնում են իբրև բառարանային հարստություն:

Վերջին տասնամյակներում գիտատեխնիկական բառարանագրությունը ձեռք է բերել նեղ մասնագիտական բնույթ: Սակայն դեռևս հանդիպում են այբբենական կարգով կազմված բառարաններ [9]՝ հարակից բնագավառների տերմինների ընդգրկմամբ՝ առանց համապատասխան նշումներով սահմանազատելու դրանց բնագավառները:

Տերմինագործածության կարգավորման տեսանկյունից նշանակալից է տերմինարանների դերը: Մինչդեռ առանձնապես հարուստ չէ մեքենագիտական-մեքենաշինական հայերեն տերմինարանների ցանկը. հրապարակի վրա են մեքենագիտական ուղղվածությամբ ընդամենը երեք տերմինարան: Դրանցից գիտատեխնիկական-մասնագիտական բառարանագրության հետագա զարգացման առումով ուղենիշային կարող է լինել տերմինների՝ իրենց սահմանումներին համապատասխան ճշգրտված, միջազգային ստանդարտներով նորմավորված և բառարանագրման պահանջները բավարարող վերջին տերմինարանը [11]:

Այսօր, մասնագիտական բառարաններին ներկայացվող պահանջներից ելնելով, անհրաժեշտ է, որ գիտատեխնիկական բառարանագրությունն այսուհետև զարգանա նեղ մասնագիտական բնույթով, կամ բառարաններում հատուկ նշումներով սահմանազատված լինեն տերմինների գործածության բնագավառները: Ժամանակավրեպ են այբբենական կարգով կազմված մասնագիտական բառարանները, որոնք ոչ գիտական և ոչ էլ ուսումնական նշանակություն կարող են ունենալ: Տերմինաբանության զարգացման շահերը պահանջում են զարկ տալ հատկապես տերմինարանների ստեղծմանը, որոնք առավելապես են նպաստում տերմինների իմաստների հստակեցման և դրանով էլ՝ տերմինակարգավորման գործընթացին:

Օգտագործված գրականություն

1. Աբեղյան Մ., Ռուս-հայերեն ռազմական բառարան, Ե., 1925: Մալխասյանց Ս. և ուրիշ., Ռուս-հայերեն բառարան երկաթուղային տերմինների, Թիֆլիս, 1925: Աճառյան Յ., Տոնոյան Ա., Շինարարական կառուցվածքների ռուս-հայերեն բառարան, Ե., 1928: Անտոնյան Գ., Ռուս-հայերեն ավտոտրակտորային տերմինների բառարան, Ե., 1945, նույն բառարանի ընդարձակ տարբերակը՝ Ռուս-հայերեն ավտոմոբիլային բառարան, 1973:
2. Զաջունի Մ., Բառգիրք արուեստից և գիտութանց և գեղեցիկ դպրութանց, Վենետիկ, 1891-1893: Նույնի՝ Մեքենականութիւն, Վենետիկ, 1872:
3. Աիշարումով Ռ. և ուրիշ., Ռուս-հայերեն պոլիտեխնիկական բառարան, Ե., 1957:
4. Մնջոյան Կ., Մեխանիկի համառոտ տեղեկագիրք, 1-ին մաս, Ե., 1960, 2-րդ մաս, Ե., 1978:
5. Սարգսյան Յու., Հովույան Ն., Մեխանիզմների և մեքենաների տեսության տերմինարան, Ե., 1971:
6. Հացագործյան Չ. և ուրիշ., Ռուս-հայերեն պոլիտեխնիկական բառարան, Ե., 1988:
7. Հովվյան Ա., Ռուս-հայերեն դպրոցական պոլիտեխնիկական բառարան. Ե., 1966: Նույնի՝ Ռուս-հայերեն ուսումնական պոլիտեխնիկական բառարան. Ե., 1985:
8. Պողոսյան Ա. և ուրիշ., Մեքենաների հաշվարկման և նախագծման հայ-ռուս-անգլերեն տերմինարան, Ե., 1991:
9. Мартиросян С. Русско-армянский учебный словарь. Е., 2010.
10. Ղազարյան Յ. և ուրիշ., Ռուս-հայերեն-անգլերեն մեքենաշինական-մետալուրգիական նկարագարի բառարան, Ե., 2001:
11. Սարգսյան Յու. Լ., Հովույան Ն. Գ., Պետրոսյան Յ. Ց., Մեխանիզմների և մեքենաների տեսություն. անգլերեն-հայերեն-ռուսերեն տերմինարան, Ե., 2009:

12. Bogelsaks G., Crossley E, Sarkissian Y. et al. Terminology for the Theory of Machines and Mechanisms, Ilmenau, Germany, 1980; PERGAMON PRESS, OXFORD, NEW YORK, SEUL, TOKIO, 1991.

Петросян Асмик-Отражение армянской механико-машиностроительной терминологии в армянской лексикографии новейшего периода.- Проведено исследование словарного состава научно-технических словарей новейшего периода. Рассматривается процесс отражения армянской механико-машиностроительной терминологии в словарях, а также некоторые особенности специальной лексикографии. Исследование этих особенностей способствует дальнейшему улучшению лексикографии специальной лексики и, как следствие, упорядочению и нормированию терминосистем.

Petrossyan Hasmik- Reflecting the Armenian Terminology on Mechanics and Machine Building in Modern Armenian Lexicography.- There has been carried out a research into the vocabulary of modern scientific and engineering dictionaries. The aim of the present paper is to study the process of reflecting the Armenian terminology on mechanics and machine building in dictionaries, as well as consider several peculiarities of professional lexicography which will help to improve the lexicography of the professional vocabulary and, as a result, regulate and fixe the term systems.

17-րդ դարի բառարանագրության հուշարձաններ

Հայերենագիտության հետաքրքրությունը մի կողմից հայերենի բառապաշարի և հատկապես նորաբանությունների, մյուս կողմից՝ վաղ աշխարհաբարի ձևավորման հարցերի նկատմամբ մինչ օրս մնում է արդիական: Վկան այդ խնդիրներին նվիրված նորանոր հրապարակումները և ուսումնասիրություններն են¹:

Մանավանդ վաղաշխարհաբարյան շրջանում ստեղծված վիճակագրական արձանագրություններից, դիվանական փաստաթղթերից, հիշատակարաններից, ուղեգրություններից և բազմաթիվ այլ ժանրերի երկերից շարունակաբար և անսպառ կարելի է քաղել նորակազմ, իմաստափոխված, հնչյունափոխված հարյուրավոր նոր բառեր ու բառաձևեր: Բերենք մի քանի օրինակ.

«Թաղավարդու եկեղեցին ... այնպես *ստրուն* էր, որ գիշերն քուն չկէ» (վիճագրերից): «Տեսի և *տեղիկացայ*, որ ոչ են քրիստոնեայ» (Եղիա Կարսեցի): «Երբ իջնեաք, ամենայն մարդ *տեղաւար* շիներ» (=տաղավար, տեղավորվելու՝ օթևանելու՝ գիշերելու տեղ) (Օգոստինոս Բաջեցի): «Բայց շատ *գրամուտ* և *հմտաբուն* պիտի լինի, որ գխառնիխուն իմանայ»: «Սոցա թագաւորն կին է, *հաստպռունկ* և արապ են» (երկուսն էլ՝ Ավետիք Տիգրանակերտցի, Դավթար) և այլն:

Մեծ է նաև գրաբարի համեմատ իմաստափոխություն կրած

¹ Վերջին մեկ-երկու տարիների ուսումնասիրություններից պետք է հիշատակել՝ Լ.Յովհաննիսյան, Գրաբարի բառարան (Նոր հայկազյան բառարանում չվկայված բառեր), Ե., 2010: Վ. Համբարձումյան, Լատինաբան հայերենի պատմություն (14-18-րդ դդ.), Ե., 2010: Հիշատակելի են նաև հետևյալ հրապարակումները՝ Օլեքսանդր Բոժկո, Ուկրաինաբանությունները Կամյանեց-Պողիլսկ քաղաքի XVI-XVII դդ հայկական դատարանի վավերագրերի լեզվում, ՊԲՀ, 2010, N 2, էջ 110-115: Վ. Ներսիսյան, Նոր բառեր Հովհաննես Օձնեցու նորահայտ տոնացուցային երկում, ՊԲՀ, 2010, N 1, էջ 174-183: Մ. Խաչատրյան, Արաբական փոխառություններով կազմված ձևաիմաստային արտահայտությունները հայրենեցրում և կաֆաներում, ՊԲՀ, 2011, 1, էջ 176-186: Ն. Պողոսյան, 16-17-րդ դարերի հայ հնատիպ գրքերի հիշատակարանների լեզուն, ԲԵՀ, 2011, թիվ 133.2 և այլն:

բառերի թիվը, ինչպես օրինակ 17-18-րդ դարերի աղբյուրներից ներկայացվող հետևյալ մի քանի օրինակներն են՝ *լուսոյմուտ-լուսադեմ*, *առավոտ*, *պահեստ-բանտ*, *զնդան*, *ծող-դրոշ*, *ծողակիր-դրոշակիր*, *երկաթ*, *երկաթ ձգել-խարիսխ*, *խարիսխ գցել*, *ջարդել-վատ խոսել*, «կեսն հայերեն, կեսն արապերեն *ջարդէին*» (Չուար քահանայ) և այլն:

Բառապաշարի նոր ու դեռևս չքննված տվյալներ են ամբարված հատկապես հայերենի վաղաշխարհաբարյան շրջանի ձեռագիր փոքր բառարաններում: Այդ ինդիքն է նվիրված Վ. Համբարձումյանի «Ակնարկներ հայ բառարանագրության պատմության» ուսումնասիրությունը: Նրանում մասնավորապես քննված են Արիստակես Համադանեցու վանկաբառարանը, հայերեն-լատիներեն «քերականական տերմինարանը», ինչպես ավանում է Վ. Համբարձումյանը, մեկ բառակազմական բառարան (երեքն էլ ձեռագիր): Հեղինակը գրում է՝ «հարկավոր է ամենայն երկյուղածությամբ հետազոտական բարեխղճությամբ և պատասխանատվությամբ մոտենալ ոչ միայն մեծ ու ծավալուն բառարաններին, այլև հայերեն ձեռագիր մատյաններում, հնատիպ գրքերում, ինչպես նաև առանձին ավանդված բառարանային նմուշներին, թեկուզ դրանք լինեն մեկ-երկու էջի սահմաններում ամփոփված բառարանային փորձեր»¹:

Ահա այդպիսի ձեռագիր երկու բառարանի համառոտ քննությանն է նվիրված ներկա հրապարակումը:

Երևանի Մաշտոցյան Մատենադարանի 1528 թվահամար ձեռագիրը Ներսես Լամբրոնացու «Մեկնութիւն Սաղմոսաց» երկն է, ընդօրինակված 1649-51 թթ. Շոռոթում (գյուղաքաղաք Նախիջևանում): 583 թղթյա թերթ պարունակող սովոր ձեռագրի գրիչն է Բագարատ Դպիրը, ստացողը՝ Հայրապետ Նազուբենց Շոռոթեցին, ծաղկողը և սրբագրողը՝ Նահապետը²: Այս Նահապետն էլ հեղինակել և ձեռագրի սկզբում՝ 1ա-2բ էջերին որպես հավելա-

¹ Վ. Համբարձումյան, Ակնարկներ հայ բառարանագրության պատմության, հ. 1, Ե., 2010, էջ 4:

² Ձեռագրի ամբողջական նկարագրությունը տե՛ս «Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի», հտ. Ե, Ե., 2009, էջ 335:

գրություն թողել է համառոտ մի բառարան, որի անունով էլ այն կոչում ենք՝ *Նահապետի բառարան*:

Բառարանին առաջինը անդրադարձել է Գ.Գասպարյանը, հետևյալ խիստ համառոտ բնութագրումով. «Յեղիակն իր առջև նպատակ է դրել գրաբար և օտար բառերը թարգմանել աշխարհաբարով, կասեինք՝ ժամանակի խոսակցական բառերով: Դա նշանակում է, որ դեռ XVII դարում այդ բառերն արդեն հեռու էին բուն ժողովրդի լեզվից»¹: Փոքրիկ այս բառարանին այլ անդրադարձ չենք հանդիպում: Ի՞նչ է Նահապետի բառարանը, և ինչ նըպաստ կարող է այն բերել հայերենի վաղ աշխարհաբարի բառապաշարի շերտերն ուսումնասիրելու համար:

Նահապետն իր բառարանի համար թողել է հետևյալ ծանուցումը (ձեռագրի կրճատ գրությունները բացել ենք). «Գիտասցե եղբայրութիւնդ ձեր, ո՛վ ընթերցօղք գրոցս, զի ես՝ մեղաւոր Նահապետս ընդ իմում նուաստութեանս չափու սրբագրեցի զգիրքս և զոր ինչ բառ որ յօտար լեզուաց կայր ի մէջ սորա, զամենայն հաւաքեալ և աստ եղեալ թարգմանութեամբ հանդերձ, զի յընթեռնուլն ձեր եթէ դիպեցի բառ ինչ, զոր ոչ կարէք գիտել, եկեալ աստ գտանիցէք» (ՄՄ 1528, էջ 1ա):

ՄՄ 1528 ձեռագրի ծաղկողը՝ նույն ինքը՝ համառոտ բառարանի հեղինակ Նահապետը, 515բ էջին թողել է նաև բառարանի հետ անմիջական կապ չունեցող մեկ այլ հիշատակագրություն. «Զրիստոս Աստուած ողորմեայ... նաեւ յոքնամեղ Նահապետիս, որ ըստ կարի իմում եւ ըստ չափու սրբագրեցի եւ ծաղկեցի, եթէ Տերդ հաճեալ հաւանեսցի»:

Մեծ չէ բառարանում ընդգրկված բառահոդվածների քանակը՝ մոտ 500 բառ: Սակայն առաջին հայացքից փոքրիկ բացատրական այս բառարանի միայն բառերի քանակով չէ, որ պետք է այն արժևորել: Համառոտ այս բառարանը պարունակում է մեծ թվով իմաստափոխված, նորակազմ, բարբառային բառեր, որոնք բնութագրում են վաղ աշխարհաբարը: Յեղիակն ընթերցողին իր ժամանակին հասկանալի խոսակցական տարբերակով բացատրում

¹ Գասպարյան Գ., Հայ բառարանագրության պատմություն, Ե., 1968, էջ 39:

Է այնպիսի բառեր, որոնք այդ ժամանակ հիմնական գործածությունից դուրս եկած լինելով՝ կարող էին անհասկանալի լինել ձեռագիրն ընթերցողներին, ինչպես՝ հերկել - *ցելել*, մատակարար - *մարանապետ*, գոր մանկտաւազ *ասեն*, մեղրապոպ - *ծմերուկ*, նշանախեց - *կեսգիր կամ կետ*, տարացոյց - *օրինակ*, տաւաղել - *ժողովել* և այլն:

Նահապետի բառարանն ընթերցելիս աչքի են ընկնում մի շարք բառեր, որոնք իմաստը որոշակիորեն տարբերվում է գրաբարում տվյալ բառի ունեցած հանրահայտ իմաստից, ի հայտ են գալիս բառերի իմաստային «շեղումներ», նոր իմաստներ, նոր բացատրություններ: Օրինակ՝ *բեկոր* բառի իմաստը հայտնի է («կտոր իրին բեկելոյ, բեկեալ մասն»-ՆՅԲ), սակայն քննվող բառարանում այն սովորական իմաստից մի փոքր այլ կերպ է բացատրված՝ «գինուց կտորուած»: Կամ՝ *հոյակապ* և *խոյակապ* բառահոդվածում Նահապետի բացատրությունը՝ «թագակապ և թագէ կաթուղիկէ», ամենևին նույնական չէ գրեթե բոլոր բառարաններում առկա «հոյակապ, փառաւոր, հռչակաւոր» իմաստներին: Կամ՝ *յեղյեղել* բառը բացատրված է՝ «քննել», *ընթադրել*՝ «յետս դարձուցանել»: Նման օրինակներ կարելի է բերել տասնյակներով:

Իմաստափոխ այդպիսի բառերի մեծ թիվը ենթադրել է տալիս, որ Նահապետը բառերը բացատրել է ի՛ր ժամանակի ունեցած իմաստներով, և ուրեմն այդ նոր իմաստներն ունեն բարբառային, խոսակցական ակունք այնքանով, որքանով որ հեռացել էին գրաբարից և արտացոլում էին վաղ աշխարհաբարի բառաշերտերը:

Բառերի կրած իմաստային տեղաշարժն առավել ակնառու ցույց տալու նպատակով Նահապետի բացատրությունները զուգադրել ենք գրաբարի հեղինակավոր բառարաններից «Առձեռն բառարանի» տվյալների հետ¹: Ընտրությունը պայմանավորված է «Նոր Հայկազեան բառարանի» համեմատ ԱԲ-ի ունեցած առավել մեծ բառաքանակով: Ներկայացնում ենք նաև Ստեփանոս Մալ-

¹ Բառարանների համար գործածում ենք հապավումներ՝ ԱԲ - «Առձեռն բառարան հայկազնեան լեզուի», Անթիլիաս, 1988: ՀԲԲ - Ստեփանոս Մալխասեանց, Հայերեն բացատրական բառարան, հտ. I-IV, Ե., 2010 (վերատպ.):

խասյանցի «Հայերեն բացատրական բառարանի» հատկապես այն բացատրությունները, որոնք իմաստով մոտ են Նահապետի բառարանի բացատրություններին: Կարծում ենք նման համեմատության միջոցով հնարավոր կլինի տեսանելի կերպով ցույց տալ նաև Նահապետի բառարանում եղած նոր իմաստները, որոնք չունեն մյուս բառարանները: Մի քանի դեպքում բառերը բացակայում են ԱԲ-ում կամ ՀԲԲ-ում: Բոլոր դեպքերում պահպանել ենք Նահապետի ձեռագրի ուղղագրությունը:

Ախոյեան - մարտակից կամ. ԱԲ-(1) առաջ նետուող, (2) հակառակորդ, թշնամի. ՀԲԲ-կռուի մեջ առաջին յարձակվող, նախամարտիկ:

Ամոք - քաղցր. ԱԲ-մեղմ, կակուղ, անուշ. ՀԲԲ-մեղմ, բարեխառն, քաղցր:

Բայ- կես բան. ԱԲ-բայ՝ քերականության մեջ. ՀԲԲ-մասն բանի:

Բեկոր - գինուց կոտորուած. ԱԲ-կոտրածին կտոր. ՀԲԲ-կոտորված կարծր առարկայի կտոր:

Գամագիծ - յաղթող. ԱԲ-գամագիծ գտանեմ՝ ճար անել, մեղադրել. ՀԲԲ-(1) գամագիծ > գամագի(ւ)տ՝ ելք՝ հնար գտնել. (2) վընասել, վտանգել:

Գայթ ի գայթ - կաղ ի կաղ. ԱԲ-թոյլ, անհաստատ. ՀԲԲ-ն այս բառը չունի:

Գունել - հնարել. ԱԲ-գուն գործել - ջանալ, հնարք ընել. ՀԲԲ-(2) ձևացնել:

Գրապանակ - գրաման. ԱԲ-հմայեկ, վակաս, գրպան. ՀԲԲ-(1) անձի պահպանության գիր. (2) գրպան. (3) գրապան՝ զգեստի եզր. (4) պապկա:

Դաշնաւոր - ուխտաւոր. ԱԲ-դաշնակից, դաշնակաւոր. ՀԲԲ-դաշնակից:

Ընթադրել - յետս դարձուցանել. ԱԲ-տակը ղնել կոխկրտել, տեղաւորել, առջևը ղնել. ՀԲԲ-(1) ենթադրել. (2) ոտնակոխ անել, գետին գլուխել:

Կեղել և կեղեքել - պոզահարել և նեղել. ԱԲ-տանջել, կեղեքել, չարչրկել. ՀԲԲ-կեղեքել, չարչարել, նեղել:

Կքրել - ձևանալ. ԱԲ-գլուխ վերցնել, յանդգնել. ԶԲԲ-(1) յոխորտալ. (2) հակառակել, դիմադրութիւն անել:

Չայթայթանք - սպառնալիք. ԱԲ-ճար, ճարակ. ԶԲԲ-(4) խորամանկ յիշոցներ, չարամիտ ջանքեր:

Չէնք - հեծելագօրք. ԱԲ-հէն՝ աւագակ ծովու՝ ցամաքի. ԶԲԲ-(2) ասպատակ, հրոսակախումբ:

Չիռ և հեռ - խեռ և նախանձ. հիռ գամ՝ ման գամ, հեռ՝ կռիւ. ԶԲԲ-հեռ՝ հակառակութիւն, կռիւ, հիռ - պտոյտ, շրջան:

Չոյակապ և խոյակապ - թագակապ և թագէ կաթուղիկէն. ԱԲ-հոյակապ՝ փառաւոր, հռչակաւոր, խոյակապ - տե՛ս հոյակապ. ԶԲԲ-հոյակապ՝ շքեղ, փառաւոր, խոյակապ - տե՛ս հոյակապ:

Չորդան - առաջնորդ, որ զճանապարհն հորդէ և պատրաստէ. ԱԲ-հորդան տամ - ճամբայ հանել, քշել տանիլ. ԶԲԲ-հորդան տալ՝ ճանապարհ ձգել:

Ճատագով - հաւատարիմ. ԱԲ-ջատագով՝ դատարանի պաշտպան, փաստաբան. ԶԲԲ-(3) ընդհանրապէս՝ մի անձի կամ մի գաղափարի պաշտպան:

Մշտիկ - փունջ, ԱԲ-(1) ծոթրիկի կապոց. ԶԲԲ-(1) բոյսերի տըրցակ կամ կապոց՝ աւելի նման, մի հեղուկ սրսկելու համար

Մշտկաւ - փունջով. ԱԲ-ն և ԶԲԲ-ն այս բառը չունեն :

Մորի, մորոջ - բոյնն է, բունոջ. ԱԲ-գագանի բոյն. ԶԲԲ-(2) գագանի որջ, կաղաղ (անտառում):

Յահուր - յանդուգն, ԱԲ-յախումն. ԶԲԲ-(1) յախումն. (2) յանդուգըն:

Յամր - յետի. ԱԲ-ծանր, կամկար, տնտնացող. ԶԲԲ-(2) ուշացած, յետ մնացած:

Յանգուցանել - մխիթարել. ԱԲ-իրեն յարմարեցնել՝ քաշել, ընտանեցնել. ԶԲԲ-սիրով կապվել, գրաւվել:

Յեղեղել - քննել. ԱԲ-դարձնել, նոյն խօսքը պէս-պէս կերպով կրկնել. ԶԲԲ-(2) նոյն բանը տարբեր եղանակով կրկնել :

Նհանջել - փոփոխել կամ յետ դարձուցանել. ԱԲ-նահանջել. ԶԲԲ- նհանջ՝ նահանջ:

Շաբաթանալ - պարապել. ԱԲ-հանգչիլ, դադրիլ. ՅԲԲ-շաբաթ պահել, հանգստանալ:

Որսայս - ոտքն պարզել և վայր անկանել. ԱԲ-երեսն ի վեր՝ կռնըկի վրայ պառկած. ՅԲԲ-տե՛ս յորսայս:

Ուծացաւ - մոռացաւ. ԱԲ-ուծանամ՝ պաղիլ, չորանալ. ՅԲԲ-սառել, պաղել (մէկից):

Զրել - շրջել կամ խախտել. ԱԲ-ջնջել, արել. ՅԲԲ-(5) ջնջել, ոչընչացնել, փարատել. (6) հերքել:

Սեպ - քարածերպ. ԱԲ-ցցուած քարածայռ. ՅԲԲ-(3) բարձր՝ սըրածայր ժայռ:

Տարրանալ - գոյանալ. ԱԲ-միանալ, արմատանալ, զօրանալ. ՅԲԲ -տարր դառնալ, նիւթական ձև ստանալ:

Տեռազերծել- անարգել.ԱԲ-մերկացնել, թալլել.ՅԲԲ-ն բառը չուսի:

Քահել - սաստել. ԱԲ-(1) վարել, շարժել, (2) քաւել, ՅԲԲ-1) գահել, (2) քաւել:

Իմաստափոխություն կրած բառերից բացի բառարանը պարունակում է նաև մի շարք բառեր, որոնք հայերենի մյուս բառարաններով կամ մատենագրական աղբյուրներով չեն ավանդվել, և դա, կարծում ենք, ամենաարժեքավորն է Նահապետի բառարանի համար: Ներկայացնում ենք նոր բառերի շարքը՝ քննվող ձեռագրում դրանց ունեցած բացատրություններով:

Անբղիտանալ - յիմարել ի տռփանս կամ պշնուլ:

Աղտաղտուն - չորային (ԱԲ **աղտ** բառի տակ չոր իմաստը չունի, այլ՝ «աղտ, ցեխ»):

Չախոնդան - զգայարանք

Խնջոյս - լկքի (°) խաղ

Յամշահրին - ի մի քաղաքէ

Յամփսոնն - մի սեղան

Մարմաչել - ախորժել

Մժեռ - մռայլ և մռախուղ

Մոզգայլ - մոմալ (ԱԲ ունի **մոզգայլիմ** «սաստիկ տխել, կուլ տալ»)

Յորթ և թի¹ - կթոց և թի

Յործիւք - ընծայիւք

Վահ - հին

Վրիժել - տանջել

Նահապետի բառարանի արժեքն է նաև այն, որ տվյալներ է մատուցում ուշ միջնադարում բարբառային բառաշերտերի մասին: Այստեղ բարբառային ասելով նկատի ունենք այն բառերը, որոնք հանդիպում են հայերեն բարբառային գրավոր շատ ա՛յլ աղբյուրներում:

Բառարանում գրաբարյան մի շարք բառեր բացատրված են բարբառային, խոսակցական, մի քանի դեպքերում նաև՝ իր ժամանակի օտար-փոխառյալ բառերով: Դրանք անշուշտ առավել լայն գործածություն են ունեցել գրաբարյան համապատասխան հին համարժեք բառի համեմատ, որը և առիթ է եղել գրաբարյան բառերը դրանցով բացատրելու համար: Այսպես. *վրան* բառի բացատրության մեջ գրված է *չատիր*, անտառ - *քոլ*, առհաւատչեայ - *չէշնի* կամ *բեհ*, ընդելուզել - *քանդուքարի նշխել*, որոջ - *թոխլի* կամ *շիշակ*, կրպակ - *դուքան*, ազոխ - *ժուռ* խաղողի, անիւ - *սայլի ակն* (բացատրություն խոսակցական տարբերկով) և այլն:

Ստորև ներկայացնում ենք Նահապետի բառարանում բարբառային և օտար բառերով բացատրությունների մի շարք օրինակներ՝ քաղված ձեռագրի 1ա-1բ էջերից միայն: Հեղինակի բացատրական նշումները թողել ենք անփոփոխ. գոխ - *ժուռ* խաղողի, անիւ - *սայլի ակն*, անտառ - *քոլ*, առէջ - հենք կամ *կողեր*, առհաւատչեայ - *չէշնի* կամ *բեհ*, ասպարեզ - ձիընթաց մի կամ նետածիգ մի, որ է ճԾ քայլ, կամ *մէյդան* ասել, արօր - *վեցկու* գործիքն է, աւճառ - *սապոն*, բանակ - *ուրդու*, գուսան - *սազանդար*, գրաւական - գրաւ կամ *բեհ*, դարանել - *բուսայ* մտանել, դրօշակ - *փէշ*, երեսանակ - պախուց կամ *նօխտայ* (արաբ. nokta, nukta, տաճկ.-ից), երաստան - *աղամք* (°), ըմբշամարտ - *քուշտակիր* (ԱԲ-ն համարում է պրսկ. բառ՝ քուշտընգիր կամ քուշտնգուր), ընդելուզել - *քանդուքարի նշխել*, թովիչ - *ափսունչի* (ԱԲ *թովիչ*՝ «օձերու

¹ Բառարանում ներկայացված է հենց այդպես:

կարդացող, կախարդ»), լեգեն - գունդը կամ *թօթուն*, լարծել - *ոտնածել*, լրտես - *ջաշուշ* (պետք է լիներ *ջաշուտ*, անշուշտ սխալագրություն է) և այլն:

Համոզվելու համար, որ օտար կամ բարբառային այս բառերը եզակի գործածություն չեն Նահապետի բառարանում և տարածված էին իր ժամանակի թե՛ խոսակցական լեզվում և թե՛ գրավոր աղբյուրներում, համեմատել ենք 17-րդ դ. այլ աղբյուրների տվյալների հետ: Ստորև բերվող օրինակներում նախ տալիս ենք Նահապետի բառարանում ընդգրկված բառն ու դրա հեղինակային բացատրությունը, ապա՝ մատենագրական տարբեր աղբյուրներից նույն բառի գործածության օրինակներ:

Աղիւս - *քարքիծ*. Նահապետի բառարանում բերված *քարքիծ* բառի հնչյունական տարբերակին մի քանի անգամ հանդիպում ենք Չաքարիա Ագուլեցու «Օրագրության» մեջ. «Վերի թաղի Սուրբ Քրիստափոր անվան եկեղեցին ինքնին փլաւ, գերայ Գ խորանն երած *քարփիչոյ* ին շինել» (Չաքարիա Ագուլեցի, Օրագրութիւն, էջ 95): «Վանքի հողէն *քարփիչ* երեցին, բերին եկեղեցոյ Դքունջ պուճաղն Դ փոշիշն արարին» (Ա.տ. էջ 97):

Անագ - *կլայեկ*. «Միայն մեծամեծք ծածկին Ա ֆութայոյվ, և ի սանայեաթե պակասեն, արծաթ և պղինձ, *կլայեկ* և արճիճ ո՛չ գտանի բնաւ» (Յովհաննես Թութունջի, Ուղեգրութիւն, էջ 303):

Առասան - պարան կամ *շարիթ*. «Միրիջանի տղա Աւետիքն [ետ] մէկ լաւ ջահ, մէկ թօփ *շարիթ*» (Ակոռու Ս. Հակոբ վանքի քյոթուկը, էջ 206):

Բանակ - *ուրդու*. «Ես իւրեանց ԺԲՈ ղուռուշ պարտատեր լինիմ, գան *ուրտուն* զօրէ գիս գտանեն, տամ անպատճառ»: «Անպատճառ իրեն թեսլիմ անես ու ձեռնէն գիր առնես այլ ու Սեֆարին հետն ինձի *օրտուն* ղրկես» (Դիւան Ս. Յակոբայ, 1940, էջ 315):

Դատակնիք - *սջիլ* ասեն ոմանք և դատավճիռ. «Մահմետականքըն հարկէին գդատաւորն առնել *սիջիլ* մահուան ի վերայ Նիկոզայոսի՝ զի սպանցեն զնա, եւ դատաւորն արար *սիջիլ* (գրչ. սիճիլ) (Առաքել Դավրիժեցի, Գիրք պատմութեանց, էջ 402):

Շիրթայ - *բխալ*. «Քանի քանի անգամ գիս բռնեցին, գնդան գծեցին, *բուխավեցին*» (Չ.Ազուլեցի, Օրագրութիւն, էջ 102):

Որոշ - թոխլի կամ *շիշակ*. «Շիշակ, որ է տարեկան այծ» (ՄՍ 6275, էջ 219բ)

Մաքսապետ - *գօմրուկջի*. «Ընդ այն ժամանակն ...Էմին եւ *գօմրուկջի* այնպէս ջերմ սեր ունէին ի վերայ քահանայից եւ եկեղեցաց, որ բնաւ ոչ հրաժարին վարդապետաց կշտեն» (Մանր ժամանակագրութիւններ (XIII-XVIII դ.), հատոր I, էջ 248):

Սուրհանդակ - *շաթիր*. «Յորժամ թագաւորն ի դուրս ելանէ, այս է զինաթն՝ ԻԴ յեղաք, ԻԴ *շաթիր* և ԻԴ խաչալամ» (Յովհաննէս Թութունջի, Ուղեգրութիւն, էջ 308):

Քանքար - ճԻԷ (127) լիտր Է, և լիտրն, ՅԲ (72) *մսխալ*. «Աստուած ողորմի Փշրկէնց Մահդասի Հայրապետին և իւր որդի մահդասի խօճայ Մարգարէին, որ ետուն ընծայ Ա արծաթէ կանթեղ, քաշն ճԸ *մսխալ*» (Ակոռու Ս.Հակոբ վանքի քյոթուկը, էջ 197):

Փիղ - *ֆիլ*. «Շատ կերպ գազան կայ, և է մայրի, առաւել *ֆիլ*, առիւծ, քերկերտան» (Յովհաննէս Թութունջի, Ուղեգրութիւն, էջ 307):

Քիմք - *դամաղ*. «Ամպարն անոյշ հոտ ունի, զմարդոյ *դամաղն* անուշ պահէ» (Չաքարիա Ազուլեցի, Օրագրութիւն, էջ 455):

Քրքում - *գաֆրան*. «Թէ *գահվարանաւ* ի վերայ սմաղի քարի լաւ լոսես եւ յաչքն քաշես՝ զաչաց լոյսն աւելցնէ» (Առաքել Դավրիժեցի, Գիրք պատմութեանց, էջ 443):

Բնագրային այս օրինակների հղումներից դժվար չէ նկատել, որ բառարանում ներկայացված խոսակցական ու փոխառյալ բառերը գործածվել են հիմնականում հայերենի արևելյան հատվածում (Ազուլիս, Ակոռի, Պարսկաստան) ստեղծված երկերում: Դրա ուղղակի ապացույցն են նաև Նահապետի բառարանում հանդիպող *շահռայ* «ճանապարհ արքունի» և *համշահրին* «ի մի քաղաքէ» բառերը, որոնք կարող էին հայերենին անցնել պարսկահայ հատվածներում:

Դեռևս չուսումնասիրված, գիտական շրջանառության մեջ չդրված բառարանագրային մեկ այլ հուշարձան է ներկայացվելիք հաջորդ ձեռագիր բառարանը:

Մաշտոցյան Մատենադարանի 6275 ձեռագիր բժշկարանի 184ա - 239բ էջերին գետեղված բառարանի խորագիրն է՝ «Բառք են այսոքիկ, որ կոչի բառարան...բժշկական»¹: Ձեռագիրը 17-րդ դ. գրչագրված ժողովածու է, ուր ընդգրկված են Ամիրդովլաթ Ամասիացու «Ուսումն բժշկութեան», «Ախրապատին» (Ա-Ք տառերը), «Անգիտաց անպետ» աշխատությունները, նաև՝ «Այս է նիւթ սրբալոյս միւռնիս», «Յաղագս հողմոց, օդոց և շերմութեանց», «Յիշեմք զինչ խառնուած դէղեր կայ» քաղվածո հատվածները: Մեզ հետաքրքրող բառարանն ընդգրկում է 55 էջ, որը, պետք է ասել, պատկառելի ծավալ է միջնադարյան բառարանի համար, մանավանդ եթե հաշվի առնենք, որ գրված է մանր նոտրգրով:

ՄՄ 6275 ձեռագիրը Ամիրդովլաթ Ամասիացու «Օգուտ բժշկութեան» աշխատության հիմնական բնագրային աղբյուրներից մեկն է²: Ի դեպ պետք է ասել, որ այս ձեռագիրը նշված է որպես «Միջին հայերենի բառարանի» սկզբնաղբյուր, սակայն թուուցիկ դիտարկումն իսկ ցույց է տալիս, որ համենայնդեպս 6275 ձեռագրում պահպանված «Օգուտ բժշկութեան» գրչագիր տարբերակում կան բազմաթիվ բառեր, որոնք տեղ չեն գտել «Միջին հայերենի բառարան»-ում, ինչպես օրինակ՝ *գնձակցաւութիւն, ցորեկկուրութիւն, տրփատել* (սիրտն տրփատի), *լիզելիք, ծորով ապուր* և այլն:

Բժշկական այս բառարանն իր բովանդակությամբ կարելի է համարել երկրագիտական բացատրական բազմալեզվյան բառարան, որում հայերենից արաբերեն, ու նաև պարսկերեն ու թուրքերեն (և հակառակը) թարգմանված-բացատրված են բժըշկական, մարդակազմական տերմիններ, բույսերի, կենդանիների,

¹ Ձեռագրի նկարագրությունը տե՛ս «Ցուցակ հայերեն ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի», հատոր Բ, Ե., 1970, էջ 286:

² Ամիրդովլաթ Ամասիացի, Օգուտ բժշկութեան, աշխ. Ստ. Մալխասեանցի, Ե., 1940:

քարերի և նման այլ անվանումներ: Օրինակ՝ *Ակնամում* - որ է փրապօլի, որ է հապըլ յարօս, *Աշորնեցի* - որ է կարմիր կաւ, *Ասրայ* - որ է ըռասաս, որ է ապար, որ է կապար, որ է արծիճ:

Բառարանում կարելի է գտնել տասնյակ և գուցէ հարյուրավոր նորակազմ, փոխառյալ և իմաստափոխված բառեր: Նորակազմ՝ այլ աղբյուրներում չհանդիպող բառերից են, օրինակ՝ *կանաւոր*, *կրծացաւութիւն*, *մարմնատակ*, *մանօղակ*, *ուժովութիւն*, *վարնորակ*, *օձահար* և այլն:

Փոխառյալ կամ բարբառային բազմաթիվ բառերից բերենք մի քանի նմուշ՝ *աւզար* «շուր», *խաշքիր* «հովիւի բիր», *հանդայ* «ցորեն», *ճավ* «գարի», *մաղար* «այծ», *յասար* «մեղր», *նահլ* «մեղու», *չայիր* «մարգ», *պայգ* «հավկիթ» և այլն:

Լեզվական քննության, հատկապէս՝ փոխառությունների ու դրանց միջոցով հնչյունական օրինաչափությունների բացահայտման համար լավագույն հնարավորություն են ընձեռում հընչյունական տարբերակները, որոնք այս բառարանում ներկայացված են հնարավորինս լիարժեք: Օրինակ՝ *խամիր* - որ է խմոր, *Յագարծօշան* - որ է լօշտակն, *Յագարքաշան* - որ է հագարծօշան:

Ըստ հնարավորին լիարժեք են ներկայացված նաև հոմանիշային կամ նույնանիշային շարքերը, օրինակ՝ *Մուր*-որ է մոջիմ, *Մըռջիւ*-որ է նամլ, *Մըջիւ*-որ է տասրաճ, *Մըջիւ*-որ է մավրքօշակ:

Յնչյունական և բառային այս տարբերակները հուշում են, որ 17-րդ դ. դրանք կա՛մ գործածական են եղել հայերենի որոշակի շերտերում, կա՛մ բառարանագիրը օգտվել է մի քանի աղբյուրից և իր ունեցած բոլոր տվյալները հարկ է համարել ներմուծել բառարանի մեջ:

Ուշ միջնադարի բառարանագրային աղբյուրներից լեզվական քննություններում մեծ չափով օգտագործված են Երեմիա Մեղրեցուն վերագրվող «Բառգրքի» տվյալները: Սակայն դրան զուգահեռ ձեռագիր մատյաններին պահ են տրված ոչ պակաս կարևորության բառարանային հուշարձաններ, որոնց բառամթերքը նույնպէս գիտական շրջանառության մեջ դնելու արդիական պա-

հանջ կա: Կարծում ենք՝ այդպիսին են ներկայացված ձեռագիր երկու բառարանները:

Погосян Норайр- Лексикографические памятники 17-ого века .- Данная статья посвящена рассмотрению неисследованных ранее рукописных изданий двух словарей.

В Матенадаране Еревана сохранилась рукопись под номером 1528, которая была создана в 1649-51 гг. в Шороте (Нахичевань). В честь своего создателя данный словарь именуется словарем Нагапета. Интересно заметить, что именно в исследованном нами словаре даются десятки новых слов и понятий, а также определенное количество новообразований.

Рукопись 6275 представляет собой словарь, состоящий из 130 страниц, где можно найти новые слова и понятия, которые не отражаются в других словарях и книгах. В статье сделана попытка представить новые слова и понятия, которые обнаружены в исследованных нами рукописных изданиях двух словарей.

Pogosyan Norair - The 17th Century Lexicographical Records. The present article focuses on the study of two manuscripts that have not received a serious consideration yet.

The manuscript number 1528, which is kept in Matenadaran, was written in 1649-51 in Shorot. The manuscript contains a brief dictionary the author of which was a man called Nahapet. It includes new definitions, new concepts as well as a number of neologisms.

The manuscript number 6275 is a dictionary consisting of 130 pages and contains new words, loanwords and new meanings that are not found in other dictionaries and books. The present article is an attempt to provide a thorough study of the new words, concepts and meanings used in the two manuscripts.

Դիմախաղը որպես դարձվածային իմաստի ձևավորման հիմք

Դարձվածի՝ որպես լեզվական միավորի ձևավորման գործընթաց ընդգրկում է արտալեզվական և ներլեզվական գործոններ. օբյեկտի որևէ կոնկրետ հատկանիշի կամ առարկայական իրադրության տրամաբանական-իմաստաբանական նախադարձվածային կողմի ընդհանրացմամբ ու վերացարկմամբ որոշակի պատկերացման ներքո ստեղծվում է լեզվական մի նոր միավոր՝ դարձված:

Դարձվածի իմաստն աչքի է ընկնում իմաստային յուրահատուկ կառուցվածքով և բովանդակային առանձնահատկություններով: Ինչպես հայտնի է, դարձվածային իմաստը միանգամայն տարբեր է նրա բաղադրիչների բառացի իմաստների գումարից, որը կայուն բառակապակցության ուղիղ իմաստն է: Եվ այդ տարբերության աստիճանը պայմանավորված է բառացի իմաստի լեզվական վերացարկման ու փոխաբերացման տարբեր մակարդակներով:

Որպես դարձվածային միավորների առաջացման արտալեզվական հիմք՝ կարող է հանդես գալ որևէ իրադրություն կամ հատկանիշ, որը լեզվական մարմնավորման գործընթացում անցնում է դարձվածացման ոչ այնքան պարզ ճանապարհ՝ արտալեզվական շերտում ենթարկվելով բազմազան զուգորդումների, ընդհանրացումների ու վերացարկումների, իսկ լեզվական շերտում՝ համեմատությունների, չափազանցությունների և փոխաբերությունների:

Դարձվածների առաջացման համար պատկերային հիմք է դարձել նաև դիմախաղը՝ *քիթ ու բերանը թթվեցնել, հոնքերը վեր քաշել, աչքը թեքել* և այլն:

Դարձվածային համանման միավորների մեջ, բնականաբար, անպայմանորեն առկա է դեմքի որևէ մասի անվանում կամ *դեմք*,

երես, հայացք բառերը, ինչպես օրինակ՝ դեմքը թթված, երեսին ճաշ ուտել, ճակատը կրնճոռոտել, հոնքը աչքին քաշել, բեղի տակ ժղպտալ, քթից մուխ դուրս գալ, աչք աչքի գցել, ունքամեջը փոնթ գցել, հայացք նետել և այլն: Դարձվածային պատկերի հիմքում դիմախաղ ունեցող արտահայտությունների մեջ կարելի է առանձնացնել երկու հիմնական խումբ. առաջին խմբում ընդգրկվում են այն դարձվածները, որոնք անվանում են դիմախաղ, այսինքն՝ բառակապակցությունն իր ուղիղ իմաստով ներկայացնում է դեմքի արտահայտություն կամ դեմքի արտահայտության փոփոխություն, ինչպես՝ *երես թեքել, երեսին գույն չմնալ, հոնքերը կիտել, աչքերն արյուն (արյունամած), աչքերը բաց, քիթն ու մոռլթը հավաքել, շրթունքը կծել, ատամները սեղմել* և այլն: Այս դարձվածներում պատկերային հիմքը թափանցիկ է, դարձվածացման գործընթացը՝ ակնառու և ընկալելի: Լեզվաբանական գրականության մեջ դրանք համարվում են դարձվածային *միասնություն, կապակցություն* կամ *արտահայտություն*:

Երկրորդ խմբում տեղ են գտնում դարձվածներ, որոնց պատկերային հիմքը մթազևված է, այսինքն՝ նախադարձվածային կողմի՝ դարձվածային իմաստի վերափոխվելու կապը «չի ընթերցվում», ինչպես օրինակ՝ *քթից մուխ(ծուխ) բարձրանալ (դուրս գալ)* -«սաստիկ տանջվել, տառապել», *լուն քթից ընկնի, հազար կտոր կլինի* -«1. շատ գոռոզ, մեծամիտ, ամբարտավան լինել, 2. խիստ զայրացած, վրդովված լինել», *աչքերը սև ու դեղին անել* -«աչքերը շաղվել, աչքերի առաջ խավար երևալ», *աչքերում բմբուլ դուրս գալ* -«կարոտով մնալ, փափագը չկատարվել», *բերան չունենալ* -«1.խոսելու շնորհք չունենալ, անընդունակ լինել հակաճանելու, բանավիճելու, պատասխանելու, 2.որևէ բանում հանցանք ունենալու պատճառով խոսելու տեղ չունենալ, 3.շատ չուտել», *ճակատը արև ծագել* -«մեծ հաջողության հանդիպել»: Այս դարձվածներում փոխաբերության հիմքն անմիջապես չի նշմարվում. այն ունի խորքային բնույթ, և նրա վերհանումը պահանջում է լեզվական ու արտալեզվական գործընթացների վերլուծություն, այն է՝ զանազան պատկերացումների կամ գուգորդումների

բացահայտում և մեկնաբանություն: Այսպիսի դարձվածները լեզվաբանական գրականության մեջ կոչվում են դարձվածային *սերտաճում*:

Ինչպես նկատում ենք, քննության առնված դարձվածներում ևս դարձվածային միավորներն արտահայտում են որևէ իմաստ, անվանում որևէ առարկա, երեվույթ, վերաբերմունք և այլն՝ բաղադրիչ բառերի իմաստային արժեքներից անկախ: Բաղադրիչ անդամների բառական իմաստը մասամբ է միայն պայմանավորում դարձվածի իմաստը, քանի որ դարձվածային իմաստը նրա անդամների առանձին իմաստների պարզ գումարը չէ սոսկ և չի ձևավորվում դրանց ուղղակի համադրումով: Այն կարծես բխում, սերում, ածանցվում է դրանցից: Դարձվածի բաղադրիչները կորցնում են իրենց առարկայական վերաբերությունը, և անվանողական արժեք սկսում է ստանալ բառային համալիրը՝ դարձվածը՝ ամբողջությամբ վերցրած: Իմաստային ամբողջականության վրա է հենց հիմնվում դարձվածների դասակարգումն ըստ բաղադրիչների իմաստային սերտության աստիճանի, որտեղ մի եզրում ունենք իմաստային ազատ կապեր ունեցող բաղադրիչներով դարձվածներ, իսկ մյուս եզրում՝ ամբողջությամբ վերահիմաստավորված բաղադրիչներով միավորներ:

Եթե *աչքերը բաց, աչք փակել, բեղի տակ (ժղպտալ, երգել, խոսել...)*, *հոնքերը վեր քաշել* և համանման շատ դարձվածների դեպքում դարձվածի բաղադրիչ բառերի ուղիղ իմաստների գումարը նշմարվում է դարձվածային իմաստի մեջ, և վերջինս հեշտությամբ կարելի է պատճառաբանել բառակապակցության ուղիղ իմաստի փոխաբերացման ընթացքի վերլուծության ճանապարհով. օրինակ՝ *աչքերը բաց* արտահայտության դարձվածային իմաստը՝ «*ապշահար*», հեշտությամբ կարելի է մեկնաբանել այն դիմախաղով, որը մարդ ակամա ունենում է սաստիկ զարմացած ժամանակ. նրա *աչքերը լայն բացվում են: Բեղի տակ ժպտալու* դիմախաղային պատկերը նույնպես միանգամայն հստակորեն զուգորդվում է *ինչ-որ բան ծածուկ, աննկատ, ինքն իրեն անելու* փոխաբերացված իմաստի հետ: Մինչդեռ, օրինակ,

շատ գոռոզ ու ամբարտավան լինելու գաղափարը լուսն քթից ընկնի, հազար կտոր կլինի արտահայտության դարձվածային իմաստի մեջ կարելի է նկատել ոչ միանգամից. այդ իմաստը նախադարձվածային պատկերի խորքում կարելի է «տեսնել» երկրորդաբար՝ *գոռոզ՝ քիթը վեր ցցած* մարդու դեմքի արտահայտությունը կամ դիմախաղը վերականգնելուց հետո միայն: *Ճակատը արև ծագելու* պատկերից մինչև *մեծ հաջողության հանդիպելու* իմաստն ընկած է դիմախաղը, որը հայտնվում է մարդու դեմքին, երբ վերջինս հաջողության է հանդիպում. մեծ ուրախությունից նրա դեմքը պայծառանում է: Ահա այս պատկերը զուգորդվում և համեմատվում է *արևը ծագելու* հետ ժողովրդական այն պատկերացման ազդեցությամբ, ըստ որի՝ *արևը* լույսի ու ջերմության, այն է՝ հույսի ու հեռանկարի խորհրդանիշ է:

Այսպիսի վերլուծությունները հնարավորություն են ստեղծում բացահայտելու դարձվածի առաջացման գործընթացը, այսինքն՝ այն կապը, որ կա դարձվածային իմաստի և ազատ բառակապակցության իմաստի միջև և կոչվում է դարձվածի ներքին ձև: Վերջինը իր մեջ ընդգրկում է դարձվածի ստեղծմանը նպաստող արտալեզվական և ներլեզվական գործոններ: Արտալեզվական մակարդակում տվյալ առարկայական իրադրության մեջ առանձնացվում-ընդգծվում է որևէ տրամաբանական-իմաստաբանական կողմ, որը հիմք է դառնում փոխաբերացման և պատկերավորման համար: Դարձվածային ամբողջական իմաստը կարելի է բնութագրել որպես իմաստային մի բարդ գործընթացի արդյունք, որի ժամանակ կատարվում է կապակցության բաղադրիչային իմաստի փոփոխություն՝ ուղեկցվելով բաղադրիչների բառական իմաստների թուլացմամբ, ընդհուպ մինչև նրանց իմաստափոխություն:

Այսպես՝ *քիթ ու մռուլը ծռմռել, քիթ ու մռուլը թըթվեցնել, քիթ ու մռուլ անել* - «խռովել, դժգոհությունը դեմքի վրա արտահայտել» դարձվածները թեև ունեն նույն իմաստը և իրար շատ մոտ պատկերային հիմք, սակայն ձևավորվել են տարբեր աստիճանի փոխաբերացման արդյունքում: *Քիթ ու մռուլը ծռմռել*

դարձվածի ներքին ձևը թափանցիկ է. *խռովելու* և *այդ տրամադրությունն արտահայտելու համար դեմքը՝ քիթ ու մռուլքը, ծամռելու* արտալեզվական հիմքը և փոխաբերացման հիմքում ընկած գուգորդումը հստակորեն գիտակցվում և հեշտությամբ մեկնաբանվում են: *Քիթ ու մռուլքը թթվեցնել* դարձվածում *ծամռել* բառի փոխարեն ունենք

թթվեցնել բառը, որը կապակցության մեջ գործածվել է իր փոխաբերական իմաստով, այսինքն՝ արդեն իմաստափոխված, և դարձվածի ներքին ձևի վերհանման ժամանակ անհրաժեշտություն է առաջանում բացահայտելու վերաիմաստավորման միևնույն շերտ՝ *մռուլքը թթվեցնելը* գուգորդել *մրռուլքը ծամռելու* հետ: Իսկ *քիթ ու մռուլք անել* դարձվածում վերը նշված բառերն ընդհանրապես բացակայում են (այս դեպքում առկա է բառային ներակայման երևույթը), և դարձվածացման գործընթացը պատկերացնելու համար պետք է վերծանել փոխաբերացման ևս մի շերտ՝ մտովի վերականգնելով այդ բառերն ու համապատասխան պատկերը: Ինչպես նկատեցինք, նախադարձվածային կողմի ընդհանրացման, վերացարկման և տարբեր աստիճանի փոխաբերացման արդյունքում որոշակի պատկերացման ներքո ըստեղծվում է մի պատկեր, որը հիմք է դառնում բառակապակցությունից տարբեր, միանգամայն նոր միավորի՝ դարձվածի համար:

Այսպիսով՝ դարձվածային իմաստի հիմքում դիմախաղ ունեցող դարձվածների մեջ կարելի է առանձնացնել պատկերային երեք հիմք.

1) Կան դարձվածներ, որոնք պատկերում են դեմքի արտահայտություն, ինչպես՝ *մեկի հետ քթով լինել*, *քիթը բարձր*, *քթով մռթով*, *աչք(եր)ը փակ*, *հոնքերը կախ*, *բերանը բաց*, *բերանը փակ*, *աչքերը փայլել* և այլն: Դրանք ցույց են տալիս դեմքի ստատիկ՝ անշարժ վիճակ:

2) Կան դարձվածային միավորներ էլ, որոնք դիմախաղ, այսինքն՝ դիմային շարժում են ներկայացնում, ինչպես՝ *ուներամեջին նայել*, *շրթունքը կծել*, *ատամները ցույց տալ*, *աչքերը չորս անել*,

աչքերը ոլորել, շրթունքներն ուռցնել, ատամները կրծտացնել և այլն: Սրանց մեջ կարելի է տարբերել ` ա/ ակամա շարժման հետևանքով ձևավորված դիմախաղ ցույց տվող և բ/ անձի կողմից կատարած շարժումից առաջացած դիմախաղ պատկերող դարձվածներ: Այսպես՝ *աչքերն արցունքով լցվել, աչքերը գազաթը թռչել, ատամ ատամի տալ, աչքերն արյունով լցվել, աչքերին քուն գալ, աչքերը կարմրել մեկի համար, աչքերից կրակ թափել, բերանը բաց մնալ, բեղատեղը սևանալ* և այլ դարձվածներում դիմախաղը ձևավորվում է մարդու կամքից անկախ, ակամա, մինչդեռ *ատամները ցույց տալ, աչքով-ունքով հասկացնել, աչքը վրայից չըկտրել, աչքով անել, քիթը ունքերից բարձրացնել, բեղերը սափրել, մորուքի տակից ծիծաղել, շրթունքն ատամի տակ առնել* և շատ ուրիշ դարձվածներում դիմախաղը մարդու կամային գործունեության հետևանք է:

Այս երկու խմբերում ընդգրկվում են հիմնականում դարձվածային միասնություններ, կապակցություններ և արտահայտություններ, որոնց պատկերային հիմքն այս կամ այն չափով թափանցիկ է, իսկ փոխաբերացման հիմքում ընկած զուգորդային կապերը՝ հեշտ վերականգնելի:

3) Կա նաև դարձվածների մի երրորդ խումբ (դրանք, փաստորեն, համալրում են դարձվածային սերտաճումների շարքը), որոնց պատկերային առաջին շերտում դիմախաղ կամ դեմքի արտահայտություն, որպես այդպիսին, ամենևին էլ երևում. այն ունի խորքային բնույթ. օրինակ՝ *քթին մանել*- «արհամարհանքով ի դերն հանել մեկի հույսը», *քթին բուրվառ տալ*-«մեկի թույլ կողմը նկատելով՝ նրան ծաղրել», *մեկի ատամները հաշվել*-«մեկի թույլ կողմերը ճանաչել, նրանից չվախենալ, չքաշվել, նրան լավ ճանաչել», *լուն քթից ընկնի, հագար կտոր կլինի* և այլն: Այս դարձվածների պատկերային հիմքը երկու շերտ ունի. առաջին կամ երկացող շերտում արտահայտված է մի գործողություն, որի կատարման ժամանակ դրսևորվում է այն դիմախաղը՝ դեմքի համապատասխան արտահայտությունը, որն ընկած է դարձվա-

ծացման հիմքում. դա էլ հենց դարձվածային պատկերի խորքային շերտն է:

Իրենց պատկերային հիմքում դիմախաղ ունեցող արտահայտությունների դարձվածացման գործընթացում ոչ պակաս կարևոր դեր են կատարում դեմքի մասերի վերաբերյալ տվյալ լեզուն կրող ժողովրդի աշխարհընկալման և լեզվամտածողության մեջ գոյություն ունեցող պատկերացումներն ու խորհրդանիշները, որոնց ներքո է որ կատարվում են ներքին ձևում դրսևորվող զուգորդումները: Այսպես, *ճակատը* հայերիս մոտ խորհրդանշում է մարդու ճակատագիրը կամ բախտը, բարոյական կերպարը կամ պատիվը, մտավոր կարողությունները (*բաց ճակատով, ճակատը պարզ անել, ճակատին մուր քսել, ճակատը կտրված, ճակատը համբուրել, ճակատին գրված լինել, ճակատը ծմռել* -«մտածել, մտածմունքի մեջ ընկնել» և այլն), *բեղերը* խորհրդանիշն են իշխանության, տղամարդու պատվի (*բեղատեղը սևանալ, բեղերը սափրել, բեղի տակով անցնել, բեղի տակ ամնել, բեղից ընկած բրինձ* -«ավելորդ, հարգանք չվայելող» և այլն): Բերված դարձվածային միավորների մեջ, իհարկե, կան այնպիսիները, որոնց պատկերային հիմքում դիմախաղ կամ դեմքի արտահայտությունն չկա, սակայն դրանք ևս գալիս են հիմնավորելու վերևում բերված փաստարկը:

Այսպիսով՝ հայոց լեզվի դարձվածանիւում իրենց ուրույն տեղն են զբաղեցնում ներքին ձևում դիմախաղ ունեցող դարձվածային միավորները. դրանք ձևավորվել են տարբեր աստիճանի վերացարկման, ընդհանրացման ու փոխաբերացման արդյունքում, կրողներն են ազգային պատկերացումների ու լեզվամտածողության և խոսքում մարդկային հաղորդակցման նկարագրությունն ու վերարտադրությունը դարձնում են առավել դիպուկ և հուզական:

Օգտագործված գրականություն

1. Սուքիասյան Ա., Գալստյան Ս., Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Ե., 1975թ.:

2. Բեդիրյան Պ., Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան, Ե., 2011թ.:

Тер-Григорян Лилит- Мимика как основа формирования фразеологического значения.- Статья посвящена изучению и классификации идиоматических единиц армянского языка, в основе фразеологической образности которых лежит мимика, а также выявлению и анализу взаимоотношений лингвистических и экстралингвистических пластов фразеологического значения таких фразеологизмов.

Ter-Grigoryan Lilit- Mimicry as a Basis for the Formation of Idiomatic Meaning.- The article covers the study and classification of the idiomatic units of the Armenian language, the idiomaticity of which is based on mimicry. It also focuses on the analysis of the inter relationship between the linguistic and extralinguistic layers of the idiomatic meaning in such phraseological units

Հայերեն բարբառային նյութերը գրանցելու հնչագրեր
(մշակման և կիրառության հարցեր)

Հայ լեզվաբանության մեջ առաջինը Հ.Աճառյանն էր, որ, անմիջականորեն ծանոթ լինելով ֆրանսիական բարբառագիտական ատլասի ստեղծման աշխատանքներին, դարասկզբին Նախանձախնդրությամբ փորձեց միայնակ ձեռնարկել հայերեն բարբառների նյութերը հավաքելու գործը: Սակայն, ցավոք, Հ.Աճառյանը սկսած գործը ավարտին չհասցրեց:

1976 թ. ՀՀ ՉԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը սկսեց գիտարշավների միջոցով բարբառային նյութեր հավաքել: Առայսօր արդեն կուտակվել է նյութ մոտ 500 բնակավայրերից, որոնք ընդգրկում են հայերեն բարբառների թե՛ արևելյան, թե՛ արևմտյան տարածքների խոսվածքները:

Բարբառային նյութերը մշակելու համար առանցքային հարց է գրանցման համակարգ ունենալը: Խնդիրն այն է, որ մինչև XX դարի սկիզբը հայ լեզվաբանության մեջ չի եղել բարբառային հնչյունները գրանցելու միասնական գիտական համակարգ: Տարածքային հնչատարբերակների տառադարձման սկզբունքները առաջին անգամ մշակել է Հ.Աճառյանը: Նա բարբառային միավորների հնչադարձման համար հիմք ընդունեց հետևյալը. ա) ամեն մի հնչյուն պետք է նշանակվի մեկ գրանշանով, ամեն մի գրանշան պետք է արտահայտի մեկ հնչյուն, բ) նոր ստեղծված գրանշանը պետք է հարազատ մնա հայերեն այբուբենի գծագրական ոճին, լինի գեղեցիկ, պարզ և ունենա տպարանական հարմարություն [տե՛ս Աճառյան, 1911, էջ 6]:

Հ. Աճառյանի ստեղծած գիտական տառադարձման համակարգը, բնականաբար, թերություններից զերծ մնալ չէր կարող,

քանի որ այդ ժամանակ հայ բարբառագիտությունը, իբրև գիտակարգ, ձևավորման փուլում էր, հայերենի տարածքային տարբերակներն էլ բավարար հետազոտված չէին: Ավելին, դրանց մի զգալի մասը դեռևս անհայտ էր գիտությանը: Համապատասխան գրանշանի բացակայության պատճառով հնչյունները գրանցվում էին եղածով՝ հաճախ ներկայացվելով շատ մոտավոր:

1994թ. ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի գիտխորհրդի որոշմամբ գիտաշխատակիցների մի խումբ ձեռնամուխ եղավ հայերեն բարբառների հնչյունների տառադարձման նոր համակարգ ստեղծելուն:

Հայերեն բարբառների տառադարձման նոր համակարգ ստեղծելու համար համեմատության եզր ընդունվել են գրական արևելահայերենի հնչույթները: Տառադարձման ժամանակ կարևորվում է հնչույթի գրանցման նշանի ճիշտ ընտրությունը, որի համար կիրառվել է հետևյալ սկզբունքը՝ բաղաձայնները և պարզ ձայնավորները գրանցել մեկ, երկբարբառները՝ երկու, իսկ եռաբարբառները՝ երեք տառով՝ այբուբենի համապատասխան գրանշանով:

Տառադարձման տարբերակիչ նշանների սույն համակարգը կազմելիս հեղինակները ձգտել են հնարավոր ամբողջականության: Այսպես, կետը (.), օրինակ, ընդունելով որպես առաջնալեզվային արտասանության արտահայտություն (քմայնություն), կարող ենք հավասարապես օգտագործել և՛ բաղաձայնների, և՛ ձայնավորների համար (հմմտ. *ü, ü, ü*): Քանի որ երկբարբառները գրանցվում են ընդունված ավանդական մոտեցմամբ՝ մեկից ավելի տառերով, ապա շեշտյալ ձայնավորը՝ իբրև տվյալ հնչյունի հիմնական տարր, գրանցվում է սովորական տողային տառով, իսկ անշեշտ երանգայինը՝ փոքր չափով՝ հիմնական գրանշանից մի փոքր վեր: Բարձրացող (վերջնաշեշտային) երկբարբառի փոքր գրանշանը տեղադրվում է հիմնականից ձախ՝ ^hէ, ⁿօ և այլն, իսկ իջնողինը (առաջնաշեշտային)՝ աջ կողմում՝ է^h, էⁿ և այլն: Նույն սկզբունքով գրանցվում են իջնող-բարձրացող-իջնող (միջնաշեշտային) եռաբարբառները՝ է^oⁿ, ⁿա^h և այլն:

Բարբառային կյուբերի գրանցման հնչագրերի մշակումը:

Չայերեն բարբառների հնչադարձման նոր համակարգը հնչյունա-
յին է: Այն ունի համադրական կառուցվածք՝ վերլուծական տար-
րերի օգտագործմամբ: Գրական արևելահայերենին համապա-
տասխանող հնչյունը, իբրև արդեն նկարագրված ամբողջական
տարր, ներկայացվում է մեկ գրանշանով, իսկ բարբառային հնչա-
տարբերակի դրսևորած որևէ հատկանիշ արտահայտվում է հիմ-
նական գրանշանին հավելվող տարբերակիչ նշանով:

Նախ՝ հատկանիշների ընտրության մասին:

Եթե որևէ տարր նկարագրելու համար ընտրված հատկանիշնե-
րի բազմության մեջ առանձնանում է երկու եզրային արժեք՝
հատկանիշի բացակայություն (նշանակենք 0) և հատկանիշի առ-
կայություն (նշանակենք 1), ապա մնացած միջանկյալ հատկա-
նիշները կգտնվեն $[0, \dots, 1]$ միջակայքում: Քանի որ խոսվածքներում
հնչյունական տարբերակների սահմանազատումը կատարվում է
լսողությամբ (պերցեպտիվ մեթոդ), ապա հատկանիշները գնա-
հատելիս այն կարող է ունենալ ոչ ավելի, քան մեկ միջանկյալ
արժեք, որը կարձանագրվի իբրև հատկանիշի թույլ կամ մաս-
նակի արտահայտություն: Այսպիսով, հնչաշղթայի սահմանա-
զատված ամեն մի միավորի համար կստացվեն [հատկանիշի բա-
ցակայություն], [հատկանիշի առկայություն], [հատկանիշի թույլ
արտահայտություն] կամ [հատկանիշի մասնակի արտահայտու-
թյուն] տարբերակները:

Ստորև ներկայացվում են հայերեն բարբառներում հանդիպող
հնչյունների հիմնական հատկանիշների ցանկը և բարբառային
տեքստերում դրանց դրսևորվելու հնարավորությունը:

**Ա - 6 հնչույթների լրացուցիչ հատկանիշ ստանալու
հնարավորությունը (+)**

Աղյուսակ 1

	Հատկանիշներ	ա	բ	գ	դ	ե	զ	է	ը	թ	ժ	ի	լ	խ	ծ	կ	հ	ձ	ղ	ճ	
1.	Ձ. կարճ արտաբերում	+						+	+			+									
2.	Մասն քմ. Ձ կարճ արտ.	+																			
3.	Քմայն. Ձ կարճ արտ.	+																			
4.	Տևական արտաբերում	+	+	+	+		+	+		+	+		+	+	+	+		+	+	+	+
5.	Մասն. քմ. Ձ տև. արտ.	+																			
6.	Քմ. Ձ տևական արտ.	+																			
7.	Ձ. փակություն							+	+												
8.	Ձ. մասն.փակություն							+	+												
9.	Ձ. բացություն	+			+			+													
10.	Ձ. մասն. բացություն	+			+		+	+		+											
11.	Բաց Ձ. շրթնայնացում	+																			
12.	Շրթնայնացում	+															+				+
13.	Ձ. մասն.շրթն.	+																			
14.	Քմայնացում	+	+	+	+												+				
15.	Մասնակի քմայնացում	+	+	+	+							+				+					+
16.	Բ. ձայնեղ շնչեղացում		+	+	+																+
17.	Ձայնեղ Բ. թույլ շնչ.		+	+	+																+
18.	Ձայնորդ Բ. խլացում																				
19.	Կոկորդային Բ. ձայնեղաց.																				+
20.	Բ. հիմն.Ձ. հատկ. ուժեղաց.		+	+	+											+	+			+	+
21.	Բ. հիմն. Ձ. հատկ. թուլաց.		+	+	+					+											+

ջարկվող հնչանշանները և ժամանակակից հայերենի գրանշանները մուտքագրելու համար օգտագործվում են միևնույն ստեղծները: Օրինակ, եթե ժամանակակից հայերենի *ա* գրանշանը արտատալվում է *Ա* ստեղծի օգնությամբ, ապա բարբառային հնչատարբերակները նույնպես կարտատալվեն *Ա* ստեղծի օգնությամբ՝ անհրաժեշտության դեպքերում նախապես սեղմելով **Ctrl** կամ **Alt R(աջ)** ստեղծները (տե՛ս Աղյուսակ 2): Ճիշտ է, դա հանգեցնում է հնչագրերի խմբերի քանակի ավելացման, սակայն այն փոխհատուցվում է գրանցման գործընթացի պարզությամբ:

Հայերենի բարբառային նյութը գրանցելու հնչագրերի ցանկ

Աղյուսակ 2

	Հնչունական հատկանիշներ	Ձև	Լրացուցիչ ստեղծ	Font-ի անվանումը
1.	Ձայնավորի կարճ արտաբերում	ă	Shift	HnchaGir-1
2.	Մասն. քմ. Ձ. կարճ արտ.	â	Alt	HnchaGir-5
3.	Քմ. Ձ. կարճ արտաբերում	ã		HnchaGir-5
4.	Տևական արտաբերում	ā		HnchaGir-1
5.	Մասն. քմ. Ձ. տևական արտ.	ā̄	Shift	HnchaGir-5
6.	Քմ. Ձ. տևական արտ.	ā̄̄	Alt	HnchaGir-1
7.	Ձ. փակություն (օ ներառյալ)	ā̇	Shift	HnchaGir-2
8.	Ձ. մասնակի փակություն	ā̇̄	Shift	HnchaGir-3
9.	Ձ. բացություն	ā̈		HnchaGir-2
10.	Ձ. մասնակի բացություն	ā̈̄		HnchaGir-3
11.	Բաց Ձ. շրթնայնացում	ā̈̇		HnchaGir-4
12.	Շրթնայնացում	ā̈̈	Shift	HnchaGir-3
13.	Ձ. մասնակի շրթնայնացում	ā̈̈̇	Alt	HnchaGir-3

14.	Քմայնացում	ü	Shift	HnchaGir-2
15.	Մասնակի քմայնացում	đ	Alt	HnchaGir-2
16.	Բ. ձայնեղ շնչեղացում	բ ^հ		HnchaGir-4
17.	Ձայնեղ Բ. թույլ շնչեղացում	բ ^շ		HnchaGir-2
18.	Ձայնորդ Բ. խլացում	յ		HnchaGir-4
19.	Կոկորդային Բ. ձայնեղացում	հ	Shift	HnchaGir-4
20.	Բ. հիմն. Ձ. հատկ. ուժեղացում	բ̂		HnchaGir-3
21.	Բ. հիմն. Ձ. . հատկ. թուլացում	բ̃	Shift	HnchaGir-3
22.	Բ. առաջընթաց արտաբերում	ժ	Shift	HnchaGir-1
23.	Բ. հետընթաց արտաբերում	ճ	Shift	HnchaGir-1
24.	Յնչյունի ըմպայնացում		Alt	HnchaGir-1
25.	Յնչյունի ըմպանային արտաբերում	կ̂	Shift	HnchaGir-1
26.	Յնչյունի կոկորդային հպում	կ̃	Shift	HnchaGir-4
27.	Կիսաշփական Բ. շփականացում		Alt	HnchaGir-4
28.	Շփական Բ. հպականացում	զ ^լ	Alt	HnchaGir-4
29.	Յնչյունի ռնգայնացում	ւ̣	Alt	HnchaGir-4

Նախորդ երկու աղյուսակների հիման վրա կազմած արդյունաբար աղյուսակում (տե՛ս Աղյուսակ 3) պատկերված են հայերեն բարբառային հնչազրերը:

Հայերեն բարբառների ա - ճ հնչույթների ուրվագծեր

Աղյուսակ 3

Հիմնական հատկանիշներ	ա	բ	գ	դ	ե	զ	է	ը	թ	ժ	ի	լ	խ	ծ	կ	հ	ձ	ղ	ճ	
Ձ. կարճ արտ.	ă						ĕ	ĕ̇			ĭ									
Մասն.քմ.Ձկարճ արտ.	ă̇																			
Քմ. Ձ կարճ արտ.	ă̇̇																			
Տև. արտաբերում	ā	ḅ	ḡ	ḡ̇		ā̇	ē̇		ḥ	ḥ̇		l̄	ḵ	ḍ̄	ḵ̄		ḏ̄	ḡ̄	ḏ̄	
Մասն.քմ.Ձ տև.արտ.	ā̇																			
Քմ. Ձ տև. արտ.	ā̇̇																			
Ձ. փակույթուն							ĕ̇	ḡ̇												
Ձ. մասն.փակույթուն							ĕ̇̇	ḡ̇̇												
Ձ. բացույթուն	ă̇				ĕ̇			ḡ̇												
Ձ. մասն. բացույթուն	ă̇̇				ĕ̇̇			ḡ̇̇			ḥ̇̇									
Բաց Ձ շրթն.	ă̇̇̇																			
Շրթնայնացում	ă̇̇̇̇														ḵ̇̇̇̇				ḏ̇̇̇̇	
Ձ. մասն. շրթն.	ă̇̇̇̇̇																			
Քմայնացում	ă̇̇̇̇̇̇	ḅ̇̇̇̇̇̇	ḡ̇̇̇̇̇̇	ḡ̇̇̇̇̇̇̇								l̇̇̇̇̇̇̇̇			ḵ̇̇̇̇̇̇̇					
Մասն. քմայնացում	ă̇̇̇̇̇̇̇̇	ḅ̇̇̇̇̇̇̇̇	ḡ̇̇̇̇̇̇̇̇	ḡ̇̇̇̇̇̇̇̇̇																ḏ̇̇̇̇̇̇̇̇
Բ.ձայնեղ շնչեղացում		ă̇̇̇̇̇̇̇̇̇	ḡ̇̇̇̇̇̇̇̇̇	ḡ̇̇̇̇̇̇̇̇̇̇																ḏ̇̇̇̇̇̇̇̇̇̇
Ձայնեղ Բ. թույլ շնչեղ.		ă̇̇̇̇̇̇̇̇̇̇̇	ḡ̇̇̇̇̇̇̇̇̇̇̇	ḡ̇̇̇̇̇̇̇̇̇̇̇̇																ḏ̇̇̇̇̇̇̇̇̇̇̇̇

Ձայնորդ Բ. խլացում																					
Կոկորդային Բ ձայնեղ.																		h			
Բ.հիմն. Ձ. հ.ուժեղաց.	բ̂	գ̂	դ̂															ծ	կ	ձ	ճ
Բ. հիմն.Ձ.հ.թուլացում	բ̃	գ̃	դ̃																	ձ̃	
Բ.առաջընթաց արտ.																					
Բ. հետընթաց արտ.																					
Ջնչունի ըմպայնացում																					ճ̂
Ջնչունի ըմպ. արտ.																					
Ջնչ.կոկորդ.հպում	բ̆	գ̆	դ̆																		
Կիսաշ. Բ. շփ.																					ճ ^{II}
Շփական Բ. հպում																					
Ջնչ. ռնգայնացում	ւ̆	գ̆																			

Չայերեն բարբառների մ - ֆ հնչույթների ուրվագծեր

Աղյուսակ 3 (շարունակություն)

Չիմնական հատկանիշներ	մ	յ	ն	շ	ռ	չ	պ	ջ	ռ	ս	վ	տ	ր	ց	ռ	փ	ք	օ	ֆ	
Ձ. կարճ արտ.																մ̆				
Մասն.քմ.Ձկարճ արտ.																<input type="checkbox"/>			<input type="checkbox"/>	
Քմ. Ձ կարճ արտ.																<input type="checkbox"/>			<input type="checkbox"/>	

Տև. արտաբերում	ū	ȳ	ū	z̄	z̄	ū	z̄	n̄	ū	ū	ū	ḡ	ū	p̄	ō	ϕ
Մասն.քմ.Ձ տև.արտ.													□		□	
Ըմ. Ձ տև. արտ.													n̄i		ō	
Ձ. փակություն															ϑ	
Ձ. մասն. փակություն															ϑ	
Ձ. բացություն				ϑ												
Ձ. մասն. բացություն				ϑ								n̄i			ϑ	
Բաց Ձ շրթն.																
Շրթնայնացում						ū				ū						
Ըմայնացում				n̄i						ū		n̄i	p̄	ō		
Մասն. քմայն.										ū		n̄i	p̄	ō		
Բ. ձայնեղ շնչեղ.								z̄								
Ձայնեղ Բ. թույլ շնչեղ.								z̄								
Ձայնորդ Բ. խլացում	ȳ							z̄				ȳ				
Կոկորդային Բ ձայնեղ.																
Բ. հիմն. Ձ. հ. ուժեղաց.						ū	z̄			ū						
Բ. հիմն. Ձ. հ. թուլաց.					z̄		z̄				ȳ	ū	p̄			
Բ. առաջընթաց արտ.			z̄													

Բ. հետընթաց արտ.					չ		ջ					ը						
Ջնչյունի ըմպայն.					ւ						ւ							
Ջնչյունի ըմպ. արտ.																		
Ջնչ. կոկորդ. հպու մ					ւ	ջ					ւ							
Կիսաշ. Բ. շփ.							ջ											

Փաթեթի կիրառումը: Ճիշտ է, ժամանակակից համակարգիչները վաղուց են մուտք գործել գիտական հետազոտությունների բնագավառ, սակայն նոր տառադարձմամբ հայերեն բարբառային նյութերի գրանցումը կարելի է ընդունել իբրև նորություն, քանի որ առաջին անգամ փորձ է արվում ժամանակակից համակարգչային ծրագրերով ստեղծել տեղեկատվական հենքեր:

Լեզվի ինստիտուտում ժամանակակից համակարգիչների համար մշակվել է նոր տառադարձմամբ բարբառային հնչագրերի փաթեթ (HNCH), որը պահվում է բարբառագիտության բաժնում: Փաթեթում առկա են այն բոլոր միջոցները, որոնք անհրաժեշտ են Աղյուսակ 3-ում տրված գրանշանները մուտքագրելու համար: Ինչպես երևում է աղյուսակից, խոսվածքային միավորներում կարող են հանդիպել 200-ից ավելի գրանշաններ: Դրանք, ինչպես նշվեց, բաշխված են հնչագրերի 5 խմբերում: Նախ, ինչպես նման դեպքերում, անհրաժեշտ է բոլոր 5 խմբերն էլ տեղադրել համակարգիչ մեջ: Այնուհետև, փորձառու օգտատերը կարող է փաթեթում տրված KDW.DAT ֆայլը տեղադրել KDW թղթապանակի մեջ: Դա թույլ կտա KDWin-ը բացելիս ընտրել HNCHAGIR տողը: Որևէ խմբի պատկանող գրանշանը մուտքագրելու համար հարկ է նախ երկրորդ աղյուսակի համաձայն ընտրել անհրաժեշտ խումբը (Hnchagir-1, Hnchagir-2, Hnchagir-3, Hnchagir-4, Hnchagir-5) և համապատասխան ստեղս(եր)ի օգնությամբ ստանալ անհրաժեշտ գրանշանը:

Ոչ փորձառու օգտատերին առաջարկվում է տեքստերում հըն-
չագրեր տեղադրելու ավելի պարզեցված եղանակ. երրորդ աղ-
յուսակի հիման վրա Word միջավայրում ստեղծել աշխատան-
քային հնչագրերի համախումբ, այնուհետև Copy-Paste գործողու-
թյամբ դրանք պատճենել տեքստի համապատասխան տեղում:

Առաջիկայում, բարբառային հնչագրերի փաթեթի կիրառութ-
յամբ պայմանավորված, առկա է երկու խնդիր՝

ա) չնայած հնչագրերի թվացյալ առատությանը՝ դրանց կիրա-
ռության փորձը ցույց տվեց, որ գրանցված են խոսվածքներ (հիմ-
նականում Արցախում), որոնք նոր հնչագրերի մշակման խնդիր
են առաջադրում.

բ) այսօր լիովին ավարտվել է խոսվածքների բառիմաստային
տարբերակների մուտքագրումը և ընթանում է հասկացական
տարբերակների մուտքագրումը (պատրաստ է մոտ 30-35 տոկո-
սը): Աշխատանքի այս հատվածում տարբեր համակարգիչներ օգ-
տագործելը առանձին դժվարությունների պատճառ է դառնում:

Անհրաժեշտ է նշել նաև այն, որ կուտակված նյութերում առկա է
ևս երկու բաժին՝ քերականական և հնչյունական զուգաբանու-
թյունների, որոնց մուտքագրումը կարող է պայմանավորվել ինչ-
պես նոր հնչագրեր մշակելու, այնպես էլ մուտքագրելու տեխնո-
լոգիա ընտրելու հետ:

Այնուհետև, բարբառագիտական ծրագրով հավաքված նյու-
թերի ամեն մի տեսքում գրանցված է Հ.Թումանյանի «Սուտասա-
նը», որը հնչագրերով վերափոխելուց հետո, հետագայում հնա-
րավորության դեպքում կարելի է ստանալ դրա ձայնային պատ-
կերը, որը ուղեցույց կլինի ապագա ուսումնասիրողների համար:

Համառոտագրություններ

արտ.- արտաբերում
Բ.- բաղաձայն
ըմպ.- ըմպանային
թուլաց.- թուլացում

կիսաշփ.- կիսաշփական
հատկ. հատկությունների
հիմն.- հիմնական
հնչյ.- հնչյուն

հպ.- հպականացում

Ձ.- ձայնավոր

ձայնեղաց.- ձայնեղացում

մասն.- մասնակի

շնչ.- շնչեղացում

շրթ.- շրթնայնացում

շփ. շփականացում

տև.- տևական

ուժեղաց.- ուժեղացում

քմայն.- քմայնացում

Օգտագործված գրականություն

1. Զ. Աճառյան, Հայ բարբառագիտություն, Մոսկվա, 1911:

2. Ուռուտյան Ռ., Հայերենի բարբառային նյութերի ներածման համակարգչային ապահովումը, Հայ բարբառագետների միջազգային համագումարի նյութեր, Ստեփանակերտ, 2001:

3. Ուռուտյան Ռ., Գիտական տառադարձության հայերենի տառածներ, Ջահուկյանական ընթերցումներ, Ե., 2006:

4. Աղաբեկյան Մ., Հանեյան Ա., Ուռուտյան Ռ., Հայերենի հնչատարբերակների նոր համակարգը, Հայերենի բարբառագիտական ատլաս, պրակ 3, Ե., 2010:

Урутян Роберт, Харатян Мелания, Саакян Нина- Фонетическое представление диалектных материалов армянского языка.- В работе обсуждаются возможности записи диалектных материалов армянского языка в современных компьютерах. За основу для транскрипции диалектных единиц приняты следующие принципы, разработанные Р. Ачаряном: а) каждый звук должен обозначаться одним знаком, б) каждый знак должен отображать один звук, в) новый знак должен создаваться в соответствии с графикой армянского алфавита, быть красивым, простым и типографически удобным. В работе представлены более сотни знаков для записи диалектных материалов армянского языка, накопленных в Институте языка.

Urutyán Robert, Kharatyan Melanya, Sahakyan Nina- The Phonetic Representation of Dialectal Materials of the Armenian language.- The present article considers the possibility of writing dialectal materials of the Armenian language in modern computers. As the basis for the transcription of the dialectal items, the following principles, developed by H. Acharyan are taken: a) every sound should be designated by one sign, b) each sign should represent one sound, c) the new sign should be created according to the graphics of the Armenian alphabet, it should be elegant, simple and typographically convenient. In this paper more than a hundred characters are presented to write the dialectal materials of the Armenian language stored in the Institute of Language of NAS RA.

ԶԱՆՈՒԿՅԱՆԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Հանրապետական գիտական նստաշրջանի զեկուցումներ
(Երևան, 2012 թ., հունիսի 7-11)

ДЖАУКЯНОВСКИЕ ЧТЕНИЯ

Доклады республиканской научной сессии
(Ереван, 2012 г., 7–11 июня)

DJAHUKIAN READINGS

Republican scientific session reports
(Yerevan, 2012, June 7-11)

Տպագրությունը՝ օֆսեթ: Չափար՝ 60 × 84 1/16
Թուղթը՝ օֆսեթ: Ծավալը՝ 18 տպ. մասուկ
Տպարանակը՝ _____ օրինակ



ԶԱՆԳԱԿ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

«ԶԱՆԳԱԿ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՀՀ, 0051, Երևան, Կոմիտասի 49/2,
Հեռ.՝ (+37410) 23 25 28, հեռապատճեն՝ (+37410) 23 25 95
Էլ. կայ-քեր՝ www.zangak.am, www.book.am, www.dasagirq.am
Էլ. փոստ՝ info@zangak.am